

**«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵՋՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեկտոր

Կարինե Հարությունյան

Երևան 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
I. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	5
II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	46
III. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ	64
IV. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	84
V. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	104
VI. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	113
VII. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ.....	121
VIII. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	128
IX. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	145
X. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ	156
XI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	161
XII. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ	168
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	174

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	- Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	- Անկախ պետությունների համագործակցություն
ԲՈԿ	- Բարձրագույն որակավորման կոմիտե
ԲՈՒՀ	- Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱՑ	- Գործունեության արդյունավետության ցուցանիշ
ԳԱԱ	- Գիտությունների ազգային ակադեմիա
ԳՈՒԿ	- Գիտաուսումնական կենտրոն
ԵՀԿ	- Եվրոպական համերաշխության կորպուս
ԵՄ	- Եվրոպական միություն
ԵՊՀՀ	- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
ԵՊՀ	- Երևանի պետական համալսարան
ԹՄՀՖ	- Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետ
ԼՂՀ	- Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԿԳՄՄՆ	- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՄՄՖ	- Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ
ՀԵՀ	- Հայաստանի երիտասարդական հիմնադրամ
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	- Հասարակական կազմակերպություն
ՀՊՄՀ	- Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՌՀ	- Հայ-ռուսական համալսարան
ՄԿԾ	- Մասնագիտության կրթական ծրագիր
ՆՄՀ	- Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՈԱ	- Որակի ապահովում
ՈԱԱԿ	- Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԾ	- Որակավորումների ազգային շրջանակ
ՈԱԲԿ	- Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոն
ՈՆԱ	- Որակի ներքին ապահովում
ՉԺՀ	- Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
ՊԴ	- Պրոֆեսորադասախոսական
ՊԻԳԲ	- Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌՕԼՖ	- Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ
ՍԳՍՖ	- Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ
ՎԿ	- Վարչակառավարչական կազմ
ՏՀՏ	- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԽ	- Ուսանողական խորհուրդ
ՈՒՕ	- Ուսումնառական
ՖՀՄԱՆԿ	- Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոն

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների ներկայիս փուլում Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը (այսուհետ՝ ԵՊՀ) շարունակում է կարևորել լեզվաբանական, մանկավարժական և հասարակագիտական ոլորտներում առաջատար դիրք զբաղեցնելու իր հանձնառությունը: Հաշվի առնելով լեզվահասարակագիտական մասնագիտություններով մրցունակ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունը՝ 2019 թվականի ընթացքում ԵՊՀ-ն շարունակել է իր գործունեությունը կրթության որակի և ՄԿԾ-ների բարելավման, բուհի միջազգայնացման, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, կրթական ծառայությունների բազմազանեցման, բուհի կառավարման գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով:

2019 թվականի ընթացքում ԵՊՀ-ն, ըստ գործունեության տարբեր ոլորտների, իրականացրել է այս հաշվետվության մեջ ներկայացված աշխատանքները, որոնք բխում են շահակիցների կարիքներից, համահունչ են ԵՊՀ-ի առաքելությանը, միտված են բուհի ռազմավարական գերակայություններին և ԵՊՀ-ի՝ հոգաբարձուների խորհրդի կողմից 06.03.2019 թ.-ին հաստատված 2019-2023 թվականների ռազմավարական ծրագրի 2019 թվականի գործողությունների ծրագրի իրականացմանը:

Ի հավաստումն վերոգրյալի՝ ԵՊՀ-ն հաջողությամբ անցել է որակի արտաքին հավաստման գործընթաց և արժանացել է ինստիտուցիոնալ ազգային հավատարմագրման:

Հաշվետվությունը հիմնված է 25.10.2015թ.-ին ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված գործունեության առանցքային ցուցանիշների (այսուհետ՝ ԳԱՑ) վրա և պատրաստված է ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների 2019 թվականի տարեկան հաշվետվությունների հիման վրա:

I. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

ԵՊԼՀ-ի շարունակական, կայուն զարգացման երաշխիքներից է կրթության որակի հետևողական բարձրացումը, ինչին ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից իրականացված ուսումնամեթոդական գործունեությունը բխել է **ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 1-ում (Կրթական գործունեություն)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները հակիրճ ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1. ԵՊԼՀ-ի 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 1-ում (Կրթական գործունեություն) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Խնդիր 1.	Ապահովել ԵՊԼՀ-ի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) բարելավումը և ոլորտային շրջանակի ընդլայնումը՝ ՀՀ ՈԱԾ-ին, աշխատաշուկայի արդի պահանջներին և միջազգայնորեն կիրառվող առարկայական չափանիշներին համապատասխան
Նախադրեալ գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
1.1.2. Վերանայել բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման, կազմակերպման և իրականացման նորմատիվային փաստաթղթերը:	Վերանայվել և կազմվել են ԵՊԼՀ-ի բոլոր ՄԿԾ-ների իրականացմանը վերաբերող նորմատիվային փաստաթղթերը, մասնավորապես՝ ուսումնական պլանները և հիմնային այլ փաստաթղթեր:
1.1.3. Կատարել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ինստիտուցիոնալ գնահատում և գնահատման արդյունքներով վերանայել դրանց բովանդակության, կառուցվածքի և կրեդիտների հաշվարկման մեխանիզմները՝ համապատասխանեցնելով ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքները ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին:	ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում վերանայվել են հետևյալ 6 մասնագիտության 24 ՄԿԾ-ների (ՄԿԾ-ների մոտ 40%-ի) ամբողջական փաթեթները, կազմվել են դրանց ինքնավերլուծությունները՝ • «Լեզվաբանություն» (բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ներ), • «Կառավարում» (մագիստրոսի ՄԿԾ), • «Մասնագիտական մանկավարժություն» (բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ներ), • «Լրագրություն» (բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ներ), • «Սերվիս» (բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ),

	• «Միջազգային հարաբերություններ» (մագիստրոսի ՄԿԾ):
1.1.4. Մշակել և ներդնել նոր ՄԿԾ-ներ բակալավրիատում և մագիստրատուրայում՝ ըստ թիրախային ոլորտների:	Կազմվել են բակալավրական և մագիստրոսական 6 նոր ՄԿԾ-ներ, որոնց լիզենցավորման ամբողջական փաթեթները, համաձայն կարգի, ներկայացվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ ԿԳՄՍՆ) և ըստ լիցենզավորման մասին որոշումների՝ դրանք ներդրվել են 2019թ.-ին կամ կներդրվեն նոր ուսումնական տարվանից: Նշված ՄԿԾ-ներն են՝ • «Ռուսաց լեզու և գրականություն» (բակալավրի ՄԿԾ), • Թարգմանչական գործ «Չինարեն -հայերեն» և «Կորեերեն-հայերեն» (մագիստրոսի ՄԿԾ-ներ), • «Կրթության գնահատում և թեստավորում» (մագիստրոսի ՄԿԾ), • «Հասարակայնության հետ կապեր» (մագիստրոսի ՄԿԾ-ներ), • Մասնագիտական մանկավարժություն «Չինարեն լեզու և գրականություն» (մագիստրոսի ՄԿԾ), որը կներդրվի 2020թ. սեպտեմբերից: 2019թ.-ին «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում սկսվել են «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրի ու «Համաժամանակյա թարգմանություն» մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման աշխատանքները: Ընթանում են նաև «Հասարակայնության հետ կապեր» բակալավրի և «Մասնագիտական մանկավարժություն ՄՄՈՒՀ-ների համար» մագիստրոսի ՄԿԾ-ների մշակման աշխատանքները:
1.1.5. ՄԿԾ-ների մշակման և վերամշակման գործընթացներում բազմազանեցնել կամընտրական դասընթացները և մեծացնել դրանց թվաքանակն ու հատկացվող կրեդիտների համամասնությունը:	Բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլաններում ավելացվել են կամընտրական դասընթացները, յուրաքանչյուրում՝ առնվազն 1-ով, և համապատասխանաբար դրանց հատկացված կրեդիտները:
1.1.6. Վերանայել պրակտիկաներին առնչվող կարգերը և գործընթացները՝ դրանց կազմակերպման ձևերը, տևողությունն ու բովանդակությունը տարբերակելով ըստ ՄԿԾ-ների:	Իրականացվել է պրակտիկաների կազմակերպման պարբերական մշտադիտարկում: Պրակտիկա իրականացնող գործատու և այլ կազմակերպությունների շրջանում անցկացվել են հարցումներ, որոնց արդյունքների վերլուծության

1.1.7. Իրականացնել պրակտիկաների կազմակերպման մշտադիտարկում ու գնահատում, անցնել ստեղծագործական աշխատանքների միջոցով գնահատման՝ բարձրացնելով գնահատման օբյեկտիվությունը, թափանցիկությունն ու հիմնավորվածությունը և բարելավելով դրանց կիրառման մեխանիզմները:	հիման վրա մշակվել և հաստատվել են պրակտիկայի կազմակերպման նոր կարգ և մեխանիզմներ: Հաստատվել է մանկավարժական պրակտիկայի կազմակերպման նոր ձևը: Յուրաքանչյուր մասնագիտության գծով պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ գործատու կազմակերպությունների հետ կնքվել են առնվազն 3-ական նոր, երկարաժամկետ պայմանագրեր:
Խնդիր 2.	Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները
Նախադրեալած գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
1.2.1. Իրականացնել պրոֆեսորա-դասախոսական (այսուհետ՝ ՊԴ) կազմի շարունակական զարգացում մասնագիտական, տեղեկատվական -հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) և այլ ուղղություններով՝ պարբերական վերապատրաստումների կազմակերպման և այլ ձևերով:	Իրականացվել են հարցումներ ամբիոնների շրջանում՝ ՊԴ կազմի մասնագիտական զարգացման կարիքների բացահայտման և վերապատրաստման ուղղությունների որոշման վերաբերյալ: Բոլոր ամբիոնները ներկայացրել են իրենց ՊԴ կազմի վերապատրաստման կարիքները երեք՝ լեզվական, մասնագիտական, ՏՀՏ հմտությունների կատարելագործման ուղղությամբ: Ներկայացվել են նաև վերապատրաստման դասընթացներում ներգրավվող ՊԴ անձնակազմի ցուցակները՝ ըստ համապատասխան ուղղությունների: Վերանայվել են ՊԴ կազմի բեռնվածության նորմերը:
1.2.2. Մշակել և կիրառել դասավանդման խրախուսման, փոխանակման և տարածման ներհամալսարանական մեխանիզմներ, ընդարձակել ոլորտի առաջատար մասնագետների հրավիրման և դասախոսությունների կազմակերպման փորձը՝ նպաստելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, նորագույն և նորարարական մոտեցումների կիրառմանը:	Իրականացվել է դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացներում ՊԴ կազմի կողմից ժամանակակից ՏՀՏ-ները արդյունավետորեն կիրառելու հմտությունների և մեթոդների վերլուծություն: Վերլուծության արդյունքների հիման վրա ՊԴ կազմի համար իրականացվել են դասընթացներ, որոնք անցկացվել են ԵՊԼՀ-ի դասախոսների կողմից: Մասնավորապես՝ 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում ՊԴ և վարչական կազմերի համար իրականացվել են վերապատրաստման հետևյալ դասընթացները՝ • «Որակի ապահովման և ինստիտուցիոնալ

	հավատարմագրման գործընթացները և ընթացակարգերը», • «Տեղեկատվական գրագիտություն և հետազոտական հմտություններ», • «Համակարգչային հմտություններ»: Նշված դասընթացներին մասնակցել են ԵՊԼՀ-ի 254 աշխատակից: 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում գործընկեր կազմակերպությունների հետ ԵՊԼՀ-ն արտաքին և ներքին շահառուների համար կազմակերպել և իրականացրել է 37 կրթական լրացուցիչ ծրագրեր և դասընթացներ, որին մասնակցել է 1952 շահառու: Ուսուցման արդյունավետության բարձրացման, ժամանակակից մեթոդների ու նորարարական տեխնոլոգիաների ներդրման խթանման նպատակով աշխատանքի են հրավիրվել ճանաչում և մասնագիտական մեծ փորձառություն ունեցող նոր դասախոսներ, որոնք ունեն դոկտորի, պրոֆեսորի, դոցենտի, գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և (կամ) կոչում: 2019թ.-ին հրավիրվել է 36 նոր առաջատար մասնագետ:
1.2.3. Մշակել և գործարկել ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման նոր մեթոդաբանություն և համապատասխան կանոնակարգեր՝ աստիճանաբար բազմազանեցնելով սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման ձևերը:	Վերամշակվել ու հաստատվել է ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման նոր կարգը: Այդ թվում՝ վերանայվել է լուծարքային շրջանում ուսանողի կողմից ստացվող գնահատականի շեմը՝ 60-ից դառնալով 80 միավոր:
1.2.4. Հրաժարվել վերարտադրողական տիպի աշխատանքների միջոցով գնահատումից, անցնել ստեղծագործական աշխատանքների միջոցով գնահատման՝ բարձրացնելով գնահատման օբյեկտիվությունը, թափանցիկությունն ու հիմնավորվածությունը և բարելավելով դրանց կիրառման մեխանիզմները:	Մի շարք մասնագիտություններով ներդրվել է ամփոփիչ ատեստավորման նոր մոտեցում՝ ուսանողների փոքր խմբերով նախագծերի պատրաստման և ներկայացման ձևաչափով:
1.2.5. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության	2019թ.-ին վերոնշյալ 24 ՄԿԾ-ների համար իրականացվել է ծրագրային բենչմարքինգ, որի

ինտեգրման միջազգային փորձը, ՄԿԾ-ներում ներդնել սովորողների հետազոտական ու նորարարական կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացներ կրթական տարբեր մակարդակներում:	արդյունքները կիրառվել են համապատասխան ՄԿԾ-ի վերանայման ու վերամշակման գործընթացներում: Ուսանողների մանկավարժական գործնական կարողությունների ձևավորման և ուսուցումը հետազոտության հետ փոխկապակցելու նպատակով Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնը մշակել է պրակտիկայի նոր ձևաչափ, որն ունի անընդմեջ ու շարունակական բնույթ և ընդլայնված ժամաքանակ՝ սկսվող բակալավրիատի 2-րդ կուրսի 1-ին կիսամյակից, իսկ մագիստրատուրայում՝ 2-րդ կուրսի 1-ին կիսամյակից, և շարունակվող մինչև ուսումնառության ավարտը: 2019-2020 ուսումնական տարվանից ուսանողների պրակտիկան իրականացվում է նոր մոտեցմամբ: Մագիստրոսական բոլոր ՄԿԾ-ներում ներդրվել են հետազոտական կարողությունների զարգացմանը միտված նոր դասընթացներ, մասնավորապես՝ տվյալ մասնագիտության մեջ կիրառվող հետազոտական մեթոդները, ակադեմիական գրագրություն, հետազոտական պրակտիկում:
1.2.6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքներում, մագիստրոսական թեզերում և ատենախոսություններում գրագրությունը կանխելու մեթոդներ:	Մշակվել է ԵՊԼՀ-ի էթիկայի կանոնագիրքը՝ ներառյալ ակադեմիական ազնվության և բարեվարքության սկզբունքները և կանոնները, որը քննարկվել է կանոնակարգային հանձնաժողովում և ներկայացվել գիտական խորհրդին: Այն գտնվում է վերջնական լրամշակման փուլում:
1.2.7. Ակտիվացնել ԵՊԼՀ-ի մեթոդական խորհրդի գործունեությունը՝ ՄԿԾ-ների հաստատման և վերանայման նպատակով:	Ակտիվացվել և համակարգվել է ԵՊԼՀ-ի մեթոդական խորհրդի գործունեությունը՝ ՄԿԾ-ների հաստատման և վերանայման նպատակով: Իրականացվել են ԵՊԼՀ-ի մեթոդական խորհրդի եռամսյակային հանդիպումներ՝ քննարկելու վերանայված ՄԿԾ-ների փաթեթները և ներկայացնելու մասնագիտական կրթության և հետազոտական գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ:
Խնդիր 3.	Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում
Նախադրեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ

1.3.1. Բարելավել ԵՊԼՀ-ում գործող էլեկտրոնային ուսուցման և սովորողների թեստավորման հարթակների ուսումնամեթոդական նյութերը և համալրել նոր նյութերով, միաժամանակ շահագործել էլեկտրոնային նոր համակարգ(եր)՝ ՄԿԾ-ների, ուսումնական պլանների ու մոդուլների, տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման և սովորողների գնահատման նպատակով:	1.3.1. Ներդրվել են էլեկտրոնային հետևյալ նոր դասընթացները ԵՊԼՀ-ի http://newmoodle.brusov.am հարթակում. • «ՏՀՏ-ի կիրառումը մասնագիտական ոլորտում» (բակալավրական դասընթաց), • «Կառավարչական հմտություններ» (մագիստրոսական դասընթաց), • «Traduction des styles fonctionnels» (մագիստրոսական դասընթաց):
1.3.2. Ձևավորել տեխնոլոգիական և մեթոդական անհրաժեշտ հենք՝ ՊԴ կազմի կողմից էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշակման և ուսումնական գործընթացում դրանց արդյունավետ կիրառման համար:	ԵՊԼՀ-ի ամբիոնների կողմից իրականացվել է դասընթացների առարկայական նկարագրերի վերանայում: Բոլոր ՄԿԾ-ների ամբողջական փաթեթների՝ ներառյալ ՄԿԾ-ները կազմող դասընթացների նկարագրերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են ԵՊԼՀ-ի նոր կայքում և ամբիոնների կայքէջերում: Դասախոսների կողմից կազմվել են դասընթացների դասախոսությունների ամբողջական տեքստերը կամ դրանց համառոտագրերը, որոնք տրամադրվում են ուսանողներին էլեկտրոնային տարբերակով:
Խնդիր 4.	
Բազմազանեցնել և ամրապնդել դպրոց-բուհ, դիմորդ-բուհ կապին ուղղված միջոցառումները	
Նախադրեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
1.4.1. Կազմակերպել և իրականացնել նախապատրաստական դասընթացներ դպրոցների շրջանավարտների համար:	Կազմվել են թիրախային ավագ և միջնակարգ դպրոցների ցուցակները՝ ԵՊԼՀ-ի մասնագիտություններին համապատասխան: Այդ դպրոցների աշակերտների և շրջանավարտների կրթական կարիքների և մասնագիտական հետագա կողմնորոշման առաջնայնությունների վերհանման նպատակով մշակվել են հարցաշարեր և տրվել դպրոցներին: Հարցաշարերի վերլուծության արդյունքում առանձնացվել են ԵՊԼՀ-ի մասնագիտություններով իրենց կրթությունը շարունակել ցանկացող շրջանավարտները: Թիրախային խմբի շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ ՊԴ կազմի այցեր դպրոցներ, մասնագիտության օրեր, շրջայցեր համալսարան, նախապատրաստական

		դասընթացներ և այլն:
1.4.2. Ստեղծել ժամկետների նկարագրությամբ ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար՝ ՄԿԾ-ների, մուտքային և ելքային պահանջների, սովորողների իրավունքների ու պարտականությունների, զեղչային համակարգի, ուսանողական կյանքի, աշխատանքային գործունեության ապագա հնարավորությունների մասին:		Դիմորդների և ուսանողների համար ԵՊԼՀ-ի նոր կայքում տեղադրվել են ՄԿԾ-ները, մուտքային և ելքային պահանջները, սովորողների իրավունքների ու պարտականությունների նկարագիրը, զեղչերի տրամադրման հնարավորությունները և պայմանները, դասացուցակները, շարժունության ծրագրերը, ուսանողական կյանքի մասին տեղեկատվությունը և այլ տեղեկություններ: Կարիերայի կենտրոնի կողմից պատարաստվել և ուսանողներին են տրամադրվում տեղեկատվական նյութեր աշխատանքային հետագա հնարավորությունների ու պայմանների, ինչպես նաև աշխատանք գտնելու կամ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար անհրաժեշտ հմտությունները զարգացնելուն ուղղված տեղեկություններ, նյութեր, ձևանմուշներ և այլն: Այդ ուղղությամբ Կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվում են վերապատրաստումներ ու սեմինարներ, կազմակերպվում հանդիպումներ տարբեր գործատուների հետ, որոնք ևս տրամադրում են տեղեկատվական նյութեր իրենց աշխատանքային պայմանների ու հնարավորությունների մասին: Նշված բոլոր նյութերը ու փաստաթղթերը տեղադրվել են ԵՊԼՀ-ի կայքի Կարիերայի կենտրոնի էջում և պարբերաբար թարմացվում են ու լրացվում: Ուսանողական միջոցառումներին, տրամադրվող զեղչերին, շարժունության ծրագրերին վերաբերող և շատ այլ տեղեկատվություն մշտապես տեղադրվում է ԵՊԼՀ-ի կայքում, ֆեյսբուքի ու թվիթերի էջերում, ինչպես նաև ուսանողական խորհրդի ֆեյսբուքի էջում: Վերամշակման փուլում է ուսանողի ուղեցույցը:
Խնդիր 5.	Ամրապնդել ԵՊԼՀ-ի՝ որպես համալսարանական շարունակական կրթություն տրամադրող կառույցի դերը ազգային և միջազգային մակարդակներում	
Նախադրեսված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
1.5.1.	Մշակել համալսարանական	Իրականացվել են քննարկումներ ԵՊԼՀ-ի

շարունակական կրթության քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապահովելով ԵՊԼՀ-ի՝ կրթական ծրագրեր և կրթական ծառայություններ իրականացնող ստորաբաժանումների թիրախավորված մասնակցությունը շարունակական կրթության իրականացման գործընթացին:	ուսումնագիտական ստորաբաժանումների հետ՝ բնակչության տարբեր խմբերի կրթական կարիքների բավարարմանն ուղղված տարատեսակ դասընթացների ցանկի ճշտման նպատակով: Քննարկումների արդյունքներով նախապատրաստվել են հնարավոր դասընթացների ցանկը ու նկարագրերը, դասավանդողների ցուցակները, ինչպես նաև կատարվել է դրանց արժեքի հաշվարկ ու կազմվել նախնական ժամանակացույց:
1.5.2. Մշակել և իրականացնել շարունակական կրթությանը վերաբերող տարատեսակ և բազմաբնույթ դասընթացներ կրթության կառավարման, օտար լեզուների ուսուցման, գրադարանավարության, հասարակական գիտությունների, սերվիսի և այլ ոլորտներում՝ ուղղված կրթության ոլորտի մասնակիցների և բնակչության տարբեր խմբերի կրթական կարիքների բավարարմանը:	Զուգահեռաբար 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում ԵՊԼՀ-ի ՊԴ և վարչական կազմերի համար իրականացվել են համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակված հետևյալ դասընթացները՝ • «Որակի ապահովման և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները», • «Տեղեկատվական գրագիտություն և հետազոտական հմտություններ», • «Համակարգչային հմտություններ»:
1.5.3. Ձևավորել գործընկերային համակարգված կապեր շարունակական կրթության կազմակերպությունների և կենտրոնների հետ:	Նշված դասընթացներին մասնակցել են ԵՊԼՀ-ի 254 դասախոսներ և այլ աշխատակիցներ: 2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում նաև գործընկեր կազմակերպությունների հետ ԵՊԼՀ-ն ատաքին և ներքին շահառուների համար կազմակերպել և իրականացրել է 37 լրացուցիչ կրթական ծրագրեր, տարատեսակ և բազմաբնույթ դասընթացներ՝ կրթության կառավարման, օտար լեզուների ուսուցման, գրադարանավարության, հասարակական գիտությունների, սերվիսի և այլ ոլորտներում, որին մասնակցել է 1952 շահառու:

Ստորև ներկայացված է ԵՊԼՀ-ի ուսումնամեթոդական գործընթացի կազմակերպման, վերահսկման և բարելավման ուղղությամբ 2019թ կատարված աշխատանքների մանրամասն վերլուծությունը:

ԵՊԼՀ-ի մասնագիտությունները, մասնագիտության կրթական ծրագրերն ու ուսանողական համակազմը

ԵՊԼՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգով (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա) հետևյալ 4 մասնագիտական ոլորտներում՝ նշված մասնագիտություններով՝

- կրթություն (Մասնագիտական մանկավարժություն, Կրթության գնահատում և թեստավորում),
- հումանիտար գիտություններ (Բանասիրություն, Լեզվաբանություն, Միջմշակութային հաղորդակցություն),
- սոցիալական գիտություններ (Քաղաքագիտություն, Միջազգային հարաբերություններ, Լրագրություն, Եվրոպագիտություն, Հանրային կառավարում, Հասարակայնության հետ կապեր),
- սերվիս (Սերվիս):

ԵՊԼՀ-ն ուսուցման առկա և հեռակա ձևերով իրականացնում է ուսումնական գործընթաց բակալավրական 27, մագիստրոսական 28 ՄԿԾ-ներով և ասպիրանտական 8 կրթական ծրագրերով:

2019թ.-ին ԵՊԼՀ-ի սովորողների ընդհանուր թիվը կազմել է 2963:

ԵՊԼՀ-ի բակալավրիատում և մագիստրատուրայում **ուսանողների ընդհանուր թիվը (առկա և հեռակա ուսուցման համակարգերում) կազմել է 2890¹: Հերթուհական կրթություն ստացող սովորողների ընդհանուր թիվը կազմել է 73¹** 1 դոկտորանտ, 27 ասպիրանտ, 45 հայցորդ:

Ստորև՝ Աղյուսակ 1.2-ում, ներկայացված են ԵՊԼՀ-ի ուսանողական համակազմի թվային տվյալները՝ ըստ ֆակուլտետների, կրթության աստիճանի, ուսուցման ձևի (առկա կամ հեռակա) և վճարովի կամ անվճար ուսուցման համակարգերի:

Աղյուսակ 1.2. 2019թ.-ի ուսանողական համակազմի տվյալները


ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (առկա)	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ	345	67	412
Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետ	681	69	750
Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ	240	43	283
Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ	456	14	470
Ընդամենը	1722	193	1915
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ (հեռակա)	Վճարովի	Անվճար	Ընդհանուր

¹ Ուսանողների թվաքանակի բոլոր տվյալները ներկայացված են 2019 թ.-ի նոյեմբերի դրությամբ: Դեկտեմբերի ընթացքում ուսանողների թվաքանակի շարժը եղել է փոքր՝ ուսանողների թիվը մեծացել է 17-ով (բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդհանուր թիվը դարձել է 2907), ինչը ըստ էության չի անդրադառնում հաշվետվության մեջ բերված տոկոսային համամասնությունների հաշվարկի վրա:

Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ	104	1	105
Թարգմանության և միջմշակության հաղորդակցման ֆակուլտետ	36	-	36
Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ	124	-	124
Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ	222	2	224
Ընդամենը	486	3	489
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ (առկա)	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ	11	34	45
Թարգմանության և միջմշակության հաղորդակցման ֆակուլտետ	23	20	43
Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ	67	24	91
Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ	53	37	90
Ընդամենը	154	115	269
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ (հեռակա)	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ	10	-	10
Թարգմանության և միջմշակության հաղորդակցման ֆակուլտետ	-	-	-
Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ	144	1	145
Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ	62	-	62
Ընդամենը	216	1	217
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ	Վճարովի	Անվճար	Ընդհանուր
Ասպիրանտ առկա	-	4	4
Ասպիրանտ հեռակա	-	23	23
Հայցորդ	45	-	45
Դոկտորանտ	-	1	1
Ընդամենը	45	28	73
Սովորողների ընդհանուր թիվը՝ ըստ անվճար և վճարովի համակարգերի	2623	340	2963
Սովորողների ընդհանուր թիվը	2963		

Ստորև՝ Գծապատկեր 1.1-ում, գրաֆիկորեն պատկերված է յուրաքանչյուր ֆակուլտետի **բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թիվը՝ ըստ առկա և հեռակա ուսուցման համակարգերի:**

Գծապատկեր 1.1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդհանուր թիվը՝ ըստ ֆակուլտետների և առկա-հեռակա ուսուցման համակարգերի



Գծապատկեր 1.1-ից երևում է, որ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետը (այսուհետ՝ ՍԳՍՖ) 2019թ.-ին պահպանել է առաջատարի դիրքը ուսանողների ընդհանուր թվաքանակի առումով՝ 846 ուսանող: Միևնույն ժամանակ, թեև Թարգմանության և միջմշակութային հաղորդակցման ֆակուլտետը (այսուհետ՝ ԹՄՀՖ) 2019թ.-ին ուսանողների ընդհանուր թվաքանակով եղել է երկրորդը՝ 829 ուսանող, այն առանձնացել է բակալավրական մակարդակում ուսանողների թվաքանակի գերակշռությամբ, որը պայմանավորված է դիմորդների շրջանում միջմշակութային հաղորդակցության և միջլեզվական թարգմանության հանդեպ հետաքրքրության բարձր մակարդակով, ինչպես նաև այդ մասնագիտություններով ԵՊԼՀ-ի կողմից պատրաստված կադրերի՝ շուկայում բարձր ճանաչելիությամբ և պահանջարկով:

Դիմորդների ընդհանուր թվի և ԹՄՀՖ-ի առաջին կուրս ընդունված ուսանողների թվի աճը պայմանավորված է նաև ընդունելության քննությունների կազմի փոփոխությամբ՝ օտար լեզվի բանավոր քննության պահանջի վերացմամբ, որը թեև հանգեցրել է քանակական աճի, այնուամենայնիվ պահանջում է հետագա մշտադիտարկում՝ ուսանողների օտար լեզվի իմացության զարգացման առումով:

ՍԳՍՖ-ում ուսանողական համակազմի դինամիկ փոփոխությունները վերջին տարիների ընթացքում առանձնանում են աճի միտումով «Սերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների պահանջարկվածության շնորհիվ: Թեև ՍԳՍՖ-ում «Լրագրություն» և «Քաղաքագիտություն» մասնագիտությունների ուսանողների թվաքանակը, հատկապես բակալավրիատում, այլ մասնագիտությունների համեմատ դեռևս մնում է ցածր, այստեղ նույնպես 2019թ.-ին արձանագրվել է ուսանողների թվի քանակական աճ:

Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետի (այսուհետ՝ ԿՄՄՖ) պարագայում կարևոր է ընդգծել «Կրթության գնահատում և թեստավորում» մագիստրոսական ՄԿԾ-ի մեկնարկը: Տվյալ ՄԿԾ-ի մշակումն ու ներդնումը ամրագրված է եղել նաև ԵՊԼՀ-ի 2019-


2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրում (Բաժին 1. Կրթական գործունեություն, ռազմավարական խնդիր 1-ի գործողություն 1.1.4), որը հաջողությամբ իրականացվել է:

Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի (այսուհետ՝ ՌՕԼՖ) բակալավրիատում ևս 2019թ.-ին արձանագրվել է ուսանողների քանակական որոշակի աճ՝ առաջին կուրսում «Լեզվաբանություն (Անգլերեն)» ՄԿԾ-ում գրեթե կրկնակի և «Լեզվաբանություն (Ռուսերեն)» ՄԿԾ-ում հնգակի աճ գրանցած ընդունելության ցուցանիշների շնորհիվ:

Ուսանողական համակազմի տվյալների վերլուծությունը՝ ըստ առկա և հեռակա համակարգերի, ցույց է տալիս, որ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի **անվճար համակարգում** ընդգրկված ուսանողները կազմել են սովորողների ընդհանուր թվի 11%-ը (340 ուսանող), որը մոտ 2 անգամ ցածր է ՀՀ բուհերում ընդունելության ընդհանուր տեղերի նկատմամբ անվճար տեղերի համամասնության հանրապետական միջին ցուցանիշից: Ինչ վերաբերում է **վճարովի համակարգում** սովորողներին, ապա հարկ է նշել, որ այս տարի ԵՊԼՀ-ի վճարովի համակարգ ընդունված դիմորդների թիվը 1.5 անգամ գերազանցում է վճարովի տեղերի լրացման հանրապետական միջին ցուցանիշը:

Ստորև՝ Գծապատկեր 1.2-ում, պատկերված է 2019թ.-ին անվճար և վճարովի համակարգերում սովորողների տոկոսային համամասնությունը:

Գծապատկեր 1.2. Անվճար և վճարովի ուսուցման համակարգերում սովորողների տոկոսային համամասնությունը



Աղյուսակներ 1.3-ում, 1.4-ում, 1.5-ում և 1.6-ում ներկայացված են **բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների թվաքանակները՝ ըստ կուրսերի և մասնագիտությունների:**

**Աղյուսակ 1.3 Բակալավրիադի առկա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակը՝
ըստ մասնագիտությունների**

N	Մասնագիտություն (ՄԿԾ)	Կուրս				Ընդամենը
		1	2	3	4	
1	Լեզվաբանություն (անգլերեն)	81	46	67	47	241
2	Լեզվաբանություն (ֆրանսերեն)	5	2	2	5	14
3	Լեզվաբանություն (գերմաներեն)	3	4	3	5	15
4	Լեզվաբանություն (իտալերեն)	5	1	1	3	10
5	Լեզվաբանություն (ռուսերեն)	15	3	2	1	21
6	Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն	0	0	85	126	211
7	Միջմշակութային հաղորդակցություն (ռուսերեն)	5	1	1	7	14
8	Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)	115	44	14	15	188
9	Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)	20	-	9	12	41
10	Միջմշակութային հաղորդակցություն (ֆրանսերեն)	21	3	6	6	36
11	Թարգմանչական գործ (ռուսերեն-անգլերեն-հայերեն)	11	10	19	15	55
12	Թարգմանչական գործ (ռուսերեն և հայերեն)	9	1	2	14	26
13	Թարգմանչական գործ (անգլերեն-հայերեն)	97	47	74	84	302
14	Թարգմանչական գործ (ֆրանսերեն-հայերեն)	8	7	5	9	29
15	Թարգմանչական գործ (գերմաներեն-հայերեն)	11	4	7	9	31
16	Թարգմանչական գործ (չինարեն-հայերեն)	18	14	14	12	58
17	Թարգմանչական գործ (իսպաներեն-հայերեն)	10	9	6	4	29
18	Թարգմանչական գործ (կորեերեն-հայերեն)	12	8	9	2	31
19	Թարգմանչական գործ (իտալերեն-հայերեն)	2	-	1	2	5
20	Օտար լեզու և գրականություն (ռուսերեն)	4	1	10	1	16
21	Մասնագիտական մանկավարժություն (անգլերեն և գրականություն)	66	35	66	70	237
22	Մասնագիտական մանկավարժություն (ֆրանսերեն և գրականություն)	5	6	4	10	25
23	Մասնագիտական մանկավարժություն (գերմաներեն և գրականություն)	4	1	3	7	15
24	Մասնագիտական մանկավարժություն (ռուսերեն և գրականություն)	2	2	2	-	6

25	Սերվիս	114	41	37	6	198
26	Քաղաքագիտություն	23	5	9	11	48
27	Լրագրություն	8	0	1	4	13
	Ընդամենը	674	295	459	487	1915

Աղյուսակ 1.4. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների

N	Մասնագիտություն (ՄԿԾ)	Կուրս					Ընդամենը
		1	2	3	4	5	
1	Լեզվաբանություն (անգլերեն)	13	9	23	12	20	77
2	Լեզվաբանություն (ֆրանսերեն)	1	-	1	2	2	6
3	Լեզվաբանություն (գերմաներեն)	-	-	3	-	2	5
4	Լեզվաբանություն (իտալերեն)	1	-	-	-	-	1
5	Օտար լեզու և գրականություն (ռուսաց լեզու և գրականություն)	9	4	3	-	-	16
6	Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)	28	3	-	-	-	31
7	Միջմշակութային հաղորդակցություն (ֆրանսերեն)	2	-	-	-	-	2
8	Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)	3	-	-	-	-	3
9	Մասնագիտական մանկավարժություն (անգլերեն և գրականություն)	20	10	23	22	17	92
10	Մասնագիտական մանկավարժություն (ֆրանսերեն և գրականություն)	-	1	6	-	-	7
11	Մասնագիտական մանկավարժություն (գերմաներեն և գրականություն)	1	1	2	1	3	8
12	Մասնագիտական մանկավարժություն (ռուսերեն և գրականություն)	3	-	-	9	5	17
13	Սերվիս	50	31	35	9	7	132
14	Լրագրություն	6	1	-	-	-	7
15	Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն	-	-	1	47	37	85
	Ընդամենը	137	60	97	102	93	489

**Աղյուսակ 1.5. Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ուսանողների
թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների**

N	Մասնագիտություն (ՄԿԾ)	2019թ.				Ընդամենը
		I կուրս		II կուրս		
		Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
1.	Լեզվաբանություն (անգլերեն)	4	-	2	1	7
2.	Լեզվաբանություն (ֆրանսերեն)	1	-	1	-	2
3.	Լեզվաբանություն (իտալերեն)	1	1	-	1	3
4.	Լեզվաբանություն (գերմաներեն)	-	-	-	-	0
5.	Լեզվաբանություն (ռուսերեն)	-	-	-	-	0
6.	Լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ	4	3	4	1	12
7.	Թարգմանչական գործ (ռուսերեն-անգլերեն-հայերեն)	3	-	3	-	6
8.	Թարգմանչական գործ (անգլերեն-հայերեն)	8	6	4	16	34
9.	Թարգմանչական գործ (ֆրանսերեն-հայերեն)	2	-	-	-	2
10.	Թարգմանչական գործ (գերմաներեն-հայերեն)	3	-	2	1	6
11.	Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)	1	-	-	-	1
12.	Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն)	-	-	-	-	0
13.	Միջմշակութային հաղորդակցություն (ռուսերեն)	1	-	-	-	1
14.	Օտար լեզու և գրականություն (ռուսերեն և գրականություն)	1	-	1	1	3
15.	Օտար լեզու և գրականություն (անգլերեն և գրականություն)	2	3	1	-	6
16.	Օտար լեզու և գրականություն (ֆրանսերեն և գրականություն)	2	-	2	-	4
17.	Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն (ռուսերեն)	-	-	1	-	1
18.	Մասնագիտական մանկավարժություն (անգլերեն և գրականություն)	6	12	7	7	32
19.	Մասնագիտական մանկավարժություն (ֆրանսերեն և գրականություն)	1	2	2	-	5
20.	Մասնագիտական մանկավարժություն (գերմաներեն և գրականություն)	1	-	-	-	1
21.	Մասնագիտական մանկավարժություն (ռուսերեն և գրականություն)	1	1	-	5	7
22.	Կառավարում (Հանրային կառավարում)	2	23	2	10	37
23.	Կրթական գիտություններ (Կրթության գնահատում և թեստավորում)	2	7	-	-	9


24	Սերվիս	3	8	4	11	26
25	Միջազգային հարաբերություններ	1	8	2	6	17
26	Քաղաքագիտություն	2	-	2	-	4
27	Եվրոպագիտություն	2	-	1	-	3
28	Լրագրություն	2	1	2	2	7
29	Հասարակայնության հետ կապեր	2	12	14	5	33
	Ընդամենը	58	87	57	67	269

Աղյուսակ 1.6. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների

N	Մասնագիտություն (ՄԿԾ)	Կուրս			Ընդամենը
		1	2	3	
1	Լեզվաբանություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ	1	4	5	10
2	Սերվիս	11	7	19	37
3	Կիրառական լեզվաբանություն	-	5	10	15
4	Մասնագիտական մանկավարժություն (անգլերեն և գրականություն)	26	25	21	72
5	Մասնագիտական մանկավարժություն (ֆրանսերեն և գրականություն)	2	2	-	4
6	Մասնագիտական մանկավարժություն (գերմաներեն և գրականություն)	1	1	3	5
7	Մասնագիտական մանկավարժություն (ռուսերեն և գրականություն)	10	7	4	21
8	Կառավարում (Հանրային կառավարում)	20	9	14	43
9	Լրագրություն	1	-	-	1
10	Հասարակայնության հետ կապեր	9	-	-	9
	Ընդամենը	81	60	76	217

Վերջին 3 տարիների ուսանողների թվաքանակի տվյալների համադրությունը (Գծապատկեր 1.3) ցույց է տալիս, որ 2019թ.-ի ցուցանիշները 2018թ.-ի համեմատությամբ գրանցել են որոշակի աճ, սակայն մագիստրատուրայի առկա և հեռակա համակարգերում, ինչպես նաև բակալավրիատի առկա համակարգում ուսանողների թվաքանակի ցուցանիշները դեռևս ցածր են 2017թ.-ի ցուցանիշների համեմատ: Միևնույն ժամանակ բակալավրիատի հեռակա համակարգում ուսանողների թվաքանակի աճի արդյունքում 2019թ.-ի այդ ցուցանիշը գերազանցում է 2017 թ.-ի ցուցանիշը: Դա հիմնականում պայմանավորված է 2018թ.-ին հեռակա համակարգում ուսումնառողների համար «Միջմշակութային հաղորդակցություն» բակալավրական ՄԿԾ-ի ներդրմամբ:


Գծապատկեր 1.3. 2017, 2018 և 2019թթ.-ին բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ու հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների թվաքանակը




Կրթական աստիճան	2017թ.	2018թ.	2019թ.
Մագիստրատուրա հեռակա	245	190	217
Մագիստրատուրա առկա	327	267	269
Բակալավրիատ հեռակա	464	420	489
Բակալավրիատ առկա	2114	1857	1915

ԵՊԼՀ-ի ուսանողական համակազմի տվյալների վերլուծությունը՝ ըստ առկա և հեռակա համակարգերի, ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների 75,5 %-ը սովորել է առկա, իսկ 4,4 %-ը՝ հեռակա ուսուցման համակարգերում (Գծապատկեր 1.4):


Գծապատկեր 1.4. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների թիվը և տոկոսային համամասնությունը






ԵՊՀ-ի ուսանողական համակազմի տվյալների վերլուծությունը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի, ցույց է տալիս, որ 2019-2020 ուսումնական տարում 1440 ուսանող կամ ուսանողական համակազմի **49,8 %-ը կազմել են ՀՀ մարզերից** ուսանողները, իսկ 1450 ուսանող կամ ուսանողական համակազմի **50,1%-ը՝ Երևան քաղաքից** (Գծապատկերներ 1.5 և 1.6):

Գծապատկեր 1.5. Ուսանողների թվաքանակի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի



Գծապատկեր 1.6. Ուսանողների թվաքանակի տոկոսային բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի



Երևան քաղաքից հետո ամենամեծ թվով ուսանողներ ԵՊՀ-ում սովորում են Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Արարազածոտնի և Սյունիքի մարզերից: Տվյալները՝ ըստ մարզերի, բերված են Աղյուսակ 1.7-ում:

Աղյուսակ 1.7. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների թվաքանակը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի

N	Ուսանողների թիվը					
	ՀՀ մարզեր	Բակալավրիատ (առկա)	Բակալավրիատ (հեռակա)	Մագիստրատուրա (առկա)	Մագիստրատուրա (հեռակա)	Ընդամենը
1.	Երևան	854	314	175	107	1450
2.	Արագածոտն	99	22	9	7	137
3.	Արարատ	144	26	5	16	191
4.	Արմավիր	171	29	14	20	234
5.	Գեղարքունիք	80	19	7	8	114
6.	Լոռի	94	16	8	9	127
7.	Կոտայք	197	39	21	19	276
8.	Շիրակ	70	8	13	7	98
9.	Սյունիք	109	9	6	8	132
10.	Վայոց ձոր	33	4	2	9	48
11.	Տավուշ	64	3	9	7	83

ԵՊԼՀ-ի սովորողների՝ վերջին երեք ուսումնական տարիների ընդհանուր թվաքանակի սովալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սովորողների թիվը 2018-2019 ուստարում 2017-2018 ուստարվա համեմատությամբ նվազել է 13,5%-ով կամ 441 սովորողով: Վերջինս պայմանավորված էր 2018թ.-ին երկրում շրջանավարտների թվի կտրուկ կրճատմամբ, և որպես հետևանք՝ ԵՊԼՀ ընդունված ուսանողների թվաքանակը էականորեն նվազել է: 2019-2020 ուստարում ԵՊԼՀ-ի սովորողների ընդհանուր թվաքանակը աճել է 5,1%-ով կամ 150 սովորողով: Տվյալները բերված են Աղյուսակ 1.8-ում:

Աղյուսակ 1.8. Սովորողների թվաքանակը՝ ըստ վերջին երեք ուսումնական տարիների

Սովորողների թվաքանակ		
2017-2018 ուս. տարի	2018-2019 ուս. տարի	2019-2020 ուս. տարի
3253	2812	2963

Ուսումնական գործընթացի կազմակերպում

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման, իրականացման աշխատանքներն ընթացել են արդյունավետ և համակարգված՝ հանաձայն սահմանված կարգերի: Սահմանված ժամկետներում պլանավորվել և կազմակերպվել են 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2019-2020 ուսումնական տարվա ուսումնական գործընթացները: Մասնավորապես՝

- հաշվարկվել են 2019-2020 ուսումնական տարվա ամբիոնների և ԳՈՒԿ-երի **տարեկան ժամաքանակները և ուսումնական բեռնվածությունները**, որոնց հիման վրա կազմվել և հաստատվել են ամբիոնների և ԳՈՒԿ-երի **ՊԴ կազմի տարեկան անհատական բեռնվածությունները**.
- տարեկան ժամահաշվարկներում և ՊԴ կազմի տարեկան բեռնվածություններում, ըստ անհրաժեշտության, պարբերաբար կատարվել են փոփոխություններ՝ պայմանավորված դասախոսների և ուսանողների ընթացիկ շարժով.
- ամբիոններն ու ԳՈՒԿ-երը կազմել և ուսումնական բաժին են ներկայացրել 2018-2019 ուսումնական տարվա **աշխատանքային պլանների, տարեկան բեռնվածությունների կատարման հաշվետվությունները**.
- կազմվել և հաստատվել են **լսարանային ֆոնդի կիսամյակային բեռնվածության ժամանակացույցերը**.
- ուսումնական բաժնի կողմից մշակվել և ռեկտորատի կողմից հաստատվել են **«Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուսումնական տարվա գործունեության կազմակերպման և վերահսկման, ինչպես նաև ԵՊԼՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա, հեռակա ուսուցման համակարգերի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցերը**,
- համաձայն ժամանակացույցերի՝ կազմվել և հաստատվել են բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի 2019-2020 ուսումնական տարվա **կիսամյակային դասացուցակները, ուսանողների գիտելիքների ստուգման**

միջկիսամյակային և ամփոփիչ քննությունների ժամանակացույցերը, տարվա ընթացքում իրականացվել է մշտական վերահսկողություն դրանց կատարման ուղղությամբ.

- կազմակերպվել ու վերահսկվել են ուսանողների՝ **կուրսից կուրս փոխադրման, առաջադիմության մրցութային արդյունքներով փոխադրման, վերականգնման, հեռացման, ինչպես նաև ներհամալսարանական և արտաքին շարժունության գործընթացները**.

- ըստ անհրաժեշտության՝ իրականացվել են այլ աշխատանքներ:

Ուսանողության առաջադիմության տվյալները մուտքագրելու, ամբիոնների բեռնվածություններն ու դասացուցակները կազմելու գործընթացները առավելապես արդյունավետ դարձնելու համար նախորդ տարում ԵՊԼՀ-ն ձեռնամուխ էր եղել **«Ռեգիստրար» էլեկտրոնային համակարգի գործարկմանը**: 2019թ.-ին համակարգ են մուտքագրվել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա, հեռակա ուսուցման ուսումնական նոր պլանները, բուհի ՊԴ կազմի անձնական տվյալները, բոլոր ֆակուլտետների ուսանողների անձնական տվյալները՝ ըստ մասնագիտությունների, կրթության աստիճանի և ձևի, ինչպես նաև դասավանդվող պարտադիր և կամընտրական առարկայացանկերը՝ ըստ ՄԿԾ-ների ուսումնական պլանների: «Ռեգիստրար» էլեկտրոնային համակարգի մեկնարկը նախատեսվում է տալ 2020 թ-ին:

2017-2018 ուսումնական տարում ԵՊԼՀ-ի բոլոր ֆակուլտետներում ներդրվել էին **ուսանողության շարժի էլեկտրոնային գրանցամատյանները**, որոնք ներառում են բակալավրիատի և մագիստրատուրայի առկա, հեռակա ուսուցման բոլոր ուսանողների տվյալները: 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիներին այդ գրանցամատյանների վարման աշխատանքները շարունակվել են:

Հաշվետու ժամանակահատվածում գործարկվել է **ԵՊԼՀ-ում հիմնական մասնագիտական կրթությանը զուգահեռ մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ կրթության կազմակերպման և իրականացման կանոնակարգը**: Սակայն լրացուցիչ որակավորմամբ կրթություն ստանալու դիմում են ներկայացրել ընդամենը 4 ուսանող, որը պայմանավորված է գործընթացի նոր լինելու հանգամանքով:

2018-2019 ուստարում ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման և արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝

- ԵՊԼՀ-ի հավատարմագրմանն անհրաժեշտ փաստաթղթային ողջ փաթեթը (ինքնավերլուծություն և հարակից այլ փաստաթղթերը),
- ԵՊԼՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի բոլոր ՄԿԾ-ների ուսումնական պլանները՝ բենչմարքինգի արդյունքում:

2019-2020 թթ-ն ուսումնական գործընթացը կազմակերպվել է՝ ըստ հաստատված նոր ուսումնական պլանների: Մշակման գործընթացում է ԵՊԼՀ-ում ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը:

Ողջ տարվա ընթացքում լրացուցիչ ծառայություններ (օրինակ՝ ԵՊԼՀ-ի դիպլոմի կրկնօրինակի պատրաստում և տրամադրում, դիպլոմի և դիպլոմի հավելվածի (միջուկի) հաստատում, դիպլոմի հավելվածի (միջուկի) կրկնօրինակի տրամադրում և այլն) են տրամադրվել համապատասխան ստորաբաժանումների, և 2018թ.-ի դեկտեմբերից մինչև 2019թ. նոյեմբեր այդ ծառայությունների մատուցման համար համալսարանի հաշվապահություն մուտք է արվել 713 հազար 500 դրամ այն դեպքում, երբ ԵՊԼՀ-ի ներկա ուսանողներին այդ ծառայությունները

մատուցվում են անվճար: Այս ցուցանիշը ակնհայտորեն փաստում է ԵՊԼՀ-ի շրջանավարտների և ուսանողների շարժունության բարձր մակարդակը:

2019թ.-ի ընդունելության արդյունքներ

2019թ.-ին ԵՊԼՀ ընդունվել են 1037 ուսանողներ, որը բավականին բարձր ցուցանիշ է 2018թ.-ի ընդունելության արդյունքների (2018թ.-ին ընդունվել էր 483 ուսանող) և ընդհանուր առմամբ հանրապետական միջին ցուցանիշի համեմատությամբ: **2019թ.-ին ընդունելության ցուցանիշը 2018թ.-ի նկատմամբ աճել է 53,03%-ով:**

Դիմորդների թվաքանակի աճը պայմանավորված է մի քանի գործոններով՝

- ԵՊԼՀ-ում նոր ՄԿԾ-ների ներդրմամբ,
- ԵՊԼՀ-ի գործունեության շարունակական լուսաբանմամբ և այն առավելագույնս տեսանելի դարձնելու նպատակով հանրության շրջանում մեծածավալ աշխատանքների ակտիվ իրականացմամբ. նկարահանվել է հոլովակ, որում հակիրճ ներկայացվել են ԵՊԼՀ-ի ծավալած գործունեությունը և ՄԿԾ-ները, կազմակերպվել են հանդիպումներ թիրախային խմբերի հետ, թարմացվել և հասանելի է դարձել համալսարանի կայքէջը, իրականացվել են ծրագրեր դպրոց-համալսարան համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ"
- ընդունելության քննությունների ցանկի փոփոխությամբ:

2019թ.-ին ԵՊԼՀ ընդունված 1037 ուսանողներից 920-ը կամ 89%-ը ընդունվել են վճարովի, իսկ 117-ը կամ 11%-ը՝ անվճար ուսուցման համակարգ:

Ստորև՝ Աղյուսակ 1.9-ում, ներկայացված են 2019թ.-ի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները՝ ըստ անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման համակարգերի:

Աղյուսակ 1.9. 2019թ.-ին ԵՊԼՀ-ի բակալավրիատ և մագիստրատուրա ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ անվճար-վճարովի և հեռակա-առկա ուսուցման համակարգերի

Բակալավրիատ				Մագիստրատուրա			
Առկա ուսուցում		Հեռակա ուսուցում		Առկա ուսուցում		Հեռակա ուսուցում	
Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի
56	618	2	135	58	87	1	80
Անվճար ուսուցման համակարգ				117 (11%)			
Վճարովի ուսուցման համակարգ				920 (89%)			
Ընդամենը				1037			

2019թ.-ին ԵՊԼՀ ընդունված ուսանողների թվաքանակի վերլուծությունը՝ **ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի, ցույց է տալիս, որ 1037 ուսանողից 46,28%-ը Երևան քաղաքից են, իսկ 53,71%-ը՝ ՀՀ մարզերից:**

ՀՀ մարզերից ԵՊՀՀ ընդունված ուսանողների հիմնական մասը Կոտայքի մարզից են՝ ընդունվածների ընդհանուր թվաքանակի 12,05%-ը: Արմավիրի մարզից ընդունված ուսանողները կազմում են ընդունվածների ընդհանուր թվաքանակի 10,7%-ը, իսկ 7,32%-ը՝ Արարատի մարզից են: ԵՊՀՀ ընդունված ուսանողների թվաքանակները և տոկոսային համամասնությունները՝ ըստ ՀՀ մարզերի, տրված են Աղյուսակ 1.10-ում:

Աղյուսակ 1.10. 2019թ.-ին ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ մարզերի

Ուսանողների թվաքանակ					
ՀՀ մարզեր	Առկա ուսուցում		Հեռակա ուսուցում		Տոկոսային բաշխում
	Բակա-լավրիա	Մագիստրա-տուրա	Բակա-լավրիա	Մագիստրա-տուրա	
Երևան	262	82	90	46	46,28%
Արագածոտն	29	6	9	4	4,62%
Արարատ	60	6	4	6	7,32%
Արմավիր	78	16	11	6	10,7%
Գեղարքունիք	33	3	3	2	3,95%
Լոռի	25	4	2	4	3,37%
Կոտայք	101	8	10	6	12,05%
Շիրակ	21	9	3	2	3,37%
Սյունիք	34	4	3	3	4,24%
Վայոց ձոր	9	1	-	-	0,96%
Տավուշ	22	6	2	2	3,08%
Ընդամենը	674	145	137	81	100%
	1037				

Համեմատության համար նշենք, որ 2018թ.-ին ԵՊՀՀ ընդունվել էր 483 ուսանող, որոնց 47,61%-ը Երևան քաղաքից էին, իսկ 52,38%-ը՝ ՀՀ մարզերից, ինչը ցույց է տալիս, որ ուսանողների համամասնությունը՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի, գրեթե չի փոփոխվել:

Ակնհայտորեն ԵՊՀՀ-ն առանձնանում է որպես բուհ, որտեղ սովորում են մեծ թվաքանակով ուսանողներ մարզերից և գյուղական բնակավայրերից: Այսպես, առանձին մարզերից ԵՊՀՀ ընդունված ուսանողների տոկոսային համամասնության (հաշվարկված ընդունվածների ընդհանուր թվից) համեմատությունը հանրապետական միջին ցուցանիշների հետ հստակ ցույց է տալիս, որ Արարատ, Արմավիր, Կոտայք մարզերից ԵՊՀՀ ընդունված ուսանողների տոկոսը գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշները, իսկ Արագածոտն մարզի համար այն գրեթե նույնն է: Ինչ վերաբերում է մյուս մարզերին, ապա հարկ է նշել, որ հանրապետական ցուցանիշները ներառում են համապատասխան մարզի բուհն ընդունված ուսանողների տոկոսը: Ուստի բնական է, որ այդ մարզերից ԵՊՀՀ ընդունված ուսանողների տոկոսը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից (Աղյուսակ 1.11):

**Աղյուսակ 1.11 ՀՀ մարզերից ՀՀ բուհեր և ԵՊՀՀ ընդունված ուսանողների տոկոսը
ընդունվածների ընդհանուր թվից²**

ՀՀ մարզեր	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
ՀՀ բուհեր ընդունվածներ (% ընդհանուր թվից)	4.8	6.7	6.6	5.8	8.7	9	8.5	5.6	2.2	4.9
ԵՊՀՀ ընդունվածներ (% ընդհանուր թվից)	4.6	7.3	10.7	3.9	3.4	12	3.4	4.2	1	3.1

Վերլուծվել են նաև 2019թ.-ի ընդունելության արդյունքում ԵՊՀՀ-ում թափուր մնացած տեղերի տվյալները: Ստորև՝ Աղյուսակներ 1.12-ում և 1.13-ում, ներկայացված են 2019թ.-ի ընդունելության արդյունքում բակալավրիատում և մագիստրատուրայում թափուր մնացած տեղերի մասին տվյալները՝ ըստ մասնագիտությունների և առկա-հեռակա ու անվճար-վճարովի ուսուցման համակարգերի:

**Աղյուսակ 1.12. 2019թ.-ի ընդունելության արդյունքում թափուր մնացած տեղեր
(բակալավրիատ)**

Մասնագիտություն	Բակալավրիատ (առկա)		Բակալավրիատ (հեռակա)
	Անվճար	Վճարովի	
Լեզվաբանություն			
Անգլերեն	1	14	16
Ֆրանսերեն	-	22	19
Գերմաներեն	-	26	-
Իտալերեն	1	23	19
Ռուսերեն	-	9	-
Միջմշակութային հաղորդակցություն			
Անգլերեն	-	-	47
Ֆրանսերեն	-	-	
Գերմաներեն	-	2	
Ռուսերեն	-	16	-
Մասնագիտական մանկավարժություն			
Անգլերեն և գրականություն	-	85	40

² 2019 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վերլուծություն, Գնահատման և թեստավորման կենտրոն, Երևան, 2019, էջ 27,
<http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019--MIASNAKAN%20YNDHANUR.pdf>:

Ֆրանսերեն և գրականություն	-	42	-
Գերմաներեն և գրականություն	-	43	19
Ռուսերեն և գրականություն	-	15	7
Թարգմանչական գործ			
Անգլերեն-հայերեն	-	-	-
Ռուսերեն-հայերեն	-	1	-
Ռուսերեն- անգլերեն-հայերեն	-	32	-
Ֆրանսերեն-հայերեն	-	12	-
Գերմաներեն-հայերեն	-	9	-
Չինարեն-հայերեն	-	-	-
Իսպաներեն-հայերեն	-	-	-
Կորեերեն-հայերեն	-	-	-
Իտալերեն-հայերեն	-	8	-
Քաղաքագիտություն	-	28	-
Լրագրություն	-	21	14
Սերվիս	-	-	-
Օտար լեզու և գրականություն (ռուսերեն)	-	-	1
Ընդամենը	2	408	182

Աղյուսակ 1.13. 2019թ.-ի ընդունելության արդյունքում թափուր մնացած փեղեր (մագիստրատուրա)

Մասնագիտություն	Մագիստրատուրա (Առկա)		Մագիստրատուրա (Հեռակա)
	Անվճար	Վճարովի	Վճարովի
Քաղաքագիտություն	-	25	-
Միջազգային հարաբերություններ	-	15	-
Թարգմանչական գործ			
Անգլերեն-հայերեն	2	14	-
Գերմաներեն-հայերեն	-	9	-
Ֆրանսերեն-հայերեն	-	9	-
Ռուսերեն-անգլերեն-հայերեն	-	8	-
Միջմշակութային հաղորդակցություն			
Անգլերեն	-	2	-
Ֆրանսերեն	-		-
Գերմաներեն	-		-
Ռուսերեն	-		-
Լեզվաբանություն			
Անգլերեն	1	14	-
Ֆրանսերեն	-	8	-
Իտալերեն	-	7	-
Կիրառական լեզվաբանություն		50	49
Օտար լեզու և գրականություն			
Ռուսերեն և գրականություն	-	4	-
Անգլերեն և գրականություն	-	-	-

Ֆրանսերեն և գրականություն	-	1	-
Մասնագիտական մանկավարժություն			
Անգլերեն և գրականություն	-	13	9
Ֆրանսերեն և գրականություն	-	13	8
Գերմաներեն և գրականություն	-	12	9
Ռուսերեն և գրականություն	1	12	-
Սերվիս	-	34	39
Եվրոպագիտություն	-	31	-
Լրագրություն	-	17	14
Հանրային կառավարում	-	-	-
Կրթության գնահատում և թեստավորում	-	11	-
Հասարակայնության հետ կապեր	-	5	16
Ընդամենը	4	314	144

ԵՊԼՀ ընդունված ուսանողների թվաքանակի վերլուծությունն ըստ սեռերի ցույց է տալիս, որ 2019թ.-ին ընդունված ուսանողների ընդամենը 4,33% են կազմում արական սեռի ներկայացուցիչները: Նշված տոկոսային համամասնության ցուցանիշը գրեթե չի փոփոխվել 2018թ.-ի նկատմամբ: Սակայն բացարձակ թվով 2019թ.-ին ԵՊԼՀ ընդունված արական սեռի ներկայացուցիչները նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ մոտ 2 անգամ ավելի են:

Աղյուսակներ 1.14-ում և 1.15-ում բերված են 2019թ.-ին և 2018թ.-ին ԵՊԼՀ ընդունված ուսանողների թվաքանակի մասին տվյալները՝ ըստ ֆակուլտետների, մասնագիտությունների և սեռերի:

Աղյուսակ 1.14. 2019թ.-ին ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ ֆակուլտետների և սեռի

Ֆակուլտետ	Արական	Իգական
Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ	17	175
Թարգմանության և միջմշակութային հաղորդակցությունների ֆակուլտետ	12	361
Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետ	4	201
Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետ	12	255
Ընդամենը	45	992

Աղյուսակ 1.15. 2018 – 2019թթ.-ին ընդունված արական սեռի ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	2019թ.	2018թ.
Մասնագիտական մանկավարժություն		
Անգլերեն և գրականություն	3	
Ֆրանսերեն և գրականություն	1	1
Լեզվաբանություն		
Անգլերեն	4	2
Ֆրանսերեն	1	
Գերմաներեն	1	

Իտալերեն	1	
Ռուսերեն	2	
Թարգմանչական գործ		
Ռուսերեն - անգլերեն - հայերեն	2	1
Ռուսերեն - հայերեն	1	
Անգլերեն - հայերեն	4	2
Գերմաներեն - հայերեն	1	
Կորեերեն - հայերեն	1	1
Միջմշակութային համագործակցություն		
Անգլերեն	5	2
Գերմաներեն	1	
Ֆրանսերեն	1	1
Ռուսաց լեզու և գրականություն	3	
Լեզվաբանություն և SS	1	
Քաղաքագիտություն	2	1
Սերվիս	8	8
Լրագրություն	2	
Կիրառական լեզվաբանություն		
Անգլերեն		1
Հասարակայնության հետ կապեր		1
Ընդամենը	45	21

Ըստ մասնագիտությունների բակալավրիատ և մագիստրատուրա ընդունելության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել բարձր ցուցանիշներ են արձանագրվել «Թարգմանչական գործ (անգլերեն-հայերեն)», «Սերվիս», «Կիրառական լեզվաբանություն», «Կառավարում» մասնագիտություններից՝ մատնանշելով աշխատաշուկայում դրանց պահանջարկը (Աղյուսակներ 1.16 և 1.17):

Աղյուսակ 1.16. 2019թ.-ին բակալավրիատ ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների, անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման համակարգերի

Մասնագիտություն	Բակալավրիատ (առկա)		Բակալավրիատ (հեռակա)
	Անվճար	Վճարովի	
Լեզվաբանություն			
Անգլերեն	6	75	13
Ֆրանսերեն	2	3	1
Գերմաներեն	2	1	-
Իտալերեն	-	4	1
Ռուսերեն	1	14	-
Միջմշակութային հաղորդակցություն			
Անգլերեն	6	109	28
Ֆրանսերեն	2	19	2
Գերմաներեն	1	19	3
Ռուսերեն	2	3	-

Մասնագիտական մանկավարժություն			
Անգլերեն և գրականություն	8	58	20
Ֆրանսերեն և գրականություն	2	3	-
Գերմաներեն և գրականություն	2	2	1
Ռուսերեն և գրականություն	2	1	3
Թարգմանչական գործ			
Անգլերեն-հայերեն	4	93	-
Ռուսերեն-հայերեն	1	7	-
Ռուսերեն-անգլերեն-հայերեն	1	10	-
Ֆրանսերեն-հայերեն	1	7	-
Գերմաներեն -հայերեն	1	10	-
Չինարեն-հայերեն	6	12	-
Իսպաներեն-հայերեն	1	9	-
Կորեերեն-հայերեն	2	10	-
Իտալերեն-հայերեն	-	2	-
Քաղաքագիտություն	1	22	-
Լրագրություն	1	7	6
Սերվիս	1	114	50
Օտար լեզու և գրականություն			
Ռուսաց լեզու և գրականություն	-	4	9
Ընդամենը	56	618	137

Աղյուսակ 1.17. 2019թ.-ին մագիստրատուրա ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների, անվճար-վճարովի և առկա-հեռակա ուսուցման համակարգերի

Մասնագիտություն	Մագիստրատուրա (առկա)		Մագիստրատուրա (հեռակա)
	Անվճար	Վճարովի	Վճարովի
Քաղաքագիտություն	2	-	-
Միջազգային հարաբերություններ	1	8	-
Թարգմանչական գործ			
Անգլերեն-հայերեն	8	6	-
Գերմաներեն-հայերեն	3	-	-
Ֆրանսերեն-հայերեն	2	-	-
Ռուսերեն-անգլերեն-հայերեն	3	-	-
Միջմշակութային հաղորդակցություն			
Անգլերեն	1	-	-
Ֆրանսերեն	-	-	-
Գերմաներեն	-	-	-
Ռուսերեն	1	-	-
Լեզվաբանություն			
Անգլերեն	4	-	-
Ֆրանսերեն	1	-	-
Իտալերեն	1	1	-

Կիրառական լեզվաբանություն	4	3	1
Օտար լեզու և գրականություն			
Ռուսերեն և գրականություն	1	-	-
Անգլերեն և գրականություն	2	3	-
Ֆրանսերեն և գրականություն	2	-	-
Մասնագիտական մանկավարժություն			
Անգլերեն և գրականություն	6	12	26
Ֆրանսերեն և գրականություն	1	2	2
Գերմաներեն և գրականություն	1	-	1
Ռուսերեն և գրականություն	1	1	10
Սերվիս	3	8	11
Եվրոպագիտություն	2	-	-
Լրագրություն	2	1	1
Հանրային կառավարում	2	23	20
Կրթության գնահատում և թեստավորում	2	7	-
Հասարակայնության հետ կապեր	2	12	9
Ընդամենը	58	87	81

Կարևոր է նշել, որ 2019թ.-ին ՀՀ բուհերի դիմորդների կողմից հայտագրված 10-ը **ամենապահանջարկված մասնագիտություններից 5-րդը եղել է ԵՊԼՀ-ի «Սերվիս»** մասնագիտությունը՝ դիմումների թվով (123 տեղի համար 864 դիմում՝ վճարովի բոլոր հայտերով, 1 տեղի վրա 7 դիմում) գերազանցելով անգամ ավանդորեն խիստ պահանջարկված այնպիսի մասնագիտությունների, ինչպիսիք են «Բուժական գործ», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Ֆարմացիա», «Ստոմատոլոգիա» մասնագիտությունները³:

2019թ.-ին **միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից** ԵՊԼՀ-ի բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում 2-րդ կուրսից ուսումնառությունը շարունակելու դիմում-հայտ են ներկայացրել 25 շրջանավարտ: Գործող կարգին համապատասխան՝ հավաքվել և ստուգվել են նրանց փաստաթղթերը, հաշվարկվել են առարկայական տարբերությունները, պատրաստվել են հրամանները:

ԵՊԼՀ-ի **բակալավրիատին առկա անվճար ուսուցմամբ** հատկացված 56 տեղերի համար կատարվել է 56 դիմորդի ընդունելություն:

ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին համապատասխան՝ ՄԿԾ-ների բարեփոխում, գործող մասնագիտությունների վերալիցենզավորում, նոր մասնագիտությունների լիցենզավորում

ԵՊԼՀ-ի ՄԿԾ-ները աշխատաշուկայի և շահառուների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում լիցենզավորման են պատրաստվել **«Մասնագիտական մանկավարժություն»** մասնագիտության **«Չինարեն և գրականություն»** մագիստրոսի և **«Ռուսաց լեզու և գրականություն»** բակալավրի ՄԿԾ-ները,

³ 2019 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վերլուծություն, Գնահատման և թեստավորման կենտրոն, Երևան, 2019, էջ 38,
<http://www.atc.am/files/verlucutyunner/2019/2019--MIASNAKAN%20YNDHANUR.pdf>:

ինչպես նաև «Կրթության գնահատում և թեստավորում» մագիստրոսի, «Զբոսաշրջություն» բակալավրի և մագիստրոսի, «Հասարակայնության հետ կապեր» բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ները:

2019թ.-ին ԵՊԼՀ-ն ՀՀ ԿԳՄՍՆ է ներկայացրել անհրաժեշտ լիցենզավորման փաստաթղթերը և ստացել առկա ուսուցմամբ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Չինարեն և գրականություն» մագիստրոսի, «Ռուսերեն և գրականություն» բակալավրի, ինչպես նաև «Կրթության գնահատում և թեստավորում» և «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսի ՄԿԾ-ների իրականացման լիցենզիաները: «Զբոսաշրջություն» բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների լիցենզիաները ստանալու համար ԵՊԼՀ-ն նախատեսում է դիմել ՀՀ ԿԳՄՍՆ 2020թ.-ին:

«Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Ռուսաց լեզու և գրականություն» բակալավրի, «Կրթության գնահատում և թեստավորում» և «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսի ՄԿԾ-ները ներդրվել են 2019թ.-ի սեպտեմբերից, իսկ «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության «Չինարեն և գրականություն» մագիստրոսի ՄԿԾ-ն կներդրվի 2020թ.-ի սեպտեմբերից:

2019թ.-ի ընթացքում ամբիոնների և ԳՌԻԿ-երի կողմից ուսումնասիրվել են օտարերկրյա համալսարանների համապատասխան կրթական ծրագրերը: Ուսումնասիրության արդյունքներով, 2019թ.-ին իրականացվել է ԵՊԼՀ-ի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման 24 ՄԿԾ-ների բենչմարքինգ և ինքնավերլուծություն, որոնք ներառվել են ԵՊԼՀ-ի հավատարմագրման գործընթացում: Բենչմարքինգի և վերլուծության արդյունքում մշակվել են ՄԿԾ-ների բարելավված փաթեթները՝ ներառյալ ուսումնառության արդյունքները (ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչների համապատասխան), գործնական և տեսական բոլոր դասընթացների նկարագրերը և ուսումնական նոր պլանները:

Ընթացիկ վերանայումներ են կատարվել նաև ԵՊԼՀ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի բոլոր մասնագիտությունների ՄԿԾ-ներում և կազմվել են դրանց ամբողջական փաթեթները, որոնք տեղադրվել են ԵՊԼՀ-ի կայքում՝ դարձնելով դրանք թափանցիկ և հասանելի բոլոր ուսանողների և դիմորդների համար:

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և ուսանողներին են տրամադրվել դասավանդվող տեսական առարկաների դասախոսությունների կամ դրանց սեղմագրերի էլեկտրոնային տարբերակները:

Ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացի և ամփոփիչ արեստավորման արժանիքների վերլուծություն

2019թ.-ին վերանայվել և վերահաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման կարգը:

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի և մագիստրատուրայի առկա, հեռակա ուսուցման համակարգերի **ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման գործընթացը** կազմակերպվել է՝ համաձայն սահմանված կարգի և ժամանակացույցերի: Բոլոր քննաշրջաններին հաջորդել են լուծարման առաջին և երկրորդ փուլերը: ՀՀ ԿԳ նախարարի՝ 2018թ. դեկտեմբերի 17-ի 1676-Ն որոշման համաձայն՝ կազմակերպվել է 12 կրեդիտի շրջանակում

առարկայական պարտքեր ունեցող ուսանողների դիմումների հավաքագրման և նրանց լուծարումների կազմակերպման գործընթացը:

2018-2019 ուսումնական տարում բակալավրիատի առկա ուսուցման համակարգում **գերազանց առաջադիմության միջին ցուցանիշը** կազմել է 19,7%, իսկ մագիստրատուրայում՝ 57,4%, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում՝ 8,3%, իսկ մագիստրատուրայում՝ 26,1%: Այս տվյալները ցույց են տալիս, որ մագիստրատուրայի ուսանողների առաջադիմությունն ավելի բարձր է, քան բակալավրիատի ուսանողներինը: Թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի առկա համակարգերի ուսանողների առաջադիմությունը ավելի բարձր է, քան հեռակա համակարգերի ուսանողներինը, քանի որ հեռակա ուսուցմամբ ուսանողների զգալի մասը սովորելուն զուգընթաց աշխատում է՝ հնարավորություն չունենալով լրացնել ուսանողի հաճախումների և լսարանային ակտիվության կուտակային գնահատականի ձևավորման բաղադրիչը:

Աղյուսակներ 1.18-ում, 1.19-ում, 1.20-ում և 1.21-ում ներկայացված են ուսանողների առաջադիմության տվյալները՝ ըստ ֆակուլտետների և առկա-հեռակա ուսուցման համակարգերի:

Աղյուսակ 1.18. Բակալավրիատի առկա ուսուցմամբ ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, 2018-2019 ուսումնական տարվա տվյալներ

Բակալավրիատ (առկա)				
Ֆակուլտետ	Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի (համաձայն գործող գնահատման սանդղակի)			
	Գերազանց (90-100)	Լավ (80-89.9)	Բավարար (60-79.9)	Անբավարար (0-59)
ՌՕԼՖ	11,4%	22,8%	38,1%	27,6%
ԹՄՀՖ	27,4%	37,7%	32,4%	2,3%
ԿՄՄՖ	23%	45%	27,4%	4,5%
ՍԳՍՖ	17,3%	50,6%	30,7%	1,1%
Միջին	19,7%	39%	32,1%	8,9%

Աղյուսակ 1.19. Բակալավրիատի հեռակա ուսուցմամբ ուսանողների առաջադիմության ցուցանիշներ՝ ըստ 2018-2019 ուսումնական տարվա տվյալների

Բակալավրիատ (հեռակա)				
Ֆակուլտետ	Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի (համաձայն գործող գնահատման սանդղակի)			
	Գերազանց (90-100)	Լավ (80-89.9)	Բավարար (60-79.9)	Անբավարար (0-59)
ՌՕԼՖ	0	3,7%	33,3%	62,9%
ԹՄՀՖ	25%	50%	25%	-
ԿՄՄՖ	5,8%	40,4%	45,4%	8,1%
ՍԳՍՖ	2,4%	18%	61,6%	18%
Միջին	8,3%	28%	41,3%	22,2%

Աղյուսակ 1.20. Մագիստրատուրայի առկա ուսուցմամբ ուսանողների առաջադիմության ցուցանիշները՝ ըստ 2018-2019 ուսումնական տարվա տվյալների

Մագիստրատուրա (առկա)				
Ֆակուլտետ	Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի (համաձայն գործող գնահատման սանդղակի)			
	Գերազանց (90-100)	Լավ (80-89.9)	Բավարար (60-79.9)	Անբավարար (0-59)
ՌՕԼՖ	65%	30%	5%	-
ԹՄՀՖ	57,7%	20%	22,2%	-
ԿՄՄՖ	47,2%	43%	9,7%	-
ՍԳՍՖ	60%	30%	10%	-
Միջին	57,4%	30,7%	11,7%	-

Աղյուսակ 1.21. Մագիստրատուրայի հեռակա ուսուցմամբ ուսանողների առաջադիմության ցուցանիշներ՝ ըստ 2018-2019 ուսումնական տարվա տվյալների

Մագիստրատուրա (հեռակա)				
Ֆակուլտետ	Ուսանողների առաջադիմությունը՝ ըստ ՄՈԳ-երի (համաձայն գործող գնահատման սանդղակի)			
	Գերազանց (90-100)	Լավ (80-89.9)	Բավարար (60-79.9)	Անբավարար (0-59)
ՌՕԼՖ	50%	50%	-	-
ԹՄՀՖ	-	-	-	-
ԿՄՄՖ	10,5%	45,9%	41,1%	2,3%
ՍԳՍՖ	17,9%	41,7%	38,8%	1,5%
Միջին	26,1%	45,8%	26,6%	1,26%

2018-2019 ուսումնական տարվա **ամփոփիչ ատեստավորման քննությունները** կազմակերպվել և անցկացվել են՝ սահմանված կարգին համապատասխան:

Պահանջվող ժամկետներում հաստատվել են շրջանավարտների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: Բոլոր ամբիոններում և ԳՈՒԿ-երում ղեկավարների կողմից կազմակերպվել են խորհրդատվություններ, մշտադիտարկումներ և նախապաշտպանություններ:

Ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ տվյալները բերված են ստորև՝ Աղյուսակներ 1.22-ում և 1.23-ում:

Աղյուսակ 1.22. 2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ արեստավորման արդյունքներ

Ֆակուլտետ	Բակալավրի որակավորում			Մագիստրոսի որակավորում		
	<i>Շնորհված դիպլոմների ընդհ. թիվը</i>	<i>Գերազանցությամբ դիպլոմների թիվը և տոկոսը՝ ընդհ. թվից</i>		<i>Շնորհված դիպլոմների թիվը ընդ. թիվը</i>	<i>Գերազանցությամբ դիպլոմների թիվը և տոկոսը՝ ընդհ. թվից</i>	
Առկա ուսուցում						
ԿՄՄՖ	145	26	17,93%	37	19	51,35%
ԹՄՀՖ	146	30	20,54%	22	16	72,72%
ՌՕԼՖ	128	24	18,75%	26	16	61,53%
ՍԳՍՖ	159	30	18,86%	59	35	59,32%
Ընդամենը՝ առկա	578	110	19,03%	144	86	59,72%
Հեռակա ուսուցում						
ՍԳՍՖ	41	-	-	25	-	-
ԿՄՄՖ	34	4	11,76%	59	7	11,86%
ՌՕԼՖ	6	-	-	-	-	-
Ընդամենը՝ հեռակա	81	4	8,33%	84	7	8,33%
Ընդամենը	659	114	40,78%	228	93	40,78%

2019թ.-ին «Միջազգային լրագրության» և «Քաղաքագիտության» մասնագիտությունների մեկական ուսանող չեն ներկայացել ամփոփիչ ատեստավորմանը, իսկ «Հանրային հաղորդակցություն», «Լեզվաբանություն», «Կրթության կառավարում» մասնագիտություններից համապատասխանաբար 4, 3 և 1 ուսանողներ ստացել են անբավարար գնահատական: 2019թ.-ին ընդհանուր թվով 11 ուսանող դիպլոմ չեն ստացել (Աղյուսակ 1.23):

Աղյուսակ 1.23. Ամփոփիչ արեստավորմանը չներկայացած և անբավարար գնահատված ուսանողներ

Կրթության աստիճան	Մասնագիտություն	Ուսանողների քանակ
Բակալավրիատ	Լեզվաբանություն	4
Բակալավրիատ	Միջազգային լրագրություն	1
Մագիստրատուրա	Քաղաքագիտություն	1
Մագիստրատուրա	Կրթության կառավարում	3
Մագիստրատուրա	Լեզվաբանություն	1
Մագիստրատուրա	Հանրային հաղորդակցություն	1
Ընդամենը	11	

Ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերլուծությունը փաստում է, որ գործընթացը կազմակերպվել և իրականացվել է բաժր մակարդակով: Այդ մասին վկայում են նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և անդամների բարձր գնահատականները: Դրական կարծիք է արտահայտվել հատկապես մագիստրոսական թեզերի որակի վերաբերյալ, որոնցից շատերը կարող են դիտվել որպես ամբողջական հետազոտական աշխատանքներ:

Ամփոփիչ ատեստավորման բակալավրական ավարտական աշխատանքները ևս բավարարում են որակավորման պահանջներին և ներառում են նորարարական գաղափարներ:

Պրակտիկաների կազմակերպում և անցկացում

ԵՊԼՀ-ի բոլոր ուսանողներն անցնում են մասնագիտական և մանկավարժական պրակտիկա՝ համաձայն ՄԿԾ-ների ուսումնական պլանների: Կազմակերպվող պրակտիկաները միտված են ապագա մասնագետների՝ համալսարանական կրթության ընթացքում ձեռք բերված տեսական գիտելիքների և ձևավորված հմտությունների զարգացմանը՝ գործնական կիրառման միջոցով:

2019թ.-ին պրակտիկաները հիմնականում անցկացվել են տարբեր կազմակերպություններում, որոնց հետ ամբիոնները և ԳՈՒԿ-երը ունեցել են պայմանագրեր և գրավոր համաձայնություններ: Բացի այդ, 2019թ.-ին ԵՊԼՀ-ն կնքել է մի շարք նոր պայմանագրեր ՀՀ Ազգային ժողովի, տարբեր նախարարությունների, մարզպետարանների, պետական կառույցների, ոլորտի գործատուների, դպրոցների և այլ կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով և բազմազանեցնելով ուսանողների պրակտիկայի հնարավորությունները և վայրերը:

Պրակտիկաների ընթացքում ամբիոնների և ԳՈՒԿ-երի կողմից կանոնավոր այցելություններ են կատարվել պրակտիկայի վայրեր, կազմակերպվել են դասալսումներ և կլոր սեղան-քննարկումներ: Բարելավվել են ընդունող կազմակերպությունների հետ աշխատանքային փոխհարաբերությունները, մասնավորապես՝ համակարգվել են հետադարձ կապի և կազմակերպությունների կողմից ուսանողների գիտելիքի, հմտությունների և կարողունակությունների մասին կարծիքների ու գնահատականների տրամադրման մեխանիզմները:

Բոլոր ուսանողների համար կազմվել են պրակտիկայի օրագրեր, որոնք ստուգվել են ամբիոնների և ԳՈՒԿ-երի կողմից: Պրակտիկաների ավարտին համապատասխան՝ ամբիոններում և ԳՈՒԿ-երում կազմակերպվել է ուսանողների հաշվետվությունների և պորտֆոլիոների ներկայացումը, որից հետո կատարվել է պրակտիկաների գնահատում:

Պրակտիկայի մասին ամփոփ տվյալները բերված են Աղյուսակ 1.24-ում:

Աղյուսակ 1.24. Առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների պրակտիկայի վերաբերյալ տվյալներ

Ֆակուլտետ	Պրակտիկա անցած բակալավրիատի ուսանողների թիվը		Պրակտիկա անցած մագիստրատուրայի ուսանողների թիվը	
	Առկա	Հեռակա	Առկա	Հեռակա
ՍԳՍՖ	159	43	63	25
ԿՄՄՖ	145	34	38	59
ՌՕԼՖ	127	6	26	-
ԹՄՀՖ	145	-	22	-

Հարկ է նշել նաև, որ 2019թ.-ին պրակտիկաների կազմակերպումից առաջ կատարվել է դրանց կազմակերպման ձևի, մոտեցումների համեմատական վերլուծություն (բենչմարքինգ), որի

հիման վրա մշակվել և փորձարկվել են պրակտիկայի նոր մոտեցումներ: Մասնավորապես՝ Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնը մշակել և ներդրել է պրակտիկայի նոր մոդել, որը ուղղված է ուսանողների մանկավարժական հմտությունները և կարողությունները զարգացնելուն՝ շարունակական պրակտիկայի մեխանիզմի կիրառմամբ: Համաձայն նոր մոդելի՝ բակալավրիատում պրակտիկան սկսվում է ուսուցման 3-րդ, իսկ մագիստրատուրայում՝ 2-րդ կիսամյակից, և ամեն փուլում ուսանողներին տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ որոշակի մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացման և ստուգման համար:

ԵՊՀ-ում, մասնագիտական հմտությունների զարգացումից բացի, պրակտիկայի ընթացքում կարևորվում է նաև աշխատանքային կարողությունների, աշխատանքային միջավայրին ինտեգրվելու, կատարած աշխատանքի մասին հաշվետվություն ներկայացնելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու և գործնական այլ հմտությունների ձևավորումը: Դրանով է պայմանավորված ԵՊՀ-ի շրջանավարտների մրցունակությունը աշխատանքի շուկայում:

Տարիների ընթացքում ունեցած կանոնավոր շփումների, փոխվստահության և փոխըմբռնման արդյունքում ձևավորվել է սերտ համագործակցություն կազմակերպությունների հետ, որտեղ ուսանողներն անցնում են պրակտիկա: Ամբիոնները և ԳՈՒԿ-երը ուսանողներին ընդունող կազմակերպությունների, գործատուների և ոլորտի մասնագետների հետ պարբերաբար կազմակերպում են մեթոդական սեմինարներ և կլոր սեղան-քննարկումներ՝ համապատասխանեցնելու ՄԿԾ-ներով սահմանված ուսումնառության վերջնարդյունքները գործատուների կողմից պահանջվող գիտելիքներին, հմտություններին և կարողունակություններին: Բացի այդ, ամբիոնների և ԳՈՒԿ-երի նիստերին մշտապես քննարկվում են պրակտիկային վերաբերող խնդիրները, հետագա անելիքները, և ներկայացվում են ընթացիկ հաշվետվություններ:

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ն մասնագիտական և մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման նպատակով ձեռնամուխ է եղել՝

- պրակտիկայի և կարիերային կողմնորոշման գործընթացների բարելավմանը,
- համալսարան-գործատու համագործակցության ընդլայնմանը և պրակտիկաների որակի գնահատման մեխանիզմների բարելավմանը,
- պրակտիկան ընդունող կազմակերպությունների հետ հետադարձ կապի մեխանիզմի բարելավմանը. գնահատումների, կարծիքների և առաջարկությունների հիման վրա ՄԿԾ-ներում և դրանց դասընթացներում բովանդակային համապատասխան փոփոխությունների կատարմանը:

ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը

ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի համալրումն ու տարակարգումն իրականացվում է որդեգրված քաղաքականությամբ, որի համաձայն՝ բոլոր ամբիոնները և ԳՈՒԿ-երն ապահովվում են համապատասխան որակավորում ունեցող դասախոսների անհրաժեշտ թվաքանակով՝ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման, շարունակական բարելավման և արդիականացման համար: Այդ նպատակով ԵՊՀ-ի ՊԴ կազմի համալրումը, առաջնադասումը

և այլ գործառնություններն իրականացվում են համապատասխան կարգերի, պաշտոնների անձնագրերի և դրանցից բխող գործընթացների հիման վրա:

ՊԴ կազմի հաստիքային միավորների թիվը, ինչպես և 2018թ.-ին, 2019թ.-ին կազմել է 269: Ստորև՝ Աղյուսակ 1.25-ում, ներկայացված է ՊԴ կազմի հաստիքային միավորների թվաքանակը վերջին 3 ուսումնական տարիների համար:

Աղյուսակ 1.25 ՊԴ կազմի հաստիքային միավորների թիվը, 2017-2019թթ.

ՊԴ հաստիքներ		
2017թ.	2018թ.	2019թ.
261	269	269


Ստորև՝ Աղյուսակ 1.26-ում և Գծապատկեր 1.7-ում, ներկայացված են ՊԴ կազմի՝ վերջին 3 ուսումնական տարիների թվաքանակի տվյալները:

Աղյուսակ 1.26. ՊԴ կազմի հիմնական և ոչ հիմնական աշխատողների թվաքանակի վերաբերյալ թվային տվյալները (2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիներ)

ՊԴ ԿԱԶՄ	2017-2018 ուստարի	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի
ՊԴ կազմի ընդհանուր թիվը	377	372	359
Հիմնական աշխատողներ թիվը, այդ թվում՝			
1. հաստիքային աշխատողներ թիվը	67	30	131
2. պայմանագրային աշխատողների թիվը	216	252	148
ՊԴ կազմի հիմնական աշխատողների ընդհանուր թիվը	283	282	279
Ոչ հիմնական աշխատողների թիվը, այդ թվում՝			
1. ժամավճարով աշխատողների թիվը	45	32	16
2. արտաքին համատեղությամբ աշխատողների թիվը	49	58	64
ՊԴ կազմի ոչ հիմնական աշխատողների ընդհանուր թիվը	94	90	80

Ինչպես երևում է Աղյուսակ 1.26-ից, նախորդ ուսումնական տարվա համեմատ 2019-2020 ուսումնական տարում 104-ով նվազել է պայմանագրային հիմունքով աշխատող դասախոսների թիվը, և 101-ով ավելացել է հիմնական աշխատողների թվաքանակը: Գրեթե կիսով չափ նվազել է նաև ժամավճարային հիմունքով աշխատող դասախոսների թիվը: Միևնույն ժամանակ ուղղորդված աշխատանքներ են կատարվել մասնագիտական և գործնական աշխատանքի հարուստ փորձառություն ունեցող ոլորտի առաջատար մասնագետներ հրավիրելու ուղղությամբ: Արդյունքում որոշակիորեն ավելացել է նաև արտաքին համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը:

Գծապատկեր 1.7. Հիմնական (հաստիքային ու պայմանագրային) ՊԴ կազմի և ժամավճարային ու արտաքին համարելությամբ աշխատող դասախոսների թվաքանակի վերաբերյալ թվային տվյալները (2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիներ)



Հարկ է նշել, որ ՊԴ կազմի մեծ մասի աշխատանքի 5-ամյա ժամկետները լրացել էին 2017 և 2018թթ.-ին: Մրցութային կարգով ՊԴ կազմի ընտրությունը կազմակերպելու նպատակով 2018թ.-ին մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել էր ՊԴ կազմի ձևավորման, մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգը, որը համալսարանը մինչ այդ չուներ: 2019թ.-ին մշակվել են նաև ՊԴ կազմի բոլոր պաշտոնների անձնագրերը, և կազմվել է մրցույթների անցկացման ժամանակացույցը, որի համաձայն՝ 2019թ.-ին անցկացվել են ՊԴ հաստիքների տեղակալման մեծաքանակ մրցույթներ: Արդյունքում պրոֆեսորի, դոցենտի և ավագ դասախոսի գրեթե բոլոր հաստիքները համալրվել են հիմնական աշխատողներով: 2020թ.-ին մրցույթների անցկացումը կշարունակվի:

2019թ.-ի ընթացքում մրցութային կարգով ընտրվել և նշանակվել են իրենց պաշտոններում նաև 2 ամբիոնի վարիչ:

Ուսումնական գործընթացի արդիականության և արդյունավետության բարձրացման նպատակով 2019թ.-ին աշխատանքներ են իրականացվել դասախոսական անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես՝ հարցումներ են իրականացվել ամբիոնների և ԳՈՒԿ-երի շրջանում՝ դասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման կարիքները վերհանելու և վերապատրաստման հիմնական ուղղությունները որոշելու նպատակով: Բոլոր ամբիոնները և ԳՈՒԿ-երը ներկայացրել են իրենց դասախոսական անձնակազմի վերապատրաստման կարիքները երեք՝ լեզվական, մասնագիտական, ՏՀՏ հմտությունների կատարելագործման ուղղությամբ: Ներկայացվել են նաև վերապատրաստման դասընթացներում ներգրավվող ՊԴ անձնակազմի նախնական ցուցակները՝ ըստ համապատասխան ուղղությունների: Ներկայումս կազմվում են ՊԴ կազմի մասնագիտական զարգացման վերապատրաստումների 5-ամյա պլանը, 2020թ.-ի ժամանակացույցը և վերապատրաստման դասընթացների բովանդակային փաթեթները:

ԵՊՀ-ն կարևորում է ՊԴ կազմի գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեության որակի ապահովումն ու խթանումը՝ հաշվի առնելով բուհի կրթագիտական


գործունեության շարունակական բարելավման ու բարձրորակ ծառայություններ մատուցելու հանձնառությունը: ԵՊԼՀ-ի գիտահետազոտական գործունեության առանցքային ցուցանիշներից են ՊԴ կազմի գիտական աստիճանները և կոչումները: Վերջիններս՝ որպես ՊԴ կազմի մասնագիտական առաջխաղացման ցուցանիշներ, ցույց են տալիս, թե համալսարանը որքանով է ինտեգրված ազգային մակարդակում գիտելիքահենք հասարակության զարգացման գործընթացներին և որքանով կարող է ապահովել իր մրցունակությունը:

Աղյուսակ 1.27-ում և Գծապատկեր 1.8-ում ներկայացված է գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թվաքանակը 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիներին, իսկ Գծապատկեր 1.9-ում՝ նրանց տոկոսային համամասնությունը դասախոսների ընդհանուր թվաքանակից 2019թ.-ին:


Աղյուսակ 1.27. Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թվային տվյալները 2018-2019 և 2019-2020 ուստարիներին

Գիտական աստիճան/կոչում	2018-2019 ուս. տարի	2019-2020 ուս. տարի
Գիտությունների դոկտոր	17	20 (5.6%)
Գիտությունների թեկնածու	153	146 (40.7%)
Պրոֆեսոր	17	17 (4.7%)
Դոցենտ	110	121 (33.7%)

Գծապատկեր 1.8. Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսների թվային տվյալները 2018-2019 և 2019-2020 ուստարիներին



Գծապատկեր 1.9. Գիտական աստիճանի և կոչում ունեցող դասախոսների տոկոսային համամասնությունը դասախոսների ընդհանուր թվաքանակից 2019թ.-ին



Ինչպես երևում է Գծապատկեր 1.9-ից, ՊԴ կազմի գրեթե կեսը՝ **46,2%-ը, ունեն գիտական աստիճան, իսկ 38,4%-ը՝ գիտական կոչում**: Հարկ է նշել, որ գիտական աստիճանի և կոչում ունեցող ՊԴ կազմի թիվը վերջին 3 ուսումնական տարիների ընթացքում աճել է, բայց ոչ մեծ թվաքանակով:

ՊԴ կազմի գերակշիռ մասն ունի զգալի ներդրում ու ճանաչում իր մասնագիտական ոլորտում, որն էլ որակի ապահովման տեսանկյունից որոշիչ դեր ունի համալսարանի գիտահետազոտական գործունեության բարձր որակի և մրցունակության ապահովման գործում:

ՊԴ կազմի միջին տարիքի ցուցանիշը գրեթե չի փոփոխվել վերջին երեք ուսումնական տարիներին՝ տատանվելով 42-ից 44 տարեկանի շրջանում (Աղյուսակ 1.28): Ընդհանուր առմամբ ՊԴ կազմի միջին տարիքի ցուցանիշները փաստում են, որ ԵՊՀ-ն վարում է երիտասարդ մասնագետներով համալրելու և առավել փորձառու դասախոսներին պահպանելու հավասարակշռված քաղաքականություն:

Աղյուսակ 1.28. ՊԴ կազմի միջին տարիքը վերջին 3 ուսումնական տարիներին

	2017-2018 ուս. տարի	2018-2019 ուս. տարի	2019-2020 ուս. տարի
ՊԴ կազմի միջին տարիքը	44	42	43

ՊԴ կազմի թվաքանակի վերլուծությունը ըստ սեռերի ցույց է տալիս, որ դասախոսների գերակշիռ մասը՝ 77.4% -ը, իգական սեռի են: Սակայն ՊԴ կազմի սեռային համամասնությունը վերջին երեք տարում որոշակիորեն բարելավվել է: Մասնավորապես՝ արական սեռի դասախոսների տոկոսը 2019-2020 ուսումնական տարում 2017-2018 ուսումնական տարվա համեմատությամբ աճել է 5.1%-ով՝ 17.5% -ից դառնալով 22.6%: Հարկ է նշել, որ իգական սեռի դասախոսների գերակայությունը գլխավորապես պայմանավորված է ԵՊՀ-ի գիտամանկավարժական ուղղությունների և իրականացվող կրթական ծրագրերի

առանձնահատկություններով (մանկավարժություն և մեթոդիկա, լեզվաբանություն, օտար լեզու և գրականություն և այլն), որոնք ավանդորդ են ավելի շատ գրավում են կանանց:


Ընդհանուր առմամբ ԵՊՀ-ում ՊԴ կազմի սեռային անհամաչափ բաշխվածությունը ոչ միայն ինստիտուցիոնալ, այլև համակարգային (ազգային) խնդիր է: Ելնելով վիճակագրական տվյալներից՝ կարելի է փաստել, որ ըստ մասնագիտական ուղղությունների սեռային անհամաչափ բաշխվածությունը, հատկապես հումանիտար գիտությունների և մանկավարժության ոլորտներում իգական սեռի ներկայացուցիչների գերակայությունը ազգային մակարդակում առկա կարևոր հիմնախնդիրներից է:

ԵՊՀ-ի ՊԴ կազմի սեռային համամասնությունը 2017-2018 և 2019-2020 ուսումնական տարիներին ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 1.29-ում և Գծապատկեր 1.10-ում:

Աղյուսակ 1.29. ՊԴ կազմի սեռային բաշխվածության փոփոխությունը (2017-2018 և 2019-2020 ուսումնական տարիներ)

Սեռ	2017-2018 ուստարի	2019-2020 ուստարի
<i>Արական</i>	66 (17.5%)	81 (22.6%)
<i>Իգական</i>	311 (82.5%)	278 (77.4%)

Գծապատկեր 1.10. ՊԴ կազմի սեռային բաշխվածության տոկոսային փոփոխությունը (2017-2018 և 2019-2020 ուսումնական տարիներ)



Ուսանող/ՊԴ կազմ, ուսանող/վարչակառավարչական կազմ (ՎԿ), ուսանող/ուսումնաօժանդակ կազմ (ՈԻՕ) հարաբերության ցուցանիշները 2019թ.-ի դեկտեմբերի դրությամբ կազմել են՝

- ուսանող/ՊԴ կազմ - 8.3,
- ուսանող/ ՈԻՕ կազմ- 62.4,
- ՎԿ/ուսանող -36.1:

Հարկ է նշել, որ ԵՊԼՀ-ն ունի SCS միջոցներով հագեցած լսարաններ, և բուհի դասախոսական կազմի մեծամասնությունը վաղուց արդեն անցել է ուսուցման նոր, արդիական ձևերի կիրառմանը: Այդուհանդերձ, ԵՊԼՀ-ի համար հրամայական է դասապրոցեսի արդիականացմանը նպատակաուղղված կոնկրետ միջոցառումների ձեռնարկումը, այդ թվում՝ լսարանային ֆոնդի հագեցումը տեխնիկական նոր միջոցներով, լեզվական լաբորատորիաների նյութատեխնիկական արդիականացումը և նորերի ստեղծումը:

II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ի կողմից իրականացված գիտահետազոտական գործունեությունը բխել է ԵՊՀ-ի 2019-2023թթ.-երի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 2-ում (Գիտահետազոտական գործունեություն)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները հակիրճ ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1 ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 2-ում (Գիտահետազոտական գործունեություն) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Խնդիր 1.	Համապատասխանեցնել ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներին՝ շեշտադրելով հետազոտական բաղադրիչը
Նախադրված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
2.1.1. Լրամշակել և արդիականացնել բակալավրի կրթական ծրագրերն ու դրանց կազմակերպման ընթացակարգերը՝ դրանք մագիստրոսական կրթության հետազոտական բնույթին համապատասխանեցնելու նպատակով:	Վերամշակվել են բակալավրիատի ուսումնական պլանները և առարկայական նկարագրերը՝ շեշտը դնելով հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացման վրա, որը հնարավորություն է տալիս ապահովել բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի միջև կապը և խրախուսել ուսանողների՝ գիտական հետազոտություն կատարելու հետաքրքրությունը: ՄԿԾ-ներում ներառվել են ակադեմիական շարադրանքին և հետազոտական մեթոդներին վերաբերող դասընթացներ: Վերոնշյալ նպատակով ավելացվել են նաև պրակտիկայի ժամերը՝ խթանելու ուսանողի անհատական և խմբային հետազոտական աշխատանքը:
2.1.2. Լրամշակել և արդիականացնել մագիստրոսի կրթական ծրագրերը՝ ապահովելով մագիստրատուրայում հետազոտական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:	Վերանայվել են մագիստրոսական բոլոր ՄԿԾ-ներում ներառված դասընթացները, մասնավորապես՝ կամընտրական դասընթացների մասնաբաժինը՝ մասնագիտական ուղղվածությունը շեշտադրելու նպատակով: Հստակեցվել է նաև պրակտիկումների բովանդակությունը, որը էականորեն բարձրացնում է

		գիտարտադրական պրակտիկայի արդյունավետությունը:
2.1.3. Մշակել հետազոտական աշխատանքների կատարման գործընթացները կանոնակարգող և խթանող ընթացակարգեր և գործիքակազմ:		Մշակվել է արտասահմանյան և ՀՀ գիտական հանդեսներում ԵՊՀ-ի ՊԴ կազմի կողմից հոդվածների հրապարակումը խրախուսելու և մրցութային կարգով գիտական հետազոտությունները ֆինանսավորելու նոր մեխանիզմներ: ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակումը խթանելու նպատակով «Բանբեր» գիտական պարբերականի 2019թ.-ին հրատարակված բոլոր 4 համարները տպագրվել են ԵՊՀ-ի ֆինանսական միջոցներով՝ ի տարբերություն նախորդ տարիների, երբ հոդվածի տպագրման ֆինանսավորումն իրականացվում էր հեղինակի կողմից:
Խնդիր 2.		Ապահովել ԵՊՀ հետբուհական կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներին և աշխատաշուկայի պահանջներին
Նախադրեցված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
2.2.1. Վերանայել հետբուհական կրթական ծրագրերը՝ գնահատելով ՀՀ աշխատաշուկայում հետբուհական կրթության առկա կարիքները և համապատասխանեցնելով դրանք ՀՀ ՈԱՇ-ի 8-րդ մակարդակի բնութագրիչներին:		ՀՀ աշխատաշուկայում հետբուհական կրթությանը և ՀՀ ՈԱՇ-ի 8-րդ մակարդակի բնութագրիչներին ներկայացվող պահանջներին համապատասխան՝ վերանայվել են հետբուհական կրթական ծրագրերը: Հետբուհական կրթական համակարգը կանոնակարգելու նպատակով մշակվել և հաստատվել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրանում ասպիրանտուրա ընդունվելու, հայցորդություն ձևակերպելու, ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում ուսումնառության կանոնակարգը:
2.2.2 Ուսումնասիրել աշխատաշուկայում ԵՊՀ-ի ուղղվածություններին համապատասխան հետբուհական կրթություն ստացած շրջանավարտների պահանջարկը և հետբուհական կրթության շրջանավարտների զբաղվածության մակարդակը:		Մշակվել է ուսումնասիրության մեթոդաբանություն՝ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության համար՝ միտված ԵՊՀ շրջանավարտների զբաղվածության և պահանջարկի ուսումնասիրման աշխատանքների բարելավմանը և տվյալների բազաների համալրմանը:
2.2.3. Համապատասխանեցնել ԵՊՀ-ի կողմից հրատարակվող գիտական		Մշակվել և հաստատվել են «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական

հանդեսների և ժողովածուների որակը միջազգային շտեմարանների պահանջներին և կատարել անհրաժեշտ քայլեր այդ հանդեսները «Սկոպուս» (Scopus) և/կամ «Վեբ ով Սայենս» (Web of Science) շտեմարաններում ընդգրկելու նպատակով:	համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը և «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» պարբերականում գիտական հոդվածներ հրատարակելու պահանջները՝ պարբերականի որակը բարձրացնելու և միջազգային հանդեսների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր ԵՊԼՀ-ի հանդեսները «Սկոպուս» (Scopus) շտեմարանում ընդգրկելու նպատակով: Գիտական խորհրդի կողմից հաստատված «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը և «Բանբեր» գիտական պարբերականում գիտական հոդվածներ հրատարակելու պահանջները համապատասխանեցված են միջազգային գիտական ամսագրերում հոդվածներ հրատարակելու պահանջներին:
2.2.4. Մեծացնել միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի կողմից հրապարակվող հոդվածների թվաքանակը:	2019թ.-ին աճել է միջազգային շտեմարաններում ընդգրկված հանդեսներում ՊԴ կազմի կողմից հրապարակված հոդվածների թվաքանակը, այդ թվում՝ միջազգային «Սկոպուս» (SCOPUS) շտեմարանում ընդգրկված ամսագրերում հոդվածների թիվը: Մասնավորապես՝ մեծացել է «Սկոպուս» շտեմարանի ամսագրերում հրատարակված հոդվածների թիվը՝ 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ այն աճել է 5-ով (100%-ով), իսկ 2019թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ՝ 4-ով (80%-ով): Միջազգային ամսագրերում հրատարակվել է 23 գիտական հոդված:
Խնդիր 4.	Մեծացնել և բազմազանեցնել գիտահետազոտական ծրագրերի թվաքանակը՝ ավելացնելով դրանց ֆինանսավորման ծավալները և բազմազանեցնելով ֆինանսական ներհուսքի աղբյուրները
Նախադրված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
2.4.1. Ըստ թիրախային ոլորտների՝ պարբերաբար մշակել գիտահետազոտական ծրագրեր՝ դրամաշնորհային ֆինանսավորում ապահովող ազգային և միջազգային մրցույթներին ներկայացնելու նպատակով:	2018թ.-ին մշակվել, հաստատվել և 2019թ.-ին սկսել է իրականացվել «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում (ՄԻՆԵՐՎԱ)» ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում: 2019թ.-ին մշակվել, հաստատվել և սկսել է իրականացվել «Լեզվական և կրթական տեխնոլոգիաների «ՀայԼինգվոՏեք» (HayLingvoTech)

	գերազանցության կենտրոնի ստեղծում» ծրագիրը և «ԵՄ օրենսդրությանը Հայաստանի օրենսդրության մոտարկման լաբորատորիա «Իրավական մոտարկման լաբորատորիա» (LegAL) Ժան-Մոնե մոդուլը:
2.4.2 Մշակել գիտահետազոտական նոր ծրագրեր՝ ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտե ներկայացնելու և ֆինանսավորում ստանալու նպատակով:	2019թ.-ին ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման հետևյալ 3 ծրագրերը և պայմանագրային թեմատիկ ֆինանսավորման գիտական 1 թեման՝ • «Հեռանկարային ուսումնասիրությունների և նախաձեռնությունների կենտրոն» ծրագիրը, • «Լեզվաբանական/լեզվական միջմշակութային կրթության նորարարական լաբորատորիայի ստեղծում» ծրագիրը, • «ՀՀ բարձրագույն կրթական հաստատություններում ուսանողակենտրոն քաղաքականության, մոդուլային ուսուցման հիմնախնդիրների, դասավանդման նոր մեթոդների ներդրման և ուսանողակենտրոն ուսուցման ընդլայնման հնարավորությունները» ծրագիրը, • «Զճանաչված պետությունների ինստիտուցիոնալ և անվտանգային զարգացման մոդելները (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետ՝ ԼՂՀ փորձը)» գիտական թեման: Նշված 3 բազային ծրագրերի հայտերը ներկայացվել են Գիտության կոմիտե նաև 2019թ.-ին և դրանց իրականացումը կշարունակվի 2020թ.-ին: Ի լրումն իրականացվող վերոնշյալ բազային ֆինանսավորման 3 ծրագրերի՝ 2019թ.-ին մշակվել և Գիտության կոմիտե է ներկայացվել ևս 1 ծրագիր՝ «Հայերենի շարահյուսական ծրագրերի (UD) բանկ, շարահյուսական և ձևաբանական վերլուծության թվային գործիքներ»: Վերջինս հաստատվել է Գիտության կոմիտեի կողմից էապես ցածր գումարով (մոտ 5 անգամ), ինչը հնարավոր չի դարձնում ծրագրի իրականացումը՝ նախանշված նպատակով և խնդիրներով: Բոլոր 4 ծրագրերը հաստատվել են Գիտության կոմիտեի կողմից և կիրականացվեն 2020թ. -ին: Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող ծրագրերը 2019թ.-ին՝ 2018թ.-ի համեմատությամբ զգալիորեն ավելացել են:
2.4.3. Ստեղծել լեզվական և կրթական	2019թ.-ին մշակվել է «ՀայԼինգվոՏեք» գերազանցության

տեխնոլոգիաների գերազանցության կենտրոն՝ զարգացնելով կիրառական լեզվաբանության և կրթական գիտությունների ոլորտներում հետազոտական ներուժը և միջոլորտային մասնագիտություններով տեխնոլոգիա հենք կրթությունը:	գիտակրթական կենտրոնի ստեղծման ծրագիրը, որը միտված է խթանելու թվային ենթակառուցվածքներում հայերենի լիարժեք օգտագործմանն ուղղված հետազոտությունները, զարգացնելու կիրառական լեզվաբանության ու կրթական գիտությունների ոլորտներում հետազոտական ներուժը, ինչպես նաև միջգիտակարգային մասնագիտություններով (Հաշվողական լեզվաբանություն, Համընթաց թարգմանություն) տեխնոլոգիա հենք կրթությունը: Ծրագիրը ներկայացվել է «Նորարարությունների մրցակցային հիմնադրամի» (այսուհետ՝ ՆՄՀ) մրցույթին և հաստատվել: Ծրագրի իրականացումը սկսվել է 2019թ.-ին:
Խնդիր 5.	Արտահանել գիտական արդյունքը ներքին և արտաքին շուկաներ՝ նպաստելով ԵՊՀ-ի ինտեգրմանը եվրոպական և հետազոտական այլ տարածքներ
Նախադրեցված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
2.5.1. Բարձրացնել ԵՊՀ-ի «Բանբեր» և «Քաղաքագիտական հանդես» պարբերականների, գիտական ժողովածուների, հանդեսների վարկանիշը՝ ներգրավելով խմբագրական կոլեգիաներում ԵՊՀ-ի մասնագիտական ոլորտներից փորձառու ներկայացուցիչների Հայաստանից և արտերկրից:	2019թ.-ին ԵՊՀ-ի «Բանբեր» և «Քաղաքագիտական հանդես» գիտական պարբերականների խմբագրական կոլեգիաների կազմերը վերանայվել են, և դրանցում ներգրավվել են փորձառու մասնագետներ Հայաստանից և արտերկրից՝ նպաստելով դրանց վարկանիշի բարձրացմանը: Արդյունքում նշված երկու գիտական պարբերականները ներառվել են ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) կողմից հաստատված գիտական հանդեսների 2019թ.-ի և 2020թ.-ի ցուցակներում:
2.5.2. Ապահովել ԵՊՀ-ի գիտական պարբերականներում, ժողովածուներում և հանդեսներում ընդգրկվող հոդվածների գործընկերային գրախոսում:	Գիտական հոդվածների որակի բարելավման նպատակով 2019թ.-ին կանոնակարգվել է ԵՊՀ-ի «Բանբեր» գիտական պարբերականում ընդգրկվող հոդվածների գրախոսման գործընթացը: Մշակվել է գրախոսի կարծիքի ձևանմուշը: «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգի և հոդվածներին ներկայացվող պահանջների համաձայն՝ պարբերականում ընդգրկված բոլոր հոդվածները գրախոսվել են համապատասխան ոլորտի մասնագետների կողմից:
2.5.3. Ստեղծել հրատարակչական խորհուրդ ԵՊՀ-ի գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատանքները քննարկելու և տպագրության երաշխավորելու	2019թ.-ին ԵՊՀ-ի գիտության բաժնին կից ստեղծվել է խմբագրական-հրատարակչական խորհուրդ, իսկ գիտական խորհրդին կից՝ գիտամեթոդական խորհուրդ, որոնք ուսումնասիրում և քննարկում են ԵՊՀ-ի՝ հրատարակման երաշխավորվող գիտամեթոդական և

համար:	ուսումնամեթոդական աշխատանքները:
2.5.4. Մշակել գրախոսվող ազգային և միջազգային գիտական պարբերականներում, հանդեսներում, ամսագրերում ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի հետազոտությունների հրատարակումը խթանող մեխանիզմներ:	Գրախոսվող ազգային և միջազգային գիտական պարբերականներում, հանդեսներում, ամսագրերում ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակումը խթանելու նպատակով մշակվել է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության և հաշվարկի նորմերը, որի համաձայն՝ ՊԴ կազմի ծանրաբեռնվածությունների մեջ գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների կատարման համար հատկացվող ժամաքանակը ավելացվել է: 2019թ.-ին, ի տարբերություն նախորդ տարիների, «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման ծախսերը կատարվել են ոչ թե հոդվածների հեղինակների, այլ ԵՊԼՀ-ի միջոցներով: Արդյունքում ԵՊԼՀ-ի ֆինանսավորմամբ հրատարակվել է «Բանբեր» գիտական պարբերականի 4 հերթական համար, որոնք ներառում են 62 գիտական հոդված: Հրատարակվել է նաև «Քաղաքագիտական հանդես» պարբերականի 4 հերթական համար (հայերեն և անգլերեն լեզուներով), որոնք ներառում են 22 գիտական հոդված: Մշակվել են արտասահմանյան և ՀՀ գիտական հանդեսներում ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի կողմից գիտական հոդվածների հրապարակումը խրախուսելու և մրցութային կարգով գիտական հետազոտությունները ֆինանսավորելու նոր մեխանիզմներ:

Ստորև ներկայացված է ԵՊԼՀ-ի կողմից 2019թ.-ի ընթացքում իրականացված գիտահետազոտական գործունեության վերլուծությունը:

Հետբուհական կրթություն

Բարձր որակավորմամբ կադրեր (դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ) պատրաստելու նպատակով ԵՊԼՀ-ն 1963թ.-ից իրականացնում է հետբուհական կրթություն, որի արդյունավետության բարձրացումը ԵՊԼՀ-ի գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարության առանցքային ուղղություններից է:

Դոկտորանտների, ասպիրանտների, հայցորդների տվյալները վերջին 3 ուսումնական տարիներին

ԵՊՀ-ն իրականացնում է **հետբուհական կրթություն 8 մասնագիտություններով**՝ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների համար: Համաձայն սահմանված կարգի՝ ասպիրանտների և հայցորդների ուսուցումը կազմակերպվում է կրեդիտային համակարգով:

2019-2020 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ԵՊՀ-ում հետբուհական կրթություն ստացողների թիվը կազմել է 73 սովորող (1 դոկտորանտ, 27 ասպիրանտ, 45 հայցորդ):

2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտին ԵՊՀ-ում հետբուհական կրթություն ստացող սովորողների թիվը կազմել է **61 սովորող**, այդ թվում՝

- **1 դոկտորանտ,**
- **4 առկա ուսուցմամբ ասպիրանտ,**
- **18 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ,**
- **38 հայցորդ:**

2019-2020 ուսումնական տարում ԵՊՀ ընդունվել է 3 հեռակա ասպիրանտ, ձևակերպվել է 4 հայցորդ, իսկ ուսումնառությունն ավարտել է հեռակա ուսուցմամբ 8 ասպիրանտ և 10 հայցորդ: Բացի այդ, 2019-2020 ուսումնական տարում ազատվել է 1 հայցորդ (իր դիմումի համաձայն): Այսպիսով, 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում շարժը կազմում է 19 սովորող:

2018-2019 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ԵՊՀ-ում հետբուհական կրթություն ստացողների թիվը կազմել է **101 սովորող** (2018-2019 ուսումնական տարվա սկզբին 1 հայցորդ իր դիմումի համաձայն ազատվել է), այդ թվում՝


- 2 դոկտորանտ,
- 3 առկա ասպիրանտ,
- 27 հեռակա ասպիրանտ,
- 69 հայցորդ:

2018-2019 ուսումնական տարում ԵՊՀ ընդունվել է 8 ասպիրանտ, և ձևակերպվել է 4 հայցորդ, ավարտել է 1 դոկտորանտ, 8 ասպիրանտ (2-ը՝ առկա և 6-ը՝ հեռակա ուսուցմամբ) և 25 հայցորդ: Բացի այդ, 2018-2019 ուսումնական տարում ազատվել է 1 հեռակա ասպիրանտ (իր դիմումի համաձայն) և 4 հայցորդ (3-ը՝ իրենց դիմումների համաձայն, 1-ը՝ չատեստավորվելու պատճառով):

Այսպիսով, 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում հետբուհական կրթություն ստացողների շարժը կազմել է 28 **սովորող**, և ուսումնական տարվա ավարտին՝ հուլիսի 15-ի դրությամբ, նրանց թիվը դարձել է **73 սովորող** (Գծապատկեր 2.1), այդ թվում՝

- 1 դոկտորանտ,
- 4 առկա ասպիրանտ,
- 24 հեռակա ասպիրանտ,
- 44 հայցորդ:

**Գծապատկեր 2.1. Հետքուհական կրթություն ստացող սովորողների թիվը
(2018-2019 ուսումնական տարի)**




2017-2018 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ԵՊՀ-ում հետքուհական կրթություն են ստացել **117 սովորող**, այդ թվում՝

- 2 հոկտոբրանտ,
- 5 առկա ասպիրանտ,
- 33 հեռակա ասպիրանտ,
- 77 հայցորդ:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում հետքուհական կրթություն ստացողների շարժը կազմել է **15 սովորող**, և ուսումնական տարվա ավարտին՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ, նրանց թիվը կազմել է **102 սովորող** (Գծապատկեր 2.2), այդ թվում՝

- 1 հոկտոբրանտ,
- 2 առկա ասպիրանտ,
- 27 հեռակա ասպիրանտ,
- 72 հայցորդ:

**Գծապատկեր 2.2. Հետքուհական կրթություն ստացող սովորողների թիվը
(2017-2018 ուսումնական տարի)**




Թվային վերլուծության արդյունքում երևում է, որ վերջին 3 ուսումնական տարիների ընթացքում զգալիորեն նվազել է հետբուհական կրթություն ստացող սովորողների ընդհանուր թիվը, որը հիմնականում պայմանավորված է հայցորդների թվի նվազմամբ: Վերջինս հիմնականում պայմանավորված է նրանով, որ հայցորդները դժվարանում են վճարել ուսման վարձը:

2019-2020 ուսումնական տարվա սկզբին 2018-2019 ուսումնական տարվա սկզբի համեմատ հետբուհական կրթություն ստացողների թիվը նվազել է 28 սովորողով, իսկ 2018-2019 ուսումնական տարվա սկզբին 2017-2018 ուսումնական տարվա սկզբի համեմատ՝ 16 սովորողով:

Հետբուհական կրթություն ստացող սովորողների վերաբերյալ 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիների շարժը ներկայացված է Գծապատկեր 2.3-ում:

Գծապատկեր 2.3. Հետբուհական կրթություն ստացող սովորողների թվի շարժը 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիների ընթացքում



Որակավորման քննությունը ընդունող հանձնաժողովների վերաբերյալ տվյալները վերջին 3 ուսումնական տարիներին

ԲՈԿ-ի 20.03.2019թ.-ի N74-Ա հրամանի համաձայն՝ ԵՊԼՀ-ում գործում են **մասնագիտական առարկայական** հետևյալ **8 հանձնաժողովները**.


- Ժ.01.03 Ռուս գրականություն,
- Ժ.01.07 Արտասահմանյան գրականություն,
- Ժ.02.02 Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն,
- Ժ.02.04 Սլավոնական լեզուներ,
- Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն),
- ԺԳ.00.01 Մանկավարժության տեսություն և պատմություն,
- ԺԳ.00.02 Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա,
- ԻԳ.00.02 Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ:

Թեկնածուական որակավորման քննությունների արդյունքները վերջին 4 ուսումնական տարիներին

- 2019-2020 ուսումնական տարվա աշնանային քննաշրջանում թեկնածուական որակավորման քննություն է հանձնել **5 սովորող** (3-ը հանձնել են երկուական քննություն, 2-ը՝ մեկական), որի արդյունքում արձանագրվել է 3 գերազանց, 5 լավ գնահատական:
- 2018-2019 ուսումնական տարում թեկնածուական որակավորման քննություն է հանձնել **18 հետազոտող** (3-ը հանձնել են երկուական քննություն, 15-ը՝ մեկական), որի արդյունքում արձանագրվել են 9 գերազանց, 2 լավ, 2 բավարար, 8 ստուգված գնահատականներ:
- 2017-2018 ուսումնական տարում թեկնածուական որակավորման քննություն է հանձնել **27 հետազոտող**, որի արդյունքում արձանագրվել են 12 գերազանց, 11 լավ, 0 բավարար, 4 ստուգված գնահատականներ:
- 2016-2017 ուսումնական տարում թեկնածուական որակավորման քննություն է հանձնել **35 հետազոտող**, որի արդյունքում արձանագրվել են 22 գերազանց, 4 լավ, 2 բավարար, 7 ստուգված գնահատականներ:

Ստորև՝ Գծապատկեր 2.4-ում, գրաֆիկորեն պատկերված են թեկնածուական որակավորման քննությունների արդյունքները վերջին 4 ուսումնական տարիներին:

Գծապատկեր 2.4. Թեկնածուական որակավորման քննությունների արդյունքները վերջին 4 ուսումնական տարիներին



2019-2020 ուսումնական տարում որակավորման քննությունների արդյունքում արձանագրվել է 37,5% գերազանց առաջադիմություն, 2018-2019 ուսումնական տարում՝ 50%, 2017-2018 ուսումնական տարում՝ 44%, իսկ 2016-2017 ուսումնական տարում՝ 63%:

2019թ.-ին վերանայվել են քննությունների հարցաշարերը, և վերակազմավորվել են թեկնածուական որակավորման քննությունների հանձնաժողովները: Գերազանց գնահատականների թվի նվազումը պայմանավորված է ինչպես նշված փոփոխություններով,


այնպես էլ որակավորման քննությունների պահանջների խստացմամբ և գիտելիքների ստուգման օբյեկտիվության բարձրացմամբ:

Թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանություն (վերջին 3 ուսումնական տարիների տվյալներ)

- 2018-2019 ուսումնական տարում ուսումնառությունն ավարտել են 33 սովորող, ատենախոսություն պաշտպանել են 7 հետազոտող, որից **1-ը՝ դոկտորական, 6-ը՝ թեկնածուական:**
- 2017-2018 ուսումնական տարում ուսումնառությունն ավարտել են 19 սովորող, ատենախոսություն պաշտպանել են 11 հետազոտողներ, որից **3-ը՝ դոկտորական, 8-ը՝ թեկնածուական:**
- 2016-2017 ուսումնական տարում ուսումնառությունն ավարտել են 15 սովորող, **թեկնածուական** ատենախոսություն պաշտպանել են **5 հետազոտողներ:**

Ստորև՝ Գծապատկեր 2.5-ում, գրաֆիկորեն պատկերված է դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների թիվը վերջին 4 ուսումնական տարիներին

Գծապատկեր 2.5. Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների տվյալները (2016-2017, 2017-2018, 2018-2019 ուսումնական տարիներ)



Վերոբերյալ տվյալներից երևում է, որ 2017-2018 ուսումնական տարում դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների թիվը ավելի քան 2 անգամ աճել է՝ 5-ից դառնալով 11, սակայն 2018-2019 ուսումնական տարում պաշտպանությունների թիվը նվազել է 4-ով: Պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թվի նվազումը պայմանավորված է մի կողմից ԲՈԿ-ի կողմից մասնագիտական խորհուրդների կազմերի վերանայման և մի շարք խորհուրդների փակման՝ բավականին երկար ժամանակ ընթացած գործընթացներով, մյուս կողմից՝ երկրում ընդհանուր առմամբ առկա է

գիահետազոտական աշխատանքեր կատարելու և գիտական աշխատող դառնալու նկատմամբ հետքըքրվածության շարունակական նվազման միտում: Միևնույն ժամանակ ԵՊԼՀ-ի համար գոհացնող չէ այն փաստը, որ 2019թ.-ին համալսարանում նվազել է թե՛ հետբուհական կրթություն ստացողների, թե՛ թեկնածուական և դոկտորական թեզեր պաշտպանողների թվաքանակը: Մասնավորապես՝ 2018-2019 ուսումնական տարում նախորդ ուսումնական տարվա համեմատ 50%-ով նվազել է նաև ԵՊԼՀ-ում իրականացված նախնական պաշտպանությունների թիվը:

- 2017-2018 ուսումնական տարում իրականացվել են դոկտորական ատենախոսության 2 և թեկնածուական ատենախոսությունների 12 նախնական պաշտպանություններ,
- 2018-2019 ուսումնական տարում իրականացվել են դոկտորական ատենախոսության 1 և թեկնածուական ատենախոսությունների 6 նախնական պաշտպանություններ:


Իրավիճակը բարելավելու նպատակով ԵՊԼՀ-ն 2019թ.-ին նախաձեռնել է մի շարք քայլեր, որոնք ուղղված են գիահետազոտական աշխատանքերի կատարման խթանմանը՝ ներդնելով նոր ընթացակարգեր և մեխանիզմներ: Մասնավորապես՝ 2020թ.-ից նախատեսվում է ներդնել հավելավճարների տարբերակված համակարգ ՀՀ և արտասահմանյան գիտական հանդեսներում հրապարակումներ ունեցող ՊԴ կազմի համար, արդիական գիտական թեմաների ֆինանսավորման ներբուհական մրցութային մեխանիզմ և այլն:

ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից շնորհված գիտական կոչումներ

2017-2019թթ.-ին ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից շնորհվել է դոցենտի 22 և պրոֆեսորի 1 գիտական կոչում, որոնք հաստատվել են ԲՈԿ-ի կողմից:

2019թ.-ին շնորհվել են դոցենտի 4 գիտական կոչումներ: Համեմատելով նախորդ երկու տարիների հետ՝ նկատելի է, որ համալսարանի գիտական խորհրդի կողմից շնորհված գիտական կոչումների թիվը որոշակիորեն նվազել է. 2018թ.-ին ԵՊԼՀ գիտական խորհրդի կողմից շնորհվել են պրոֆեսորի 1 և դոցենտի 10 գիտական կոչումներ, 2017թ.-ին՝ դոցենտի ութ գիտական կոչումներ (Գծապատկեր 2.6):

Գծապատկեր 2.6. ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից շնորհված գիտական կոչումների թվաքանակը 2017-2019թթ.-ին



Ի տարբերություն վերոնշյալի՝ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից մրցույթների արդյունքներով պրոֆեսորի պաշտոնում հաստատվել են 6, դոցենտի պաշտոնում՝ 58, իսկ ավագ դասախոսի պաշտոնում՝ 56 դասավանդողներ:

ԵՊԼՀ-ի աշխատակիցների կողմից գիտահետազոտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում (վերջին 3 ուսումնական տարիների տվյալներ)


ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության որակն ուղղակի ազդեցություն ունի համալսարանի գիտական արդյունքների ցուցանիշների և ուսումնական գործընթացի բարելավման վրա: ՊԴ կազմի գիտահետազոտական գործունեության գնահատման ցուցանիշներից է ազգային և միջազգային ամսագրերում ու ժողովածուներում հրատարակված գիտական աշխատանքների (հոդվածներ, և այլն), ինչպես նաև մենագրությունների, ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների, դասագրքերի թիվը:

2019 թվականին ԵՊԼՀ-ի ՊԴ և այլ աշխատակիցների կողմից հրատարակվել են՝

- 118 գիտական հոդված,
- 2 դասագիրք,
- 8 ուսումնամեթոդական ձեռնարկ,
- 6 ուսումնաօժանդակ նյութեր (այդ թվում՝ 1 աշխատանքային տետր, 9-12 դասարանների համար նախատեսված օլիմպիադայի 4 նյութեր),
- 2 մեթոդական ուղեցույց,
- 2 մենագրություն,
- 3 գրքի թարգմանություն:

Համեմատելով 2019թ.-ի հրատարակությունների թիվը 2018 և 2017թթ.-ին հրատարակված աշխատությունների թվի հետ՝ նկատելի է, որ զգալիորեն նվազել է հրատարակված հոդվածների թիվը (Գծապատկեր 2.7): 2019թ.-ին հրատարակված հոդվածների թվի նվազումը պայմանավորված է նաև ԵՊԼՀ-ի «Բանբեր» գիտական պարբերականում հրատարակվող հոդվածներին ներկայացվող պահանջների, այդ թվում՝ գիտականության և արտաքին գրախոսման պահանջների կանոնակարգմամբ և խստացմամբ, որի արդյունքում 2017թ.-ի 228 և 2018թ.-ի 166 հոդվածների փոխարեն 2019թ.-ին ԵՊԼՀ-ի «Բանբեր» գիտական պարբերականում հրատարակվել է 62 գիտական հոդված: Այսպիսով, 2018թ.-ի համեմատ «Բանբեր» գիտական պարբերականում 2019թ.-ին հրատարակված հոդվածների թիվը նվազել է մոտավորապես 3 անգամ, իսկ 2017թ.-ի համեմատ՝ 4 անգամ:


Գծապատկեր 2.7. ԵՊԼՀ-ի աշխատակիցների կողմից հրատարակված գիտական հոդվածների թվաքանակը՝ ըստ տարիների



Միևնույն ժամանակ 2019թ.-ին աճել է գրախոսվող և վարկանիշ ունեցող արտասահմանյան հանդեսներում (այդ թվում՝ միջազգային «SCOPUS» շտեմարանում ընդգրկված ամսագրերում) ԵՊԼՀ-ի աշխատակիցների կողմից հրատարակված գիտական հոդվածների թիվը՝ կազմելով 23 գիտական հոդված: Մասնավորապես՝ 2017թ.-ին «SCOPUS» շտեմարանում ընդգրկված ամսագրերում ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի կողմից որևէ գիտական հոդված չի տպագրվել, 2018թ.-ին հրատարակվել է 5 հոդված, իսկ 2019թ.-ին հրատարակվել է 4 հոդված, իսկ 2-ը ներկայացվել են հրատարակման:

ՊԴ կազմի ու այլ աշխատակիցների կողմից 2019թ.-ին հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների թվի համեմատությունը նախորդ երկու տարիների թվաքանակի հետ (2018թ.-ին հրատարակվել են 1 դասագիրք, 2 ուսումնամեթոդական ձեռնարկ, 1 մենագրություն, 1 բառարան, 3 գրքի թարգմանություն, 2017թ.-ին՝ 10 դասագիրք, 4 մեթոդական ձեռնարկ և 1 մենագրություն) ցույց է տալիս, որ 2019թ.-ին էապես աճել է ուսումնամեթոդական ձեռնարկների, ուսումնաօժանդակ նյութերի և մենագրությունների թիվը՝ կազմելով 23 աշխատանք (Գծապատկեր 2.8):

Գծապատկեր 2.8. 2017-2019թթ.-ին հրատարակված ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ աշխատանքների, մենագրությունների թիվը



ԵՊԼՀ գիտահետազոտական գործունեության միջազգայնացում (վերջին 3 ուսումնական տարիների տվյալներ)

Միջազգայնացման գործընթացներում ՊԴ կազմի ակտիվ ներգրավվածությունը ԵՊԼՀ-ի ռազմավարական խնդիրներից է, որը շեշտադրում է համալսարանի՝ իր մարդկային ռեսուրսների արդյունավետ գործունեությունը խթանելու և միջազգային մակարդակում նրանց մրցունակ դարձնելու նպատակադրումը:


ԵՊԼՀ-ի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ, կլոր սեղան-քննարկումներ, դասախոսություններ և գիտակրթական այլ միջոցառումներ

ԵՊԼՀ-ի ամբիոններն ու ԳՈՒԿ-երը ակտիվ համագործակցում են այլ բուհերի համապատասխան ամբիոնների հետ՝ կազմակերպելով **տարատեսակ գիտակրթական միջոցառումներ՝ միջազգային գիտաժողովներ, համաժողովներ, սեմինարներ, աշխատաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, դասախոսություններ, գիտական բանավեճեր և հանդիպումներ:**

2019թ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ն կազմակերպել է ընդհանուր թվով մոտ **50 գիտակրթական միջոցառում:** 2019թ.-ի, 2018թ.-ի և 2017թ.-ի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ իրականացված գիտակրթական միջոցառումների թիվը տարեցտարի աճում է. 2017 թ.-ին իրականացվել են շուրջ 30, իսկ 2018թ.-ին՝ 40 գիտակրթական միջոցառումներ:

ԵՊԼՀ-ի կողմից 2019թ.-ին, 2018թ.-ին և 2017թ.-ին կազմակերպված գիտակրթական միջոցառումների թվի համեմատությունը ներկայացված է ստորև՝ Գծապատկեր 2.9-ում:

Գծապատկեր 2.9. 2017-2019թթ.-ին կազմակերպված գիտակրթական միջոցառումների թիվը




ԵՊԼՀ-ի աշխատակիցների մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում տեղի ունեցած գիտաժողովներին, կոնֆերանսներին, սեմինարներին, վերապատրաստումներին և գիտակրթական այլ միջոցառումներին

2019թ.-ին ԵՊԼՀ-ի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում և արտերկրում տեղի ունեցած գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, վերապատրաստումների և գիտակրթական այլ միջոցառումների:

ԵՊԼՀ-ի աշխատակիցները 2019թ.-ին մասնակցել են ընդհանուր թվով ավելի քան 180 միջոցառման, որից ավելի քան 70-ը՝ արտերկրում (հավելված):

Համեմատությունը ցույց է տալիս (Գծապատկեր 2.10), որ եթե 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ ՀՀ-ում և արտերկրում տեղի ունեցած միջոցառումներին ԵՊԼՀ-ի աշխատակիցների մասնակցությունների թիվը նվազել է մոտ 20-ով, ապա 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ այն աճել է 40-ով:

Գծապատկեր 2.10. 2017-2019թթ.-ին ԵՊԼՀ-ի աշխատակիցների մասնակցությունը արտերկրում և ՀՀ-ում տեղի ունեցած գիտակրթական տարբեր միջոցառումների



Այլ տվյալներ

ԵՊԼՀ-ում գործում է 059 «Սլավոնական լեզուներ» մասնագիտական խորհուրդը, որն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ցանկում: 2019թ.-ին, ԲՈԿ-ի կողմից առաջադրվող պահանջներին համաձայն, ԵՊԼՀ-ի կողմից վերանայվել և ԲՈԿ-ի կողմից վերահաստատվել է մասնագիտական խորհրդի նոր կազմը:

ԵՊԼՀ-ն ունի հետևյալ երկու գիտական պարբերական հանդեսը, որոնք 2019թ.-ին վերընդգրկվել են ԲՈԿ-ի կողմից հաստատված հանդեսների ցանկում՝

- ԵՊԼՀ-ի «Բանբեր» գիտական պարբերական,
- «Քաղաքագիտական հանդես»:

2019 թվականին հրատարակվել է վերոնշյալ հանդեսներից չորսական համար: Գիտական պարբերականներից բացի՝ ԵՊԼՀ-ի կողմից հրատարակվել են նաև հետևյալ գիտաժողովների նյութերը.

- «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» (2018թ.-ին կայացած միջազգային գիտաժողովի նյութեր (Պրակ Ժ)),
- «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» (2019թ.-ին կայացած միջազգային գիտաժողովի նյութեր (Պրակ ԺԱ)),
- Ռեֆորմացիայի 500 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու,
- “А.А. Ахматова: русская и национальные литературы” (Материалы 15-ой Юбилейной международной научно-практической конференции):

Գիտական հետազոտությունը խթանելու և կանոնակարգելու նպատակով գիտության բաժնի կողմից մշակվել և գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն են ներկայացվել մի շարք փաստաթղթեր, որոնք 2019թ.-ին հաստատվել են գիտական խորհրդի կողմից: Ստորև ներկայացվում են գիտական գործունեությանը վերաբերող 2019թ.-ին հաստատված փաստաթղթերը՝

- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի գիտության բաժնի կանոնադրություն *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 18.01.2019թ. № 5 նիստի որոշմամբ)*,
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգ *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 25.03.2019թ. № 10 նիստի որոշմամբ)*,
- «Բանբեր» գիտական պարբերականում գիտական հոդվածներ հրատարակելու պահանջներ *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 26.04.2019թ. № 14 նիստի որոշմամբ)*,
- ԵՊԼՀ-ի գիտության բաժնին կից խմբագրական-հրատարակչական խորհրդի կազմ *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 26.04.2019թ. № 14 նիստի որոշմամբ)*,
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրանում ասպիրանտուրա ընդունվելու, հայցորդություն ձևակերպելու, ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում ուսումնառության կանոնակարգ *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 15.03.2019թ. № 9 նիստի որոշմամբ)*,
- «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից գիտամեթոդական խորհուրդ *(հաստատված ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի 15.03.2019թ. № 9 նիստի որոշմամբ)*:

Գիտական խորհրդի կողմից հաստատված «Բանբեր» գիտական պարբերականի հրատարակման կանոնակարգը և «Բանբեր» գիտական պարբերականում գիտական հոդվածներ հրատարակելու պահանջները համապատասխանեցված են միջազգային գիտական ամսագրերում հոդվածներ հրատարակելու պահանջներին:

ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակումը խթանելու նպատակով «Բանբեր» գիտական պարբերականի 2019թ.-ին հրատարակված բոլոր 4 համարները տպագրվել են ԵՊԼՀ-ի ֆինանսական միջոցներով՝ ի տարբերություն նախորդ տարիների, երբ հոդվածի տպագրման ֆինանսավորումն իրականացվում էր հեղինակի կողմից:

Գիտական հոդվածների որակի բարելավման նպատակով մշակվել է գրախոսի կարծիքի ձևանմուշ, իսկ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թեմաները հստակ ու

գիտականորեն հիմնավորված ձևակերպելու նպատակով ստեղծվել է գիտամեթոդական խորհուրդ, և մշակվել է խորհրդի աշխատանքի ընթացակարգը:

III. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Ներածություն

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի արտաքին կապերի ամրապնդման ու միջազգայնացման ուղղությամբ իրականացված գործունեությունը բխել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 7-ում (Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները հակիրճ ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 3.1-ում:

Աղյուսակ 3.1. ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 7-ում (Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	
Խնդիր 1.	Ապահովել և ընդլայնել միջազգային բարձրագույն կրթական տարածքներին ԵՊԼՀ-ի ինտեգրման գործընթացները
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
7.1.1. Ուսումնասիրել բուհերի միջազգայնացման գործընթացների համաշխարհային փորձը, կատարել համեմատական վերլուծություն և ներկայացնել առաջարկների փաթեթ:	2019թ.-ին նախագծվել և սկսվել է բուհերի միջազգային գործընթացների լավագույն փորձի ուսումնասիրության իրականացումը, որը հատկապես դիտարկում է Իսպանիայի, Իտալիայի, Գերմանիայի, Շվեդիայի և Պորտուգալիայի փորձը և հաշվի առնում ՀՀ-ում ներկայումս ընթացող բարձրագույն կրթության միջազգայնացմանն ուղղված Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) մի քանի «Էրազմուս+» ծրագրերի փորձը («Բուսթ» (BOOST), «Հարմոնի» (HARMONY)): Ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել այդ ծրագրերով հասանելի արդիական տեղեկատվությունը, մասնագետների հետ անհատական հանդիպումները և համալսարանների կայքերը: Ուսումնասիրության արդյունքները կամփոփվեն 2020թ.-ին:
7.1.2. Մշակել միջազգայնացման ռազմավարություն և կատարել գործընթացների տարեկան մշտադիտարկում:	Միջազգայնացման ռազմավարությունը մշակվել և ներառվել է ԵՊԼՀ-ի ռազմավարական զարգացման միասնական ծրագրում և գործողությունների պլանում: Նախանշված ռազմավարական գործողությունները գնահատելու համար իրականացվել է միջազգայնացման

	գործընթացների մշտադիտարկում, և պարբերաբար կատարվել են ֆակուլտետային հանդիպումներ՝ վերհանելու առկա խնդիրները, ընթացիկ իրավիճակը և միջազգային ծրագրերում ԵՊԼՀ-ի ներգրավվածությունն ընդլայնելու վերաբերյալ հարցերը: Մշտադիտարկման արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն առաջարկությունների փաթեթով 2020թ.-ին:
7.1.3.Ընդլայնել եվրոպական, ասիական, ամերիկյան, ԱՊՀ և այլ տարածաշրջանների բարձրագույն կրթության տարածքներին ԵՊԼՀ-ի ինտեգրման գործընթացների և համագործակցության շրջանակները:	2019թ.-ին շարունակվել են տարբեր տարածաշրջանների բարձրագույն կրթության տարածքներին ԵՊԼՀ-ի ինտեգրման և համագործակցության ընդլայնման գործընթացները: Կնքվել է 26 նոր պայմանագիր՝ ներառյալ ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակում միջինստիտուցիոնալ, դրամաշնորհային և համագործակցային պայմանագրեր: ԵՊԼՀ-ի գործունեությունը նպատակաուղղվել է ոչ միայն պայմանագրերի թվաքանակի մեծացմանը՝ համագործակցության շրջանակների ընդլայնման համար, այլև գործող պայմանագրերի շրջանակներում համագործակցության խորացմանը: Ուստի թիրախավորվել է ոչ միայն քանակական, այլև որակական սկզբունքներով համագործակցության ընդլայնումը: ԵՊԼՀ-ի միջազգային համագործակցության բազմագործառութային և բազմատարածաշրջանային ուղղվածությունը ընդգծելու համար կարելի է առանձնացնել 2019թ.-ին կնքված հետևյալ նոր համաձայնագրերը՝ • Ռուսաստանի Ա. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ պայմանագիր (Ռուսաստան և Անկախ պետությունների համագործակցությունը (այսուհետ՝ ԱՊՀ), • Ռուսաստանի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի հետ պայմանագիր (Ռուսաստան և ԱՊՀ), • Կոնֆուցիուսի ինստիտուտների գլխամասային գրասենյակի (Հանբան) հետ կնքված 2 պայմանագիր (Ասիա), • ԵՄ-ի «Էրազմուս+» միջինստիտուցիոնալ պայմանագրեր, Ժան Մոնե մոդուլ (Jean Monnet Erasmus+) (Եվրոպա):

7.1.4. Ակտիվացնել գործող ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում ԵՊԼՀ-ի կողմից տարվող աշխատանքները, մասնավորապես՝ ԱՊՀ ցանցային համալսարանի, Սևծովյան համալսարանների ասոցիացիայի, Մանկավարժական համալսարանների եվրասիական ասոցիացիայի, Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի, Չինարեն դասավանդողների եվրասիական ասոցիացիայի, Եվրոպական լեզվական խորհրդի, Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի և այլ կազմակերպությունների հետ տարվող աշխատանքները:	Սերտ համագործակցություն է ծավալվել ԱՊՀ ցանցային համալսարանի, Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի, Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի հետ: Մասնավորապես՝ ԱՊՀ ցանցային համալսարանի համագործակցության շրջանակում Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում «Տուրիզմ» մասնագիտությամբ համատեղ մագիստրոսական ծրագրով 2019թ.-ին սովորել է ԵՊԼՀ-ի մեկ ուսանող: 2019թ.-ին շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել ԵՊԼՀ-ի կազմում գործող Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնը, որը Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի հետ ողջ տարվա ընթացքում կազմակերպել է գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ և գիակրթական ու մշակութային այլ միջոցառումներ:
7.1.5. Կատարելագործել ԵՊԼՀ-ի ցանցային համագործակցության կառուցակարգերը՝ ներգրավվելով միջազգային ու տարածաշրջանային գիտակրթական, բուհական նոր ցանցերում և կառույցներում:	2019թ.-ին ԵՊԼՀ-ի և Վրաստանի Մասնավոր համալսարանների ասոցիացիայի միջև կնքվել է անդամակցության համաձայնագիր, որի շնորհիվ ԵՊԼՀ-ն ընդլայնել է իր տարածաշրջանային ցանցային համագործակցությունը:
Խնդիր 2.	Ընդլայնել և բազմազանեցնել ԵՊԼՀ համագործակցության շրջանակները արտասահմանյան բուհերի և միջազգային կառույցների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևաչափեր
Նախադրենված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
7.2.1. Հետամուտ լինել ԵՊԼՀ-ի կողմից կնքված առկա համագործակցության պայմանագրերով ստանձնած երկկողմանի պարտավորությունների՝ ժամանակին և պատշաճ իրականացմանը՝ կատարելով դրանց պարբերական գնահատումներ:	2019թ.-ին ԵՊԼՀ-ն հետամուտ է եղել իր հիմնական գործընկեր կազմակերպությունների ու բուհերի հետ համագործակցային պարտավորությունները պատշաճ կատարելուն և պայմանագրերի դրույթներն ու ժամկետները պարբերաբար վերանայելուն: Այսպես, ԵՊԼՀ-ն վերակնքել է մի շարք համագործակցային պայմանագրեր և ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության միջբուհական համաձայնագրեր՝ շարունակելով ստեղծված արդյունավետ համագործակցությունը գործընկեր բուհերի հետ (Կոնֆուցիուսի ինստիտուտների

	գլխամասային գրասենյակ (Հանքան), Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարան, Փարիզի Սորբոն-4 համալսարան, Գրանադայի համալսարան, Լյովենի կաթոլիկ համալսարան, Պիտեշտի համալսարան, Վալադոլիդի համալսարան, Նեապոլի Լ'Օրիենտալե համալսարան, Դալիանի օտար լեզուների համալսարան և այլն):
7.2.2. Կնքել համագործակցության նոր պայմանագրեր օտարերկրյա բուհերի գիտահետազոտական կենտրոնների և միջազգային կառույցների հետ ԵՊՀՀ գերակա ուղղություններով՝ հատկապես կարևորելով համատեղ ՄԿԾ-ների իրականացումը, կրկնակի կամ համատեղ որակավորումների շնորհումը, սովորողների և ՊԴ կազմի փոխանակումն ու շարժունությունը, գիտահետազոտական աշխատանքների ու գիտակրթական միջոցառումների համատեղ իրականացումը:	2019թ.-ին ԵՊՀՀ-ն խորացրել է համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ ձեռք բերելով համագործակցության նոր հնարավորություններ զարգացման իր թիրախային ուղղություններով: Հաշվետու տարում ԵՊՀՀ-ն կնքել է երկու պայմանագիր Կոնֆուցիուսի ինստիտուտների գլխամասային գրասենյակի (այսուհետ՝ Հանքան) հետ՝ համագործակցության հետագա ընդլայնման և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (այսուհետ՝ ՉԺՀ) Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ՝ չինարենի ուսուցչի պատրաստման համատեղ մագիստրոսական ծրագիր իրականացնելու նպատակով: Վերջինս նախատեսում է մեկ տարի ուսուցում ԵՊՀՀ-ում և մեկ տարի՝ Դալիանի օտար լեզուների համալսարանում: Մագիստրոսական ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2020թ.-ի սեպտեմբերին: 2019թ.-ին ԵՊՀՀ-ն շարունակել է համատեղ կրթական ծրագրերի իրականացումը մի քանի առաջատար համալսարանների հետ, մասնավորապես՝ • Փարիզ-Սորբոն 4 համալսարանի հետ մագիստրոսական և դոկտորական համատեղ ծրագրեր՝ «Համեմատական գրականություն» ու «Հրատարակչական գործ» մասնագիտություններով, որոնցով ներկայումս Փարիզ-Սորբոնի համալսարանում սովորում են 1 մագիստրոս և 3 ասպիրանտ. • Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի հետ «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ համատեղ դոկտորական ծրագիրը, որով 2019թ.-ին Հալլեի համալսարանում սովորել են 1 ասպիրանտ և 2 ուսանող մագիստրոսի ծրագրով. • ԱՊՀ-ի ցանցային համալսարանի համագործակցության ծրագրի շրջանակում Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության

	համալսարանի հետ «Ռուսերեն բանասիրություն» և «Տուրիզմ» մասնագիտությամբ համատեղ մագիստրոսական ծրագիր, որում հաշվետու տարում ընդգրկվել է մեկ ուսանող «Տուրիզմ» մասնագիտությամբ: Բացի այդ, ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության միջբուհական համաձայնագրերի շրջանակներում 2019թ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ի մոտ 25 ուսանող հնարավորություն են ստացել 1 կիսամյակ ուսումնառել գործընկեր բուհերում, իսկ 16 վարչական աշխատողներ և դասախոսներ անցնել են մասնագիտական վերապատրաստումներ, կարդացել դասախոսություններ և իրականացրել փորձի փոխանակում: Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ում շարժունության ծրագրերի շրջանակում դասավանդել կամ վերապատրաստում է անցել 9 դասախոս կամ վարչական աշխատակից գործընկեր համալսարաններից:
7.2.3. Շարունակել և ընդլայնել համագործակցությունը տարբեր երկրների դեսպանությունների, ներկայացուցչությունների և կազմակերպությունների հետ՝ համապատասխան լեզուների ուսուցման արդյունավետությունը բարելավելու, նոր ՄԿԾ-ներ ներդնելու նպատակով, կիրառել հաագործակցության տարբեր ձևաչափեր՝ ներառյալ համապատասխան երկրներից մասնագետների հրավիրում, գրականության, սարքավորումների և այլ ռեսուրսների ստացում, համատեղ միջոցառումների կազմակերպում և գիտաուսումնական նոր կենտրոնների ստեղծում:	Հաշվետու տարում ԵՊԼՀ-ն շարունակել է համագործակցությունը ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների և ներկայացուցչությունների հետ: Տարբեր երկրների դեսպանների այցերը ԵՊԼՀ նպատակաուղղված են եղել խթանելու համապատասխան երկրի լեզվի և մշակույթի ուսուցումը ԵՊԼՀ-ում, ապահովելու և զարգացնելու համագործակցությունը այդ երկրների բուհերի հետ, կազմակերպելու կրթական, գիտական ու մշակութային միջոցառումներ և այլն: 2019թ.-ին ԵՊԼՀ-ն կազմակերպել է ՀՀ բարձրաստիճան պետական պաշտոնյաների (ՀՀ նախագահի, ՀՀ ԿԳՄՍ նախարարի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և այլն), ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների և հասարակական գործիչների, ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչների, արտասահմանյան հյուրերի (Ռումինիայի արքայազն Ռադուի) և նշանավոր այլ անձանց ու մասնագետների ավելի քան 25 այցելություն ԵՊԼՀ:
7.2.4. Ուսումնասիրել արտասահմանյան, միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների հետ	2019թ.-ին ԵՊԼՀ-ն իրականացրել է 9 միջազգային ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են օտարերկրյա դրամաշնորհերով: Բացի այդ, 2019թ.-ին մշակվել և արտասահմանյան

համագործակցության հնարավորությունները, մշակել և ներկայացնել ծրագրեր՝ հնարավոր ֆինանսավորում ստանալու նպատակով:	դրամաշնորհների ֆինանսավորմանն են ներկայացվել շուրջ 10 նոր ծրագրեր, որոնցից հաստատվել և ֆինանսավորվել են հետևյալ 5 ծրագրերը. • Բրիտանական խորհրդի ձեռնարկատիրական կրթության և ստեղծարար ոլորտի զարգացման «Ստեղծարար միտք» ծրագիրը, • Հայաստանի ՆԱՀ-ի ֆինանսավորմամբ «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի ստեղծման ծրագիրը, • ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում «Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթական համակարգերում աշխատանքի վայրում ուսումնառության ճկուն, նորարար և գործնական շրջանակի մշակում և ներդրում (FLEXWBL)» ծրագիրը, • ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում «Հայաստանի դոկտորական կրթության բարեփոխումը ակադեմիայի, արդյունաբերության և ԵՄ փորձին համապատասխան (ARMDOCT)» ծրագիրը, • ԵՄ-ի «Էրազմուս+»-ի «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի շրջանակում «Հայաստանի և ԵՄ օրենսդրության մոտարկում (LegAL)» ծրագիրը:
7.2.5. Հզորացնել ԵՊԼՀ Կոնֆուցիուսի ինստիտուտը, բարելավել պայմանները և ընդարձակել գործունեության շրջանակները՝ չինարենի ու չինական մշակույթի և չինագիտության ուսուցման, այդ ուղղություններով մասնագետների պատրաստման, գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով, ընդլայնել համագործակցությունը Չինաստանի ԿԳՆ-ին առընթեր «Չինարեն լեզվի տարածման» գլխամասային գրասենյակի (Hanban) հետ	2019թ.-ի ընթացքում Կոնֆուցիուսի ինստիտուտը անցկացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են Հայաստանում չինարենի և չինական մշակույթի տարածմանը: 2019թ.-ին ԵՊԼՀ-ն կնքել է երկու պայմանագիր Հանբանի հետ՝ համագործակցության հետագա ընդլայնման և ՉԺՀ-ի Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ չինարենի ուսուցչի պատրաստման մագիստրոսական համատեղ ծրագիր իրականացնելու ուղղությամբ: 2019թ.-ին ԵՊԼՀ-ն մշակել և Հանբան է ներկայացրել ծրագիր՝ Կոնֆուցիուսի ինստիտուտին օրինակելի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ: Ծրագրի մանրամասները Հանբանի հետ քննարկելու համար հունիսին կազմակերպվել է ԵՊԼՀ-ի պատվիրակության այց Չինաստանի մայրաքաղաք Պեկին: Ծրագիրը ստացել է Հանբանի նախնական համաձայնությունը, բանակցությունները շարունակվում են, և նախատեսվում

	է վերջինիս ներկայացուցիչների այց Հայաստան՝ տեղում շենքային պայմանները և ռեսուրսները ուսումնասիրելու համար:
7.2.6.Ընդլայնել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ու Ֆրանկոֆոն համալսարանների ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակները՝ մեծացնելով կրթագիտական, մշակութային և այլ ծրագրերի թիվը և դրանց համար հատկացվող ֆինանսավորման ծավալները: 7.2.6.1.Ակտիվացնել ու բազմազանեցնել ԵՊԼՀ Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի գործունեությունը:	ԵՊԼՀ-ի Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի կողմից 2019թ.-ին կազմակերպվել է 19 միջոցառում՝ մրցույթներ, սեմինարներ և գիտաժողովներ՝ արտասահմանյան գործընկեր կառույցներից հրավիրված մասնագետների մասնակցությամբ: Այսպես, 2019թ.-ի սեպտեմբերի 26-27-ը Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնը, Ռոմանական լեզուների ամբիոնը, Ֆրանկոֆոնիայի թվայնացված կենտրոնը Սորբոն Նուվել-Փարիզ 3 համալսարանի հետ կազմակերպել են գիտաժողով:
7.2.7.Մշակել և ԵՊԼՀ-ի ստորաբաժանումներին տրամադրել տեղեկատվական և խորհրդատվական աջակցության փաթեթ՝ դրամաշնորհների հանրապետական և միջազգային աղբյուրների որոնման ու ծրագրային առաջարկների մշակման համար:	ԵՊԼՀ-ի ստորաբաժանումների հետ պարբերաբար կատարվել են հանդիպումներ և քննարկումներ՝ դրամաշնորհային ծրագրերին դիմելու, գործընկեր բուհերի հետ նոր կապեր ստեղծելու և ծրագրեր իրականացնելու նպատակով: Այսպես՝ 2019թ.-ի մայիսի 16-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել է հայ-ավստրիական առաջին համագործակցային հանդիպումը, որը միտված էր կապեր հաստատելու երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև և բացահայտելու «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում բուհական համագործակցության նոր հեռանկարները: 2019թ.-ին ԵՊԼՀ-ի ներկայացուցիչներն ակտիվ մասնակցել են հայ-իսպանական կոնտակտային հանդիպմանը, որի ընթացքում Հայաստանի և Իսպանիայի բուհերի միջազգային կապերի պատասխանատուները քննարկել են շարժունության հնարավոր համատեղ ծրագրերը: Կազմակերպվել են տեղեկատվական հանդիպումներ ԵՊԼՀ-ի 2 ֆակուլտետների՝ ՍԳՍՖ-ի և ԹՄՀՖ-ի, ներկայացուցիչների հետ: Հանդիպումները կշարունակվեն նաև 2020թ.-ին:

Խնդիր 3.	Խթանել սովորողների և աշխատակազմի անարգել շարժունությունը՝ ներդնելով շարժունության ճկուն մեխանիզմներ և բազմազանեցնելով դրանց ուղիները
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
7.3.1.Խթանել և ակտիվացնել ԵՊԼՀ-ի ակտիվ մասնակցությունը միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի և ԱՊՀ-ի բարձրագույն կրթական տարածքների միջբուհական համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին, օրինակ՝ («Էրազմուս+», «Ժան Մոնե», Հորիզոն 2020 և այլն):	2019թ.-ին ամրապնդվել է միջբուհական համագործակցությունը ԱՊՀ-ի (Ցանցային համալսարան) և եվրոպական թվով 11 բուհերի («Էրազմուս+» ծրագրեր) հետ: 2019թ.-ին շարունակվել է ԵՄ-ի «Էրազմուս Մոնդուս» ծրագրի շրջանակներում «Ժան Մոնե մոդուլ» եռամյա ծրագրի (2017-2020թթ.) իրականացումը ԵՊԼՀ-ի «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի կողմից: Ավելին, 2019թ.-ին «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի շրջանակում ֆինանսավորվել է «Հայաստանի և ԵՄ օրենսդրության մոտարկում (LegAL)» նոր ծրագիրը:
7.3.2.Խթանել ԵՊԼՀ աշխատակազմի մասնակցությունը արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, շարժունության ծրագրերին	2019թ.-ին իրականացվել է 82 շարժունություն ԵՊԼՀ-ի վարչական աշխատողների և դասախոսների մասնակցությամբ շարժունության և միջազգային այլ ծրագրերի շրջանակում՝ իրականացնելով մասնագիտական վերապատրաստումներ, դասախոսություններ և փորձի փոխանակում:
7.3.3. Օժանդակել սովորողների մասնակցությունը փոխանակման և շարժունության ծրագրերին, արտասահմանյան պրակտիկաներին և ամառային դպրոցներին:	Հաշվետու տարում ԵՊԼՀ-ի ուսանողները մասնակցել են միջազգային շարժունության և փոխանակման տարբեր ծրագրերի: Ուսանողների համակազմից շարժունության ծրագրերին մասնակցել է շուրջ 25 ուսանող, որից 12-ը՝ ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրերին:
7.3.4.Մշակել ու ներկայացնել ծրագրային նոր առաջարկներ՝ ուղղված սովորողների և աշխատակազմի ազգային ու միջազգային շարժունությանը:	Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ներկայացվել են միջազգային կրեդիտային շարժունության նոր առաջարկներ հետևյալ համալսարանների հետ՝ • Իտալիայի Սալերնոյի համալսարան, • Պորտուգալիայի Լիսաբոնի համալսարան, • Գերմանիայի Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի համալսարան, • Ավստրիայի Զալցբուրգի համալսարան: Վերոնշյալ ծրագրերից ֆինանսավորվել են Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի և Զալցբուրգի համալսարանների հետ

	շարժունության ծրագրերը՝ ԵՄ-ի կողմից Հայաստանին հատկացված գումարի սակավության պատճառով:
7.3.5. Փոխանակման ծրագրերում ներգրավված սովորողների համար կատարելագործել և դյուրացնել ուսումնառության արդյունքների ճանաչման, ակադեմիական կրեդիտների հաշվարկման ու փոխանցման գործընթացները:	Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է Շարժունության կանոնակարգ՝ ուղղված շարժունության ծրագրերին մասնակցության գործընթացի և պայմանների կանոնակարգմանը, որը գտնվում է քննարկման փուլում:
7.3.6. Իրականացնել միջազգային շարժունության հնարավորությունների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության տարածման ակտիվ քաղաքականություն՝ ԵՊԼՀ-ի սովորողների և աշխատակազմի լիարժեք տեղեկացվածությունն ապահովելու համար, ԵՊԼՀ-ի կայքի հատուկ բաժնում և ֆեյսբուքյան էջում զետեղել շարժունության հնարավորությունների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն:	ԵՊԼՀ-ում գործող ծրագրերի, միջազգային շարժունության հնարավորությունների և դրամաշնորհների, իրականացվող սեմինարների և գիտաժողովների մասին ողջ տեղեկատվությունը տեղադրվում է ԵՊԼՀ-ի նոր կայքում, ԵՊԼՀ-ի և առանձին ստորաբաժանումների ֆեյսբուքի և սոցիալական այլ էջերում: Առանձին դեպքերում տեղեկատվությունն առավել լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունն իրականացնում է տեղեկատվության վճարովի տարածում սոցկայքերով: Հայտարարությունները դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տարածվում են ոչ միայն սոցկայքերով, այլև ԵՊԼՀ-ի նամակագրության ներքին էլեկտրոնային համակարգով: Բացի այդ, մի շարք դեպքերում տեղեկատվությունն ուսանողներին առավել հասանելի դարձնելու համար կազմակերպվում են դեմառդեմ հանդիպումներ:
Խնդիր 4.	Ապահովել կրթական, գիտական և հետազոտական ոլորտների միջազգայնացումը
Նախադրեալված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
7.4.1. Օտարերկրյա գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ պայմանագրերի շրջանակներում մշակել և իրականացնել հետազոտական ծրագրեր, գիտաժողովներ և հրատարակել գիտական ժողովածուներ	2019թ.-ին Ռուսաստանի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի և Գերմանիայի Հայդելբերգի համալսարանի հետ կնքվել են համաձայնագրեր, որոնց շրջանակներում մշակվում են նոր հետազոտական ծրագրեր կրթական քաղաքականության վերլուծման, սովորողների գնահատման, հայերենի կիրառման թվային ռեսուրսների ստեղծման ուղղություններով:

7.4.4. Կազմակերպել միջազգային գիտաժողովներ՝ ոլորտի հայտնի մասնագետների ներգրավմամբ և մասնակցել ներկայացուցչական կազմ ունեցող միջազգային գիտաժողովների	2019թ.-ին ԵՊԼՀ-ն կազմակերպել է շուրջ 33 գիտաժողով, աշխատաժողով, կոնֆերանս, սեմինար և գիտակրթական այլ միջոցառում՝ ներառյալ Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի կողմից կազմակերպած միջոցառումները, որոնց մասնակցել են փորձառու և ճանաչված մասնագետներ արտասահմանյան երկրներից և Հայաստանից: Դրանք ներառել են օտար լեզուների դասավանդումը, արտասահմանյան գրականությունը, միջմշակութային հաղորդակցությունը և բազմաթիվ այլ թեմաներ: 2019թ.-ին ԵՊԼՀ-ի աշխատակիցները գործուղվել են արտասահմանյան տարբեր երկրներ և ՀՀ քաղաքներ՝ մասնակցելու գիտակրթական տարաբնույթ միջոցառումների (ընդհանուր թիվը գերազանցել է 180-ը), այդ թվում՝ միջազգային գիտաժողովների:
7.4.5. Մշակել և կիրառել միջազգային համագործակցությամբ մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների համատեղ ղեկավարման և աստիճանաշնորհման մեխանիզմներ, ավելացնել համաղեկավարմամբ մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների թիվը	2019թ.-ին ԵՊԼՀ-ն Գերմանիայի Հալլեի Վիթենբերգի Մարտին Լյութեր համալսարանի համագործակցության պայմանագրի շրջանակներում շարունակել է իրականացնել ասպիրանտի համատեղ ղեկավարման, թեկնածուական ատենախոսության համատեղ պաշտպանության և երկակի աստիճանաշնորհման ծրագիր, որի շրջանակներում ԵՊԼՀ-ի 1 ասպիրանտ, պատրաստում է իր թեկնածուական ատենախոսությունը:
7.4.6. Ընդլայնել ԵՊԼՀ-ի ամբիոնների և գիտաուսումնական կենտրոնների հորիզոնական համագործակցային կապերը արտասահմանյան բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ համատեղ հետազոտությունների իրականացման և շարժունության ծրագրերի ավելացման նպատակով:	Փարիզի Սորբոն-4 համալսարանի հետ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում ԵՊԼՀ-ն շարունակել է իրականացնել որակավորումների շնորհման համատեղ ծրագիր, որի շրջանակներում ԵՊԼՀ-ի 3 ասպիրանտ պատրաստում են իրենց թեկնածուական ատենախոսությունները «Համեմատական գրականություն» մասնագիտությամբ՝ ունենալով գիտական համաղեկավարներ ԵՊԼՀ-ից և Փարիզի Սորբոն-4 համալսարանից:
7.4.8. Ապահովել միջազգային լեզվական քննությունների շարունակական կազմակերպումը և ընդլայնել գործող ցանկը՝ նոր քննությունների կազմակերպման թույլտվության ստանալով (օրինակ՝ International English Language Testing	2019թ.-ին ԵՊԼՀ-ում կազմակերպվել են մի շարք օտար լեզուների՝ իտալերենի (CELI), իսպաներենի (CELU), հունարենի (ELLINOMATHEIA), կորեերենի (TOPIK), չինարենի (HSK, HSKK) իմացության մակարդակի ստուգման քննություններ՝ համապատասխան վկայագրերի տրամադրման բացառիկ իրավունքով:

System (IELTS) և այլն):	Ռուսաստանի Ա. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի և ԵՊՀ-ի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է ռուսերենի իմացության մակարդակի թեստավորում ԵՊՀ-ում:
7.4.9.Ընդլայնել ԵՊՀ-ի գրադարանի մասնակցությունը միջազգային ծրագրերին, տարածաշրջանային և միջազգային կոնսորցիումներին:	ԵՊՀ-ի գրադարանը համակարգում է ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանում և Մոլդովայում հետազոտության կառավարման և բաց գիտության կարողությունների հզորացման ծրագիրը» (ՄԻՆԵՎՐԱ (MINERVA)): Ծրագրի շրջանակներում 2019թ.-ին կազմակերպվել են մի շարք սեմինարներ և հանդիպումներ ՀՀ-ում և ծրագրի գործընկեր երկրներում: Գրադարանը նաև Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի անդամ է, ինչն ապահովում է հասանելիություն բարձր վարկանիշ ունեցող միջազգային գիտական շտեմարաններին և թվային գրադարաններին բաժանորդագրության աննախադեպ ցածր գներով կամ անվճար՝ որոշակի ժամանակահատվածում (2 ամսից մինչև 2 տարի): Անդամակցության շրջանակում իրականացվում են գրադարանավարների մասնագիտական վերապատրաստումներ, ինչպես նաև միջազգային գրադարանային հարթակների և հանրային հետ համագործակցություն՝ տարբեր ձևաչափերով:
Խնդիր 5.	Ներգրավել օտարերկրացի սովորողներ, ՊԴ կազմ և մասնագետներ գիտակրթական գործընթացներում
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
7.5.2.Հրավիրել արտերկրի համալսարաններից և կառույցներից ոլորտի փորձառու մասնագետների՝ կարճատև կամ երկարատև դասավանդման նպատակով:	2019թ.-ի ընթացքում ԵՊՀ-ում դասավանդել են շուրջ 50 օտարերկրացի լեզվակիր դասախոս տարբեր երկրներից՝ ներառյալ Կոնֆուցիուսի ինստիտուտի 30 չինացի դասախոսները: Փոխանակման կարգով և միջազգային շարժունության ծրագրերով ԵՊՀ-ի ուսանողների և դասախոսների համար դասընթացներ են անցկացրել նաև Ֆուլբրայթ ծրագրով ԱՄՆ-ից ժամանած, Իտալիայի Վերոնայի, Իսպանիայի Գրանադայի, Հունաստանի Սալամանկայի և Վալյադոլիդի, Ռումինիայի Պիտեշտի, Արգենտինայի Բունեսու Այրեսի, Գերմանիայի Հայդելբերգի, Հալլեի և այլ

		համալսարաններից հրավիրված 15 դասախոսներ:
7.5.4. ԵՊԼՀ-ի կայքում ստեղծել հատուկ բաժին՝ օտարերկրացի սովորողներին ընդունելության կարգի և առցանց դիմումներ լրացնելու վերաբերյալ:		ԵՊԼՀ-ի կայքում օտարերկրացի դիմորդների համար ստեղծվել է առանձին բաժին (https://bit.ly/3a5AXEX), որտեղ մանրամասն ներկայացված է անհրաժեշտ տեղեկատվություն ԵՊԼՀ դիմելու ընթացակարգի, արտոնագիր և կացության իրավունք ստանալու վերաբերյալ և օգտակար այլ տեղեկություններ:
Խնդիր 6.	Ապահովել ԵՊԼՀ սովորողներին վերաբերող գործընթացների միջազգայնացումը	
Նախատեսված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
7.6.1. Օժանդակել սովորողների մասնակցությունը միջազգային ուսանողական և երիտասարդական ծրագրերին		ԵՊԼՀ-ի ուսանողները բուհի աջակցությամբ, ինչպես նաև իրենց նախաձեռնությամբ բազմիցս մասնակցել են երիտասարդական և միջազգային տարբեր ծրագրերի: Այսպես՝ Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարի Հայրապետյանը, սովորելով բուլղարերեն, 15.07.2019թ.-ից 04.08.2019թ.-ի ժամանակահատվածում «ՀՀ կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» ծրագրի շրջանակներում մասնակցել է Բուլղարիայի Վելիկո Տառնովո քաղաքում անցկացվող 42-րդ միջազգային սեմինարին:

Օտարերկրացի դասախոսներ և ուսանողներ


2019թ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ում դասավանդել են շուրջ 50 օտարերկրացի լեզվակիր դասախոսներ տարբեր երկրներից՝ ԱՄՆ-ից, Ավստրիայից, Գերմանիայից, Բուլղարիայից, Լեհաստանից, Կորեայից, Ղազախստանից, Չինաստանից, Ռումինիայից, Ռուսաստանից և Ուկրաինայից, ընդ որում՝ նրանցից 30-ը Կոնֆուցիուսի ինստիտուտի չինացի դասախոսներն են (հավելված 3.1.):

Փոխանակման կարգով և միջազգային շարժունության ծրագրերով ԵՊԼՀ-ի ուսանողների և դասախոսների համար դասընթացներ են անցկացրել նաև ԱՄՆ դեսպանատան Ֆուլբրայթ ծրագրով ժամանած Ռոզա Մելքումյանը, Իտալիայի Վերոնայի, Իսպանիայի Գրանադայի, Սալամանկայի և Վալյադոլիդի, Ռումինիայի Պիտեշտի, Արգենտինայի Բուենոս Այրեսի, Գերմանիայի Հայդելբերգի, Հալլեի և այլ համալսարաններից հրավիրված 15 դասախոսներ:


2019թ.-ին ԵՊԼՀ-ում սովորել է 73 օտարերկրացի և սփյուռքահայ ուսանող առկա և հեռակա համակարգերում, որից 68-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, իսկ 5-ը՝ մագիստրոսի: Հարկ է նշել, որ վերջին երեք տարիների ընթացքում ԵՊԼՀ ընդունված օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր թիվը աճել է՝ 10-ից դառնալով 28, ընդ որում՝ աճել է բակալավրիատ ընդունվածների թիվը: Աճի դինամիկան տրված է ստորև բերված գծապատկերներ 3.1-ում և 3.2-ում:

Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունը կազմակերպել է օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ու դասախոսների կացության քարտերի ձևակերպումը:

Գծապատկեր 3.1. Բակալավրի կրթական ծրագրով ընդունված օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների թվաքանակը 2017-2018-ից 2019-2020 ուսումնական տարիներին




Գծապատկեր 3.2. Մագիստրոսի կրթական ծրագրով ընդունված օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների քանակը 2017-2018-ից 2019-2020 ուսումնական տարիներին



Ստորև՝ Գծապատկեր 3.3-ում, ներկայացված է օտարերկրացի ու սփյուռքահայ ուսանողների թվաքանակը՝ ըստ երկրների:

Գծապատկեր 3.3. 2019-2020 ուսումնական տարում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող օտարերկրացի ու սփյուռքահայ ուսանողների թվաքանակը՝ ըստ երկրների



Չնայած օտարերկրացի ուսանողների թվաքանակի աճին՝ ԵՊԼՀ-ն բախվում է մի շարք խնդիրների, մասնավորապես՝ կապված օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդունելության ժամկետների հետ: Ընդունելության ժամկետները սահմանվում են ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից, համաձայն որի՝ ընդունելության գործընթացն ավարտվում է այն ժամանակ, երբ ուսումնական գործընթացը ԵՊԼՀ-ում սկսված է: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ հաճախ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ ԿԳՄՍՆ, ԵՊԼՀ-ի Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչությունը հնարավորություն չի ունենում պատշաճ և ժամանակին ստուգել փաստաթղթերի իսկությունը, նախընթաց կրթությունը հավաստող փաստաթղթերը, ընտրված մակարդակի կրթական ծրագիր ընդունվելու իրավասությունը:

Օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդունելությունը պատշաճ որակի կազմակերպման համար նախատեսվում է 2020թ.-ից ներդնել ԵՊԼՀ օտարերկրացի և սփյուռքահայ ուսանողների ընդունելության կանոնակարգ, որը թույլ կտա համակարգել ընդունելության գործընթացը:

Համագործակցության պայմանագրեր

Ներկայումս ԵՊԼՀ-ն ունի շուրջ 80 համագործակցության պայմանագրեր, որոնցից 26-ը կնքվել են 2019թ.-ին (հավելված 3.2): Դրանք ներառում են ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային

կրեդիտային շարժունության միջբուհական համաձայնագրերը, երկկողմանի համագործակցության հուշագրերը և համաձայնագրերը:

Համագործակցություն միջազգային կառույցների հետ

2019թ.-ին ԵՊԼՀ-ն շարունակել է համագործակցությունը ներպետական և միջազգային ցանցային համագործակցության և անդամակցության շրջանակներում, մասնավորապես՝ համալսարանը ներկայումս համագործակցում է հետևյալ կառույցների հետ և (կամ) հանդիսանում է նրանց անդամ՝

- ԵԽ Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն (Գրաց, Ավստրիա),
- ԱՊՀ ցանցային համալսարան,
- Սևծովյան տարածաշրջանի համալսարանների ցանց (BSUN),
- Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն (AUF),
- Եվրոպական լեզվական խորհուրդ (ELC),
- Չինարեն դասավանդողների եվրասիական ասոցիացիա,
- Ռուսաց լեզու և գրականություն դասավանդողների միջազգային ասոցիացիա,
- Համալսարանների միջազգային ասոցիացիա (IAU),
- ԱՊՀ անդամ երկրների լեզուների և մշակույթի հենքային կազմակերպություն,
- Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում:

2019թ.-ին ԵՊԼՀ-ն դարձել է նաև տարածաշրջանի Մասնավոր համալսարանների ասոցիացիայի անդամ, որը ենթադրում է համագործակցություն ԵՊԼՀ-ի և Վրաստանի մի շարք մասնավոր համալսարանների հետ:

Համատեղ կրթական ծրագրերի իրագործում

ԵՊԼՀ-ն համատեղ կրթական ծրագրեր է իրականացնում օտարերկրյա հետևյալ համալսարանների հետ՝

- Փարիզ-Սորբոն 4 համալսարանի հետ մագիստրոսական և դոկտորական համատեղ ծրագրեր՝ «Համեմատական գրականություն» ու «Հրատարակչական գործ» մասնագիտություններով, որոնցով Փարիզ-Սորբոն 4 համալսարանում 2019թ.-ին սովորել են 1 ուսանող մագիստրոսի կրթական ծրագրով և 3 ասպիրանտ.
- Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի հետ «Քաղաքագիտություն» մասնագիտությամբ դոկտորական և մագիստրոսական համատեղ ծրագիր, որով Մարտին Լյութերի համալսարանում 2019թ.-ին սովորել են 1 ասպիրանտ և 2 ուսանող մագիստրոսի կրթական ծրագրով.
- ԱՊՀ ցանցային համալսարանի համագործակցության ծրագրի շրջանակում Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության համալսարանի հետ «Ռուսաց բանասիրություն» և «Տուրիզմ» մասնագիտություններով մագիստրոսական համատեղ ծրագիր, որում ընդգրկվել է 1 ուսանող «Տուրիզմ» մասնագիտությամբ:

Հայագիտական կենտրոնների հետ համագործակցություն

- ԵՊՀ-ն իրականացնում է օտարերկրյա համալսարաններում հայագիտությունը խթանող գործունեություն: 2019թ.-ին ԵՊՀ-ն գործուղել է մեկական դասախոս Մոսկվայի պետական լեզվաբանական և Ռումինիայի Բուխարեստի համալսարաններ՝ հայերեն և հայկական մշակույթ դասավանդելու և տարածելու համար:
- Շարունակվել է համագործակցությունը Բուենոս Այրեսի Ռոսարիոյի համալսարանի հայագիտության ամբիոնի հետ. դեկտեմբերին ԵՊՀ-ի արգենտինական կենտրոնում կազմակերպվել է սեմինար՝ «Հիշողության փոխանցողներ» խորագրով:
- 2019թ.-ին ԵՊՀ-ն պատրաստել և ՀՀ ԿԳՄՍՆ-ի գիտության կոմիտե է ներկայացրել հայտ՝ 2020թ.-ին ԵՊՀ-ում «Հայագիտությունը Մոնղոլիայում» և «Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները մոնղոլալեզու սովորողների համար» հայագիտական միջազգային սեմինար և տեսական դասախոսություններ անցկացնելու համար: Սեմինարին նախատեսվում է հրավիրել Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության ազգային համալսարանի պրոֆեսոր Դաշդոնդոգ Բայարսայխանին, որը Օքսֆորդի համալսարանում դոկտորական ատենախոսություն է պաշտպանել «Հայ-մոնղոլական քաղաքական հարաբերությունները 1220-1335թթ.» թեմայով:

Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով իրականացվող ծրագրեր

ԵՊՀ-ի կարողությունների զարգացման ծրագրեր

2019թ.-ին իրականացվել է ԵՊՀ-ի կարողությունների զարգացմանն ուղղված 7 ծրագիր, որոնք ֆինանսավորվել են օտարերկրյա դրամաշնորհներով: Ընդհանուր առմամբ 2019թ.-ին 2017-2018թթ.-ի համեմատությամբ գրանցվել է միջազգային ծրագրերի թվաքանակի էական աճ. 2017-ին և 2018-ին իրականացվել է երեքական համալսարանների կարողությունների զարգացման ծրագիր, իսկ 2019թ.-ին՝ 7-ը:

2019թ.-ին շարունակվել է միջազգային դրամաշնորհների ֆինանսավորմամբ ԵՊՀ-ի կարողությունների զարգացմանն ուղղված հետևյալ ծրագրերի իրագործումը՝

1. **«Բուհի ընդունելության և որակավորումների ճանաչման վերաբերյալ հայ-նորվեգական համագործակցություն» (NACAR)** եռամյա ծրագիրը.
2. Բրիտանական խորհրդի ձեռնարկատիրական կրթության և ստեղծարար ոլորտի զարգացման «Ստեղծարար միտք» ծրագիրը, որի շրջանակներում ԵՊՀ-ի և գործընկեր բուհերի 24 դասախոս և շուրջ 500 ուսանող զարգացրել են իրենց ստեղծարար ձեռնարկատիրական հմտությունները և կարողությունները.
3. Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված **«Մեծ գաղափարների մարտահրավեր»** (Creative Spark Big Idea Challenge) մրցույթին Հայաստանից ներկայացված 43 ստարտափ նախագծից 6-ը ներկայացվել է ԵՊՀ-ի ուսանողների կողմից: Մրցույթի տեղական և միջազգային ժյուրիի կողմից **սոցիալական ազդեցություն** (Social Impact) կատեգորիայում հաղթող է ճանաչվել ԵՊՀ-ի ուսանողների թիմը՝ «ԳրինԴոմ» (GreenDom) ստարտափ ծրագրով, որի մեկնարկի համար թիմը ստացել է 3000 ֆունտ ստերլինգ գումարի դրամաշնորհ.

4. ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող **«Հայաստանում և Մոլդովայում հեղափոխության կառավարման և բաց գիտության կարողությունների հզորացման (MINERVA)» ծրագիրը**.

5. ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող **«Համալսարան-ձեռնարկարհիություն համագործակցության և ուսանողների ձեռնարկարհական հմտությունների ամրապնդումը «ՍՄԱՐԹ» կենտրոնների միջոցով (SMART)»** ծրագիրը:

2019թ. ԵՊԼՀ-ն, հիմք ընդունելով իր ռազմավարական ծրագրի զարգացման ուղղությունները, մշակել և Համաշխարհային բանկի վարկային միջոցներով իրականացվող ՆՄՀ-ի մրցույթին է ներկայացրել «ՀայԼինգվոՏեք» գերազանցության կենտրոնի ստեղծման ծրագիրը, որը հաստատվել է: Ծրագրի իրականացման աշխատանքները սկսվել են 2019թ.-ին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- ներդնել կրթական 2 նոր ծրագիր՝ «Հաշվողական լեզվաբանություն» բակալավրական և «Համընթաց թարգմանություն» մագիստրոսական ՄԿԾ-ները,
- ստեղծել համակարգչային ու անհրաժեշտ այլ սարքավորումներով և գույքով հագեցած լեզվական տեխնոլոգիաների և ռեսուրսների հետազոտական լաբորատորիա, գիտակրթական միջոցառումների սրահ, ուսանողների տեխնոլսարան և համընթաց թարգմանության ու թեստավորման լինգվոսային կաբինետ,
- լրամշակել հայերենի՝ որպես մայրենի և օտար լեզվի իմացության մակարդակների շրջանակը՝ A1 – C2 մակարդակների համար նկարագրիչներ՝ առանձին համակազմերով,
- մշակել հայերենի իմացության գնահատման համալիր և գործարկել թեստավորման առցանց հարթակ:

2019թ.-ին մեկնարկել են նաև ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող հետևյալ 2 ծրագրերը, որոնք համակարգվում են Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչության կողմից՝

1. **«Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթական համակարգերում աշխատանքի վայրում ուսումնառության ճկուն, նորարար և գործնական շրջանակի մշակում և ներդրում (FLEXWBL)»** ծրագիրը,
2. **«Հայաստանի դոկտորական կրթության բարեփոխումը ակադեմիայի, արդյունաբերության և ԵՄ փորձին համապատասխան (ARMDOCT)»** ծրագիրը:

ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի իրագործում

Այս ուղղությամբ ևս գրանցվել է առաջընթաց, մասնավորապես՝

1. 2019թ.-ին շարունակվել է ԵՄ-ի «Էրազմուս Մոնեմոդուլ» ծրագրի շրջանակներում «Ժան Մոնե մոդուլ» եռամյա ծրագրի (2017-2020թթ.) իրականացումը ԵՊԼՀ-ի «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի կողմից.
2. 2019թ.-ին ԵՄ-ի «Էրազմուս+»-ի «Ժան Մոնե մոդուլ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է «Հայաստանի և ԵՄ օրենսդրության մոտարկում (LegAL)» ծրագիրը, որի շրջանակում իրականացվելու են «Օրենսդրական մոտարկման լաբորատորիա» թեմայով դասընթաց, ամառային դպրոց, սեմինար՝ օրենսդրական հիմնախնդիրներով և քաղաքականությամբ զբաղվող մասնագետների համար, ինչպես նաև «Հայկական օրենսդրության եվրոպականացումը. խնդիրները և մարտահրավերները» թեմայով հետազոտական

աշխատանք: Ծրագրի համակարգողն է ԵՊԼՀ-ի «ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբիոնի դոցենտ Աննա Խվորոսյանկինան:

Շարժունության ծրագրեր

2019թ.-ին ԵՊԼՀ-ի ուսանողները և դասախոսական կազմը մասնակցել են շարժունության և փոխանակման միջազգային տարբեր ծրագրերի: Ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում և իրականացվում են ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում, որոնք նախատեսված են բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի սովորողների, ինչպես նաև ՊԴ և վարչական կազմերի համար: **Շարժունության և միջազգային այլ ծրագրերի շրջանակներում իրականացվել է 82 շարժունություն՝ ԵՊԼՀ-ի վարչական աշխատողների և դասախոսների մասնակցությամբ**, որոնք անցել են մասնագիտական վերապատրաստումներ, կարդացել դասախոսություններ և իրականացրել փորձի փոխանակում (հավելված 3.3):

2019թ.-ի ընթացքում ԵՄ-ի «Էրազմուս+» **միջազգային շարժունության ծրագրերով ԵՊԼՀ-ի 16 վարչական աշխատակից և դասախոս** հնարավորություն են ստացել այցելել եվրոպական տարբեր երկրների գործընկեր բուհեր՝ կարդալու դասախոսություններ և վերապատրաստվելու:

Իր հերթին ԵՊԼՀ-ն հյուրընկալել է **արտասահմանցի 9 դասախոսի** Իսպանիայից, Իտալիայից և Ռումինիայից (հավելված 3.4):

Ուսանողական համակազմից շարժունության ծրագրերին մասնակցել է 25 ուսանող, որից 12-ը՝ ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային շարժունության ծրագրերի շրջանակներում:

ԵՊԼՀ-ի ուսանողների և աշխատակիցների մասնակցությունը միջազգային ծրագրերին չի սահմանափակվել վերոնշյալ ծրագրերով, քանի որ համալսարանի ամբիոնները և ԳՈՒԿ-երը իրենց նախաձեռնությամբ մասնակցել են միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների, համաժողովների, սեմինարների, կլոր սեղան-քննարկումների և գիտակրթական այլ միջոցառումների՝ ըստ մասնագիտական հետաքրքրությունների (հավելված 3.3):

Տեղեկատվական և համագործակցային հանդիպումներ

ԵՊԼՀ-ն հաշվետու տարվա ընթացքում կազմակերպել է իր առաքելությունից բխող մի շարք միջազգային գիտաժողովներ, որոնք միտված են եղել օտար լեզուների դասավանդմանը, արտասահմանյան գրականությանը և միջմշակութային հաղորդակցությանը (հավելված 3.5): ԵՊԼՀ-ի Ֆրանկոֆոն հետազոտությունների միջհամալսարանական ակադեմիական նվաճումների կենտրոնի կողմից 2019թ.-ին կազմակերպվել է 19 միջոցառում՝ մրցույթներ, սեմինարներ և գիտաժողովներ՝ արտասահմանյան գործընկեր կառույցներից հրավիրված մասնագետների մասնակցությամբ (հավելված 3.6):

2019թ.-ի մայիսին Երևանում տեղի ունեցավ հայ-ավստրիական առաջին համագործակցային հանդիպումը՝ կազմակերպված ավստրիական «Էրազմուս+ ազգային գործակալության (OeAD-GmbH) և Հայաստանում «Էրազմուս+ ազգային գրասենյակի աջակցությամբ: 20 ներկայացուցիչ 12 ավստրիական և 45 մասնակից 22 հայաստանյան բուհերից մայիսի 16-ին հյուրընկալվեցին ԵՊԼՀ-ում, իսկ մայիսի 17-ին՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Սեմինարը միտված էր հաստատելու կապեր երկու երկրների բուհերի միջև և բացահայտելու «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում միջբուհական

համագործակցության նոր հեռանկարները: Հաջորդ՝ հայ-իսպանական կոնտակտային հանդիպումը կայացավ 2019թ.-ի նոյեմբերին, որի ընթացքում Հայաստանի և Իսպանիայի բուհերի միջազգային կապերի պատասխանատուները քննարկեցին շարժունության ոլորտում իրենց ձեռքբերումները, մարտահրավերները ու հնարավոր համատեղ ծրագրերը:

Տեղեկատվական հանդիպումներ

ԵՊԼՀ-ի ուսանողների և անձնակազմի համար 2019թ.-ին պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական հետևյալ հանդիպումները և քննարկումները՝

- տեղեկատվական հանդիպում ԵՊԼՀ ուսանողների համար միջազգային շարժունության ծրագրերին և միջազգային գործընկերությունների շրջանակում այլ ծրագրերի ծանոթացնելու նպատակով,
- «Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության» (DAAD) կրթաթոշակային ծրագրերի ներկայացում ուսանողներին,
- հանդիպում ՍԳՍՖ-ի և ԹՄՀՖ-ի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու միջազգային ծրագրերում ներգրավվածության և հնարավորությունների վերաբերյալ հարցեր:

2020թ. նախատեսվում է հանդիպում մյուս ֆակուլտետների հետ:

ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ համագործակցություն, արտասահմանյան պարզվիրակությունների այցեր

Հաշվետու տարում ԵՊԼՀ-ն շարունակել է համագործակցությունը ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների հետ: Տարբեր երկրների դեսպանների այցերը ԵՊԼՀ նպատակաուղղված են խթանելու համապատասխան երկրի լեզվի և մշակույթի ուսուցումը ԵՊԼՀ-ում, ապահովելու և զարգացնելու համագործակցությունը այդ երկրների բուհերի հետ, կազմակերպելու կրթական, գիտական ու մշակութային միջոցառումներ և այլն:

ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում 2019թ.-ին ԵՊԼՀ այցելությունները ներկայացված են հավելված 3.7-ում:

Կոնֆուցիուսի ինստիտուտ

2009թ.-ի փետրվարի 26-ից ԵՊԼՀ-ի կազմում գործում է Կոնֆուցիուսի ինստիտուտը, որը ստեղծվել է ՀՀ և ՉԺՀ-ի կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում: Կոնֆուցիուսի ինստիտուտը գործում է՝ համաձայն ԵՊԼՀ-ի և Չինաստանի կրթության և գիտության նախարարությանն առընթեր «Չինարենի տարածման» գլխամասային գրասենյակի (այսուհետ՝ Հանբան) և ԵՊԼՀ-ի ու Դալիանի օտար լեզուների համալսարանի միջև կնքված համաձայնագրերի:

Կոնֆուցիուսի ինստիտուտի առաքելությունն է ուսուցանել չինարեն և լայն հասարակությանը հասու դարձնել չինական արվեստը, կրթությունը, գիտությունը և մշակույթը: Յուրաքանչյուր տարի Կոնֆուցիուսի ինստիտուտն իրականացնում է տարատեսակ աշխատանքներ և բազմաթիվ միջոցառումներ ոչ միայն կրթության և գիտության, այլև մի շարք այլ ոլորտներում:

ԵՊԼՀ-ի Կոնֆուցիուսի ինստիտուտին օրինակելի ինստիտուտի կարգավիճակ շնորհելու նպատակով 2018թ.-ին ԵՊԼՀ-ն վարել էր նախնական բանակցություններ Հանբանի գրասենյակի

և ՀՀ-ում ՉԺՀ-ի դեսպանատան հետ: Ելնելով ստացված նախնական համաձայնությունից՝ ԵՊՀՀ-ն պատրաստել էր ծրագրային առաջարկ՝ անհրաժեշտ ձևաչափով, և ներկայացրել Հանքանի գրասենյակ: Առաջարկը, ծրագրային գործողություններից բացի, ներառում է նաև հավելյալ ֆինանսավորման առաջարկ՝ ԵՊՀՀ-ի կողմից Կոնֆուցիուսի ինստիտուտին տրամադվող տարածքի շիննորոգմանը և անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով համալրմանը աջակցելու համար: Առաջարկում ներառվող փաստաթղթերը պատրաստելու նպատակով հանդիպումներ էին կայացել ՀՀ-ում ՉԺՀ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Տիան Էրլունգի, ՀՀ կառավարության ներկայացուցիչների և այլ շահակիցների հետ, կազմվել էր շիննորոգման և գույքով համալրման նախահաշիվ և նախնական գծագիր: 2019թ.-ին ծրագիրը ամբողջականացվել է և կից բոլոր փաստաթղթերով ներկայացվել Հանքան: Այն քննարկվել է Հանքանի տնօրենի տեղակալի և համապատասխան պաշտոնյաների հետ՝ 2019 թ.-ին ԵՊՀՀ-ի պատվիրակության՝ Չինաստան կատարած այցի ժամանակ: Հանքանից ծրագրի վերաբերյալ սպասվում է վերջնական որոշում:

2018թ.-ին ԵՊՀՀ-ի կողմից նաև մշակվել էր և Հանքան ներկայացվել **չինարենի ուսուցչի պատրաստման մագիստրոսական ծրագիրը ԵՊՀՀ-ում ներդնելու ծրագրային առաջարկը**, որը նախատեսում է 1 տարի ուսուցում ԵՊՀՀ-ում և 1 տարի՝ ՉԺՀ-ի Դալիանի օտար լեզուների համալսարանում: Այն ևս քննարկվել է Հանքանի տնօրենի տեղակալի և համապատասխան պաշտոնյաների հետ 2019 թ.-ին ԵՊՀՀ-ի պատվիրակության՝ Չինաստան կատարած այցի ժամանակ, հաստատվել և համապատասխանաբար կնքվել է պայմանագիր ԵՊՀՀ-ի և Հանքանի միջև չինարենի ուսուցչի պատրաստման մագիստրոսական ծրագիրն իրականացնելու վերաբերյալ: Մագիստրոսական ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2020թ. սեպտեմբերին:

2019թ.-ին ԵՊՀՀ-ի և Հանքանի միջև կնքվել է նաև նոր համաձայնագիր՝ համագործակցությունը շարունակելու վերաբերյալ:

Հաշվետու տարում Կոնֆուցիուսի ինստիտուտն իրականացրել է չինարենի ուսուցում, միջազգային որակավորման քննություններ, տարբեր ուղղվածության վերապատրաստումներ, խորհրդատվություններ և մրցույթներ Չինաստանում կրթաթոշակային ծրագրերով ուսանելու համար, ինչպես նաև մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են Հայաստանում չինարենի և չինական մշակույթի տարածմանը:

2019թ.-ին Կոնֆուցիուսի ինստիտուտի կողմից իրականացված միջոցառումների մասին մանրամասները ներկայացված են հավելված 3.8-ում:

IV. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներածություն

ԵՊՀ-ն խիստ կարևորում է որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) մշակույթի շարունակական զարգացումը՝ նպատակաուղղված որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) ներբուհական քաղաքականության, ընթացակարգերի և մեխանիզմների բարելավմանը: ԵՊՀ-ի ՈՆԱ գործընթացի փոխկապակցված բաղադրիչներն են հաշվետվողականության ապահովումը, կրթական ծրագրերի և հարակից ուսումնաօժանդակ ծառայությունների իրականացման համար համապատասխան ռեսուրսների ապահովումը, ներառական կրթական միջավայրի ապահովման անմիջական խթանումը, բուհի ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված գործընթացների շարունակական իրականացումը և առհասարակ բուհի որակի ներքին և արտաքին ապահովման մեխանիզմների արդյունավետ գործադրումը: ԵՊՀ-ի ՈՆԱ քաղաքականությունն իրականացվել և շարունակվում է իրականացվել՝ հավատարմագրման պետական չափանիշներին և ՈԱ ազգային ու միջազգային չափորոշիչներին համապատասխան:

Հաշվետու տարում ԵՊՀ-ն կազմակերպել է հերթական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը՝ ներառյալ 2019թ.-ի մայիսին տեղի ուեցած փորձագիտական այցի նախապատրաստական համընդգրկուն աշխատանքները: Վերջիններս ներառել են ներքին տեղեկատվության և տվյալների հավաքագրումը, ԵՊՀ-ի ինքնավերլուծության զեկույցի մշակումը համապատասխան ստորաբաժանումների կողմից և դրա ամփոփումն ու վերջնական տարբերակի պատրաստումը ԵՊՀ-ի Որակի ապահովման և բարեփոխումների կենտրոնի (այսուհետ՝ ՈԱԲԿ) կողմից՝ հայերեն և անգլերեն տարբերակներով: Բացի այդ, հավատագրման նախապատրաստական աշխատանքները ընդգրկել են ԵՊՀ-ի աշխատակազմի և ուսանողների համար վերապատրաստումների իրականացումը և ըստ փորձագիտական այցի ժամանակացույցի՝ ԵՊՀ-ում անհրաժեշտ գործընթացների և կազմակերպական աշխատանքների իրականացումը, ինչպես նաև փորձագիտական զեկույցի Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (այսուհետ՝ ՈԱԱԿ) ներկայացումից հետո ԵՊՀ-ի բարելավման պլանի մշակումն ու ներկայացումը:

2019թ.-ի դեկտեմբերին ԵՊՀ-ին շնորհվել է հավատարմագրում 4 փարի ժամկետով:

2019թ.-ին ԵՊՀ-ի կողմից իրականացված որակի ապահովմանն ու շարունակական բարելավմանն ուղղված գործունեությունը բխել է ԵՊՀ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 12-ում (Կրթության որակի ապահովում)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները հակիրճ ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 4.1-ում:

Աղյուսակ 1.1 ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 12-ում (Կրթության որակի ապահովում) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 12. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ	
Խնդիր 1.	Նպաստել ԵՊԼՀ-ում կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի զարգացմանը
Կատարված գործողություններ	Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.1.1. Կազմակերպել կրթության ՈԱ աշխատանքների իրազեկման բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ և վերապատրաստումներ բուհի շահակիցների թիրախային խմբերի համար:	ՈԱԲԿ-ի կողմից կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստումներ, որոնց մասնակցել են 352 ուսանող, ՊԴ կազմի 235 և վարչական կազմի 30 ներկայացուցիչներ:
12.1.2. Մշակել ձևաթերթ՝ ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովների անդամների կողմից շրջանավարտներին գնահատելու համար:	2019թ.-ին մեկնարկել են ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովների անդամների կողմից շրջանավարտների գնահատման ձևաչափի մշակման աշխատանքները: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների ամբողջականացումը, ամփոփումն ու հաստատումը նախատեսված են ՈԱԲԿ-ի 2020թ.-ի գործողությունների ծրագրով:
12.1.3. Մշակել և գործարկել ԵՊԼՀ-ում մտավոր սեփականության և ակադեմիական ազնվության հայեցակարգեր, որոնք կնպաստեն գրագողության դեպքերի նվազեցմանն ու ակադեմիական ազնվության առավել լայն կիրառմանը:	• 2019թ.-ին մշակվել է ԵՊԼՀ-ի էթիկայի կանոնագիրքը, որը ներառում է ակադեմիական բարեվարքության վերաբերյալ առանցքային դրույթներ: Կանոնագիրքը քննարկվել է ԵՊԼՀ-ի կանոնակարգերի մշակման հանձնաժողովի կողմից: 2020թ.-ին կանոնագիրքը ներկայացվելու է ԵՊԼՀ գիտական խորհրդի քննարկմանը և հաստատմանը: • 2019թ.-ին մեկնարկվել են մտավոր սեփականության պահպանման հայեցակարգի մշակման աշխատանքները: Հայեցակարգի բովանդակության ամբողջական մշակումը, ամփոփումն ու հաստատումը նախատեսված են ՈԱԲԿ-ի 2020թ.-ի գործողությունների ծրագրով:
12.1.4. Մշակել և գործարկել կրթության որակի կառավարման մասնագիտական դասընթացներ:	ՈԱԲԿ-ը ԵՊԼՀ-ի ներքին շահակիցների շրջանում իրականացրել է վերապատրաստումներ, որի ընթացքում ներկայացրել են ԵՊԼՀ-ի ՈՆԱ սկզբունքներն ու բաղադրիչները, ինքնավերլուծությունում ներառված բոլոր չափանիշների վերլուծության հիմնական դրույթները, հավատարմագրման գործընթացի փուլերն ու փորձագիտական այցի ընթացակարգը: Վերապատրաստումներին մասնակցել են՝ • ՊԴ կազմի՝ բոլոր ամբիոններից և ԳՈՒԿ-երից 235 ներկայացուցիչ, • ուսանողական համակազմի 352 ներկայացուցիչ,

		• վարչական և ուսումնասօժանդակ կազմերի 37 ներկայացուցիչ: ԵՊԼՀ-ում ՈԱ մասնագիտական վերապատրաստումներն ու քննարկումները շարունակական բնույթ են կրում: ԵՊԼՀ-ին 4 տարվա հավատարմագրում շնորհելուց հետո փորձագիտական խմբի կողմից ներկայացված խորհրդատվությունների հիման վրա մշակվել է բարելավման պլան, որի ուղղություններին համապատասխան՝ ՈԱԲԿ-ը վերսկսելու է իր առանցքային շահակիցների շրջանում վերապատրաստումների իրականացումը և կառուցվածքային ստորաբաժանումներին խորհրդատվությունների տրամադրումը:
12.1.5. Մշակել ամբիոնի նիստի արձանագրությունների և դասալսումների իրականացման միասնական ձևաչափեր:		Մշակվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգը (գիտական խորհրդի 15.03.2019թ. N9 նիստի որոշում), որում սահմանված են դասալսումների նպատակներն ու խնդիրները, դասալսումների անցկացման և արդյունքների գնահատման գործընթացները, ինչպես նաև դասալսումների իրականացման ձևաչափեր:
12.1.7. Ներգրավել բուհի ներքին և արտաքին շահակիցներին ԵՊԼՀ-ի կրթության ՈԱ գործընթացներում՝ ապահովելով մասնակցային որոշումների կայացումը և ընդունվող որոշումների և դրանց իրականացման արդյունքների հրապարակայնությունը:		ԵՊԼՀ-ի ներքին ու արտաքին շահակիցները մասնակցել են ինչպես բուհի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի, այնպես էլ ԵՊԼՀ-ի ինքնավերլուծության զեկույցի մշակմանն ու քննարկմանը:
12.1.8. Շարունակաբար իրականացնել բուհի կրթական ծրագրերի ու ծառայությունների որակի գնահատմանն ուղղված միջոցառումներ՝ բուհի կառուցվածքային ստորաբաժանումների և արտաքին գործընկերների հետ սերտ համագործակցությամբ:		Իրականացվել են հարցումներ «Կառավարում» և «Կրթության գնահատում և թեստավորում» մագիստրոսական կրթական ծրագրերով սովորող ուսանողների և շրջանավարտների շրջանակում՝ կրթական ծրագրերից և ՊԴ կազմից նրանց բավարարվածության գնահատման համար: Հարցումների արդյունքներն ամփոփվել են ՈԱԲԿ-ի և Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի կողմից, քննարկվել ամբիոնի նիստում և ներկայացվել են առանցքային շահակիցներին: 2020թ.-ին նախատեսվում է իրականացնել առնվազն 5 ՄԿԾ-ների վերաբերյալ հարցումներ:
Խնդիր 2.	Նախապատրաստել ԵՊԼՀ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման երկրորդ փաթեթը և կազմակերպել հավատարմագրման գործընթացի նախապատրաստումը բուհում	
Կատարված գործողություններ		Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.2.1. ԵՊԼՀ-ի կառուցվածքային		Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներից

ստորաբաժանումներից շարունակաբար հավաքագրել տվյալներ, ինքնավերլուծություններ և հիմքեր՝ ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի պատրաստման նպատակով:	հավաքագրված տվյալներն ու ինքնավերլուծությունները ամփոփվել են ԵՊԼՀ-ի 2013-2018թթ.-ի ինքնավերլուծության զեկույցում: Ինքնավերլուծություններ պատրաստվել են 18 ուսումնական ստորաբաժանումների՝ ամբիոնների և ԳՈՒԿ-երի կողմից:
12.2.2. Վերամշակել արտաքին և ներքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումների բովանդակությունը՝ բուհում առկա խնդիրների և ձեռքբերումների վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու համար:	Մեկնարկել են ՈԱԲԿ-ի և Կարիերայի կենտրոնի համատեղ իրականացվող հարցումների մեթոդաբանության և բովանդակության մշակման աշխատանքները: 2020թ.-ին նախատեսվում է ամբողջականացնել այդ աշխատանքները և իրականացնել հարցումներ ԵՊԼՀ-ի ներքին և արտաքին շահակիցների շրջանում:
12.2.3. Շարունակել ԵՊԼՀ-ում իրականացվող հարցումները սովորողների, ՊԴ կազմի և աշխատակազմի շրջանում:	Շարունակվել են հարցումները սովորողների, ՊԴ կազմի և այլ աշխատակիցների շրջանում, որին առկա և հեռակա ուսուցման համակարգերից մասնակցել են 1206 սովորող և ՊԴ կազմի 292 ներկայացուցիչ:
12.2.5. Իրականացնել ԵՊԼՀ-ի ՈԱ համակարգի գործունեության արդյունավետության գնահատում:	ՈԱ համակարգի գործունեության արդյունավետության գնահատման արդյունքներն ու դրանց վերլուծությունը ներկայացվել են ԵՊԼՀ-ի 2013-2018թթ.-ի ինքնավերլուծության զեկույցում:
Խնդիր 3.	Իրականացնել ԵՊԼՀ-ի թիրախային ՄԿԾ-ների ծրագրային/քլաստերային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքները
Կարարված գործողություններ	Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.3.1. Համակարգել ծրագրային (քլաստերային) հավատարմագրման համար ներկայացվող թիրախային ՄԿԾ-ների ընտրության աշխատանքները:	Վերամշակվել են 10 քլաստերի ՄԿԾ-ները (բակալավրի և մագիստրոսի), որոնք ներկայացվել են ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնող ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբին:
12.3.2. Թողարկող ամբիոններից հավաքել ՄԿԾ-ների վերաբերյալ տվյալներ, ինքնավերլուծություններ (ներառյալ բարելավման առաջարկություններ) և հիմքեր՝ ստորաբաժանումների կատարողականի շարունակական գնահատման համար:	Թողարկող ամբիոններից ստացված տվյալներն ու վերլուծությունները ներառվել են ԵՊԼՀ-ի ինքնավերլուծության զեկույցում և ներկայացվել են ՈԱԱԿ՝ որպես զեկույցի փաստաթղթային հիմքեր:
12.3.3. ԵՊԼՀ-ի կրթական ծրագրեր մշակողների և ղեկավարների համար կազմակերպել դասընթացներ և տրամադրել խորհրդատվություն քլաստերային/ծրագրային	ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում վերանայվել են 10 քլաստերի ՄԿԾ-ների ամբողջական փաթեթները՝ համապատասխանեցնելով ուսումնառության վերջնարդյունքները ՀՀ ՈԱԾ-ի նկարագրիչներին: Այդ նպատակով վերապատրաստվել է

հավատարմագրմանը նախապատրաստվելու և կրթական ծրագրերը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխանեցնելու ուղղությամբ:		համապատասխան ամբիոնների և ԳՈՒԿ-երի ՊԴ կազմը: ՄԿԾ-ները ներկայացվել են ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնող ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբին:
12.3.4. Տրամադրել խորհրդատվություն ՄԿԾ-ների ղեկավարներին վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրերի և դրանց ուսումնառության վերջնարդյունքների վերանայման գործընթացում:		ՈԱԲԿ-ի աշխատակազմի կողմից հանդիպումներ են իրականացվել ամբիոնների վարիչների և դասախոսների հետ, և տրամադրվել են խորհրդատվություններ: Արդյունքում ՈԱԲԿ-ի կողմից տրամադրվել է 31 կարծիք 2018-2019 ուսումնական տարվա ՄԿԾ-ների վերաբերյալ:
12.3.6. Գործատուների և աշխատաշուկայի ներկայացուցիչների շրջանում իրականացնել կարիքների վերլուծություն:		ՈԱԲԿ-ը Կարիերայի կենտրոնի հետ սկսել է ԵՊԼՀ-ի գործատուների և աշխատաշուկայի այլ ներկայացուցիչների կարիքների ուսումնասիրման և վերլուծության աշխատանքները: 2020թ.-ին նախատեսվում է ամբողջականացնել ուսումնասիրության ու վերլուծության արդյունքները և ներկայացնել ԵՊԼՀ-ի առանցքային շահակիցների քննարկմանը:
12.3.7. Մշակել և հաստատել ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն և մեխանիզմներ:		10 թիրախային ՄԿԾ-ներով իրականացվել է բենչմարքինգ: 2020թ.-ին նախատեսվում է մշակել միասնական ձևաչափ և մեթոդաբանություն՝ հիմք ընդունելով ԵՊԼՀ-ի 2019թ.-ի բենչմարքինգի և լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքները:
Խնդիր 4.		Վերամշակել կրթության որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ եվրոպական չափորոշիչներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ապահովման նպատակով
Կատարված գործողություններ		Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.4.1. Վերամշակել և շարունակաբար զարգացնել բուհի կրթության որակի ապահովման ներբուհական համակարգը՝ քաղաքականությունը, հայեցակարգը, ձեռնարկն ու համապատասխան ընթացակարգերը՝ հիմնվելով եվրոպական չափորոշիչների և ՀՀ կառավարության կողմից հաստատված հավատարմագրման չափանիշների համապատասխանության և միջազգային լավագույն փորձի համեմատական վերլուծության և գնահատման արդյունքների վրա:		Մեկնարկել են ՈԱ քաղաքականության վերանայման և ՈՆԱ ձեռնարկի վերամշակման աշխատանքները: 2020թ.-ին նախատեսվում է ամբողջականացնել նշված աշխատանքները և արդյունքները ներկայացնել համապատասխան շահակիցների խմբերի քննարկմանն ու գիտական խորհրդի հաստատմանը: Նշված մշակումների և առաջարկվող փոփոխությունների հիման վրա 2020թ.-ին նախատեսվում է վերագործարկել և բարելավել ներբուհական մեխանիզմները՝ հիմնվելով ՊԻԳԲ շրջափուլի վրա:
12.4.3. Վերամշակել և ներդնել կրթության որակի ապահովման		

ներբուհական մեխանիզմներ և ստորաբաժանումների շարունակական բարելավման գործուն համակարգ՝ ապահովելով ՊԻԳԲ-ի շրջափուլի գործարկումն ու իրականացումը:		
12.4.6. Իրականացնել կրթության որակի ապահովման համակարգի բենչմարքինգ՝ ուսումնասիրելով ազգային և միջազգային թիրախավորված բուհերում առկա տարբեր համակարգերը և դուրս բերել դրանց առավելություններն ու թերությունները:		ՈԱԲԿ-ը մեկնարկել է ՈԱ ոլորտում բենչմարքինգի իրականացման աշխատանքները, որոնք՝ որպես ուղղորդում և օժանդակություն, ներկայացվել են նաև կառուցվածքային այլ ստորաբաժանումների (ամբիոններին)՝ իրենց գործունեության շրջանակում բենչմարքինգ իրականացնելու նպատակով:
12.4.7. Աջակցել ՊԴ և վարչական կազմերի մասնագիտական զարգացման կառուցակարգերի և ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:		10 խումբ ՄԿԾ-ների վերաբերյալ բոլոր ամբիոնների վարիչներին և ԳՈԻԿ-երի ղեկավարներին տրամադրվել է մեթոդական աջակցություն ՈԱԲԿ-ի անձնակազմի կողմից:
Խնդիր 5.		Գնահատել ԵՊԼՀ-ի 2013-2017 թթ.-ի ռազմավարական ծրագրի իրականացման և գերակա ուղղությունների իրականացման աստիճանը
Կարարված գործողություններ		Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.5.1. Իրականացնել ԵՊԼՀ-ի 2013-2017թթ.-ի ռազմավարական ծրագրի գնահատում՝ ըստ գործունեության արդյունավետության ցուցանիշների (ԳԱՑ):		ԵՊԼՀ-ի 2013-2017թթ.-ի ռազմավարական ծրագրի գնահատման արդյունքներն ամփոփվել և հիմք են հանդիսացել նոր՝ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման համար:
12.5.2. Համակարգել ԵՊԼՀ-ի 2019-2023 թթ.-ի ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման գործընթացը՝ ներկայացնելով համապատասխան ստորաբաժանումների քննարկմանն ու հաստատմանը:		ՈԱԲԿ-ն համակարգել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման գործընթացը՝ ներկայացնելով համապատասխան ստորաբաժանումների քննարկմանն ու հաստատմանը: Մասնավորապես՝ ռազմավարական ծրագրի նախագծի տարբերակները ներքին ցանցով 5 անգամ շրջանառվել են ԵՊԼՀ-ի բոլոր ստորաբաժանումներին՝ կարծիքների հավաքագրման նպատակով: Բացի այդ, ռազմավարական ծրագրի նախագծային տարբերակները 3 անգամ քննարկվել են ռեկտորի հետ: Այն ամբողջականացվել և ներկայացվել է ինչպես գիտական խորհրդի (30.11.2018թ.), այնպես էլ հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը (06.03.2019թ.):
Խնդիր 6.		Ընդլայնել ՈԱԲ կենտրոնի համագործակցության շրջանակը՝ մասնագիտական գործունեությունը բարելավելու և ԵՊԼՀ կրթության

որակի ապահովմանն ուղղված գործունեության վերաբերյալ	
Կատարված գործողություններ	Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.6.1. Հաստատել և ընդլայնել համագործակցությունը առաջատար բուհերի նմանատիպ կառույցների և գործակալությունների հետ:	Հիմք ընդունելով ՈԱԲԿ-ի համագործակցության շրջանակի ընդլայնման ռազմավարական խնդիրը, այն է՝ շարունակաբար բարելավել ՈԱԲԿ-ի գործունեությունը, ուսումնասիրել այլ բուհերի, նմանատիպ կառույցների և գործակալությունների փորձը և ընդլայնել ու բազմազանեցնել նրանց հետ համագործակցությունը. ՈԱԲԿ-ի անձնակազմը ՀՀ այլ բուհերում մասնակցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման 4 գործընթացների:
12.6.2. Շարունակաբար ապահովել ՈԱԲԿ-ի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը ԵՊԼՀ-ի կայքէջում՝ ՈԱԲԿ-ի ենթաբաժնի թարմացման միջոցով:	ԵՊԼՀ-ի կայքէջում թարմացվել և հրապարակվել է տեղեկատվություն ՈԱԲԿ-ի գործունեության և ԵՊԼՀ-ի հավատարմագրման մասին, ինչպես նաև տեղադրվել են համապատասխան զեկույցները և փաստաթղթերը:
Խնդիր 7.	Շարունակաբար բարելավել ՈԱԲ կենտրոնի անձնակազմի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները՝ ի նպաստ բուհում կրթության որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացմանը
Կատարված գործողություններ	Իրականացված գործողությունների վերջնարդյունքներ
12.7.1. Ապահովել ՈԱԲԿ-ի անձնակազմի մասնակցությունը մասնագիտական որակների զարգացմանն ուղղված վերապատրաստումներին ազգային և միջազգային մակարդակներում:	ՈԱԲԿ-ի անձնակազմը մասնակցել է 16 վերապատրաստումների, սեմինարների, գիտաժողովների, որոնցից 9-ը՝ միջազգային, իսկ 7-ը՝ ազգային մակարդակներում:
12.7.1. Ապահովել ՈԱԲԿ-ի աշխատակազմի մասնակցությունը մասնագիտական որակների զարգացմանն ուղղված վերապատրաստումներին ազգային և միջազգային մակարդակներում:	ՈԱԲԿ-ի աշխատակազմը մասնակցել է 16 վերապատրաստումների, սեմինարների, գիտաժողովների, որոնցից 9-ը՝ միջազգային, իսկ 7-ը՝ ազգային մակարդակներում:
12.7.2. ՈԱԲԿ-ի աշխատակազմի կողմից որակի ապահովման ոլորտին առնչվող գիտական հետազոտությունների իրականացում և որակավորումների բարձրացում:	ՈԱԲԿ-ի աշխատակազմի կողմից կատարվել են ռազմավարական կառավարման՝ ներառյալ որակի կառավարման ոլորտին առնչվող ուսումնասիրություններ և հետազոտություններ, որոնց արդյունքները ներկայացվել են ստորև նշված հոդվածներում և տպագրվել ԵՊԼՀ-ի «Բանբեր» գիտական պարբերականում՝ • ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման

	գործառնության շրջանակը (հեղինակ՝ Ռ. Խաչատրյան), • Ռազմավարական կառավարման գործիքների գործառնության հարափոփոխությունը կազմակերպության միջավայրային զարգացման համատեքստում (հեղինակներ՝ Ռ. Խաչատրյան, Լ. Ասրյան):
12.7.3. Ապահովել ՈԱԲ կենտրոնի աշխատակազմի մասնակցությունը American Society for Quality (ASQ General Fund) և Ծրագրերի կառավարման ինստիտուտի (Project Management Institute (PMI)) կողմից կազմակերպված դասընթացներին ու հավաստագրման քննություններին և ձեռք բերել համապատասխան հավաստագրեր:	Հաշվի առնելով 2018թ.-ից ՈԱԲԿ-ի անդամակցությունը Ծրագրերի կառավարման ինստիտուտին (PMI), որտեղ գործում է հատուկ հարթակ Հայաստանի համար (Armenian Chapter), ՈԱԲԿ-ի աշխատակազմը մասնակցություն է ունեցել վերոնշյալ ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացներին՝ միտված փորձի փոխանակման և համագործակցության միջոցով աշխատակազմի կառավարման և մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև ԵՊՀ-ի գործունեության արդյունավետության բարձրացման խթանմանը:

Առաջնորդվելով ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի գերակա նպատակներով ու խնդիրներով, իր կանոնադրությամբ սահմանված պարտականություններով ու լիազորություններով, ինչպես նաև ՈԱ բնագավառում ԵՊՀ-ի որդեգրած քաղաքականությամբ՝ ՈԱԲԿ-ն իրականացրել է իր ռազմավարության գերակա ուղղություններին և նպատակներին ուղղված թիրախային մի շարք գործողություններ և միջոցառումներ, որոնք ներկայացված են ստորև:

Ուսանողների կարիքների վերհանման և սրացած կրթությունից բավարարվածության աստիճանի գնահատման ուսումնասիրությունների իրականացում

ՈԱԲԿ-ն իրականացրել է 2 լայնածավալ հարցում ուսանողների և ՊԴ կազմի շրջանում՝ ԵՊՀ-ի կրթական միջավայրից բավարարվածության աստիճանի գնահատման նպատակով:

- **ՊԴ կազմի շրջանում** հարցումը բաղկացած էր 5 բաժիններից, որոնք ներառել են ընդհանուր թվով 38 հարց: Հարցմանը մասնակցել է ՊԴ կազմի 292 ներկայացուցիչ: Հարցման արդյունքներն ամփոփվել են ԵՊՀ-ի ինքնավերլուծության զեկույցում:
- **Ուսանողների** շրջանում հարցումը բաղկացած էր 6 բաժիններից, որոնք ներառել են ընդհանուր թվով 57 հարց: Հարցմանը մասնակցել է առկա և հեռակա ուսուցման համակարգերում ընդգրկված 1206 ուսանող: Հարցման արդյունքները ամփոփվել են ԵՊՀ-ի ինքնավերլուծության զեկույցում:

Բացի այդ, ՈԱԲԿ-ը Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հետ 2019թ.-ին իրականացրել է հարցումներ ամբիոնի «Կառավարում» և «Կրթության գնահատում և թեստավորում» մագիստրոսական կրթական ծրագրերով սովորող ուսանողների և շրջանավարտների շրջանակներում՝ կրթական ծրագրերից և ՊԴ կազմից նրանց բավարարվածության գնահատման համար:

- «Կառավարում» կրթական ծրագրից և այն դասավանդող ՊԴ կազմից ուսանողների բավարարվածության գնահատում (13.05.2019թ.): Հարցմանը մասնակցել է 16 ուսանող: Հարցումը բաղկացած էր 7 բաժիններից, որոնք ներառել են 78 հարց:
- «Կառավարում» կրթական ծրագրից և այն դասավանդող ՊԴ կազմից ուսանողների բավարարվածության գնահատում (15.11.2019թ. և 18.11.2019թ.): Հարցումը ներառել է 11 հարց: Հարցմանը մասնակցել է 37 ուսանող (առկա առաջին կուրսի ուսանողներ՝ 25, առկա երկրորդ կուրսի ուսանողներ՝ 12):
- «Կրթության գնահատում և թեստավորում» կրթական ծրագրից և այն դասավանդող ՊԴ կազմից 1-ին կուրսի առկա ուսանողների բավարարվածության գնահատում (15.11.2019թ.): Հարցումը ներառել է 11 հարց: Հարցմանը մասնակցել է 6 ուսանող:
Հարցումների արդյունքներն ամփոփվել են ՈԱԲԿ-ի և Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի կողմից, քննարկվել ամբիոնի նիստում և ներկայացվել են ամբիոնի առանցքային շահակիցներին:

ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակում և հաստատում

2019թ.-ին ԵՊԼՀ-ն մշակել է երակարաժամկետ զարգացման նոր՝ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագիր: Հավաքագրելով և ուսումնասիրելով ներքին ու արտաքին շահակիցների կարիքներն ու կարծիքները՝ ՈԱԲԿ-ն ամբողջանակացրել է բուհի հնգամյա գործունեության ռազմավարական ծրագիրը, որի վերջնական տարբերակը 2019թ. մարտի 6-ին ռեկտորի կողմից ներկայացվել է հոգաբարձուների խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատվել է հոգաբարձուների խորհրդի 2019թ.-ի մարտի 6-ի № 4 նիստի որոշմամբ:

ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման հիմքեր

ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման համար կատարվել են ներբուհական գործունեության համապարփակ վերլուծություններ՝ ըստ բուհի ռազմավարական գերակա ոլորտների, ինչպես նաև հաշվի են առնվել բուհի նախկին փորձառությունը, առկա խնդիրներն ու ձեռքբերումները: Ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման համար մասնավորապես հիմք են ծառայել՝

- ԵՊԼՀ-ի գործունեության արդյունավետության ցուցանիշները (ԳԱՑ-եր),
- ԵՊԼՀ-ի նախորդ՝ 2013-2017թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի գնահատման արդյունքները,
- ԵՊԼՀ-ի գործունեության միջազգայնացման և գիտական գործունեության ոլորտում ռազմավարական ծրագրերը,
- ԵՊԼՀ-ի նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խմբի կողմից ստացված խորհրդատվությունները, դրանց հիման վրա ԵՊԼՀ-ի կողմից կազմված բարելավման ծրագիրը և վերջինիս հիման վրա կատարված աշխատանքներն ու փոփոխությունները,

- ԵՊԼՀ-ի ձեռքբերումներն ու հաջողությունները, մրցակցային առավելություններն ու մասնագիտական ներուժը, ազգային ու միջազգային շուկաների պահանջները, ինչպես նաև համալսարանի հետագա զարգացման իրատեսական հնարավորությունները:

2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի մշակման գործընթացներում ԵՊԼՀ-ի շահակիցների ներգրավվածության ապահովում

2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագիրը մշակվել է բուհի ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությամբ՝ հաշվի առնելով նրանց կարծիքներն ու առաջարկությունները: Այդ ուղղությամբ կատարվել են ստորև նկարագրված աշխատանքները:

Ներքին շահակիցների ներգրավվածություն

- Ռազմավարական ծրագրի մշակման համար ձևավորվել է 22 անձից բաղկացած աշխատանքային խումբ, որում ներգրավվել են վարչական և ՊԴ կազմերի ներկայացուցիչներ, ուսանողներ ու արտաքին շահակիցներ, որը նշանակում է, որ ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել հնարավոր բոլոր կողմերի կարծիքները, կարիքներն ու առաջարկությունները:
- Աշխատանքային խմբի կողմից մշակված ռազմավարական ծրագրի նախագծային տարբերակները տարբեր փուլերում ներքին ցանցով 5 անգամ շրջանառվել են ԵՊԼՀ-ի բոլոր ստորաբաժանումներին՝ կարծիքների հավաքագրման նպատակով: Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար ռազմավարական ծրագրի նախագծային տարբերակը քննարկել է իր աշխատակազմի հետ և ՈԱԲԿ է ներկայացրել համապատասխան դիտարկումներ ու առաջարկություններ: Ռազմավարական ծրագրի նախագծային տարբերակը 3 անգամ քննարկվել է նաև ԵՊԼՀ-ի ղեկավարի և ղեկավարության հետ:

Արտաքին շահակիցների ներգրավվածություն

- Կարևորելով արտաքին շահակիցների կարիքները և բուհին ներկայացված առաջարկությունները՝ ռազմավարական ծրագիրը պաշտոնական գրությամբ ուղարկվել է ԵՊԼՀ-ի Շրջանավարտների միավորման նախագահ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին՝ Շրջանավարտների միավորման անդամներից կարծիքների հավաքագրման նպատակով (05.10.2018թ.):
- Շրջանավարտների միավորման կողմից պատասխան գրությամբ դրական կարծիք է տրվել ռազմավարական ծրագրի վերաբերյալ (09.11.2018թ.):

ԵՊԼՀ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բովանդակային կառուցվածք

Հաշվի առնելով այն, որ ԵՊԼՀ-ի երակարաժամկետ զարգացման հիմնական նպատակն է բուհում շարունակաբար բարձրացնել կրթության որակն ու արդիականությունը՝ հասարակության ու շուկայի պահանջներին և համաշխարհային զարգացմանը համահունչ, ԵՊԼՀ-ն իր հավակնությունները, զարգացման հիմնական նպատակները, գերակայություններն ու ռազմավարական ուղղությունները, խնդիրներն ու գործողություններն արտացոլել է համալսարանի հնգամյա (2019-2023թթ.) զարգացման ռազմավարական ծրագրում:

Ի տարբերություն ԵՊԼՀ-ի 2013-2017թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի, որում ռազմավարական նպատակները, խնդիրներն ու գործողությունները համամասնորեն չէին


բաշխված (9 ռազմավարական նպատակներ, 37 խնդիրներ և 207 գործողություններ), 2019-2023թթ.-ի ծրագրում պահպանվել է համամասնության ապահովման սկզբունքը (Աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. ԵՊԼՀ-ի 2013-2017թթ.-ի և 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրերի բովանդակային համամասնության համեմատական վերլուծության թվային ցուցանիշներ

	2013-2017թթ.-ի ռազմավարական ծրագիր	2019-2023թթ.-ի ռազմավարական ծրագիր
Ռազմավարական նպատակների թիվ	9	36
Ռազմավարական խնդիրների թիվ	37	51
Գործողությունների թիվ	207	228

ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի ռազմավարական ծրագրում ամրագրված առաքելությունն ու նպատակները համահունչ են ԵՊԼՀ-ի ծավալած գործունեությանը, նրա վարած քաղաքականությանը և հաստատված կանոնադրությանը: Ռազմավարական ծրագրում նշված խնդիրների, նպատակների ու գործողությունների թվային տվյալներն ըստ բաժինների ներկայացված են հավելված 4-ում, իսկ բաժինները՝ Գծապատկեր 4.1.-ում:

Գծապատկեր 4.1. ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի բաժիններ



ԵՊԼՀ-ի 2-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպում և իրականացում

2019թ.-ին ԵՊԼՀ-ն անցել է 2-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը՝ պայմանավորված նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում 2015թ.-ին համալսարանին շնորհված պետական հավատարմագրի ժամկետի ավարտով: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և իրականացվել է ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգով՝ սահմանված փուլերի հաջորդականությամբ, որոնք ներկայացվում են ստորև:

Փուլ 1. ԵՊԼՀ-ի ինքնավերլուծության զեկույցի մշակում

Համաձայն ԵՊԼՀ-ի ռեկտորի 1Մ-134/29069-18 հրամանի (04.07.2018թ.)՝ կազմվել է 38 անդամից բաղկացած աշխատանքային խումբ՝ 2013-2018թթ.-ի ինքնավերլուծության զեկույցի մշակման նպատակով: Աշխատանքային խումբն ըստ մասնագիտական ուղղվածությունների բաժանվել է ենթախմբերի՝ իրականացնելու ինքնավերլուծություն՝ ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N959-Ն «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» որոշմամբ հաստատված ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներին համապատասխան: Յուրաքանչյուր ենթախմբի աշխատանքները համակարգվել են տվյալ ենթախմբի պատասխանատուի կողմից:

ՈԱԲԿ-ի աշխատակազմն ինքնավերլուծության իրականացման ամբողջ ժամանակահատվածում հանդիպել և խորհրդատվություններ է տրամադրել աշխատանքային խմբի անդամներին՝ սահմանված ժամկետներում ինքնավերլուծության արդյունավետ իրականացման նպատակով: Յուրաքանչյուր ենթախումբ իրականացրել է տվյալ չափանիշի վերլուծությունն ու համապատասխան հիմքերի հավաքագրումը, իսկ բոլոր 10 չափանիշների վերլուծության ընդհանրական արդյունքները խմբագրվել և ամբողջականացվել են ՈԱԲԿ-ի կողմից:

Ռեկտորի գրությամբ՝ ինքնավերլուծության զեկույցի հայերեն և անգլերեն վերջնական տարբերակները համապատասխան փաստաթղթային հիմքերի հետ ներկայացվել են ՈԱԿ 28.03.2019թ.-ին: ՈԱԿ-ի հաստատումից հետո ԵՊԼՀ-ում մեկնարկել են ՈԱԿ-ի փորձագիտական այցի նախապատրաստական աշխատանքները:

ՈԱԲԿ-ը սահմանել է ժամանակացույց ԵՊԼՀ-ի ներքին շահակիցների վերապատրաստումների իրականացման համար (հավելված 3): Իրականացված մեկշաբաթյա վերապատրաստումների ընթացքում ՈԱԲԿ-ը ներքին շահակիցների լայն շրջանակին է ներկայացրել ինքնավերլուծությունում ներառված բոլոր չափանիշների վերլուծության հիմնական դրույթները, ինչպես նաև տեղեկացրել է հավատարմագրման գործընթացի փուլերի ու փորձագիտական այցի ընթացակարգի մասին: Մասնավորապես՝ վերապատրաստումներին մասնակցել են (հավելված 2)՝

- բոլոր ամբիոնների և ԳՈՒԿ-երի ՊԴ կազմի 235 ներկայացուցիչ,

⁴ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 978-Ն որոշում

- ուսանողական համակազմի 352 ներկայացուցիչ,
- վարչական և ուսումնառական կազմի 37 ներկայացուցիչ:

Փուլ 2. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի կողմից փորձագիտական այց ԵՊԼՀ

Համաձայն ԵՊԼՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև 13.07.2018թ. կնքված N Ի-4/18 պայմանագրի՝ ԵՊԼՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական այցն իրականացվել է 2019թ. մայիսի 14-17-ը: Այցի ժամանակացույցը համաձայնեցվել և հաստատվել է ԵՊԼՀ ռեկտորի և ՈԱԱԿ-ի տնօրենի կողմից (հավելված 6):

Փորձագիտական այցի ընթացքում ՈԱԲԿ-ը կազմակերպել և համակարգել է ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումներին ԵՊԼՀ-ի աշխատակիցների և ուսանողների մասնակցությունը: Կենտրոնը նաև հետամուտ է եղել ՈԱԱԿ-ի փորձագետների կողմից պահանջված հավելյալ փաստաթղթերի հավաքագրմանն ու փորձագետներին դրանց տրամադրմանը:

Այցի ընթացքում ՈԱԲԿ-ը պատասխանատու է եղել *բովանդակային* (հանդիպումներ ԵՊԼՀ թիրախային շահակիցների հետ), *վարչարարական* (փաստաթղթերի հավաքագրում և տրամադրում) և *կազմակերպչական* (հանդիպումների մասնակիցների հավաքագրում, ռեսուրսների դիտարկման ժամանակ փորձագիտական խմբին ուղեկցում և այլն) հարցերի համար:

Փորձագիտական այցից հետո ՈԱԲԿ-ի աշխատակիցներն իրականացրել են SWOT վերլուծություն՝ պարզելու և գնահատելու ԵՊԼՀ-ում իրականացված փորձագիտական այցի ընթացքում ԵՊԼՀ-ում արձանագրված՝ ներառյալ ՈԱԲԿ-ի գործունեությանն առնչվող խնդիրները, բացթողումները և հաջողությունները:

Փուլ 3. Փորձագիտական զեկույցի ներկայացում ԵՊԼՀ-ին

Համաձայն ԵՊԼՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև 13.07.2018թ.-ին կնքված N Ի-4/18 պայմանագրի հավելվածում ներկայացված ժամանակացույցի՝ 28.06.2019թ.-ին ՈԱԱԿ-ի կողմից ԵՊԼՀ-ին ներկայացվել է փորձագիտական զեկույցի նախնական, իսկ 24.07.2019թ.-ին՝ վերջնական տարբերակը: ԵՊԼՀ-ի ինքնավերլուծության ուսումնասիրության և փորձաքննության արդյունքում ՈԱԱԿ-ի փորձագիտական խումբը ԵՊԼՀ-ին տվել է Աղյուսակ 4.3-ում բերված գնահատականները:

Աղյուսակ 4.3. Փորձագիտական խմբի կողմից ներկայացված գնահատականները՝ ըստ հավաքարմագրման չափանիշների (2019թ.)

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
I. Առաքելություն և նպատակներ	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Բավարար
III. Կրթական ծրագրեր	Բավարար
IV. Ուսանողներ	Բավարար
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմ	Բավարար
VI. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Անբավարար

VIII. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարար

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 4.3-ում, 10-ից միայն 2 չափանիշ է գնահատվել բացասական (անբավարար), որոնց ուղղությամբ ԵՊԼՀ-ն նախատեսել է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որոնք արձանագրվել են բարելավման պլանի տեսքով: Ընդհանուր առմամբ փորձագիտական խումբը ներկայացրել է խորհրդատվություններ յուրաքանչյուր չափանիշի ուղղությամբ: Ի տարբերություն նախորդ՝ 2013թ.-ի հավատարմագրման արդյունքների՝ 2019թ.-ի փորձագիտական խումբն ավելի քիչ խորհրդատվություններ է ներկայացրել, որը վկայում է այն մասին, որ ԵՊԼՀ-ում այս ժամանակահատվածում տեղի են ունեցել բարեփոխումներ բոլոր 10 ուղղություններով:

Համեմատելով ԵՊԼՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման սույն և նախորդ գնահատումների արդյունքները՝ հարկ է արձանագրել, որ և՛ որակական, և՛ քանակական ցուցանիշներով բուիը գրանցել է դրական փոփոխությունների դինամիկա: Որակական ցուցանիշների բարելավումն արտահայտվում է այն փաստով, որ **նախորդ գնահատման արդյունքում 10 ոլորտից 2-ն են գնահատվել բավարար** (Չափանիշ VIII. «Հասարակական պատասխանատվություն», Չափանիշ IX. «Արտաքին կապեր և միջազգայնացում»), իսկ **8-ը՝ մասամբ բավարար**: Մինչդեռ **2019թ.-ի գնահատման արդյունքներում 8 չափանիշ գնահատվել է բավարար, և միայն 2-ը՝ անբավարար** (Չափանիշ VI. «Հետազոտություն և զարգացում», Չափանիշ VII. «Ենթակառուցվածք և ռեսուրսներ»): Հետևապես ակնհայտ է, որ նախկինում **մասամբ բավարար** գնահատված ոլորտները բարելավվել են: Հարկ է նաև նշել, որ ՀՀ բուիերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գնահատման չափանիշները փոփոխության են ենթարկվել. 2013թ.-ին կիրառվել է «անբավարար», «մասնակի բավարար» և «բավարար» գնահատման սանդղակը, իսկ 2019թ.-ին գնահատման սանդղակը ընդգրկել է երկու գնահատական՝ «բավարար» և «անբավարար»:

Ստորև՝ Աղյուսակ 4.4-ում, ներկայացված է ԵՊԼՀ-ի նախորդ և 2019թ.-ի հավատարմագրումների արդյունքների համեմատությունը:

Աղյուսակ 4.4. ԵՊԼՀ-ի 2013թ.-ի և 2019թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումների գնահատումների արդյունքների համեմատություն

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	2013թ.-ի արդյունքներ	2019թ.-ի արդյունքներ
I. Առաքելություն և նպատակներ	Մասամբ բավարար	Բավարար
II. Կառավարում և վարչարարություն	Մասամբ բավարար	Բավարար
III. Կրթական ծրագրեր	Մասամբ բավարար	Բավարար
IV. Ուսանողներ	Մասամբ բավարար	Բավարար
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Մասամբ բավարար	Բավարար
VI. Հետազոտություն և զարգացում	Մասամբ բավարար	Անբավարար
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Մասամբ բավարար	Անբավարար
VIII. Հասարակական	Բավարար	Բավարար

պատասխանատվություն		
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարար	Բավարար
X. Որակի ներքին ապահովման համակարգ	Մասամբ բավարար	Բավարար

Այսպիսով, ԵՊԼՀ-ի գործունեության մի շարք ոլորտներում (չափանիշներ I, II, III, IV, V, X)՝ ներառյալ որակի ներքին ապահովման բնագավառում (չափանիշ X), արձանագրվել է ցուցանիշների որակական բարելավում, որի մասին փաստում է «մասամբ բավարար»-ից «բավարար» գնահատականին անցումը: Երկու ոլորտներում (չափանիշներ VIII, IX) դրական գնահատականը («բավարար») պահպանվել է, և մնացյալ 2 ոլորտներում (չափանիշ VI. «Հետազոտություն և զարգացում», չափանիշ VII. «Ենթակառուցվածք և ռեսուրսներ») «մասամբ բավարարից» գնահատականը փոխվել է «անբավարարի»:

Քանակական ցուցանիշների առումով նույնպես գրանցվել է առաջընթաց: Ստորև՝ Աղյուսակ 4.5-ում, տրվում է նաև 2013 թ.-ի և 2019 թ.-ի փորձագիտական զեկույցներում բոլոր 10 չափանիշների ուղղությամբ իրականացված խորհրդատվությունների համեմատությունը՝ արտահայտված թվային տվյալներով:

Աղյուսակ 4.5. 2013թ.-ի և 2019թ.-ի փորձագիտական խմբերի կողմից ԵՊԼՀ-ին ներկայացված խորհրդատվությունների քանակական համեմատություն

Չափանիշներ	2013թ.-ի խորհրդատվությունների թվաքանակը	2019թ.-ի խորհրդատվությունների թվաքանակը
I. Առաքելություն և նպատակներ	3	1
II. Կառավարում և վարչարարություն	7	4
III. Կրթական ծրագրեր	4	4
IV. Ուսանողներ	4	3
V. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	4	4
VI. Հետազոտություն և զարգացում	4	5
VII. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	5	4
VIII. Հասարակական պատասխանատվություն	3	1
IX. Արտաքին կապեր և միջազգայնացում	3	3
X. Որակի ներքին ապահովման համակարգ	6	2
Ընդամենը	43	31

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 4.5.-ում, 2019թ.-ին ԵՊԼՀ-ի գործունեության գնահատման արդյունքում փորձագիտական խմբի կողմից տրված խորհրդատվությունների թիվը նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունների թվի համեմատ նվազել է 12-ով (43-ից դարձել է 31): Մասնավորապես՝ 6 ոլորտներում (չափանիշներ I, II, IV, VII, VIII, X) խորհրդատվությունների թիվը նվազել է, 3 ոլորտներում (չափանիշներ III, V, IX) պահպանվել և միայն 1 ոլորտում (չափանիշ VI) ավելացել 1-ով: Այս փոփոխությունը կրկին վկայում է այն մասին, որ 2013-2019թթ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ն ընդհանուր առմամբ բարելավել է իր

գործունեությունը՝ բացառությամբ ենթակառուցվածքի և ռեսուրսների ու հետազոտությունների ոլորտների:

Փուլ 4. Փորձագիտական զեկույցում ներկայացված խորհրդատվությունների հիման վրա ԵՊԼՀ բարելավման պլանի մշակում և ներկայացում ՈԱԱԿ

Փորձագիտական զեկույցում նվաճ խորհրդատվություններն իրականացնելու համար ԵՊԼՀ-ն 2019թ.-ին մշակել է «ԵՊԼՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2019թ.-ի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ԵՊԼՀ ծրագիր» փաստաթուղթը, որի հիման վրա համալսարանն իրականացնելու է համապատասխան գործողություններ՝ առկա թերությունները վերացնելու և առաջընթաց ապահովելու նպատակով:

Փուլ 5. ԵՊԼՀ-ի հավատարմագրման մասին որոշման կայացում

2019թ.-ի դեկտեմբերի 18-ին փորձագիտական զեկույցը քննարկվել է ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի նիստում: Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ ԵՊԼՀ-ին շնորհվել է հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ԵՊԼՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկում ՈԱԱԿ-ի կողմից

ԵՊԼՀ-ի՝ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2013թ.-ի զեկույցում ներկայացված խորհրդատվություններից բխող գործողությունների իրականացման արդյունքների գնահատում և ներկայացում

ՈԱԲԿ-ը մշակել և 28.03.2019թ.-ին ՈԱԱԿ-ին է հանձնել ԵՊԼՀ-ի՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2013թ.-ի զեկույցում ներկայացված խորհրդատվությունների հիման վրա մշակված գործողությունների իրականացման համապարփակ վերլուծությունը՝ «ԵՊԼՀ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2013թ.-ի զեկույցում ներկայացված խորհրդատվություններից բխող ԵՊԼՀ-ի գործողություններ» փաստաթղթով: Վերլուծության մեջ ներկայացված են, ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների, փորձագիտական խմբի կողմից ներկայացված յուրաքանչյուր խորհրդատվության ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում (2013-2018թթ.) ԵՊԼՀ-ի կողմից կատարված բարելավումները: Նշված փաստաթուղթը ներկայացվել է նաև որպես փաստաթղթային հիմք բուհի 2-րդ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով ԵՊԼՀ-ի ինքնավերլուծության զեկույցի պատրաստման և 2019թ.-ի մայիսին փորձագիտական խմբի՝ բուհ կատարած այցի համար:

ԵՊԼՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման նախապատրաստման նպատակով բուհական վերապատրաստումների կազմակերպում և իրականացում

ՈԱԱԿ-ի կողմից ԵՊԼՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման նպատակով նախատեսված այցի համար ՈԱԲԿ-ը 19.04.2019թ.-ին կազմակերպել և իրականացրել է վերապատրաստումներ պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների և ԳՈՒԿ-երի ղեկավարների համար (24 ներկայացուցիչ): Վերապատրաստումների ժամանակ ՈԱԲԿ-ի ղեկավարը ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում (2013-2018թթ.) ԵՊԼՀ-ի կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև նախորդ հավատարմագրումից հետո

փորձագետների խմբի կողմից տրված խորհրդատվությունների հիման վրա ԵՊԼՀ-ի կողմից իրականացված բարեփոխումները:

ԵՊԼՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման նպատակով ՈԱԱԿ-ից կողմից բուհ կապարված այց

Համաձայն իր 18.04.2019թ.-ի Հ-04/19-067 գրության՝ 23.04.2019թ.-ին ՈԱԱԿ-ը կատարել է այց ԵՊԼՀ՝ համալսարանի ՈՆԱ համակարգի մշտադիտարկման համար: Մշտադիտարկման այցի նպատակն էր դիտարկել նախորդ հավատարմագրումից հետո փորձագիտական խմբի կողմից ներկայացված խորհրդատվությունների հիման վրա ԵՊԼՀ-ի կատարած բարեփոխումներն ու պատրաստվածությունը հերթական ինստիտուցիոնալ հավատարմագրմանը:

ՈԱԱԿ-ի փորձագետները 23.04.2019թ.-ին հանդիպումներ են ունեցել ԵՊԼՀ-ի ռեկտորի, պրոռեկտորների, ամբիոնների վարիչների, ԳՈՒԿ-երի ղեկավարների, ՊԴ կազմի ներկայացուցիչների և ուսանողների հետ: Առանձին հանդիպում-քննարկում է իրականացվել նաև ՈԱԲԿ-ի աշխատակազմի հետ, որի ընթացքում քննարկվել են ՈՆԱ հիմնախնդիրներն ու բարելավման հետագա ուղղությունները:

ԵՊԼՀ-ի և ՈԱԲԿ-ի գործունեության բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում

Ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի վերլուծության (այսուհետ՝ SWOT վերլուծություն) իրականացում ինստիտուցիոնալ մակարդակում

Հաշվետու տարում ՈԱԲԿ-ն իրականացրել է ԵՊԼՀ-ի գործունեության համապարփակ SWOT վերլուծություն՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների համաձայն և համապատասխան ստորաբաժանումների կողմից տրամադրված տվյալների ու տեղեկատվության հիման վրա: ՈԱԲԿ-ը մեթոդական աջակցություն է տրամադրել նաև յուրաքանչյուր ստորաբաժանմանը իր գործունեության SWOT վերլուծությունն իրականացնելիս: Յուրաքանչյուր չափանիշի ուղղությամբ իրականացված SWOT վերլուծության արդյունքում ՈԱԲԿ-ը ներկայացրել է նաև թույլ կողմերի բարելավմանը և հնարավորությունների իրականացմանն ուղղված հետագա քայլերը:

Ամբողջական SWOT վերլուծությունը ինքնավերլուծության հետ ներկայացվել է ՈԱԱԿ-ի փորձագետներին:

ՈԱԲԿ-ի գործունեության ուժեղ ու թույլ կողմերի, հնարավորությունների ու ռիսկերի (SWOT) վերլուծության իրականացում

ՈԱԲԿ-ի գործունեության բարելավմանն ուղղված աշխատանքները գնահատելու նպատակով կենտրոնը 2019թ.-ին իրականացրել է SWOT վերլուծություն՝ պարզելու և գնահատելու հաշվետու ժամանակահատվածում իր գործունեության ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: SWOT վերլուծության ժամանակ առանձնահատուկ շեշտադրվել են նույն թվականին բուհի հավատարմագրման նպատակով ԵՊԼՀ կատարած փորձագիտական այցի ընթացքում արձանագրված խնդիրները, բացթողումները և հաջողությունները: SWOT վերլուծությունն օժանդակել է ՈԱԲԿ-ի ընթացիկ և հետագա աշխատանքների ուղղությունների հստակեցմանը, ինչպես նաև ՈԱԲԿ-ի 2019-2020թթ.-ի գործողությունների պլանի մշակմանը՝ հիմնվելով փորձագիտական այցից հետո փորձագիտական

խմբի կողմից ՈՆԱ ոլորտին առնչվող խորհրդատվությունների, ինչպես նաև ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի վրա:

2019թ.-ին ՈԱԲԿ-ը, ի թիվս վերոնշյալ աշխատանքների, ձեռնամուխ է եղել իր գործունեության բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, որոնց թիրախային և արդյունավետ իրականացման համար հիմք են ծառայել՝

- ԵՊԼՀ-ի ՈԱ ԳԱՅ-երը,
- ԵՊԼՀ ՈԱԲԿ-ի կանոնադրությունը,
- ԵՊԼՀ նախորդ և սույն ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննությունների զեկույցներում (2013թ.-ի և 2019թ.-ի փորձագիտական զեկույցներ) ՈԱ համակարգի բարելավման վերաբերյալ ներկայացված խորհրդատվությունները,
- ազգային և միջազգային մակարդակներում ՈԱԲԿ-ի գործունեության և աշխատակազմի մասնագիտական շարունակական զարգացումը:

ԵՊԼՀ նախորդ և սույն ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննությունների զեկույցներում (2013թ.-ի և 2019թ.-ի փորձագիտական զեկույցներ) ՈՆԱ համակարգի բարելավման վերաբերյալ ներկայացված խորհրդատվությունների համեմատական վերլուծություն

ՈԱԲԿ-ը, առաջնորդվելով ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրով, ինչպես նաև իր կանոնադրությամբ, պարբերաբար իրականացնում է բուհի ներբուհական որակի ապահովման համակարգի կայունացմանն ու ԵՊԼՀ-ում որակի մշակույթի շարունակական զարգացմանն ուղղված աշխատանքներ: ԵՊԼՀ-ի նախորդ հավատարմագրումից ի վեր կատարված ներբուհական փոփոխությունները և ՈԱ ոլորտի դրական շարժընթացն արձանագրելու նկատառումով ստորև ներկայացվում են բուհի 2013թ.-ի և 2019թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումների փորձագիտական 2 խմբերի կողմից ԵՊԼՀ-ի ՈՆԱ համակարգին (չափանիշ 10) առնչվող խորհրդատվությունները (Աղյուսակ 4.6):

Աղյուսակ 4.6. ԵՊԼՀ-ի 2013թ.-ի և 2019թ.-ի ինստիտուցիոնալ հավատարմագրումների փորձագիտական խմբերի կողմից ՈՆԱ համակարգին առնչվող խորհրդատվություններ

Չափանիշ 10	ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:
N	2013Թ.-Ի ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.	Մշակել որակի ապահովման հայեցակարգ և քաղաքականություն:
2.	Ձևավորել որակի ապահովման ներքին համակարգ, որը կհամապատասխանի ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին և ESG չափորոշիչներին:
3.	Մշակել որակի ապահովման ձեռնարկ:
4.	Ապահովել ՈԱԲ կենտրոնի ֆինանսական անկախությունը և ապահովվածությունը բոլոր անհրաժեշտ նյութական միջոցներով:
5.	Ստեղծել մեխանիզմներ շահակիցներին որակի ապահովման գործընթացներին

	մասնակից դարձնելու համար:
6.	Մշակել հստակ մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել և պարբերաբար վերանայել որակի ներքին ապահովման համակարգը:
	2019թ.-ի ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.	Ներդնել ՈԱ գործընթացներում շահակիցների, հատկապես արտաքին շահակիցների մասնակցության ակտիվացման կոնկրետ մեխանիզմներ:
2.	Պարբերաբար գնահատել ՈՆԱ համակարգի ազդեցությունը բուհի բարելավման վրա:

Ակնհայտ է, որ նախորդ և սույն ինստիտուցիոնալ հավատարմագրումների միջև ընկած ժամանակահատվածում ԵՊԼՀ-ն իրականացել է ՈԱ ոլորտի բարելավմանն ուղղված զգալի աշխատանքներ, քանի որ 2019թ.-ի փորձագիտական զեկույցում չափանիշ 10-ին՝ ՈՆԱ համակարգին, առնչվող խորհրդատվություններն ընդամենը 2-ն են՝ 2013թ.-ի 6 խորհրդատվության փոխարեն: Նշվածը փաստում է, որ ԵՊԼՀ-ն հաշվետու ժամանակահատվածում կարողացել է հիմնականում ապահովել նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված խորհրդատվությունների կատարումը:

ԵՊԼՀ ՈԱԲ կենտրոնի աշխատակազմի մասնագիտական շարունակական զարգացում

ՈԱԲԿ-ը 2019թ.-ին մասնակցել է ազգային և միջազգային մակարդակներում կազմակերպված գիտաժողովների, սեմինարների և վերապատրաստումների՝ միտված կենտրոնի աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը: Բացի այդ, ՈԱԲԿ-ի աշխատակիցները ընդգրկված են եղել ազգային ու միջազգային մի շարք ծրագրերի՝ տարբեր գործընկեր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում: 2019թ.-ին ազգային և միջազգային մակարդակներում ՈԱԲԿ-ի աշխատակազմի մասնագիտական ներգրավվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հավելված 5-ում:

Որակի ապահովման ոլորտում արտաքին համագործակցության ապահովում

Կարևորելով ԵՊԼՀ-ի դերի բարձրացումն ազգային և միջազգային մակարդակներում, արտաքին շահակիցների շրջանում ԵՊԼՀ-ի հանդեպ վստահության ամրապնդումն ու արտաքին արդյունավետ համագործակցության խթանումը՝ ՈԱԲԿ-ը շարունակաբար համագործակցում է տարբեր կազմակերպությունների և հաստատությունների հետ, այդ թվում՝ ՈԱԱԿ-ի հետ: Հաշվի առնելով ՈԱԲԿ-ի անձնակազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները՝ ՈԱԱԿ-ը կենտրոնի աշխատակիցներին ներգրավել է հավատարմագրման ենթակա բուհերում իրականացված փորձաքննություններում, մասնավորապես՝

- ՈԱԲԿ-ի ղեկավար Ռոբերտ Խաչատրյանը ներգրավվել է Ավանդական բժշկության համալսարանում փորձաքննություն իրականացնող փորձագիտական խմբում՝ որպես խմբի ղեկավար (2019թ.-ի հոկտեմբեր),
- ՈԱԲԿ-ի մասնագետ Ա. Մազմանյանը ներգրավվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի փորձաքննության գործընթացում՝ որպես թարգմանիչ (2019-թ.-ի մայիս),

- ՈԱԲԿ-ի մասնագետ Ա. Շահինյանը ներգրավվել է ՀՀ հայկական պետական մանկավարժական համալսարանի փորձաքննության գործընթացում՝ որպես թարգմանիչ (2019թ.-ի մայիս),
- ՈԱԲ կենտրոնի մասնագետ Ա. Շահինյանը ներգրավվել է ՀՀ ճգնաժամային կառավարման ակադեմիայի փորձաքննության գործընթացում՝ որպես թարգմանիչ (2019թ.-ի դեկտեմբեր):

Այլ տվյալներ

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲԿ-ը նաև խորհրդատվություններ է տրամադրել ԵՊՀ-ի ամբիոններին և ԳՈՒԿ-երին՝ ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան առարկայական ծրագրերի և դրանց ուսումնառության վերջնարդյունքների վերանայման վերաբերյալ:

Համաձայն ԵՊՀ-ի մասնագիտության կրթական ծրագրի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգի 14-րդ կետի գ) ենթակետի՝ ՈԱԲԿ-ը տրամադրում է կարծիք ՄԿԾ-ի գնահատման վերաբերյալ: Առաջնորդվելով սույն կանոնակարգով՝ ՈԱԲԿ-ը հաշվետու ժամանակահատվածում տրամադրել է **31 կարծիք** բակալավրի ու մագիստրոսի ՄԿԾ-ների փաթեթների վերաբերյալ, որոնք քննարկվել են մեթոդական խորհրդի նիստերին:

Վ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ի գիտական գրադարանի գործունեությունը բխել է ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժիններ 2-ում և 3-ում (Գիտահետազոտական գործունեություն, Գիտական գրադարան)** նախանշված ռազմավարական խնդիրներից և գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1. ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրով և գործողությունների պլանով նախանշված (բաժին 2, Գիտահետազոտական գործունեություն և բաժին 3, Գիտական գրադարան) գիտական գրադարանի ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 2. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Խնդիր 6.	Նպաստել բրյուսովագիտության զարգացմանը՝ ապահովելով ԵՊՀ-ի բրյուսովյան ժառանգության պահպանումը
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
2.6.1. Պարբերաբար կազմակերպել «Բրյուսովյան ընթերցումներ» խորագրով գիտաժողովներ և հրատարակել նյութերի ժողովածուները:	«Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի հիման վրա լույս է տեսել «Բրյուսովյան ընթերցումներ-2018» գիտական հոդվածների ժողովածուն ⁵ : Ժողովածուն ներառել է 34 հոդված, 4 զեկուցում:
12.6.2. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ «Բրյուսովյան ընթերցումներ» խորագրով գիտական նյութերի ժողովածուները ԲՈԿ-ի գիտական հրատարակությունների ցանկում, իսկ դրանց թվային տարբերակները՝ EBSCO շտեմարանի «Humanities» հավաքածուի ցանկում ընդգրկելու ուղղությամբ:	«Հայաստանի «Սիորիպիդիա» հրատարակչական ծառայություններ» հարթակը (Corepaedia Publishing Services of Armenia), որը ինդեքսավորվում է գրեթե բոլոր գիտաշափական համակարգերով, համարվել է «Բրյուսովյան ընթերցումների» հետևյալ հատորներով՝ «Брюсовские Чтения 2010 года», «Брюсовские Чтения 2018 года» ⁶ :
2.6.3. Շարունակաբար թվայնացնել Վ. Բրյուսովի անվան թանգարանի նյութերը և ապահովել դրանց ու Բրյուսովյան գիտական կենտրոնի գրքային ֆոնդերի պահպանումը՝ ստեղծելով գրքային ֆոնդերի թվային պահոց:	2020թ.-ի հունվարին կայանալիք «Բրյուսովի տան պատմությունից» ցուցահանդեսին ⁷ ընդառաջ՝ ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների շրջանակում Բրյուսովյան գիտական կենտրոնը 2019թ.-ի սեպտեմբերի 9-13-ը հյուրընկալել է Արծաթե դարաշրջանի թանգարանի (Բրյուսովի Տուն) առաջատար գիտաշխատող Մոնիկա Օւլովային՝

⁵ Брюсовские чтения 2018 года: Сборник статей/ЕГУЯСН; Ред. коллегия: Н.М. Хачатрян, О.К. Страшкова (Россия), А.В.Геворкян (Россия), Э.С. Даниелян, А.Г. Чулян, Д.Р. Сараян, Ереван: Лингва, 2019

⁶ <http://corepaedia.pub/index.php/brus/index> <http://corepaedia.pub/index.php/brus/issue/archive>

⁷ Ցուցահանդեսը նվիրված է ԵՊՀ-ի 85-ամյակին և «Բրյուսովի տան» 110-ամյակին

		համատեղ ցուցահանդեսի նյութերը պատրաստելու նպատակով: Յուգահանդեսին ներկայացվելու են կենտրոնի հազվագյուտ նյութերի պատճենները, որոնք թվայնացվել են և մշակվել համապատասխան ծրագրերով (127 էջ):
2.6.4. Ընդլայնել Վ. Բրյուսովի անվան թանգարանի թվային հավաքածուները Գուգլի մշակութային ինստիտուտի (Google Cultural Institute) հետ համագործակցության շրջանակներում՝ ապահովելով Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերի հասանելիությունը գիտական հանրությանը:		Գուգլի մշակութային ինստիտուտի (Google Cultural Institute) հետ համագործակցության շրջանակներում շարունակվում է Վ. Բրյուսովի անվան թանգարանի վիրտուալ նոր հավաքածուների նյութերի մշակումը և տեղադրումը «Գուգլ արվեստ և մշակույթ» (Google Arts and Culture) հարթակում ⁸ : Այցելությունների ցուցանիշն է՝ 2520:
2.6.5. Շարունակաբար համալրել Բրյուսովյան գիտական կենտրոնի պաշտոնական կայքը:		Բրյուսովյան գիտական կենտրոնի նյութերը տեղադրված են http://brusovcenter.info/ կայքէջում և շարունակաբար համալրվում են:
ԲԱԺԻՆ 3. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ		
Խնդիր 1.	Ապահովել տեղեկատվության և ժամանակակից գրադարանային ծառայությունների մատչելիություն՝ նպաստելով ԵՊԼՀ կրթական և գիտահետազոտական գործունեության զարգացմանը	
Նախատեսված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
3.1.3. Ընդլայնել գրադարանի գրքային ֆոնդերը և էլեկտրոնային ռեսուրսների շտեմարանները՝ համալրելով գրադարանի ռեսուրսները Հայաստանում և արտերկրում հրատարակված տպագիր և էլեկտրոնային նյութերով:		• Գրադարանի գրքային ֆոնդի քանակը ավելացել է 0,3%-ով: • 2019թ.-ին (վերջին տարիներին առաջին անգամ) գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նաև ԵՊԼՀ-ի միջոցներով. ձեռք են բերվել 28 անուն դասագրքեր և մասնագիտական այլ գրականություն: • Գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նաև անհատույց նվիրատվությամբ ստացված գրքերով: Հետևյալ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում գրադարանը նվիրատվության կարգով ստացել է՝ - Ավստրիայի Հանրապետության եվրոպական և միջազգային գործերի դաշնային նախարարությունից՝ 229 օրինակ գիրք, - ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանությունից՝ 52 օրինակ գիրք, - «Ճապոնիայի մշակութային հրատարակչական հիմնադրամից»՝ 27 օրինակ գիրք,

⁸ <https://artsandculture.google.com/partner/bryusov-museum>

	- «Քուադրիվիում» (Quadrivium) հրատարակչությունից՝ 19 օրինակ գիրք, - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական կենտրոնից՝ 65 օրինակ գիրք, - էստոնական «Կորպոռե» (CORPORE) կազմակերպությունից՝ 20 օրինակ գիրք: Գիտական շտեմարանների բաժանորդագրությունը հասանելի է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին անդամակցելու շնորհիվ: 2019թ.-ին հասանելի են եղել The Royal Society, JSTORE Open Access Book, ElgarOnline, Duke University humanities Collection, SageJournals, Polpred, EBSCO, NKI Academic Focus, China Data Insights շտեմարանները:
3.1.6. Ստեղծել ԵՊՀ-ի թվային գրադարան՝ ապահովելով վերջինիս տեխնիկական անվտանգությունը և բարձրացնելով թվային գրադարանի հասանելիությունը օգտվողների համար:	2019թ.-ին ԵՄ-ի «Էրազմուս+»-ի «ՄԻՆԵՐՎԱ» (MINERVA) նախագծի շրջանակում մեկնարկել են ԵՊՀ-ի թվային գրադարանի ստեղծման նախնական աշխատանքները, որոնք կշարունակվեն 2020թ.-ին:
3.1.7. Շարունակաբար համալրել ԵՊՀ-ի էլեկտրոնային գրացուցակները՝ ընդլայնելով գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգի «ԿՈՀԱ» (KOHA) մոդուլների կիրառման գործընթացները:	«ԿՈՀԱ» (KOHA) գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգ ներմուծվել է 1667 օրինակ գիրք: Շարունակվել է «Բանբեր» պարբերականի հոդվածների էլեկտրոնային տարբերակների մուտքագրումը «ԿՈՀԱ» (KOHA) համակարգ՝ 9,6%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: ԵՊՀ-ի գրքային ֆոնդը ներառված է նաև համահայկական էլեկտրոնային գրացուցակում, միաժամանակ համալրման աշխատանքներ են կատարվել նաև այդտեղ:
3.1.8. Սերտացնել գրադարանի և ԵՊՀ-ի ստորաբաժանումների փոխհամագործակցային կապը՝ գրադարանի ֆոնդերի համալրման, ՊԴ կազմի և սովորողների համար թեմատիկ շտեմարանների կազմման, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով:	2019թ.-ին գրադարանը ՊԴ կազմի և սովորողների համար կազմակերպել է 5 դասընթաց: Դասընթացների ընթացքում ներկայացվել են հանրահասանելի գիտության սկզբունքները (2 դասընթաց), թեմատիկ գիտական շտեմարանների հասանելիության և կիրառման հնարավորությունները, ինչպես նաև գրադարանի էլեկտրոնային քարտից օգտվելու ձևերը (3 դասընթաց):

Խնդիր 2.	Ապահովել ոլորտային գիտական տեղեկատվության էլեկտրոնային կառավարումը
Նախադրյալներ գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
3.2.3. Կազմակերպել և իրականացնել վերապատրաստման դասընթացներ ժամանակակից գիտաչափական մեթոդների, տեխնոլոգիաների, ծրագրերի, շտեմարանների կիրառմամբ՝ ոլորտային գիտական տեղեկատվությունը հասանելի և տեսանելի դարձնելու նպատակով:	Գրադարանը կազմակերպել է. «Միջազգային գիտական ամսագրերում հոդվածների հրատարակման յուրահատկությունները» սեմինարը, որը վարել է «Սպրինգեր Նեյչըր» (Springer Nature) հրատարակչության արտոնագրերի գլխավոր մենեջեր Դարիա Իովչևան. «Հետազոտողների միասնական միջազգային ռեգիստր» (ORCID (Open Researcher and Contributor ID)) սեմինարը, որը վարել է գրադարանի մատենագետ Ա. Վարդանյանը. «Հանրահասանելի գիտություն» դասընթացը, որը վարել է հրավիրյալ փորձագետ, «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար (EIFL), «Հանրամատչելիություն» ծրագրի» մենեջեր Իրինա Կուլման:

Գրադարանի հիմնական գործունեությունը

Ստորև՝ Աղյուսակ 5.2-ում, բերված են գրադարանի գործունեությանն առնչվող ցուցանիշները 2017-2019թթ.-ի համար:

Աղյուսակ 5.2. Գրադարանի գործունեությանն առնչվող ցուցանիշները 2017-2019թթ.-ի համար

N	Ցուցանիշներ	2017թ.	2018թ.	2019թ.	%
1	Ընթերցողների թիվը	3404	2986	3460	+ 15,9
	Ուսանող	2956	2130	2549	+ 19,6
	Դասախոս, ասպիրանտ, հայցորդ, աշխատակից	397	775	773	- 0,2
	Արտաքին ընթերցող (Ավստրիական գրադարան)	51	81	138	+ 70,3
2	Հաճախումների թիվը	23777	18244	26840	+ 47,1
	Սպասարկման բաժին	19355	15095	24042	+ 59,3
	Ընթերցասրահ	3207	2264	2079	- 8,2
	Ավստրիական գրադարան	1215	885	719	- 18,7
3	Տացքը	66226	55010	65426	+18,9
	Սպասարկման բաժին	57775	48927	59631	+ 21,9
	Ընթերցասրահ	6105	4518	4319	- 4,4
	Ավստրիական գրադարան	2346	1565	1476	- 5,7
4	Հաճախումների թիվը (համակարգչային սրահ)	7874	6204	4494	- 27,5

	Էլ. ռեսուրսներ	5190	4094	1938	- 52,6
	Էլ.թեստավորում «Անգլերենի քերականություն»	2684	2110	2556	+ 21,1
5	Գրքային ֆոնդի քանակը	196522	197451	198023	+ 0,3
6	Համալրված գրականություն (միավոր)	853	929	598	-35.9
	ԵՊՀ-ի միջոցների հաշվին	-	-	28	-
	Նվիրատվության կարգով	476	823	183	- 77,7
	Պահեստ	123	33	158	+ 379
	Ավստրիական գրադարան	201	73	229	+ 213,7
7	«ԿՈՀԱ» (KOHA) համակարգ ներմուծվել է (միավոր)				
	Գիրք և ամսագիր	853	929	1667	+ 79,4
	«Բանբեր»-ի հոդվածների էլ. տարբերակ	-	167	183	+ 9,6
	Ընթերցողական քարտեր	1249	429	488	+ 13.7
8	Հոդվածների գիտական մշակում (ՀՏԴ) (միավոր)	332	207	85	- 59
9	Ֆոնդի հաշվառում (միավոր)	2994	2368	1615	- 31,8
10	Բաժանորդագրություն պարբերական հրատ. (անուն)				
	«Կրթություն» թերթ	1	1	-	
11	Գիտական շտեմարանների բաժանորդագրություն (ՀԷԳԿ)	7	8	9	+ 12,5

Աղյուսակ 5.2-ում բերված տվյալների վերլուծությունը ներկայացված է ստորև:

- 2019թ.-ին ընթերցողների ընդհանուր թիվն ավելացել է 15,9%-ով: 19,6%-ով ավելացել է գրադարանում գրանցված առկա և հեռակա բաժինների ուսանողների թիվը, որը պայմանավորված է 2018թ.-ի համեմատությամբ ԵՊՀ ընդունված առաջին կուրսի ուսանողների թվաքանակի ավելացմամբ: 70,3%-ով ավելացել է Ավստրիական գրադարանում գրանցված արտաքին ընթերցողների թիվը, որը պայմանավորված է գերմանալեզու միջոցառումների ակտիվությամբ և գրադարանում առկա ժամանակակից գրականության նկատմամբ աճող հետաքրքրությամբ:
- 2018թ.-ի համեմատությամբ՝ ընթերցողների թվի աճի հետ մեկտեղ 2019թ.-ին 47,1%-ով աճել է հաճախումների թիվը սպասարկման բաժնում, իսկ տացքը՝ 18,9%-ով: Հաճախումների և տացքի աճի անհավասար աճի պատճառը անհրաժեշտ գրականության բացակայությունն է կամ սակավաթվությունը: Մեկ օրինակից գրքերը սպասարկման բաժնից տրվում են միայն ընթերցասրահում ընթերցելու համար: Ավադ, մերժվող գրքերի ցանկը ընդլայնվել է:
- Համակարգչային սրահի հաճախումների թիվը 2019թ.-ին նվազել է 27,5%-ով, որը բնական է, քանի որ համալսարանում կտրուկ բարելավվել է համացանցային կապն ու դրա ծածկույթը, և ներկայումս էլեկտրոնային գիտական շտեմարանները հասանելի են ոչ միայն համակարգչային սրահից, այլև համալսարանի յուրաքանչյուր համակարգչից, քանի որ շտեմարանները միացված են IP հասցեներով: Բացի այդ, խորհրդատվության կարգով սպասարկված ուսանողների թիվը համակարգչային սրահում չի հաշվառվում: Նաև «Անգլերեն

լեզվի քերականություն» առարկայի էլեկտրոնային քննությունների անցկացումը համակարգչային սրահում որոշակիորեն բացասական ազդեցությունն ունի ընթերցողների հաճախումների վրա, քանի որ դրանք տևում են մոտ մեկ ամիս, և այդ ընթացքում համակարգիչները հասանելի չեն լինում գրադարանի այցելուների համար: Ապրիլ-մայիս, նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին համակարգչային սրահ հաճախումների ամենաակտիվ շրջանն է, քանի որ ուսանողները պատրաստվում են քննությունների, ռեֆերատների, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությանը:

4. Գրադարանի գրքային ֆոնդի քանակը ավելացել է 0,3%-ով:
5. 2018թ.-ի համեմատությամբ՝ գրադարանի համալրումը նվազել է 35,9%-ով: Վերջին տարիներին առաջին անգամ գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նաև ԵՊԼՀ-ի միջոցներով. ձեռք է բերվել 27 անուն մասնագիտական գրականություն (246341 ՀՀ դրամ): Գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է նաև անհատույց նվիրատվությամբ ստացված գրքերով: Հետևյալ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում գրադարանը նվիրատվության կարգով ստացել է՝
 - Ավստրիայի Հանրապետության եվրոպական և միջազգային գործերի դաշնային նախարարությունից՝ 229 օրինակ գիրք,
 - ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանությունից՝ 52 օրինակ գիրք,
 - Ճապոնիայի մշակութային հրատարակչական հիմնադրամից՝ 27 օրինակ գիրք,
 - «Քուադրիվիում» (Quadrivium) հրատարակչությունից՝ 19 օրինակ գիրք,
 - ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական կենտրոնից՝ 65 օրինակ գիրք,
 - էստոնական «Կորպորե» (CORPORE) կազմակերպությունից՝ 20 օրինակ գիրք:Նվիրատվությունների քանակը տվյալ տարում անկանխատեսելի է
6. 2019թ.-ին «ԿՈՀԱ» (KOHA) գրադարանային գործընթացների էլեկտրոնային կառավարման համակարգ ներմուծվել է 1667 օրինակ գիրք՝ ըստ համալրված գրքերի քանակի: ԵՊԼՀ-ի ֆոնդը ներառված է նաև համահայկական էլեկտրոնային գրացուցակում, միաժամանակ կատարվում են համալրման աշխատանքներ նաև այդտեղ:
7. 2019թ.-ին ստեղծվել է 488 ընթերցողական քարտ գրադարանում գրանցված նոր ընթերցողների համար, որը ծավալուն և շարունակական աշխատանք է:
8. 2019թ.-ին «Բանբեր»-ի հոդվածների՝ 9,6%-ով ավելի էլեկտրոնային տարբերակներ են մուտքագրվել «ԿՈՀԱ» (KOHA) համակարգ, որոնք հասանելի են http://koha.brusov.am/cgi-bin/koha/opac-search.pl?idx=kw&q=BANBER&sort_by=relevance_dsc&expand=au#au_id հասցեով:
9. Հոդվածների գիտական մշակումը (ՀՏԴ) նվազել է 59%-ով, որը հետևանք է 2019թ.-ին ԵՊԼՀ-ի «Բանբեր» գիտական պարբերականներում ընդգրկված հոդվածների և «Լինգվա» հրատարակչության հրատարակած գրքերի թվաքանակի նվազմամբ: Նվազումը կամ ավելացումը պայմանավորված է նաև ամբիոններից ստացված դիմումներով:
10. 01.09.2017թ.-ից սկսվել են գրադարանի ֆոնդի հաշվառման աշխատանքները նորովի մշակված ալգորիթմով: Այդ աշխատանքների համար գրադարանում մշակվել է հատուկ ձևաչափ՝ շտրիխկոդերի ստեղծման և կիրառման համար, որը հնարավորություն է ընձեռել վերջնականորեն համակարգել գրադարանի ֆոնդի հաշվառման աշխատանքները: 2019թ.-ին հաշվառված գրքերի քանակը նվազել է 31,8%-ով, որը պայմանավորված էր հաշվառումը իրականացնող երկու գրադարանավարի՝ իրենց դիմումի համաձայն աշխատանքից ազատմամբ:

11. Գիտական շտեմարանների բաժանորդագրությունը հասանելի է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին անդամակցելու շնորհիվ: Հասանելի են The Royal Society, JSTORE Open Access Book, ElgarOnline, Duke University humanities Collection, SageJournals, Polpred, EBSCO, NKI Academic Focus, China Data Insights շտեմարանները:
12. 2019թ.-ին դադարեցվել է «Կրթություն» շաբաթաթերթի բաժանորդագրությունը, քանի որ այն հասանելի է առցանց:

Գրադարանի գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեությունը

Գրադարանի աշխատակիցները կատարում են գիտահետազոտական և ուսումնամեթոդական ակտիվ գործունեություն:

Նրանց կողմից 2019թ.-ին հրատարակվել են հետևյալ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվել է մագիստրոսական թեզ.

- Չուլյան Ա., Գալստյան Ա., Թվային նյութերի հասանելիության ապահովումը էլեկտրոնային գրացուցակի միջոցով (Վ. Բրյուսովի անվ. ԵՊԼՀ գրադարան), Բանբեր Հայաստանի գրադարանների (Buletin of Armenian Libraries), հասանելի է՝ http://bal.asj-oa.am/70/1/3. ANNA_CHULYAN.pdf, 2019.
- Chulyan A. The Development of Academic Libraries in Armenia. International Trends in Academic Library Development. Chişinău: Cartdidact, 2019, p. 58-64. ISBN 978-9975-3354-5-4. DOI: 10.5281/zenodo.3524992.
- Հայրյան Կ., Հեղինակավոր գրառումների հասկացությունը թվային գրադարանների հավաքածուների ձևավորման տեսանկյունից, մագիստրոսական թեզ, գիտ. ղեկ. Ա. Չուլյան /ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, Գրադարանային-տեղեկատվական բաժին:
Գրադարանի աշխատակիցները 2019թ.-ին կազմակերպել են կամ մասնակցել գիտակրթական տարբեր միջոցառումների, մասնավորապես՝ գրադարանը կազմակերպել է.
- «Միջազգային գիտական ամսագրերում հոդվածների հրատարակման յուրահատկությունները» սեմինարը, որը վարել է «Սպրինգեր Նեյչըր» (Springer Nature) հրատարակչության արտոնագրերի գլխավոր մենեջեր Դարիա Իովչևան (մայիսի 7, Երևան),
- «Հետազոտողների միասնական միջազգային ռեգիստր» (Open Researcher and Contributor ID (ORCID)) սեմինարը, որը վարել է գրադարանի մատենագետ Ա. Վարդանյանը (մայիսի 14, Երևան),
- «Հանրահասանելի գիտություն» դասընթացը, որը վարել է հրավիրյալ փորձագետ, «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար (EIFL), «Հանրամատչելիություն» ծրագրի» մենեջեր Իրինա Կուլման (սեպտեմբերի 26-27, Երևան):

Գրադարանի հետևյալ աշխատակիցները 2019թ.-ին մասնակցել են ստորև նշված գիտակրթական միջոցառումներին.

- «Սպրինգեր Նեյչըր» (Springer Nature) հրատարակչության գրադարանային խորհրդի հանդիպմանը մասնակցել է «Սպրինգեր Նեյչըր» հրատարակչության կողմից ընտրված Արևելյան Եվրոպայի երկրների գրադարանային խորհրդի անդամ, ԵՊԼՀ գրադարանի ղեկավար Ա.Չուլյանը (հունիսի 12-14, Բուդապեշտ),
- «Նորարար գրադարաններ-2019» աշխատաժողովին մասնակցել է ԵՊԼՀ գրադարանի աշխատակից Ա.Ավանեսովան (սեպտեմբերի 23-25, Ծաղկաձոր),

1. «Արմինտերնետ կառավարման ֆորում-2019»-ին «Ինչպե՞ս պահպանել առցանց նորությունները» զեկուցմամբ հանդես է եկել ԵՊՀ գրադարանի ղեկավար Ա.Չուլյանը (հոկտեմբերի 10, Երևան)⁹:

Գրադարանի միջազգային համագործակցություն

2. ԵՊՀ-ն գործընկեր համալսարան է ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակում իրականացվող «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում «ՄԻՆԵՐՎԱ» (Strengthening Research Management and Open Science capacities of HEIs in Moldova and Armenia (MINERVA)) ծրագրում, որը ԵՊՀ-ի կողմից համակարգում է գրադարանի տնօրենը¹⁰: Ծրագրի շրջանակներում 2019թ.-ի ընթացքում կազմակերպվել են 11 տարատեսակ հանդիպումներ, համաժողովներ, աշխատաժողովներ, ուսումնական այցեր և դասընթացներ (հավելված 5.1):

Բրյուսովյան գիտական կենտրոնի գործունեությունը

Ստորև բերված է 2019թ.-ին Բրյուսովյան գիտական կենտրոնի գործունեությունը:

- «Բրյուսովյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութերի հիման վրա լույս է տեսել «Բրյուսովյան ընթերցումներ-2018» գիտական հոդվածների ժողովածուն¹¹: Ժողովածուն ներառել է 34 հոդված, 4 զեկույց:
- «Հայաստանի «Սիորիպիդիա» հրատարակչական ծառայություններ» հարթակը (Corepaedia Publishing Services of Armenia), որը ինդեքսավորվում է գրեթե բոլոր գիտաշափական համակարգերով, համալրվել է «Բրյուսովյան ընթերցումների» հետևյալ հատորներով՝ «Брюсовские Чтения 2010 года», «Брюсовские Чтения 2018 года»¹²:
- «ՀՀ Կառավարության և Բուլղարիայի Հանրապետության Կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2018-2022թթ.-ի համագործակցության մասին» ծրագրի շրջանակներում կենտրոնը հյուրընկալել է «Նեոֆիտ Ռիսկի» Հարավ-արևմտյան համալսարանի պատմության ամբիոնի դոկտորանտ Դիանա Կարենի Պապոյանին¹³:
- 2020թ.-ին կայանալիք «Բրյուսովի տան պատմությունից» ցուցահանդեսին¹⁴ ընդառաջ՝ ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների շրջանակում Բրյուսովյան գիտական կենտրոնը 2019թ.-ի սեպտեմբերի 9-13-ը հյուրընկալել է Արծաթե դարաշրջանի թանգարանի (Բրյուսովի Տուն) առաջատար գիտաշխատող Մոնիկա Օռլովային՝ համատեղ ցուցահանդեսի նյութերը պատրաստելու նպատակով: Ցուցահանդեսին ներկայացվելու են

⁹ <https://armigf.am/2019/en/agenda/>

¹⁰ https://brusov.am/hy/page_list/minerva/#sthash.yKymaCOk.dpbs

¹¹ Брюсовские чтения 2018 года: Сборник статей/ЕГУЯСН; Ред. коллегия: Н.М. Хачатрян, О.К. Страшкова (Россия), А.В.Геворкян (Россия), Э.С. Даниелян, А.Г. Чулян, Д.Р. Сараян, Ереван: Лингва, 2019

¹² <http://corepaedia.pub/index.php/brus/index> <http://corepaedia.pub/index.php/brus/issue/archive>

¹³ <https://brusov.am/hy/content/eplh->

n_khyuryunkali_m_orlovayin_masnakcelu_bryusovi_tan_patmutyunic_cucahandedi_bacman_nakhapatrastakan_ashk_hatanqnerin/#sthash.voVDR5eM.RbKf4XrT.dpbs

¹⁴ Ցուցահանդեսը նվիրված է ԵՊՀ-ի 85-ամյակին և «Բրյուսովի տուն» թանգարանի 110-ամյակին

կենտրոնի հազվագյուտ նյութերի պատճենները, որոնք թվայնացվել են և մշակվել համապատասխան ծրագրերով (127 էջ):

- Անցկացվել են դասախոսություններ ԵՊԼՀ-ի ուսանողների համար հետևյալ թեմաներով՝ «Վ. Բրյուսովը և Հայաստանը», «Վ.Բրյուսովը և Արծաթե դարի մշակույթը», «Վ. Բրյուսովը և համաշխարհային մշակույթը»:
- Սկսվել են 2020թ.-ի հոկտեմբերի 15-17-ը կայանալիք «Բրյուսովյան ընթերցումներ – 2020» միջազգային հորելյանական գիտաժողովի նախապատրաստական աշխատանքները՝ հայտարարության հրապարակում, հայտերի ընդունում, գիտական խորհրդատվության տրամադրում և այլն:
- Թարմացվել են «Բրյուսովյան գիտական կենտրոնի» կայքի նյութերը¹⁵:

¹⁵ <http://brusovcenter.info/>

VI. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից ՏՀՏ-ի արդյունավետ կիրառման ընդլայնումը ու ՏՀՏ-ով համալսարանի հազեցվածության բարձրացումը բխել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 10-ում (Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակում 6.1-ում:

Աղյուսակ. 6.1. ԵՊԼՀ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 10-ով (Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 10. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ)	
Խնդիր 1.	Համալրել ԵՊԼՀ-ն ժամանակակից ՏՀՏ-ով՝ ապահովելով ԵՊԼՀ-ի գործունեության բարելավումը և թափանցիկությունը
Նախադրեալ գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
10.1.1. Պարբերաբար իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ սարքավորումների վիճակի և կարիքների գնահատում և ելնելով դրանց արդյունքներից՝ ԵՊԼՀ-ն համալրել նոր սարքավորումներով և տեխնիկական այլ միջոցներով:	2019թ.-ին պարբերաբար իրականացվել է ՏՀՏ-ի և սարքավորումների վիճակի և կարիքների գնահատում և ելնելով դրանց արդյունքներից՝ ԵՊԼՀ-ն համալրվել է անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական այլ միջոցներով: Մասնավորապես՝ ԵՊԼՀ-ի, դրամաշնորհային և հովանավորների միջոցներով համալսարանը համալրվել է 37 սեղանի համակարգչով, 21 մոնիտորով, 19 դյուրակիր համակարգչով, 11 պլանշետով, 9 բազմաֆունկցիոնալ տպիչ սարքով, 3 լազերային տպիչով և 7 մուլտիմեդիա պրոյեկտորով՝ էապես բարելավելով հազեցվածությունը համակարգչային և այլ սարքավորումներով: Նոր սարքավորումներով և տեխնիկական միջոցներով վերազինվել են 9 լսարան և ստեղծվել են սարքավորումներով և տեխնիկական միջոցներով հազեցած 3 նոր լսարան:
10.1.2. Բարելավել համացանցային կապի հասանելիությունն ու ներքին ցանցը և ընդլայնել մասնաշենքերի ուսումնական ու այլ տարածքների համացանցային անլար կապով ծածկույթը:	Պարբերաբար իրականացվել են ներքին ցանցի ու համացանցային կապի հասանելիության մշտադիտարկում և կապի վիճակի ու կարիքների գնահատում: Ելնելով կարիքների գնահատման արդյունքներից՝ բարելավվել է համացանցային կապի հասանելիությունը և արագագործությունը. ԵՊԼՀ-ի

	համակարգչային ցանցին միացած բոլոր համակարգիչներին տրամադրվել է 50 մբիթ/վրկ արագագործությամբ համացանց: Ընդլայնվել է ուսումնական ու այլ տարածքների անլար կապով ծածկույթը՝ ապահովելով ամենուր անլար (WiFi) 50 մբիթ/վրկ արագագործությամբ համացանց և ներառելով 7 նոր լսարան և գրադարանի մասնաշենքի 3-րդ հարկը:
10.1.3. Մշակել և գործարկել եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պաշտոնական նոր կայքէջը՝ կիրառելով վեբ-դիզայնի ժամանակակից տեխնոլոգիաներ:	Գործարկվել է ԵՊԼՀ-ի եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) նոր կայքէջը, որի հայերեն բաժինը ամբողջովին համալրված է, իսկ ռուսերեն և անգլերեն բաժինները համալրման փուլում են:
10.1.4. Ապահովել կայքի անխափան և անվտանգ սպասարկումը, շարունակական համալրումը նյութերով և դրանց թարմացումը՝ ըստ անհրաժեշտության արխիվացնելով նյութերը:	Կայքէջն աշխատում է անխափան, շարունակ համալրվում է նոր նյութերով, իսկ լրահոսը թարմացվում է ամեն օր:
Խնդիր 2.	Զարգացնել էլեկտրոնային և հեռավար ուսուցման համակարգը ԵՊԼՀ-ում
Նախադրեալած գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
10.2.1. Ուսումնամեթոդական նոր նյութերով համալրել էլեկտրոնային ուսուցման ու թեստավորման գործող հարթակները, զուգահեռաբար մշակել և շահագործել էլեկտրոնային նոր համակարգեր՝ ՄԿԾ-ների, ուսումնական մոդուլների, ուսումնամեթոդական տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման համար:	• Ստեղծվել են նոր դասընթացներ առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար, մասնավորապես՝ «Ինֆորմատիկա» և «Կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաներ» դասընթացները, որոնց էլեկտրոնային ռեսուրսները տեղադրվել են ԵՊԼՀ-ի «Մուդլ» (http://newmoodle.brusov.am) հարթակում: • Թարմացվել են 2019-2020 ուսումնական տարում մագիստրատուրայում և բակալավրիատում դասավանդվող «Մուդլ» հարթակի էլեկտրոնային դասընթացները: • «ԹիՍի էքզամ» (TcExam) (http://exam.brusov.am) էլեկտրոնային թեստավորման համակարգը համալրվել է քերականության, ռճաբանության և ինֆորմատիկայի դասընթացների թեստերով: • Աշխատանքներ են տարվում էլեկտրոնային նոր թեստավորման համակարգի տեղադրման և իրագործման ուղղությամբ:
10.2.2. Ուսումնամեթոդական նյութերը համալրել էլեկտրոնային տարբերակներով:	Առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար մշակվել են «ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում» դասընթացի էլեկտրոնային ուսումնական նյութերը և

	ռեսուրսները:
10.2.3. Ձևավորել մեթոդական անհրաժեշտ հենք՝ ՊԴ կազմի կողմից էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշակման և կրթական գործընթացում արդյունավետ կիրառման համար:	Թարգմանվել են առցանց դասընթացներ տրամադրող «OpenECBCheck» միջազգային կազմակերպության կողմից մշակված որակի գնահատման գործիքաշարը և դասընթացները, որոնք հատկացվել են դասախոսներին՝ իրենց մշակված դասընթացների որակը գնահատելու համար: Աշխատանքներ են տարվում էլեկտրոնային ռեսուրսների պատրաստման մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ:
10.2.5. Մշակել հեռավար և առցանց ուսուցման զարգացման ռազմավարություն՝ ներառելով նաև լրացուցիչ, շարունակական մասնագիտական կրթության և հեռակա ուսուցման համակարգերը:	Մշակվել է ԵՊԼՀ էլեկտրոնային ուսուցման կազմակերպման և իրականացման կարգի նախագիծը:
10.2.6. Զարգացնել հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառությունը լրացուցիչ, շարունակական մասնագիտական կրթության և հեռակա ուսուցման համակարգերում:	Փոփոխություններ են կատարվել «Էլեկտրոնային ուսուցում» էլեկտրոնային դասընթացի մեջ, որը նախատեսված է դասախոսների վերապատրաստման համար: Մշակվել են բազային և առաջանցիկ մակարդակների վերապատրաստման դասընթացներ՝ ՊԴ կազմի համակարգչային հմտությունների զարգացման նպատակով:
10.2.9. Ներդնել ՊԴ կազմի խրախուսման մեխանիզմներ՝ էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշակման և դասավանդման գործընթացում կիրառելու համար:	Էլեկտրոնային ուսուցման կառավարման հարթակում էլեկտրոնային ուսուցման միջոցով իրականացվող դասընթացների գծով ուսումնական պլաններում տրվել են հավելյալ ժամեր:

ԵՊԼՀ-ի համացանցային կապը, համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցվածությունը, ծրագրային բազան

Համացանցային կապը

2018թ.-ին ԵՊԼՀ-ն իրականացրել էր իր համացանցային կապի բարելավմանն ուղղված աշխատանքները: 2019թ.-ին այդ աշխատանքները շարունակվել են, որոնց հակիրճ նկարագրությունը տրված է ստորև:

- Առկա 2 անգամ հզորացված է համացանցային կապը գլխավոր հանգույցում (Թումանյան 42)՝ ապահովելով 100 մբիթ/վրկ (CIR) սիմետրիկ կապ և երաշխավորված արագությամբ կապ ՀՀ տարածքից դուրս:

- ԵՊԼՀ-ի բոլոր ստորաբաժանումները, ամբիոնները, դեկանատները, կենտրոնները համալրված են համակարգիչներով և միացված են համալսարանի համակարգչային ցանցին:
- Համակարգչային ցանցին միացած բոլոր համակարգիչներին տրամադրվում է 50 մբիթ/վրկ արագագործությամբ համացանցային կապ և ազատ մուտք համացանց, որը 2017թ.-ի համեմատ 2 անգամ հզոր է:
- ԵՊԼՀ-ում գործում է նաև անլար (WiFi) 50 մբիթ/վրկ արագագործությամբ համացանց: 2018թ.-ի մարտից աշխատանքներ էին տարվել անլար համացանցի (WiFi) հասանելիության տարածքը էապես ավելացնելու ուղղությամբ. տարբեր մասնաշենքերում լրացուցիչ տեղադրվել էին անլար ցանցի ապահովման 21 սարք և 10 ցանցային միավորիչ՝ ապահովելով անլար կապի հասանելիություն բոլոր մասնաշենքերի դահլիճներում, գրադարանում, մեծ թվով լսարաններում, միջացքներում և սրահներում, ճաշարանում և այլն: Անլար միացման յուրաքանչյուր կետ ապահովվում է մինչև 50 միաժամանակյա միացում և ունի առնվազն 50 մբիթ/վրկ արագություն: 2019թ.-ին ընդլայնվել է ուսումնական ու այլ տարածքների անլար կապով ծածկույթը՝ ներառելով 7 նոր լսարան և գրադարանի մասնաշենքի 3-րդ հարկը:
- ԵՊԼՀ-ն ունի վիրտուալ սերվեր, (3G VPN) ծառայության միջոցով ապահովված է սերվերին հեռահար հասանելիություն (layer 3) շարժական կապով: Ապահովված է նշված սերվերին տվյալների փոխանցման առնվազն 1000 մբ/վրկ. արագությամբ օպտիկամանրաթելային մալուխով:
- ԵՊԼՀ-ն ունի 2 շարժական ինտերնետ ծառայություն. գերարագ ինտերնետ՝ ամսական 40 ԳԲ ծավալով և այդ ծավալը սպառելուց հետո 64 կբ/վրկ. ներբեռնման արագություն:
- Ստեղծված է ամբողջական համակարգի կարգավորումների և մշտադիտարկման հնարավորություն՝ վեբ (Web) ինտերֆեյսի միջոցով:

Համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցվածությունը

2019թ.-ին ԵՊԼՀ-ի հագեցվածությունը համակարգչային և այլ սարքավորումներով զգալիորեն բարելավվել է: ԵՊԼՀ-ում գործում են համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցած համակարգչային 15 լսարան-սրահ և լաբորատորիա, ինչպես նաև համակարգչային և տեխնիկական միջոցներով հագեցած 3 դահլիճներ և 15 լսարաններ: Դրանցում տարվա ընթացքում պարբերաբար կատարվել է պրոֆիլակտիկ տեխնիկական սպասարկում:

Համալսարանի առաջին և երկրորդ մասնաշենքերը ամբողջապես ռադիոֆիկացված են:

2019թ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ն համալրվել է համակարգչային ու տեխնիկական հետևյալ միջոցներով.

- ԵՊԼՀ-ն իր միջոցներով ձեռք է բերել 25 սեղանի համակարգիչ (4 անգամ ավելի, քան 2018թ.-ին), 9 մոնիտոր, 7 դյուրակիր համակարգիչ (7 անգամ ավելի, քան 2018թ.-ին), 5 մուլտիմեդիա պրոյեկտոր (5 անգամ ավելի, քան 2018թ.-ին), 6 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք (1-ով ավելի, քան 2018թ.-ին), 2 լազերային տպիչ, ինչպես նաև 10 համակարգչային սնուցման բլոկ, 16 ստեղնաշար, 3 արտաքին կոշտ սկավառակ, 10 հիշողության ֆլեշ կրիչ, 16 վեբ խցիկ, 8 մկնիկ. բոլոր սարքավորումները և տեխնիկական միջոցները տեղադրվել են համապատասխան ստորաբաժանումներում ու լսարաններում.
- կարիերայի կենտրոնի կողմից համակարգվող «Սմարթ» նախագծի շրջանակներում ձեռք է բերվել 12 սեղանի համակարգիչ և մոնիտոր, 12 դյուրակիր համակարգիչ, 11 պլանշետային

համակարգիչ, 2 գունավոր բազմաֆունկցիոնալ տպիչ սարք և 1 ինտերակտիվ մուլտիմեդիա պրոյեկտոր:

- ՀՀ նախագահի, ՀՀ ԿԳՄՍ նախարարի և ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանի կողմից 2019թ.-ին բացվել է Գևորգ և Գոհար Վարդանյանների անվան լսարանը, որը ստեղծվել էր 2018թ.-ին անհատ հովանավորների աջակցությամբ, և հազեցվել է 10 դյուրակիր համակարգչով և 1 մուլտիմեդիա պրոյեկտորով:

ԵՊԼՀ-ի հիմնական համակարգչային սարքավորումների ընդհանուր թիվը 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ աճել է մոտ 9%-ով: Դրանց քանակը 2017թ.-ին, 2018թ.-ին և 2019թ.-ին տրված են ստորև՝ Աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2. Համակարգչային սարքավորումների քանակը 2017, 2018 և 2019 թվականներին

Անվանում	2017թ.	2018թ.	2019թ.
Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք	28	32	41
Համակարգիչ	402	446	461
Համակարգիչ ամենը մեկում	13	13	13
Համակարգիչ դյուրակիր	90	107	126
Համակարգիչ պլանշետային	6	6	17
Մուլտիմեդիա պրոյեկտոր	39	41	47
Տպիչ լազերային	91	96	98
Տպիչ լազերային գունավոր	5	5	5
Ընդամենը	674	746	808

Տեխնիկական միջոցներով հագեցված լսարանների ստեղծում և վերագինում

2019թ.-ին ՏՀՏ բաժնի կողմից կատարվել է տեխնիկական միջոցներով հագեցած հետևյալ **լսարանների վերագինումը**.

- 2108, 2200, 2200ա, 1215 լսարաններում հնացած համակարգիչները փոխարինվել են նոր համակարգիչներով (Lenovo Notebook),
- 1213 լսարանում հին համակարգիչը փոխարինվել է համակարգիչով (Toshiba Notebook),
- 2109ա, 2308, 3215 լսարաններում հնացած պրոյեկտորները փոխարինվել են նոր մուլտիմեդիա պրոյեկտորներով (Optoma),
- 1310 համակարգչային լսարանում տեղադրվել է մուլտիմեդիա պրոյեկտոր (Optoma):

Բացի այդ, 2019թ.-ին ՏՀՏ բաժնի կողմից ստեղծվել են տեխնիկական միջոցներով հագեցած հետևյալ **նոր լսարանները**.

- 2404 լսարանում տեղադրվել են նոր համակարգիչ (Lenovo Notebook) և մուլտիմեդիա (Optoma) պրոյեկտոր.
- 4102 լսարանում (Եբրայերենի կաբինետ) տեղադրվել են LCD 42" հեռուստացույց և նոր համակարգիչ:

Տեսալսողական նյութերի թվայնացում ու արխիվացում

- Կատարվել են ԵՊԼՀ-ի 2019թ.-ի բոլոր միջոցառումների ֆոտովիդեո նկարահանումները, արխիվացումը և գրանցումը արտաքին կոշտ սկավառակի վրա:
- 2019թ.-ին արխիվացվել են ուսումնական և բոլոր միջոցառումների ֆոտոնյութերը՝ 12,6 ԳԲ, տեսագրությունները՝ 54.2 ԳԲ և ձայնագրությունները՝ 3.1 ԳԲ ծավալներով:
- Կատարվել են պետական ավարտական քննությունների ձայնագրում և արխիվացում՝ 22.6 ԳԲ ծավալով:
- 2019թ.-ին սպասարկվել են 100-ից ավել տարբեր միջոցառումներ՝ խորհուրդների նիստեր, գիտաժողովներ, սեմինարներ, համերգներ, հանդեսներ, շնորհանդեսներ և այլն:
- Իրականացվել է համալսարանի 3 դահլիճների, տեխնիկական միջոցներով հագեցած բոլոր լսարանների պրոֆիլակտիկ և տեխնիկական սպասարկումը:
- Ուսումնական գործընթացի ապահովման նպատակով տարվա ընթացքում ժամանակակից սարքավորումներից ու ծրագրային փաթեթներից օգտվելու համար իրականացվել են ընթացիկ օժանդակություն և խորհրդատվություն:

Կարիքները

- Անհրաժեշտություն կա նորացնելու տեսաձայնագրման և տեխնիկական սարքավորումների բազան:

Էլեկտրոնային թեստավորում և էլեկտրոնային ուսուցում

ԵՊԼՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների ստուգման «ԹԻՍԻ էքզամ» (TcExam) էլեկտրոնային հարթակը:

2019թ.-ին համալրվել են ուսանողների գիտելիքների ստուգման էլեկտրոնային թեստային համակարգի ռեսուրսները, և էլեկտրոնային թեստերի միջոցով իրականացվել է ուսանողների գիտելիքների ստուգում, մասնավորապես՝

- արխիվացվել են 2018-2019 ուսումնական տարվա էլեկտրոնային թեստավորման և էլեկտրոնային ուսուցման կառավարման համակարգերի բազաները,
- 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 3 մակարդակներում, որոնց արդյունքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 6.3-ում:

Աղյուսակ 6.3. 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված էլեկտրոնային թեստերի տվյալները

Ֆակուլտետ	Առարկա	Կուրս	Խումբ	Ուսանողների թվաքանակ
ԿՄՄՖ, ՌՕԼՖ	Ընթերցանություն	2	9	132
ՍԳՍՖ	Ընթերցանություն	2	1	14
ՌՕԼՖ, ՍԳՍՖ, ԹՄՀՖ, ԿՄՄՖ	Քերականություն1	1	15	214
ՌՕԼՖ, ՍԳՍՖ, ԹՄՀՖ, ԿՄՄՖ	Քերականություն 1 և 2	2	48	701
ԹՄՀՖ	Ոճաբանություն	2	5	74
Հայցորդներ	Ինֆորմատիկա		1	8

- 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել են էլեկտրոնային թեստեր կրթական 2 մակարդակներում, որոնց արդյունքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4. 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված էլեկտրոնային թեստերի արդյունքները

Ֆակուլտետ	Առարկա	Կուրս	Խումբ	Ուսանողների թվաքանակ
ԿՄՄՖ, ՍԳՍՖ, ՌՕԼՖ, ԹՄՀՖ	Ոճաբանություն	4	21	253
ՌՕԼՖ, ՍԳՍՖ,	Քերականություն	1	14	155
ԹՄՀՖ, ԿՄՄՖ	Քերականություն	1	17	184
ՌՕԼՖ, ՍԳՍՖ, ԹՄՀՖ, ԿՄՄՖ	Քերականություն	2	15	132
ԹՄՀՖ, ՍԳՍՖ	Ինֆորմատիկա	1	22	332

2019թ.-ին մշակվել են **էլեկտրոնային ուսուցման «Մուդլ» (Moodle) համակարգով (<http://newmoodle.brusov.am>) իրականացվող** հետևյալ **նոր էլեկտրոնային դասընթացները՝**

- ՏՀՏ մասնագիտական ոլորտում (բակալավրիատ),
- Կառավարչական հմտություններ (մագիստրատուրա),
- Traduction des styles fonctionnels (մագիստրատուրա):

Ուսումնական գործընթացի կառավարման և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը

ԵՊԼՀ-ն միացած է պետական փաստաթղթաշրջանառության «Մալբերի» (Mulberry) համակարգին (mul.brusov.am), որով իրականացվում է նաև համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառությունը:

ԵՊԼՀ-ում գործում է Ուսանողների գնահատման էլեկտրոնային ավտոմատացված համակարգը (credit.brusov.am): Այն հնարավորություն է տալիս ստանալու դեկանատների ու ուսումնական գործընթացի այլ մասնակիցների կողմից օգտագործվող տարբեր ձևաչափերի ավելի քան 20 հաշվետվություններ ու փաստաթղթեր:

- Ֆակուլտետներ/Ամբիոններ
- Մասնագիտություններ/Մասնագիտացումներ
- Դասընթացներ՝ ըստ ամբիոնների
- Ուսումնական պլաններ
- Ուսանողի անհատական ուսումնական ծրագիր
- Ուսանողի ակադեմիական տեղեկագիր
- Առարկայի քննական տեղեկագիր
- Գնահատականների ներմուծման տեղեկագիր
- Խմբի անձնագիր
- Փոխատեղում
- Լուծարումները քննաշրջանից հետո

- Լուծարումները 1-ին լուծարումից հետո
- Լուծարումները 2-րդ լուծարումից հետո
- Լուծարումներով ուսանողների վերջնական ցուցակ
- Լուծարումների հաշվարկի տեղեկագիր
- Ձև 34
- Տեղեկություններ ուսանողների մասին
- Տեղեկագիր ըստ ՄՈԳ-ի
- Դիպլոմի հավելված

Ուսանողների գնահատման էլեկտրոնային համակարգում մուտքագրվում են ԵՊԼՀ-ի ուսանողների տվյալները՝ իրենց գնահատականներով, ՄՈԳ-երով, հրամաններով և այլն, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ-ների ուսումնական պլանները: Մասնավորապես՝ 2019թ.-ի դրությամբ առկա են.

- 2011թ.-ից սկսած՝ բակալավրիատի առկա ուսուցման ուսանողների տվյալները 4 ֆակուլտետների բոլոր խմբերի համար,
- 2012թ.-ից սկսած՝ մագիստրատուրայի առկա ուսուցման ուսանողների տվյալները 4 ֆակուլտետների բոլոր խմբերի համար,
- 2013թ.-ից սկսած՝ բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման ուսանողների տվյալները բոլոր խմբերի համար:

Ընդհանուր առմամբ 2019թ.-ի նոյեմբերի դրությամբ համակարգ մուտքագրված են.

- 6997 ուսանողների տվյալներ (այդ թվում՝ 729 հեռացված ուսանող)՝ իրենց գնահատականներով, ՄՈԳ-երով, հրամաններով և այլն,
- 2011-2019թթ.-ի բոլոր տարիների համար բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի բոլոր մասնագիտությունների (մասնագիտացումների), ՄԿԾ-ների ընդհանուր ու ուսանողների անհատական ուսումնական ծրագրերը:

Համալսարանում շարունակվում են «Տեմպուս Գովերն» (TEMPUS GOVERN) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «Ուսուցման գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգ» համակարգչային ծրագրի տեղայնացման աշխատանքները (ums.yslu.am):

SՀՏ դասընթացներ ՊԴ կազմի համար

ԵՊԼՀ-ում ուսանողների էլեկտրոնային ուսուցման իրականացմանը զուգընթաց իրականացվում է ՊԴ կազմի վերապատրաստում SՀՏ-ի կիրառման ուղղությամբ, որի համար 2019թ.-ին մշակվել են հետևյալ 3 դասընթացները՝

- «Դասավանդման էլեկտրոնային տեխնոլոգիաներ»,
- «Համակարգչային հմտություններ» բազային մակարդակ,
- «Համակարգչային հմտություններ» առաջանցիկ մակարդակ:

2018թ.-ի դեկտեմբերից մինչև 2019 թ.-ի հունվար իրականացվել են ՊԴ կազմի վերապատրաստումներ «Համակարգչային հմտություններ» (բազային մակարդակ) և «Համակարգչային հմտություններ» (առաջանցիկ մակարդակ) դասընթացներով :

VII. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Ներածություն

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից հասարակության հետ կապերի ուղղությամբ իրականացված գործունեությունը բխել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 11-ում (Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 7.1-ում:

Աղյուսակ 7.1. ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 11-ով (Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 11. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	
Խնդիր 1.	Ապահովել ԵՊԼՀ-ի գործունեության մասին տեղեկատվության մատչելիությունն ու հասանելիությունը և գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
11.1.1. Մշակել և գործարկել ԵՊԼՀ-ի հասարակայնության հետ կապերի հայեցակարգ՝ ներառելով ԵՊԼՀ-ի գործունեության մասին հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության միավորումների հետ համագործակցության մեխանիզմները, զանգվածային լրատվության միջոցների հետ կապի պահպանումը և այլն:	Մշակվել է ԵՊԼՀ-ի հասարակայնության հետ կապերի ամրապնդման և հանրային իրազեկման հայեցակարգը, որի կիրառմամբ կապահովվի ԵՊԼՀ-ի գործունեության մասին արդյունավետ հանրային իրազեկումը, ինչպես նաև գործուն փոխադարձ կապը ԶԼՄ-ների հետ: Հայեցակարգի հաստատումը նախատեսվում է 2020թ.-ին:
11.1.2. ԵՊԼՀ-ի կայքում շարունակաբար համալրել և թարմացնել տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվությունը, հրապարակել բոլոր հայտարարությունները, նորությունները, հաշվետվությունները և այլ տեղեկատվություն՝ բարձրացնելով ԵՊԼՀ-ի գործունեության թափանցիկությունը:	ԵՊԼՀ-ի պաշտոնական կայքը շարունակաբար համալրվել և թարմացվել է՝ բարձրացնելով ԵՊԼՀ-ի գործունեության թափանցիկությունը: Ամենօրյա ռեժիմով կայքում հրապարակվել են տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվություն, ԵՊԼՀ-ին առնչվող նորությունները, բոլոր միջոցառումների, մրցույթների, շարժունության հնարավորությունների մասին և այլ հայտարարություններ, հաշվետվություններ, ինչպես նաև սպասվող միջոցառումների մասին տրվել է համապարփակ տեղեկատվություն կայքի համապատասխան

	բաժիններում: Ընդհանուր առմամբ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի կայքում հրապարակվել է 635 լուսաբանող նյութ:
11.1.3. Ապահովել սոցիալական ցանցերում ԵՊԼՀ-ի պաշտոնական էջերի շարունակական թարմացումը, ԵՊԼՀ գործունեության և ձեռքբերումների մասին տեղեկատվության հրապարակումը:	ԵՊԼՀ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջում, ստորաբաժանումների ֆեյսբուքյան, թվիթթեր ու սոցիալական այլ հարթակներում ապահովվել է ԵՊԼՀ-ի գործունեության մասին մատչելի և հասանելի տեղեկատվություն: Ամենօրյա ռեժիմով թարմացվել և նշված հարթակների միջոցով հասանելի է դարձվել ԵՊԼՀ-ի միջոցառումների, հայտարարությունների, կատարված աշխատանքների և այլ ձեռքբերումների վերաբերյալ յուրաքանչյուր տեղեկատվություն:
11.1.4. Ամրապնդել ԶԼՄ-ների հետ կապը, դրանց միջոցով տարածել ԵՊԼՀ-ի գործունեության մասին տեղեկատվությունը, հետևել և արձագանքել ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում ԵՊԼՀ-ի մասին տեղ գտած հրապարակումներին և հաղորդագրություններին:	Ամրապնդվել, իսկ որոշ դեպքերում նաև ստեղծվել է սերտ համագործակցություն ԵՊԼՀ-ի և ԶԼՄ-ների միջև: ԵՊԼՀ-ի բոլոր նորությունների և միջոցառումների մասին տեղեկատվությունը տրամադրվել է լրատվամիջոցներին: ԶԼՄ-ները հրավիրվել են ԵՊԼՀ-ում կայացած կարևոր միջոցառումներին և լուսաբանել դրանք: ԵՊԼՀ-ի կայքի «Մեդիա» բաժնում առանձնացվել է «ԶԼՄ-ները ԵՊԼՀ-ի մասին» խորագրով հատուկ ենթաբաժին, որտեղ հավաքվել են բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ԵՊԼՀ-ին, և համալսարանի կողմից տարածված բոլոր այն նյութերը, որոնք գործընկեր լրատվամիջոցները տեղադրել են իրենց կայքերում: ԵՊԼՀ-ն արագ արձագանքել է նաև այնպիսի հրապարակումներին, որոնք չեն պարունակել ճշգրիտ տեղեկատվություն կամ չեն համապատասխանել իրականությանը: Նման դեպքերում խմբագիրների կամ պատասխանատուների հետ տարվել է աշխատանք՝ տեղեկատվությունը ճշտելու կամ ապատեղեկատվությունը հերքելու և տվյալ լրատվամիջոցի էջից սխալ լուրը հեռացնելու նպատակով: Վերոնշյալ գործողությունները նպաստել են ԵՊԼՀ-ի գործունեության վերաբերյալ ձևավորված դրական հանրային կարծիքի տարածմանը:

11.1.5. Կազմակերպել ԵՊԼՀ-ի անվանի դասախոսների և այլ աշխատակիցների հանդիպումներ ՁԼՄ-ների հետ՝ հարցազրույցների, ասուլիսների, հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների տեսքով:	Կազմակերպվել են ԵՊԼՀ-ի դասախոսների և այլ աշխատակիցների հանդիպումներ ՁԼՄ-ների հետ, տրվել են հարցազրույցներ, ասուլիսներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ և ռադիոհաղորդումներ՝ կապված «Բարձրագույն կրթության» ՀՀ օրենքի, Ֆրանկոֆոնիայի գազաթնաժողովի շրջանակում անցկացվող միջոցառումների, «Լավագույն ուսանող-2019» միջոցառման և այլնի հետ:
Խնդիր 2.	Մշակել և իրականացնել ԵՊԼՀ գործունեության մասին տեղեկատվական և քարոզչական ակտիվ քաղաքականություն
Նախադրված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
11.2.1. Աշխատանքներ ծավալել ԵՊԼՀ-ի վարկանիշի, ճանաչելիության բարձրացման, լիարժեք ընկալման և ներկայանալիության ապահովման ուղղությամբ, մասնավորապես՝ մշակել և կիրառել ԵՊԼՀ «բրենդը»՝ ինքնությունն արտահայտող ֆիրմային ոճը, կորպորատիվ ինքնության ճանաչմանն ուղղված գործիքակազմ և տարբերանշաններ:	Ծավալվել են համապատասխան աշխատանքներ ԵՊԼՀ-ի վարկանիշի ու ճանաչելիության բարձրացման ապահովման ուղղությամբ: Այս համատեքստում «Բոյուտով» բրենդի գործածումը յուրովի նպաստել է համալսարանի լիարժեք ընկալմանը և ներկայանալիության ապահովմանը, օրինակ՝ այս ուսումնական տարվա ընդունելության ցուցանիշների բարձրացմանը: Մշակված է ԵՊԼՀ-ի «բրենդավորման» փաթեթի նախնական տարբերակը, որը ներառում է կորպորատիվ ինքնության ճանաչմանն ուղղված տարբերանշանները, մասնավորապես՝ • համալսարանի անվանման և հապավման նոր տարբերակը՝ երեք լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն), որը հաստատվել է գիտական խորհրդի և հոգաբարձուների խորհրդի կողմից և ներակայացվել ՀՀ ԿԳՄՄՆ, • համալսարանի պատկերանիշի (լոգոյի) և խորհրդանիշի (թալիսմանի) տարբերակները, • համալսարանին հատուկ գունային համակցության և գունային լուծումների տարբերակները, • փաստաթղթերի, այցեքարտերի, գրենական պարագաների, հագուստի և այլ ապրանքների վրա պատկերանիշի և խորհրդանիշի օգտագործման տարբերակները: ԵՊԼՀ-ի «բրենդավորման» փաթեթի քննարկումը կկատարվի ԵՊԼՀ-ի անվանման փոփոխությունը հաստատելուց հետո:
11.2.2. Իրականացնել հասարակական	Կատարելագործվել են տեղեկատվության

իրազեկման բարձրացմանն ուղղված տարատեսակ միջոցառումներ:	տարածման մեխանիզմները ԵՊԼՀ-ի ներսում: Այդ նպատակով մշակվել է հայտի ձևաչափ, որը լրացվում է ցանկացած միջոցառումից առաջ այն կազմակերպող ստորաբաժանման կողմից և տրվում հանրային կապերի բաժին՝ լուսաբանման նպատակով: Մշակվել, հրատարակվել և տարածվել է ԵՊԼՀ-ի մասին տեղեկատվական բրոշյուրը, և պատրաստվել է կարճ տեսահոլովակ ԵՊԼՀ-ի մասին, որը հեռարձակվել է տարբեր հեռուստաալիքներով: ԵՊԼՀ-ն իր տաղավարներով մասնակցել է տարբեր ցուցահանդեսների: Իրականացվել են բազմաթիվ հանդիպումներ, քննարկումներ և միջոցառումներ, որոնք առաջին հերթին նպաստել են հասարակության շրջանում իրազեկվածության բարձրացմանը: Այս ամենը պարբերաբար լուսաբանվել է ինչպես ԵՊԼՀ-ի պաշտոնական կայքում ու ֆեյսբուքյան էջում, հարակից սոցիալական էջերում (օր.՝ ինստագրամի Brusovnews էջում), այնպես էլ տարբեր լրատվամիջոցների կողմից:
---	---

ԵՊԼՀ-ի ներկայացվածությունը համացանցում

ԵՊԼՀ-ի նոր պաշտոնական կայքը 2019թ.-ին շարունակաբար համալրվել է նյութերով և թարմացվել՝ բարձրացնելով ԵՊԼՀ-ի գործունեության թափանցիկությունը: Ամենօրյա ռեժիմով կայքում հրապարակվել են ԵՊԼՀ-ի և նրա առանձին ստորաբաժանումների գործունեությանը վերաբերող նյութերն ու փաստաթղթերը, ԵՊԼՀ-ին առնչվող նորությունները, բոլոր միջոցառումների, մրցույթների, շարժումության և աշխատանքի հնարավորությունների մասին և այլ հայտարարություններ, հաշվետվություններ, ինչպես նաև կայքի համապատասխան բաժիններում սպասվող միջոցառումների մասին տրվել է համապարփակ տեղեկատվություն: Ներկայումս կայքը հայերենով լիովին գործարկված է, ռուսերենով և անգլերենով՝ մասնակիորեն:

Հատուկ ուշադրություն է դարձվել ուսանողներին վերաբերող նյութերի հրապարակմանը՝ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու և տեղեկատվության լիարժեք հասանելիությունը ապահովելու համար: Կայքում տեղադրվել են բոլոր ՄԿԾ-ների փաթեթները՝ ներառյալ դասընթացների նկարագրերը, դասացուցակները, ուսանողների ուսումնառությանը և գնահատմանը վերաբերող կարգերը, կրթաթոշակների և զեղչերի մասին տեղեկությունները և այլ նյութեր ու փաստաթղթեր: Առանձնացված էջեր են գործարկվել նաև օտարերկրացի ուսանողների

և դիմորդների համար, որոնցում տեղադրվել են անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը:


ԵՊԼՀ կայքի «Մեդիա» բաժնում առանձնացվել է «ԶԼՄ-ները ԵՊԼՀ-ի մասին» խորագրով հատուկ ենթաբաժին, որտեղ հավաքվում են բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ԵՊԼՀ-ին, և համալսարանի կողմից տարածված բոլոր այն նյութերը, որոնք գործընկեր լրատվամիջոցները տեղադրել են իրենց կայքերում:

Բացի այդ, համացանցում ԵՊԼՀ-ի ներկայացվածությանը նպաստում են սոցիալական հարթակները՝ ԵՊԼՀ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջը և ինստագրամի Brusovnews էջը, ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան առանձին էջերը:

Համացանցում ԵՊԼՀ-ի ներկայացվածության ցուցանիշներից է նաև նամակների ու հարցումների այն զգալի քանակը, որը ֆեյսբուքյան պաշտոնական էջին է ուղղվում: Նամակագիրները իրենց նամակներում շատ հաճախ նշում են, որ հենց համացանցից են լսել այս կամ այն լուրը, որի մանրամասներին ուզում են ծանոթանալ իրենց:

Ստորև՝ Գծապատկեր 7.1.-ում, ներկայացված է 2019թ.-ի ընթացքում ԵՊԼՀ-ի կայքում լուսաբանումների թվաքանակը՝ ըստ հրապարակված նյութերի տիպերի: Գծապատկերից երևում է, որ տարվա ընթացքում հրապարակվել է 635 նյութ, այդ թվում՝ 210 նորություն, 192 հայտարարություն, 137 միջոցառման տեղեկատվություն, 91 փաստաթուղթ: Այսպիսով, հրապարակումների քանակով առաջատարը նորություններն են, ապա հաջորդում են հայտարարությունները: Նորությունների մեծաքանակ լինելը ԵՊԼՀ-ում տեղի ունեցող իրադարձությունների մեծ թվաքանակի վառ ապացույցն է: Նորություններին իրենց թվաքանակով հաջորդում են հայտարարությունները, որը վկայում է, որ ԵՊԼՀ-ի կայքէջը միտված է համալսարանի գործունեության առավելագույն թափանցիկություն ապահովելուն և հնարավորինս լայն զանգվածներին իրազեկելուն:


Գծապատկեր 7.1. Հրապարակումների թվաքանակը ԵՊԼՀ-ի կայքում



Իրականացվել է վերջին 4 տարիներին ԵՊԼՀ-ի կայքում հրապարակումների և լուսաբանումների թվաքանակի համեմատական վերլուծություն, որի համաձայն՝ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ հրապարակումների թիվը աճել է 5,8 անգամ, 2017թ.-ի

համեմատությամբ՝ 27,6 անգամ, իսկ 2016թ.-ի համեմատությամբ՝ 53 անգամ: Տվյալները բերված են ստորև՝ Գծապատկեր 7.2-ում:

Գծապատկեր 7.2. Հրապարակումների և լուսաբանումների թիվը ԵՊԼՀ-ի կայքում 2016-2019թթ.-ին



2019թ.-ին իրականացված միջոցառումների և ԵՊԼՀ-ի կայքում ու ֆեսբուքի էջում դրանց վերաբերյալ հրապարակումների ցանկը տրված է հավելված 7.1-ում:

Համագործակցություն ՁԼՄ-ների հետ

ԵՊԼՀ-ն հանրային հետաքրքրություն ներկայացնող գիտակրթական կառույց է, և համալսարանում տեղի ունեցող իրադարձությունները և միջոցառումները հաճախ արժանանում են լրատվամիջոցների ուշադրությանը: Ուստի ԵՊԼՀ-ն որդեգրել է լրագրողների հետ սերտ համագործակցության, նրանց մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն:

Հանրային կապերի և լրատվության բաժինը սերտորեն աշխատել և մշտական կապ է պահպանել լրատվամիջոցների հետ: Ամրապնդվել է համագործակցությունը գործընկեր լրատվամիջոցների հետ, հաստատվել են համագործակցային կապեր նորերի հետ: ԵՊԼՀ-ի բոլոր նորությունների և միջոցառումների մասին տեղեկատվությունը տրամադրվել է լրատվամիջոցներին: Ըստ անհրաժեշտության պատրաստվել ու լրատվամիջոցներին տրամադրվել են ԵՊԼՀ-ում տեղի ունեցող գործընթացներին առնչվող նյութեր: Լրատվամիջոցները հրավիրվել են ԵՊԼՀ-ում կայացած կարևոր միջոցառումներին և լուսաբանել դրանք:

ԵՊԼՀ-ի կայքի «Մեդիա» բաժնում առանձնացվել է «ՁԼՄ-ները ԵՊԼՀ-ի մասին» խորագրով հատուկ ենթաբաժին, որտեղ հավաքվել են բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ԵՊԼՀ-ին, և համալսարանի կողմից տարածված բոլոր այն նյութերը, որոնք գործընկեր լրատվամիջոցները տեղադրել են իրենց կայքերում:

Հանրային կապերի և լրատվության բաժինը հետևել է համալսարանի մասին հրապարակումներին և արձագանքել է դրանց, անհրաժեշտության դեպքում տվել պաշտոնական

պարզաբանումներ: ԵՊԼՀ-ն արագ արձագանքել է նաև այնպիսի հրապարակումներին, որոնք չեն պարունակել ճշգրիտ տեղեկատվություն կամ չեն համապատասխանել իրականությանը: Նման դեպքերում լրատվամիջոցների խմբագիրների կամ պատասխանատուների հետ տարվել է աշխատանք՝ տեղեկատվությունը ճշգրտելու, ապատեղեկատվությունը հերքելու կամ տվյալ լրատվամիջոցի էջից սխալ լուրը հեռացնելու նպատակով: Վերոնշյալ գործողությունները նպաստել են ԵՊԼՀ-ի գործունեության վերաբերյալ ձևավորված դրական հանրային կարծիքի տարածմանը:

ԵՊԼՀ-ում տեղի ունեցող գործընթացների թափանցիկությունն ապահովել են նաև լույս տեսնող փոքրածավալ հանրամատչելի գրքույկները և տեսահոլովակները: Մասնավորապես՝ 2019թ.-ին մշակվել, հրատարակվել և տարածվել է ԵՊԼՀ-ի մասին տեղեկատվական փոքրածավալ հանրամատչելի գրքույկը, և պատրաստվել է կարճ տեսահոլովակ ԵՊԼՀ-ի մասին, որը հեռարձակվել է տարբեր հեռուստաալիքներով: ԵՊԼՀ-ն մասնակցել է կրթական ցուցահանդեսների, որոնցում ունեցել է առանձին տաղավար:

VIII. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներածություն

Կարիերայի կենտրոնի հիմնական նպատակն է նպաստել ԵՊԼՀ-ի սովորողների ու շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի հնարավորությունների զարգացմանը, ինչպես նաև աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, ընդլայնել ԵՊԼՀ-ի համագործակցությունը գործատուների հետ՝ բազմազանեցնելով փոխգործակցության ձևերը, նպաստելով ՄԿԾ-ների արդիականացմանը և կրթության որակի բարձրացմանը, ինչպես նաև ամրապնդել շրջանավարտների, գործատուների և ԵՊԼՀ-ի միջև փոխներգործուն կապը:

Կարիերայի կենտրոնը համալսարանի կարևոր օղակներից է, որը նպաստում է յուրաքանչյուր ուսանողի հաջողությանը՝ իրականացնելով ուսանողների աջակցության տարատեսակ աշխատանքներ: Դրանցից են կարիերայի հնարավորությունների ուսումնասիրումը, աշխատանքի որոնմանն աջակցելը, աշխատանքի դիմելու նպատակով անձնական գործերի պատրաստումը, հարցազրույցներին նախապատրաստումը, աշխատանքի որոնման մեթոդների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական սեմինարների ու այլ միջոցառումների կազմակերպումը և այլն: Բացի այդ, Կարիերայի կենտրոնը աջակցում է գործատուների հետ համագործակցության զարգացմանը, հաստատում մշտական հետադարձ կապ համալսարանի շրջանավարտների հետ, համակարգում Շրջանավարտների միավորման աշխատանքները և իրականացնում այլ գործառնություններ:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից իրականացված կարիերայի կառավարմանն ուղղված գործունեությունը բխել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 9-ում (Կարիերայի կառավարում)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 8.1-ում:

Աղյուսակ 8.1. ԵՊԼՀ -ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 9-ով (Կարիերայի կառավարում) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	
Խնդիր 1.	Ընդլայնել և բազմազանեցնել գործատուների, ձեռնարկատերերի և շահագրգիռ այլ կողմերի հետ արդյունավետ համագործակցության հնարավորությունները և մեխանիզմները
Նախադրեալ գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
9.1.1. Պարբերաբար կազմակերպել գործնական հանդիպումներ ոլորտային գործատուների և ձեռնարկատերերի հետ՝ քննարկելու հնարավոր համագործակցության շրջանակները, ձևաչափերը և ակնկալվող	Կարիերայի կենտրոնը կանոնավոր կերպով կազմակերպել է տարաբնույթ միջոցառումներ (ինտերնշիփ ծրագրեր, սեմինար-դասընթացներ, հանդիպումներ գործընկերների հետ, աշխատաժողովներ, տեղեկատվական ու այլ բնույթի միջոցառումներ)՝ ուսանողների և շրջանավարտների

միջոցառումները:	մրցունակության և տեղեկացվածության բարձրացման նպատակով: 2019թ.-ին կազմակերպվել են՝ • 24 հանդիպում՝ 840 մասնակցով, • 20 սեմինար և դասընթաց՝ 352 մասնակցով: 2019թ.-ին բազմազանեցվել են նաև ինթերնշիփ ծրագրերը և կամավորական աշխատանքները՝ գործընկերների հետ համագործակցության արդյունավետության և աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացման նպատակով:
9.1.2. Կնքել համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր պոտենցիալ գործատուների հետ:	Կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու հնարավոր համագործակցության եզրերը: Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ 2019թ.-ին համագործակցության նոր հուշագրեր են կնքվել «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական ՀԿ-ի, «Ատովմյան» իրավաբանական և խորհրդատվական ՍՊԸ-ի հետ, Երևան քաղաքի 18 ավագ և 2 հիմնական դպրոցների հետ:
9.1.3. Գործատուների հետ համագործակցությամբ կազմակերպել հանդիպում-քննարկումներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, աշխատանքի տոնավաճառներ, վերապատրաստման դասընթացներ, աշխատաժողովներ և տեղեկատվական ու այլ բնույթի միջոցառումներ:	2019թ.-ին ոլորտային գործատուների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, աշխատաժողովներ, բաց դասախոսություններ, վերապատրաստման դասընթացներ, տեղեկատվական և այլ բնույթի միջոցառումներ:
Խնդիր 2.	Նպաստել ԵՊԼՀ սովորողների ու շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը և կարիերայի աճի զարգացման հնարավորությունների, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը
Նախադրեալած գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
9.2.1. Պարբերաբար իրականացնել «Կարիերայի և տեղեկատվության օրեր ԵՊԼՀ-ում» ծրագիրը՝ ներգրավելով գործատուների, ձեռնարկատերերի, հասարակական և միջազգային կազմակերպությունների և սովորողներին/շրջանավարտներին ներկայացնել տեղեկատվություն գործատուների պահանջների, թափուր	Կարիերայի կենտրոնը ակտիվորեն մասնակցել է Երևանում և մարզերում (Շիրակ, Լոռի, Գեղարքունիք) կայացած աշխատանքային տոնավաճառների, որոնց մասնակցել են գործատուներ, ձեռնարկատերեր, հասարակական կազմակերպություններ: Տոնավաճառների ընթացքում սովորողներին և շրջանավարտներին տրամադրվել է տեղեկատվություն գործատուների պահանջների, թափուր աշխատատեղերի և այլ

աշխատատեղերի, աշխատանքի հնարավորությունների ու առանձնահատկությունների, կամավորական գործունեության և այլնի մասին:	հնարավորությունների վերաբերյալ: Սովորողները և շրջանավարտները հնարավորություն են ունեցել դիմելու գործատուներին ինչպես տոնավաճառների ընթացքում, այնպես էլ դրանցից հետո:
9.2.2. Հաստատել գործակցային կապեր զբաղվածության ծառայությունների և գործակալությունների հետ, կազմակերպել նրանց կողմից կազմակերպվող զբաղվածության և աշխատանքային ապագա հնարավորությունների մասին տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում սովորողներին և շրջանավարտներին:	Կարիերայի կենտրոնը հաստատել է գործակցային կապեր Ջբաղվածության պետական ծառայության և զբաղվածության այլ գործակալությունների հետ: Կենտրոնի աշխատակիցները զբաղվածության ծառայությունների և գործակալությունների ներկայացուցիչների հետ մասնակցել են կլոր սեղան- հանդիպումների, համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքային քննարկումների: Աշխատանքային ապագա հնարավորությունների մասին տեղեկատվությունը ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվել է էլեկտրոնային փոստի, ԵՊԼՀ-ի կայքի, սոցիալական ցանցերի միջոցով և տեղեկատվական հանդիպումների ընթացքում:
9.2.3. Մշակել հայեցակարգ և/կամ կանոնակարգ՝ գործատուի և այլ կազմակերպություններում սովորողների ուսումնական և աշխատանքային պրակտիկաների կազմակերպման, դրա ձևերի, պայմանների, տևողության և կամավորական աշխատանքի կազմակերպման վերաբերյալ, և դնել կիրառության մեջ:	Հայեցակարգի մշակումը ընթացքի մեջ է:
9.2.4. Սովորողների և շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպել աշխատաշուկայի արդի պահանջների, աշխատանքի որոնման մեթոդների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական սեմինարներ, տրամադրել զբաղվածությանն առնչվող տպագիր և էլեկտրոնային օգտակար նյութեր և գրականություն:	Կարիերայի կենտրոնի մասնագետների կողմից ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվել է ամենօրյա խորհրդատվություն՝ աշխատանքի, կամավորական և կրթական ծրագրերի դիմելու, հարցազրույցի նախապատրաստվելու, հարցազրույցի ընթացքում լավագույն կողմերով դրսևորվելու, ինչպես նաև ռեզյումե, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ կազմելու և այլ հարցերով: Կենտրոնի կողմից տրամադրվել են նաև զբաղվածությանն առնչվող տպագիր և էլեկտրոնային օգտակար նյութեր և գրականություն:

		ԵՊԼՀ-ն շարունակել է դասավանդել «Կարիերայի կառավարում» առարկան, որի նպատակն է ուսանողներին ներկայացնել աշխատաշուկայի պահանջները, աշխատաշուկա մուտք գործելու համար անհրաժեշտ հմտությունները և այլն:
9.2.5. Մշակել և կիրառել բուհ-գործատու երկխոսության մոդելը՝ ԵՊԼՀ թիրախային ՄԿԾ-ների արդիականացման գործընթացում գործատուներին ներգրավելու և գործատուների հետ ֆակուլտետների, ամբիոնների ու ԳՈՒԿ-երի անմիջական համագործակցային կապերի ուժեղացման նպատակով:		Բուհ-գործատու երկխոսության մոդելի մշակումը ընթացքի մեջ է:
9.2.6. Իրականացնել հարցումներ գործատուների շրջանում՝ ըստ ԵՊԼՀ թիրախային ՄԿԾ-ների՝ աշխատաշուկայում դրանց մրցունակության և փոփոխությունների զարգացման ընթացքը ուսումնասիրելու նպատակով:		Իրականացվել է առցանց հարցում գործատուների շրջանում «Սրվեյ Մանքի» (SurveyMonkey) ծրագրի միջոցով:
Խնդիր 3.		Զարգացնել արտաքին շահակիցների հետ կապի ամրապնդման մեխանիզմները
Նախադեսված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
9.3.1. Մասնակցել կրթական ցուվահանդեսների, Երևանում և ՀՀ մարզերում պարբերաբար իրականացնել «Մասնագիտությունների օր» ծրագիրը՝ ԵՊԼՀ-ի գործունեությունը և ՄԿԾ-ները ներկայացնելու նպատակով:		2019թ.-ին «Մասնագիտությունների օր» խորագրով միջոցառումը կազմակերպվել է ապրիլին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: «Մասնագիտությունների օր» ծրագիրը կրում է շարունակական բնույթ: Յուրաքանչյուր տարի ԵՊԼՀ-ի անձնակազմը այցելում է ՀՀ որևէ մարզ՝ բարձրացնելու կրթությունը բուհում շարունակել ցանկացող մարզի դպրոցականների տեղեկացվածությունը ԵՊԼՀ-ի կրթական ծրագրերի մասին և գիտակցված կողմնորոշվելու մասնագիտության և բուհի ընտրության հարցում:
9.3.2. Պարբերաբար իրականացնել «Բաց դռների օր» ծրագիրը հանրապետության ավագ և հիմնական դպրոցների, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների և շրջանավարտների համար՝ ծանոթացնելով նրանց ԵՊԼՀ-ի ֆակուլտետների, ամբիոնների, ԳՈՒ		Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊԼՀ-ն անցկացրել է «Բաց դռների» օր ավանդույթ դարձած միջոցառումը, որի ժամանակ համալսարանը հյուրընկալել է Երևանի 12 ավագ և հիմնական դպրոցների ուսուցիչների և 250 աշակերտի, կազմակերպել շրջայց համալսարանում և ներկայացրել ԵՊԼՀ-ի ՄԿԾ-ները, ծանոթացրել ԵՊԼՀ-ի ֆակուլտետների, ամբիոնների, ԳՈՒԿ-ի և այլ ստորաբաժանումների աշխատանքին:

կենտրոնների և այլ ստորաբաժանումների աշխատանքին, ինչպես նաև ԵՊԼՀ-ի կողմից առաջարկվող մասնագիտություններին:	Սեպտեմբերի 26-ին Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Լեզուների եվրոպական օր» ավանդական միջոցառումը, որին մասնակցել են Երևանի թվով 36 ավագ և հիմնական դպրոցի աշակերտներ և ուսուցիչներ (2018թ.-ին մասնակցել է 26 դպրոց), պետական կառույցների, դեսպանատների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործատուներ և այլ շահակիցներ: Միջոցառման ժամանակ, որը կազմակերպվում է ԵՊԼՀ-ի բակում, համալսարանի ամբիոնները, ԳՈՒԿ-երը, կենտրոնները, Կոնֆուցիուսի ինստիտուտը առանձին տաղավարներով ներկայացրել են ԵՊԼՀ-ում դասավանդվող օտար լեզուները, մասնագիտությունները և ուսումնառության հնարավորությունները:
9.3.3. Պարբերաբար կատարել այցելություններ հանրապետության ավագ ու հիմնական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և իրականացնել մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական սեմինարներ ու այլ միջոցառումներ սովորողների և շրջանավարտների համար՝ ներկայացնելու ԵՊԼՀ ընդունելության պայմանները և բուհի կրթական ու այլ գործընթացները:	2019թ.-ի հունվար-մարտ ամիսներին Կարիերայի կենտրոնի աշխատակիցները, ամբիոնների և ԳՈՒԿ-երի դասախոսները, ուսանողական խորհրդի ներկայացուցիչները այցելություններ են կատարել Երևանի թվով 56 ավագ ու հիմնական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (2018թ.-ի 46-ի փոխարեն): Այցերի ընթացքում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական սեմինարներ սովորողների և շրջանավարտների համար՝ ներկայացնելով ԵՊԼՀ ընդունելության պայմանները, կրթական ծրագրերը, ուսումնական և այլ գործընթացները:
9.3.4. Կնքել համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Երևանի և ՀՀ մարզերի ավագ ու հիմնական դպրոցների, ինչպես նաև թիրախավորված ուսումնական այլ հաստատությունների հետ՝ ուղղված սովորողների պրակտիկայի և կամավորական աշխատանքների կազմակերպմանը:	Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ 2019թ.-ին համագործակցության հուշագրեր են կնքվել Երևան քաղաքի 18 ավագ և 2 հիմնական դպրոցների հետ: Կարիերայի կենտրոնը գործընկեր կազմակերպությունների հետ թիրախավորված աշխատանքի արդյունքում ապահովում է նաև որոշակի թվով ուսանողների ընդգրկում ԵՊԼՀ: Մասնավորապես՝ «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» կրթական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում 2019-2020 ուսումնական տարում «Մասնագիտական մանկավարժություն» մագիստրոսի կրթական ծրագրում ներգրավվել է 8 ուսանող: Ուսանողների ուսման վարձը ամբողջությամբ հոգում է «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» հիմնադրամը, որն ուսման

		ավարտից հետո ուսանողներին նաև ապահովում է աշխատանքով ՀՀ տարբեր մարզերի դպրոցներում:
Խնդիր 4.	Ամրապնդել շրջանավարտների և ԵՊԼՀ-ի միջև մշտական կապը	
Նախադեսված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
9.4.1. Ստեղծել և շարունակաբար համալրել շրջանավարտների մասին տեղեկատվական բանկը/տվյալների բազան:		Կարիերայի կենտրոնը ստեղծել և վարում է շրջանավարտների էլեկտրոնային հաղորդակցման համակարգը և տվյալների տեղեկատվական բազան, որը շարունակաբար թարմացվում է շրջանավարտներից ստացված տեղեկատվության հիման վրա:
9.4.2.	Ներգրավել շրջանավարտներին ԵՊԼՀ-ի գործունեության տարբեր ոլորտներում և որոշումների կայացման գործընթացներում:	ԵՊԼՀ-ի Շրջանավարտների միավորումը հիմնադրվել և գործում է 2007թ.-ից: Շրջանավարտների հետ կապը բարելավելու և ընդլայնելու նպատակով «Բրյուսովյան զրույցներ» (BrusovTalks) ծրագրի շրջանակներում 2019թ.-ին կազմակերպվել են հանդիպումներ շրջանավարտների հետ: Արվեստի ոլորտում իրենց գործունեությունը ծավալող շրջանավարտներն աջակցել են ԵՊԼՀ-ի կողմից կազմակերպվող մշակութային միջոցառումների կազմակերպմանը և մասնակցել դրանց: Շրջանավարտները պարբերաբար հանդես են եկել բաց դասախոսություններով, վարպետաց դասերով, իրականացրել են վերապատրաստումներ: Որոշ շրջանավարտներ իրականացրել են բարեգործական ծրագրեր, համալսարանին տրամադրել ֆինանսական աջակցություն և կրթաթոշակներ: Մասնավորապես՝ 2019 թ.-ի սեպտեմբերին ԵՊԼՀ-ում բացվել է «ՍՄԱԲ» կենտրոնը, որի գործունեությունն ուղղված է ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի վերանորոգման և կահույքի ձեռքբերման ծախսերը հոգացել է ԵՊԼՀ-ի շրջանավարտ, բարերար Տիգրան Սահակյանը: 2019թ.-ին Տիգրան Սահակյանի և այլ շրջանավարտների կողմից ուսանողներին տրամադրվել է 15 կրթաթոշակ, երիտասարդ գիտնականներին և ուսանողներին ցուցաբերվել է աջակցություն՝ մասնակցելու միջազգային գիտաժողովների:

		ԵՊԼՀ-ի շրջանավարտ Աստղիկ Մխիթարյանի ջանքերով և ֆինանսական աջակցությամբ բացվել է Գևորգ և Գոհար Վարդանյանների անվան լսարանը:
9.4.3. ԵՊԼՀ-ի Շրջանավարտների միավորման հետ շրջանավարտների համար կազմակերպել երեկոներ և տարաբնույթ այլ միջոցառումներ:		2019թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցավ ԵՊԼՀ-ի շրջանավարտների՝ «ԵՊԼՀ-ն ամուր և հարուստ է իր շրջանավարտներով» խորագրով երեկոն, որին մասնակցեցին տարբեր տարիներին ավարտած 100-ից ավել բրյուսովականներ: Նրանք վերհիշեցին բրյուսովյան ուսանողական տարիները՝ յուրաքանչյուր տարի կրկին հանդիպելու սպասումով:
Խնդիր 5.		Կարիերայի կենտրոնի գործունեության և կարիերայի կառավարման մեխանիզմների միջազգայնացում:
Նախադրեալ գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
9.5.1. ԵՊԼՀ-ի կարիերայի կենտրոնի գործունեության զարգացման գործում ներգրավել կարիերայի կառավարման ոլորտի միջազգային փորձագետների ու արտասահմանյան մասնագետների և իրականացնել մասնագիտական դասընթացներ:		Կարիերայի կենտրոնն ակտիվ գործունեություն է ծավալում կարիերայի կառավարման ոլորտի միջազգային փորձագետների ու արտասահմանյան մասնագետների հետ, համագործակցում է օտարերկրյա համալսարանների նմանատիպ կառույցների հետ ԵՄ-ի «Էրազմուս+» և միջազգային այլ ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև մասնակցում է կարիերայի կառավարմանը և ուղղորդմանն ուղղված միջազգային գիտաժողովների, հանդես է գալիս զեկուցումներով, իրականացնում այցեր արտասահմանյան բուհերի նմանատիպ կառույցներ:
9.5.2. Համագործակցել օտարերկրյա համալսարանների նմանատիպ կառույցների հետ, կնքել համագործակցության հուշագրեր/համաձայնագրեր և իրականացնել համատեղ ծրագրեր:		Կարիերայի կենտրոնը՝ որպես մշտական անդամ, անդամակցում է Կարիերայի խորհրդատուների միջազգային ասոցիացիային, իսկ որպես հիմնադիր անդամ՝ Եվրոպայում կարիերայի ուղղորդման և խորհրդատվության նորարարության ցանցին: 2019թ.-ին Կարիերայի կենտրոնի աշխատակիցները մասնակցել են ԵՄ-ի «Երիտասարդություն և աշխատանք» (Youth@Work) միջազգային ցանցի և «ՍԱԼՏՈ» ռեսուրսային կենտրոնի տեղական և միջազգային ծրագրերին և նախաձեռնություններին, ինչպես նաև մի շարք դասընթացների, սեմինարների, ֆորումի:
9.5.3. Ակտիվացնել ուսանողների, շրջանավարտների և ՊԴ կազմի, վարչական աշխատակիցների շարժունությունը:		Կարիերայի կենտրոնը ներգրավված է տեղական, ինչպես նաև միջազգային կրթական և կամավորական մի շարք ծրագրերի, մասնավորապես՝ ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակում երիտասարդական փոխանակման և կրեդիտային շարժունության ծրագրերին, «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրին և այլն:

	2019թ.-ին Կարիերայի կենտրոնի կողմից համակարգվող ԵՄ-ի «Էրազմուս+» կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում ուսումնառել են ԵՊՀ-ի 6 ուսանող, 11 վարչական աշխատողներ և դասախոսներ անցել են մասնագիտական վերապատրաստումներ, իրականացրել դասախոսություններ և փորձի փոխանակում: Նույն ծրագրի շրջանակներում եվրոպական բուհերից ԵՊՀ են ժամանել 6 դասախոսներ: Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը գործընկեր տեղական և միջազգային երիտասարդական կազմակերպությունների հետ ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի «Փոխանակման և վերապատրաստման ծրագրեր» գործողության շրջանակներում իրականացնում են շարժունության ծրագրեր: Վերոնշյալ գործողության շրջանակներում ԵՊՀ-ի 22 ուսանող և շրջանավարտ ՀՀ-ում և արտերկրում (Սլովակիա, Իտալիա, Դանիա, Վրաստան, Ուկրաինա, Ռումինիա) մասնակցել են տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների:
--	--

Կարիերայի կենտրոնի գործունեությունը


Կարիերայի կենտրոնը 2019թ.-ի իր գործունեությունը կազմակերպել է՝ ելնելով կենտրոնի զարգացման տեսլականից, առաքելությունից, ռազմավարական նպատակներից և խնդիրներից, որոնք ուղղված են աշխատաշուկայի մարտահրավերներին համապատասխան՝ ԵՊՀ-ի ուսանողների և շրջանավարտների մասնագիտական զբաղվածության խնդիրները վերհանելուն, և գործնական քայլերի միջոցով նրանց կարիերայի ուղղորդմանը աջակցելուն:

Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, Կարիերայի կենտրոնի գործունեությունը ներառել է ստորև նկարագրված աշխատանքները:


1. Կարիերայի կենտրոնը կազմակերպել և իրականացրել է տարաբնույթ միջոցառումներ (ինտերնշիփ ծրագրեր, սեմինար-դասընթացներ, հանդիպումներ գործընկերների հետ, աշխատաժողովներ, տեղեկատվական ու այլ բնույթի միջոցառումներ)՝ ուղղված զբաղվածության և աշխատանքային հնարավորությունների մասին ուսանողների ու շրջանավարտների տեղեկացվածության և նրանց մրցունակության բարձրացմանը: 2019թ.-ին նշված միջոցառումների և մասնակիցների թիվը 2017-2018թթ.-ի համեմատությամբ որոշակիորեն աճել է, որը վկայում է դրանց արդյունավետության մասին:

Ստորև՝ Գծապատկերներ 8.1-ում և 8.2-ում, բերված են 2017-2019թթ.-ին իրականացված հանդիպումների, սեմինարների և դասընթացների թվաքանակի մասին տվյալները:

Գծապատկեր 8.1. 2017-2019թթ.-ին իրականացված հանդիպումների թվաքանակի վերաբերյալ տվյալները




Գծապատկեր 8.2. 2017-2019թթ.-ին իրականացված սեմինարների և դասընթացների թվաքանակի վերաբերյալ տվյալները



- Գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում Կարիերայի կենտրոնը ապահովել է նաև որոշակի թվով ուսանողների հոսք դեպի ԵՊԼՀ: Մասնավորապես՝ «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» կրթական հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում 2019-2020 ուսումնական տարում ԵՊԼՀ-ի «Մասնագիտական մանկավարժություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրում ներգրավվել են 8 ուսանողներ: Ուսանողների ուսման վարձը ամբողջությամբ հոգում է

«Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» հիմնադրամը: Բացի այդ՝ հիմնադրամը ուսանողներին ուսման ավարտից հետո ապահովում է աշխատանքով ՀՀ տարբեր մարզերի դպրոցներում: 2019թ.-ին «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» հիմնադրամի կողմից հովանավորվող ուսանողների թիվը 2017-2018թթ.-ի համեմատությամբ աճել է 2 անգամ (Գծապատկեր 8.3):

Գծապատկեր 8.3. 2017-2019թթ.-ին «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» հիմնադրամի կողմից կրթաթոշակ ստացած ուսանողների թվաքանակը



3. Կարիերայի կենտրոնը ուսանողների և շրջանավարտների շրջանում մշտապես տարածում է տեղեկատվություն ազգային, տարածաշրջանային և միջազգային կրթական ու շարժունության ծրագրերի, թափուր աշխատատեղերի, սեմինարների ու դասընթացների, կամավորական ծրագրերի վերաբերյալ՝ նրանց էլեկտրոնային հասցեների ու խմբերի, ինչպես նաև ԵՊՀ-ի կայքի և սոցիալական ցանցերի էջերի միջոցով:

Մասնավորապես՝ գործատուների, ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ապահովելու, հասարակության հետ արդյունավետ հաղորդակցում իրականացնելու համար Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը օգտագործում են ԵՊՀ-ի կայքի¹⁶ հնարավորությունները՝ տրամադրելով եռալեզու տեղեկատվություն:

Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը ակտիվորեն կիրառում են նաև սոցիալական ցանցերի հնարավորությունները, որոնց միջոցով հետադարձ կապ են պահպանում ուսանողների և շրջանավարտների հետ, մասնավորապես՝

- Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման Ֆեյսբուք խումբը¹⁷ և Ֆեյսբուքի պաշտոնական էջը¹⁸, որի անդամների թիվը 2019թ.-ին կազմել է համապատասխանաբար 4641 անձ և 4208 անձ.


¹⁶ https://brusov.am/hy/page_list/kentroni_masin/#sthash.hV5BG1h4.dpbs
https://brusov.am/hy/science_list/shrjanavartneri_miavorum/

¹⁷ <https://www.facebook.com/groups/brusovcareercenter/>

- Կարիերայի կենտրոնի և Շրջանավարտների միավորման Գուգլ խումբը, որի անդամների թիվը 2019թ.-ին կազմել է 13650 անձ:

Հարկ է նշել, որ ուսանողների և շրջանավարտների հետաքրքրությունը տարեցտարի ավելանում է Կարիերայի կենտրոնի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ, այն է՝ թափուր աշխատատեղերի, կրթական, կամավորական, շարժունության և այլ ծրագրերի, աշխատանքային հետագա հնարավորությունների մասին և այլն: Դրա վկայությունն է 2017-2019թթ.-ին ֆեյսբուքի էջի, Ֆեյսբուք և Գուգլ խմբերի մասնակիցների թվի աճը, որի վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծապատկեր 8.4.-ում:

Գծապատկեր 8.4. Ֆեյսբուքի էջի, Ֆեյսբուք և Գուգլ խմբերի մասնակիցների թիվը 2017-2019թթ.-ին



4. Կարիերայի կենտրոնի համար կարևոր են գործատուների հետ փոխգործակցության տարբեր մեխանիզմները, ուստի 2019թ.-ին բազմազանեցվել են նաև ինթերնշիփ ծրագրերը և կամավորական աշխատանքները: Վերջիններիս հիմնական նպատակն է գործընկերների հետ համագործակցության արդյունավետության, ինչպես նաև աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը:
5. Կարևորելով գործարար ոլորտի կազմակերպությունների և բարեգործական կառույցների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը և շրջանակների ընդլայնումը՝ 2019թ.-ին Կարիերայի կենտրոնը պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու հնարավոր համագործակցության եզրերը: Այսպես՝ Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ 2019թ.-ին համագործակցության նոր հուշագրեր են կնքվել «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ), «Ատովմյան» իրավաբանական և

¹⁸ <https://www.facebook.com/YSULScareercentergraduatesassociation/>


խորհրդատվական ընկերության, Երևան քաղաքի 18 ավագ և 2 հիմնական դպրոցների հետ: Բացի այդ, բանակցություններ են անցկացվել և պատրաստվել են համագործակցության հուշագրեր Հայաստանի երիտասարդական 5 ՀԿ-ների հետ, որոնք գործունեություն են ծավալում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում: Հուշագրերը կկնքվեն 2020թ.-ին:

6. Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ ԵՊԼՀ-ն ամեն տարի անցկացնում է տարատեսակ լայնամասշտաբ միջոցառումներ: Դրանց թվում է արդեն ավանդույթ դարձած **«Բաց դռներ»** միջոցառումը, որի ժամանակ ԵՊԼՀ-ն հյուրընկալում է Երևանի ավագ և հիմնական դպրոցների ուսուցիչների ու աշակերտների և նրանց համար կազմակերպում շրջայց համալսարանում, ներկայացնում համալսարանի մասնագիտությունները ու ՄԿԾ-ները, ուսումնառության հնարավորությունները և պայմանները: 2019թ.-ին «Բաց դռների» օրը ԵՊԼՀ են այցելել Երևանի թվով 12 ավագ և հիմնական դպրոցի 250 աշակերտներ:

Արդեն չորս տարի է, ինչ սեպտեմբերի 26-ին ԵՊԼՀ-ն իր հարկի տակ մեծ շուքով նշում է **«Լեզուների եվրոպական օրը»** և հյուրընկալում ավագ և հիմնական դպրոցների ուսուցիչների և աշակերտների, պետական կառույցների, դեսպանատների, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, գործատուների և այլ շահակիցների: Միջոցառման ժամանակ, որը կազմակերպվում է ԵՊԼՀ-ի բակում, ամբիոնները, ԳՈՒԿ-երը, կենտրոնները, Կոնֆուցիուսի ինստիտուտը առանձին տաղավարներով ներկայացնում են ԵՊԼՀ-ում դասավանդվող օտար լեզուները, մասնագիտությունները և ուսումնառության հնարավորությունները: 2019թ.-ին «Լեզուների եվրոպական օր» միջոցառմանը մասնակցել է 36 դպրոց՝ 2018թ.-ի մասնակից 26 դպրոցի փոխարեն:

2018թ.-ին և 2019թ.-ին «Լեզուների եվրոպական օր» միջոցառմանը մասնակից դպրոցների թվաքանակի մասին տվյալները ներկայացված են ստորև՝ Գծապատկեր 8.5-ում:

Գծապատկեր 8.5. 2018թ.-ին և 2019թ.-ին «Լեզուների եվրոպական օր» միջոցառմանը մասնակից դպրոցների թվաքանակի մասին տվյալները




7. **«Մասնագիտությունների օր»** խորագրով ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի ԵՊԼՀ-ի անձնակազմը այցելում է ՀՀ որևէ մարզ և կազմակերպում ԵՊԼՀ-ն ներկայացնող արտագնա ցուցահանդես, խորհրդակցություններ դպրոցների տնօրենների և ուսուցիչների

հետ: Ծրագրի նպատակն է բարձրացնել կրթությունը բուհում շարունակել ցանկացող մարզի դպրոցականների տեղեկացվածությունը ԵՊԼՀ-ի կրթական ծրագրերի մասին և աջակցել նրանց կայացնելու տեղեկացված և գիտակցված որոշում մասնագիտության ընտրության հարցում: Միջոցառումը կազմակերպում է Կարիերայի կենտրոնը, որին մասնակցում են բուհի դասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներ: 2019թ.-ին «Մասնագիտությունների օր» միջոցառումը կազմակերպվել է ապրիլի 10-ին ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Մարզային դպրոցների կողմից ցուցաբերած հետաքրքրությունը, դրական արձագանքը և աճող ակտիվությունը, տարեցտարի մասնակիցների թվաքանակի մեծացումը հավաստում են միջոցառումների հաջողությունը:

8. 2019թ.-ի հունվար-մարտ ամիսներին այցելություններ են կատարվել Երևանի 56 ավագ ու հիմնական դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (2018թ.-ի 46-ի փոխարեն): Դպրոցներում սովորողների և շրջանավարտների համար իրականացվել են մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական սեմինարներ և այլ միջոցառումներ, ներկայացվել են համալսարանի մասնագիտությունները և կրթական ծրագրերը, ԵՊԼՀ ընդունելության պայմանները, ուսումնական ու այլ գործընթացները: Այցելություններին մասնակցել են ամբիոնների և ԳՈՒԿ-երի դասախոսներ, Կարիերայի կենտրոնի և այլ ստորաբաժանումների աշխատակիցներ, ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ: 2018թ.-ին և 2019թ.-ին ԵՊԼՀ-ի կողմից այցելած դպրոցների թվաքանակը ներկայացված է ստորև՝ Գծապատկեր 8.6-ում:

Գծապատկեր 8.6. ԵՊԼՀ-ի կողմից այցելած դպրոցների թվաքանակ



9. Ուսանողների ու շրջանավարտների զբաղվածության հնարավորությունների բարձրացումը և կարիերայի աճը Կարիերայի կենտրոնի օրակարգային հարցերից են: Կարիերայի կենտրոնը տարաբնույթ հարցերի շուրջ ամենօրյա խորհրդատվություն է տրամադրում ուսանողներին և շրջանավարտներին, այդ թվում՝ կրթական և կամավորական ծրագրերի, աշխատանքի դիմելու նպատակով ռեզյումե, մոտիվացիոն նամակ, երաշխավորագիր, ուղեկցող նամակ և այլ փաստաթղթեր կազմելու, ինչպես նաև տարաբնույթ հարցազրույցներին նախապատրաստվելու, հարցազրույցի ընթացքում լավագույնս դրսևորվելու և այլ հարցերի

վերաբերյալ: Կենտրոնի կողմից տրամադրվում են զբաղվածությանն առնչվող տպագիր և էլեկտրոնային անհրաժեշտ նյութեր և գրականություն:

Կարիերայի կենտրոնի գործունեությունը կարիերայի կառավարման ոլորտում

Կարիերայի կենտրոնն ակտիվ գործունեություն է ծավալում կարիերայի կառավարման ոլորտի միջազգային փորձագետների ու արտասահմանյան մասնագետների հետ, ինչպես նաև համագործակցում է օտարերկրյա բուհերի նմանատիպ կառույցների հետ՝ ԵՄ-ի «Էրազմուս+» և միջազգային այլ ծրագրերի շրջանակներում:

Կարիերայի կենտրոնը անդամակցում է մի շարք կազմակերպությունների, կենտրոնի աշխատակազմը մասնակցում է կարիերայի կառավարմանը և ուղղորդմանն ուղղված միջազգային գիտաժողովների, հանդես է գալիս զեկուցումներով, իրականացնում այցեր արտասահմանյան բուհերի նմանատիպ կառույցներ: Մասնավորապես՝ կենտրոնը անդամակցում է.

- Կարիերայի խորհրդատուների միջազգային ասոցիացիային՝ որպես մշտական անդամ,
- Եվրոպայում կարիերայի ուղղորդման և խորհրդատվության նորարարության ցանցին՝ որպես հիմնադիր անդամ:

2019թ.-ին Կարիերայի կենտրոնը մասնակցել է՝

- Գերմանիայի, Իսպանիայի և Շվեդիայի մի շարք բուհերի կողմից մշակված «Բարձրագույն կրթության համակարգում շրջանավարտների կարիերայի ուղղորդման կառավարումը և զարգացումը» խորագրով զանգվածային բաց առցանց հինգշաբաթյա դասընթացին.
- Լիտվայի Հանրապետության Վիլնյուս քաղաքում կայացած Արևելյան գործընկերության 4-րդ երիտասարդական ֆորումին, որը կազմակերպվել էր ԵՄ-ի կողմից և նվիրված էր Արևելյան գործընկերության կազմավորման 10-ամյակին, իսկ օրակարգային թեմաներից էին երիտասարդների զբաղվածությունը, կարիերայի զարգացման հիմնախնդիրները, ձեռնարկատիրությունը, շարունակական կրթությունը և այլն.
- ԵՄ-ի «Երիտասարդություն և աշխատանք» (Youth@Work) միջազգային ցանցի և «ՍԱԼՏՈ» ռեսուրսային կենտրոնի տեղական և միջազգային ծրագրերին և նախաձեռնություններին:

2018-2019 ուսումնական տարում ԵՊԼՀ-ում շարունակվել է դասավանդվել **«Կարիերայի կառավարում» կամընդրական դասընթացը**, որի նպատակն է զարգացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները կարիերայի կառավարման, աշխատաշուկայի պահանջների, աշխատաշուկա մուտք գործելու հնարավորությունների և այլ ոլորտներում: Դասընթացը դասավանդվում է ՌՕԼՖ-ի և ԿՄՄՖ-ի բակալավրի ՄԿԾ-ների շրջանակներում 2-րդ կուրսի ուսանողներին և «Հանրային կառավարում» մագիստրոսական ծրագրի ուսանողներին:

«Եվրոպական համերաշխության կորպուս» (ESC) ծրագիր

Կարիերայի կենտրոնն իրականացնում է տեղական, ինչպես նաև միջազգային կամավորական և կրթական մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի շրջանակում երիտասարդների փոխանակման, «Եվրոպական համերաշխության կորպուս», «Կրեդիտային շարժունություն» ծրագրերը, վերապատրաստումներ և այլն:

ԵՊԼՀ-ն միակ համալսարանն է Արևելյան գործընկերության երկրների շարքում, որ իրականացնում է ԵՄ-ի **«Եվրոպական համերաշխության կորպուս»** (այսուհետ՝ ԵՀԿ) ծրագիրը

(նախկինում «Եվրոպական կամավորական ծառայություն» (EVS)), որի նպատակն է կամավորության միջոցով տարածել համերաշխությունը՝ որպես արժեք, խթանել երիտասարդների շարժունությունը և ներգրավվածությունը մարդասիրական ծրագրերում: ԵՀԿ ծրագրով ԵՊԼՀ այցելող կամավորները կազմակերպում են լեզուների ակումբներ, տարատեսակ միջոցառումներ ԵՊԼՀ-ի ուսանողների, շրջանավարտների, ՊԴ և վարչական անձնակազմի համար: ԵՀԿ ծրագիրը համակարգող «ՍԱԼՏՈ» ռեսուրսային կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումների, տեղեկատվական գործողությունների շրջանակներում ԵՊԼՀ-ն բազմիցս ներկայացվել է որպես լավագույն օրինակ ԵԿԾ ծրագրում ներգրավված եվրոպական և տարածաշրջանային կազմակերպությունների համար:

2019թ.-ին ԵՀԿ ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ում գործել են եվրոպական լեզուների 4 ակումբներ, որոնց աշխատանքներին մասնակցել են մոտ 150 ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ և վարչական աշխատողներ, անցկացվել են մշակութային և տեղեկատվական մի շարք օրեր: ԵՊԼՀ ժամանած կամավորների տվյալները ներկայացված են Աղյուսակ 8.2-ում:

Աղյուսակ 8.2. Տվյալներ 2019թ.-ին ԵՊԼՀ ժամանած կամավորների վերաբերյալ

N	Ծրագրի անվանում	Կամավոր	Երկիր	Տևողություն
1	Ընդլայնելով մտահորիզոնը	Փոլ Զահակ Էյշլ	Գերմանիա	10 ամիս
2	Կերտիր քո ապագան	Ռոբբի Լունու	Ֆրանսիա	6 ամիս
3	Կամավորական ծրագրեր, փորձի փոխանակում	Կլեմենտ Մերտենզ	Ֆրանսիա	3 ամիս
4	Ավելին Եվրոպայից	Հեյզել Ֆիշեր	Գերմանիա	10 ամիս

«Քաղաքացիական ծառայություն» ծրագիր

2019թ.-ին Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել է **«Քաղաքացիական ծառայություն» ծրագիրը**, որը ֆինանսավորվում է Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության կողմից:

Ծրագիրը համադրում է ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթությունը, խթանում է երիտասարդների շարժունությունը և կամավորական ներգրավվածությունը հասարակական կյանքում: Ծրագրի կողմից կազմակերպվող ֆրանսերենի ակումբներին, միջոցառումներին և գործողություններին մասնակցում են ԵՊԼՀ-ի ուսանողները, շրջանավարտները, ՊԴ և վարչական անձնակազմը: 2019թ.-ին «Քաղաքացիական ծառայություն» ծրագրի շրջանակներում գործել են ֆրանսերենի 4 ակումբներ, որոնց մասնակիցների թիվը կազմել է 100 անձ, անցկացվել են մշակութային և տեղեկատվական մի շարք օրեր: «Քաղաքացիական ծառայություն» ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ ժամանած կամավորների տվյալները ներկայացված են Աղյուսակ 8.3-ում:

Աղյուսակ 8.3. Տվյալներ ԵՊԼՀ ժամանած կամավորների վերաբերյալ – 2019թ.

N	Կամավոր	Տևողություն
1	Փոլ Գալիան	6 ամիս
2	Օնթոնի Դեմարետ	2 ամիս
3	Փոլ Բաքե	6 ամիս
4	Գայանե Չարքոյան	6 ամիս

Փոխանակման և վերապատրաստման ծրագրեր

Կարիերայի կենտրոնը և Շրջանավարտների միավորումը գործընկեր տեղական և միջազգային երիտասարդական կազմակերպությունների հետ իրականացնում են շարժունության ծրագրեր ԵՄ-ի «Էրազմուս+» ծրագրի «Փոխանակման և վերապատրաստման ծրագրեր» գործողության շրջանակներում: Ծրագիրը ընձեռում է շարժունության հնարավորություններ ուսանողների, շրջանավարտների, երիտասարդների և երիտասարդական ոլորտի աշխատակիցների համար՝ հնարավորություն տալով նրանց ձեռք բերել փորձառություն այլ երկրներում և աշխատել մեկ թիմում, ներգրավվել ոչ ֆորմալ կրթական համակարգում: Վերոնշյալ գործողության շրջանակներում ԵՊԼՀ-ից մեկնած ուսանողների, շրջանավարտների մասին տվյալները ներկայացված են հավելված 8.1-ում:

ԵՄ-ի «Էրազմուս+»-ի «Համալսարան-ձեռնարկափրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկափրական հմտությունների ամրապնդումը ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» ծրագիրը (ՍՄԱՐԹ)

2017թ.-ից ԵՊԼՀ-ում իրականացվում է «ՍՄԱՐԹ» ծրագիրը¹⁹, որի հիմնական նպատակն է զարգացնել բուհերի ուսանողների և շրջանավարտների ձեռնարկատիրական հմտություններն ու կարողությունները, ակտիվացնել բուհ-գործատու համագործակցությունը «ՍՄԱՐԹ» կենտրոնների միջոցով: «ՍՄԱՐԹ» կենտրոնի աշխատանքներն ուղղված են երիտասարդների համար մեկ միասնական հարթակի ստեղծմանը, որը հնարավորություն կտա ներկայացնել նորարար գաղափարներ, ստարտափ առաջարկներ ու ծրագրեր, հիմնել բիզնես:

Ծրագրի շրջանակներում 2019թ.-ի սեպտեմբերի 18-ին ԵՊԼՀ-ում բացվեց «ՍՄԱՐԹ» կենտրոնը:

2019թ.-ին «ՍՄԱՐԹ» ծրագրի շրջանակներում գործընկեր եվրոպական համալսարանների մասնագետների կողմից ՊԴ կազմի համար իրականացվել են վերապատրաստման 4 դասընթացներ, որոնց մասնակցել է 40 դասախոս: Ծրագրի շրջանակներում 2020թ.-ին նախատեսվում է՝

- իրականացնել վերապատրաստման 8 դասընթացներ ուսանողների համար,
- ստեղծել էլեկտրոնային «Սմարթ չենլ» (SMART_CHANNEL) հարթակ,
- մշակել ձեռնարկ, որը հասանելի կլինի անգլերեն, ռումիներեն, ռուսերեն, հայերեն և բելառուսերեն տարբերակներով,
- ստեղծել նոր գաղափարների պահոց՝ անգլերեն, ռումիներեն, ռուսերեն, հայերեն և բելառուսերեն տարբերակներով,
- անցկացնել մրցույթներ ուսանողների շրջանում և տարեկան տարածաշրջանային կոնֆերանս,
- ներմուծել նոր դասընթաց ծրագրի մասնակից երկրների՝ Հայաստանի, Բելառուսի և Մոլդովայի բուհերում:

Բուհ-շրջանավարտ շարունական կապի ամրապնդում

Որպես հետադարձ կապի միջոց՝ Կարիերայի կենտրոնը ստեղծել և վարում է շրջանավարտների էլեկտրոնային հաղորդակցման համակարգը և տվյալների տեղեկատվական

¹⁹ www.smartcaffe.eu

բազան, որը շարունակաբար թարմացվում է շրջանավարտներից ստացված տեղեկատվության հիման վրա:

Շրջանավարտների հետ կապը բարելավելու և ընդլայնելու նպատակով «Բրյուսովյան զրույցներ» (BrusovTalks) ծրագրի շրջանակներում 2019թ.-ին կազմակերպվել են հանդիպումներ շրջանավարտների հետ: Շրջանավարտները պարբերաբար հանդես են եկել բաց դասախոսություններով, վարպետաց դասերով, իրականացրել են վերապատրաստումներ, իսկ արվեստի ոլորտում իրենց գործունեությունը ծավալող շրջանավարտներն աջակցել են ԵՊԼՀ-ի կողմից կազմակերպվող մշակութային միջոցառումների կազմակերպմանը և մասնակցել դրանց:

Որոշ շրջանավարտներ իրականացրել են բարեգործական ծրագրեր, համալսարանին տրամադրել ֆինանսական աջակցություն և կրթաթոշակներ: Մասնավորապես՝ 2019թ.-ի սեպտեմբերին ԵՊԼՀ-ում բացվել է «ՍՄԱՐԹ» կենտրոնը, որի վերանորոգման և կահույքի ձեռքբերման ծախսերը հոգացել է ԵՊԼՀ-ի շրջանավարտ, բարերար Տիգրան Սահակյանը:

2019թ.-ին ԵՊԼՀ-ի շրջանավարտ Տիգրան Սահակյանի և այլ շրջանավարտների կողմից ուսանողներին տրամադրվել է 15 կրթաթոշակ, երիտասարդ գիտնականներին և ուսանողներին ցուցաբերվել աջակցություն՝ մասնակցելու միջազգային գիտաժողովների:

ԵՊԼՀ-ի շրջանավարտ Աստղիկ Մխիթարյանի ջանքերով և ֆինանսական աջակցությամբ բացվել է Գևորգ և Գոհար Վարդանյանների անվան լսարանը:

2019թ.-ի սեպտեմբերին տեղի ունեցավ ԵՊԼՀ-ի շրջանավարտների՝ **«ԵՊԼՀ-ն ամուր և հարուստ է իր շրջանավարտներով»** խորագրով երեկոն, որին մասնակցեցին տարբեր տարիներին ավարտած 100-ից ավել բրյուսովականներ: Նրանք վերհիշեցին բրյուսովյան ուսանողական տարիները՝ յուրաքանչյուր տարի կրկին հանդիպելու սպասումով:

IX. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

2019թ.-ին կառավարման ուղղությամբ ԵՊԼՀ-ի գործունեությունը նպատակաուղղված էր համալսարանի վարչակառավարչական գործառույթների բարելավմանը, իսկ ֆինանսական գործունեությունը՝ բուհի բնականոն աշխատանքի ապահովմանը, ֆինանսական հոսքերի ավելացմանը և ֆինանսական կայունության բարձրացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից իրականացված կառավարման և վարչական գործառույթները բխել են ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 5-ում (Ֆինանսական գործունեություն)** և **Բաժին 8-ում (Կառավարման գործընթացներ և մարդկային ռեսուրսներ)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 9.1-ում:

Աղյուսակ 9.1. ԵՊԼՀ -ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 8-ով (Կառավարման գործընթացներ և մարդկային ռեսուրսներ) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

Խնդիր 1.	Վարել ԵՊԼՀ կառավարչական ինքնուրույնության հստակեցնելով իրավասությունները և գործառույթները	կառուցվածքային գործառույթների բարձրացման քաղաքականություն՝ յուրաքանչյուր ստորաբաժանման	ստորաբաժանումների ուժեղացման և
Նախադրեցված գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ	
9.1.1. Ուսումնասիրել և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները և գործառույթները՝ փոխհատվող և գործառույթները:	ԵՊԼՀ-ի բոլոր վերհանելով և կրկնվող	Վերանայվել և հաստատվել են 2017-2018թթ.-ին չհաստատված ԵՊԼՀ-ի ստորաբաժանումների կանոնադրությունները (բացառությամբ երեք ստորաբաժանումների, որոնք կհաստատվեն 2020թ.-ին):	
9.1.2. Ելնելով ԵՊԼՀ-ի գործառույթների արդյունավետ անհրաժեշտությունից՝ հաստատել նոր անհրաժեշտության վարչական, ուսումնական	կատարման մշակել և միավորելով տնտեսական, որոշ	Վերանայվել է ԵՊԼՀ-ի կառուցվածքը, որի նախագիծը կներկայացվի ԵՊԼՀ-ի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը 2020թ.-ին:	

ստորաբաժանումներ կամ ստեղծելով նորերը	
9.1.3. Վերանայել կամ մշակել ԵՊԼՀ-ի ստորաբաժանումների կանոնադրությունները, քննարկել և հաստատել դրանք ԵՊԼՀ-ի գիտական խորհրդում	
Խնդիր 2.	Բարձրացնել ԵՊԼՀ ներքին արդյունավետությունը, բարելավել աշխատակազմի ընտրության ու նշանակման և ներքին կարգապահական գործընթացները, ինչպես նաև աշխատակիցների վարձատրության, խրախուսման ու սոցիալական աջակցության մեխանիզմները և պայմանները
Նախադրեալած գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
9.2.1. Ելնելով ԵՊԼՀ նոր կառուցվածքից՝ մշակել հաստիքացուցակ՝ ապահովելով բուհի ներքին արդյունավետության բարձրացում՝ հիմնված սովորող-ՊԴ կազմ, սովորող-վարչական կազմ, սովորող-ուսումնաօժանդակ կազմ և այլ ցուցանիշների արդյունավետության վրա:	Վերանայվել և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է 2019թ.-ի ԵՊԼՀ-ի հաստիքացուցակը, մշակվել է 2020թ.-ի հաստիքացուցակը: 2018-2019թթ.-ին կազմվել են ԵՊԼՀ-ի գրեթե բոլոր հաստիքների պաշտոնների անձնագրերը, որոնք ներառում են աշխատանքային պարտականությունների նկարագրերը և կցվել աշխատողների հետ կնքված պայմանագրերում՝ որպես անբաժանելի մաս:
9.2.2. Մշակել և/կամ վերանայել բոլոր հաստիքների աշխատանքային պարտականությունների նկարագրերը (պաշտոնների նկարագրեր) և ներառել դրանք աշխատողների հետ կնքվող պայմանագրերում:	Մշակվել և հաստատվել է ««Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի վարչական և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության և նշանակման կանոնակարգը», որի համաձայն իրականացվել է թափուր պաշտոնների տեղակալման մրցույթները: Արդյունքում ընտրվել և նշանակվել են իրենց պաշտոններում 2 ամբիոնի վարիչ , որոնց մրցույթները չէին կայացել 2018թ.-ին: Անցկացվել է ՊԴ կազմի հաստիքների տեղակալման 126 մրցույթ, այդ թվում՝ 7 պրոֆեսորի, 62 դոցենտի, 57 ավագ դասախոսի: Մրցույթների արդյունքում իրենց պաշտոններում ընտրվել և նշանակվել են 6 պրոֆեսոր, 57 դոցենտ, 55 ավագ դասախոս:
9.2.3. Վերամշակել, հաստատել և կիրարկել վարչական և ՊԴ կազմերի մրցույթային ընտրության, նշանակման և տեղակալման ընթացակարգերը՝ սահմանելով աշխատանքային փորձի, կրթական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների ու մոտեցումների կիրառման, գիտահետազոտական գործունեության, տարբեր նախաձեռնություններում մասնակցության և այլ չափանիշներ:	Վերամշակվել են ներքին կարգապահական կանոնները, որոնք կհաստատվեն 2020թ.-ին:

9.2.4. Վերանայել ԵՊԼՀ-ի ներքին կարգապահական կանոնները և կանոնակարգերը՝ միտված աշխատանքային կարգապահության բարձրացմանը:	
9.2.5. Մշակել և ներդնել ԵՊԼՀ-ի աշխատակիցների սոցիալական աջակցության փաթեթներ՝ անձնակազմի սոցիալական կարիքները բավարարելու նպատակով:	ԵՊԼՀ-ի Արհեստակցական միության կողմից առողջական և ֆինանսական խնդիրներ ունեցող 49 աշխատակցի տրամադրվել է դրամական օգնություն: Մասնագիտական զարգացումը խթանելու նպատակով «Բանբեր» գիտական պարբերականում 2019 թվականին՝ ի տարբերություն նախորդ տարիների ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի կողմից ներկայացված հոդվածները հրատարակվել են բուհի ֆինանսավորմամբ:
9.2.6. Մշակել և աշխատակիցներին առաջարկել բժշկական ապահովագրության փաթեթ:	
9.2.7. Ելնելով գործունեության արդյունքներից՝ մշակել ՊԴ կազմի աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմներ՝ մասնագիտական զարգացումը խթանալու նպատակով:	ԵՊԼՀ-ի կողմից ուսումնասիրվել են ապահովագրական կազմակերպությունների կողմից առաջարկվող բժշկական ապահովագրության փաթեթների տարբերակները և աշխատակիցներին է առաջարկվել լավագույն տարբերակը: Կազմվել են բժշկական ապահովագրություն ցանկացողների ցուցակը: 2019թ.-ին կիսովել է ՊԴ կազմի աշխատանքի խրախուսման տարբերակման մեխանիզմ և ելնելով աշխատանքի ծավալներից, որոշակի ժամանակահատվածում առավել ծանրաբեռնված ստորաբաժանումների աշխատակիցները ստացել են պարգևատրումներ, իսկ տարեվերջին ԵՊԼՀ-ի բոլոր աշխատակիցները ստացել են պարգևատրում՝ մեկ աշխատավարձի չափով:
Խնդիր 3.	Բարելավել ԵՊԼՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար կազմի կառավարման հմտությունները
Նախադրված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
9.3.1. Իրականացնել տարբեր ուղղվածության մասնագիտական զարգացման և վերապատրաստման դասընթացներ ստորաբաժանումների ղեկավար և վարչական կազմերի համար:	Իրականացված հարցումների և ՊԴ կազմի վերապատրաստման կարիքների վերլուծության արդյունքում իրականացվել են ՊԴ կազմի մասնագիտական զարգացման վերապատրաստումներ՝ լեզվական, մասնագիտական, SCS հմտությունների կատարելագործման ուղղությամբ: (Մանրամասները տրված են Բաժին 1-ում):

Խնդիր 4.	Բարձրացնել ԵՊԼՀ-ի նկատմամբ բոլոր շահակիցների վստահությունը՝ ապահովելով ԵՊԼՀ գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը
<i>Նախադրեալած գործողություններ</i>	<i>Իրականացված գործողությունների արդյունքներ</i>
9.4.1. Բարելավել ԵՊԼՀ-ի հաշվետվությունների կազմման բովանդակային և ընթացակարգային մեխանիզմները և ապահովել հաշվետվությունների ժամանակին հրապարակումը:	Կազմվել է հաշվետվությունների պատրաստման ձևաչափ և ժամանակացույց, որի համաձայն ԵՊԼՀ-ի բոլոր ստորաբաժանումները կազմել և ներկայացրել են իրենց տարեկան հաշվետվությունները, որը միավորվել է միանսական հաշվետվության մեջ՝ գիտական և հոգաբարձուների խորհրդներին ներկայացնելու համար:
9.4.2. Մշակել ու կիրառել կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմներ, սահմանել բարեվարքության սկզբունքներ:	Ուսումնական գործընթացը կազմակերպվել է թափանցիկության և վերահսկողության մեխանիզմների կիրառմամբ. սահմանված ժամանակացույցի համաձայն իրականացվել է ուսանողների գնահատականների մուտքագրումները, հայտարարումները և կատարվել է վիճակագրական վերլուծություն: Մագիստրոսական թեզերը ստացել են արտաքին գրախոսություն: Բոլոր ամփոփիչ ատեստավորումները տեսաձայնագրվել են:
9.4.3. Գործարկել ԵՊԼՀ ներքին կառավարման տեղեկատվական համակարգը, իրականացնել վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում, վերլուծություն և հրապարակում:	Ուսումնական, գիտական, ՊԴ կազմի, կառավարման և ֆինանսական գործառնությունների վերաբերյալ բոլոր պահանջվող հաշվետվությունները սահմանված ժամկետներում կազմվել և ներկայացվել են պետական կառավարման մարմիններ: Մշակվել է ԵՊԼՀ բարեվարքության կանոնագրքի նախագիծը, որը կհաստատվի 2020թ.-ին:

Կառավարման և վարչական գործառնություններ

Հաշվետու տարում իրենց գործառնություններն արդյունավետորեն կատարել են ԵՊԼՀ-ի վարչական և տնտեսական բոլոր ստորաբաժանումները:

ԵՊԼՀ-ի 2019թ.-ի վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող (տնտեսական) հաստիքների մասին տվյալները բերված են Աղյուսակ 9.2-ում:

Աղյուսակ 9.2. Վարչական, ուսումնառական և սպասարկող հաստիքների մասին տվյալները

Հաստիքների թիվը		
Վարչական	Ուսումնառական	Սպասարկող
84,5	47,5	70,5

2019թ.-ին մշակվել և (կամ) վերամշակվել են ԵՊՀ-ի կառուցվածքային 14 ստորաբաժանումների կանոնադրությունները, որոնք սահմանված կարգով քննարկվել են կանոնակարգային հանձնաժողովի կողմից և հաստատվել գիտական խորհրդի կողմից: Ներկա դրությամբ ԵՊՀ-ի բոլոր ստորաբաժանումներն ունեն հաստատված կանոնադրություններ՝ բացառությամբ 3 ստորաբաժանման, որոնց կանոնադրությունները նախատեսված է հաստատել 2020թ.-ին:

Վերջին 3 ուսումնական տարիների ընթացքում ԵՊՀ-ի կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել կառավարման և ուսումնական գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերի մշակման (կամ) վերամշակման, քննարկման և հաստատման ուղղությամբ: Մանրամասն տվյալները ներկայացված են Աղյուսակներ 9.3-ում և 9.4-ում:

Աղյուսակ 9.3. ԵՊՀ-ում մշակված և հաստատված կարգերի, կանոնակարգերի և իրավական այլ փաստաթղթերի թվաքանակը՝ ըստ վերջին 3 տարիների

Տարեթիվ	Հաստատված փաստաթղթեր
2017թ.	• 1 կանոնադրություն • 6 կանոնակարգ • 2 աշխատակարգ • 1 կարգ • 1 իրավական այլ փաստաթուղթ (ԵՊՀ ներքին կարգապահական կանոններ)
2018թ.	• 30 կանոնադրություն • 6 կանոնակարգ • 2 աշխատակարգ • 1 կարգ • 1 իրավական այլ փաստաթուղթ (Նորմեր)
2019թ.	• 14 կանոնադրություն • 9 կանոնակարգ • 1 իրավական այլ փաստաթուղթ

Աղյուսակ 9.4. ԵՊԼՀ-ում մշակված և հաստատված կարգերի, կանոնակարգերի և իրավական այլ փաստաթղթերի թվաքանակը՝ ըստ վերջին 3 ուսումնական տարիների

Ուսումնական տարի	Հաստատված փաստաթղթեր
2017-2018	• 29 կանոնադրություն • 8 կանոնակարգ • 4 աշխատակարգ • 1 կարգ • 1 իրավական այլ փաստաթուղթ (ԵՊԼՀ-ի ներքին կարգապահական կանոններ)
2018-2019	• 24 կանոնադրություն • 10 կանոնակարգ • 2 կարգ • 2 իրավական այլ փաստաթուղթ (Նորմեր և կանոններ)
2019-2020	• 1 կանոնադրություն • 2 կանոնակարգ

Վերոբերյալ աղյուսակներից երևում է, որ ներքին իրավական փաստաթղթերի ամենամեծաքանակ մշակումները կատարվել են 2017-2018 և 2018-2019 ուսումնական տարիներին, որը պայմանավորված է եղել ԵՊԼՀ-ի կազմակերպահրավական ձևի փոփոխությամբ և մինչ այդ ստորաբաժանումների հիմնական մասի կանոնադրությունների ու որոշ ներքին իրավական ակտերի բացակայությամբ: Մասնավորապես՝ 2018-2019 ուսումնական տարում մշակված և գիտական խորհրդի կողմից հաստատված փաստաթղթերի ընդհանուր թիվը կազմում է 38 փաստաթուղթ (հավելված 9), որը 5-ով նվազել է 2017-2018 ուսումնական տարում մշակված և հաստատված փաստաթղթերի թվից (43 փաստաթուղթ): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2017-2018 ուսումնական տարում կատարվել էր ԵՊԼՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների մշակման աշխատանքների գերակշիռ մասը: Մշակված կանոնադրությունների մի մասի քննարկումը և հաստատումը կատարվել է 2018-2019 ուսումնական տարում:

Հարկ է նշել նաև, որ ինչպես կառավարման, այնպես էլ ԵՊԼՀ-ի գործունեության արդյունավետ կազմակերպման ու իրականացման տեսանկյունից կարևոր քայլ էր վերոնշյալ հաստիքային բոլոր միավորների համար պաշտոնների անձնագրերի մշակումը: Այդ աշխատանքները ևս կատարվել են 2018-2019թթ.-ին: Ներկայումս ԵՊԼՀ-ի բոլոր հաստիքների համար պաշտոնների անձնագրերը մշակված և հաստատված են՝ բացառությամբ Կոնֆուցիուսի ինստիտուտի հաստիքների, որը նախատեսված է իրականացնել 2020թ.-ին:

Մրցութային կարգով ՊԴ կազմի ընտրությունը կազմակերպելու նպատակով 2018թ.-ին մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել էր ՊԴ կազմի ձևավորման, մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգը, որը համալսարանը մինչ այդ չուներ: 2019թ.-ի ընթացքում իրականացվել է ՊԴ կազմի հաստիքների մրցութային կարգով համալրման մեծածավալ աշխատանք, քանի որ ԵՊԼՀ-ի ՊԴ կազմի մեծամասնության աշխատանքի 5-ամյա ժամկետները լրացել էին 2017-2018թթ.-ին: Մասնավորապես 2019թ.-ին՝


- մրցույթային կարգով ընտրվել և նշանակվել են իրենց պաշտոններում **2 ամբիոնի վարիչ**, որոնց մրցույթները չէին կայացել 2018թ.-ին՝ թեկնածուներից որևէ մեկի կողմից սահմանված թվով «կողմ» ձայներ չհավաքելու պատճառով,
- անցկացվել է ՊԴ կազմի հաստիքների տեղակալման 126 մրցույթ, այդ թվում՝ 7 պրոֆեսորի, 62 դոցենտի, 57 ավագ դասախոսի: Մրցույթների արդյունքում իրենց պաշտոններում ընտրվել և նշանակվել են **6 պրոֆեսոր, 57 դոցենտ, 55 ավագ դասախոս**:

2019թ.-ին ԵՊԼՀ-ի **հոգաբարձուների ու գիտական խորհուրդները և ռեկտորատը** աշխատել են մեծ արդյունավետությամբ: Մասնավորապես 2019թ.-ին՝

- անցկացվել են **հոգաբարձուների խորհրդի 8 նիստեր, որոնց ընթացքում կայացվել է 17 որոշում** (2018թ.-ին կայացել էր հոգաբարձուների խորհրդի 3 նիստ, որոնց ընթացքում ընդունվել էր 11 որոշում) .
- անցկացվել են **գիտական խորհրդի 18 նիստեր, որոնց ընթացքում կայացվել է 255 որոշում** (2018թ.-ին տեղի էր ունեցել գիտական խորհրդի 11 նիստ, որոնց ընթացքում ընդունվել էր համալսարանի գիտական, կրթական, վարչական և գործունեության այլ ձևերին վերաբերող 109 որոշում) .
- անցկացվել են **ռեկտորատի 30 նիստեր**, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացին, ուսանողների տեղափոխմանը, ազատմանը, հեռացմանն ու վերականգնմանը, ուսանողներին հատկացվող զեղչերին, ուսման վարձերի վճարմանը վերաբերող և մի շարք այլ հարցեր (ռեկտորատը 2018թ.-ին անցկացրել է 36 նիստ):

Ստորև՝ Գծապատկեր 9.1-ում, ներկայացված է 2018թ.-ին և 2019թ.-ին ԵՊԼՀ-ի հոգաբարձուների ու գիտական խորհուրդների անցկացրած նիստերի և կայացրած որոշումների թվաքանակի վերաբերյալ տվյալները, որից ակնհայտ է, որ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ հոգաբարձուների խորհրդի անցկացրած նիստերի քանակը 5-ով է ավելի, որոշումներինը՝ 6-ով, իսկ գիտական խորհրդի անցկացրած նիստերի քանակը ավելի է 7-ով, որոշումներինը՝ 146-ով:

Գծապատկեր 9.1. 2018թ.-ին և 2019թ.-ին ԵՊԼՀ-ի հոգաբարձուների ու գիտական խորհուրդների անցկացրած նիստերի և կայացրած որոշումների թվաքանակի վերաբերյալ տվյալները



2019թ.-ին մշակվել են նաև **ՊԴ կազմի բոլոր պաշտոնների անձնագրերը**, և կազմվել է մրցույթների անցկացման ժամանակացույցը, որի համաձայն՝ 2019թ.-ին անցկացվել են **ՊԴ հաստիքների տեղակալման մեծաքանակ մրցույթներ**: Արդյունքում պրոֆեսորի, դոցենտի և ավագ դասախոսի գրեթե բոլոր հաստիքները համալրվել են հիմնական աշխատողներով: 2020թ.-ին մրցույթների անցկացումը կշարունակվի:

ԵՊԼՀ-ի ֆինանսական կառավարում

ԵՊԼՀ-ում ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման գործառույթներն իրականացնում է **Ֆինանսական վարչությունը**:

ԵՊԼՀ-ի 2020թ.-ի. բյուջեի կազմման նպատակով ձևավորվել են աշխատանքային խումբ և հանձնաժողով՝ կազմված համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցներից, որոնք ներկայացրել են ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական միջավայրի ապահովման և ստորաբաժանումների բնականոն գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների պահանջարկը: Վերջինս հիմք է ծառայել բյուջեի առանձին հոդվածներով ծախսերի և եկամուտների հաշվարկները կատարելու համար:

Ֆինանսական կառավարման գործառույթների շրջանակում 2019թ.-ին իրականացվել են ստորև բերված աշխատանքները:

- 2018թ.-ին իրականացվել է ԵՊԼՀ-ի 2018թ.-ի ֆինանսական աուդիտ: Աուդիտորական կազմակերպությունը ներակայացրել է առանց վերապահումների եզրակացություն: Ֆինանսական հաշվետվությունը սահմանված կարգով հրապարակվել է:
- ԵՊԼՀ-ի անձեռնմխելի ֆոնդը, որը գործարկվել էր 2017թ.-ին, համալրվել է ԵՊԼՀ-ի եկամուտներից և արհմիության միջոցներից, և ֆոնդի դրամագլուխը 2019թ.-ին դարձել է 6012233 դրամ:
- 2019թ.-ին բազմազանեցվել են ԵՊԼՀ-ի եկամտի աղբյուրները, և արդյունքում մեծացվել են համալսարանի մուտքերը: Մասնավորապես՝ ստացվել են լրացուցիչ եկամուտներ՝ բանկային հաշիվների մնացորդների ավանդադրումից, վճարովի դասընթացների կազմակերպումից, հանրակացարանի գործառույթների արդյունավետության բարձրացումից, վարձակալական և վճարովի այլ ծառայությունների ավելացումից:
- Շարունակվել և ընդլայնվել է համագործակցությունը տարբեր երկրների դեսպանատների, կազմակերպությունների և անհատ բարերարների հետ՝ ուղղված այդ երկրների մշակույթի և լեզվի ուսուցման դրվածքը բարելավելուն, ԵՊԼՀ-ի նյութատեխնիկական բազան համալրելուն, ուսանողական կրթաթոշակներ տրամադրելու նպատակով նոր դրամաշնորհներ ներգրավելուն:
- Գործում է ԵՊԼՀ-ի ծախսերի և եկամուտների շարունակական վերլուծության մեխանիզմ:

2019թ.-ի տարեկան ֆինանսական հոսքերի հաշվետվություն

1. Եկամուտներ

2019թ.-ի համար հաստատված նախահաշվով պլանավորված էր 1,325,248 հազ. դրամ եկամուտ:

Փաստացի ստացված ֆինանսական մուտքերը կազմել են 1,568,118 հազ. դրամ, որոնք ըստ հիմնական եկամուտային հոդվածների՝ տրված են ստորև՝ Աղյուսակ 9.5 -ում:

Աղյուսակ 9.5. 2019թ.-ի ֆինանսական մուտքերը

N	Եկամուտներ	Նախատեսված	Փաստացի կատարված առ 31.12.2019
1.	Եկամուտներ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումից	194,431	205,501
2.	Եկամուտներ վճարովի ուսուցման ծառայությունից	899,424	932,487
3.	Դրամաշնորհային ծրագրերի մուտքեր	93,649	125,327
4.	Մուտքեր գործառնական այլ եկամուտներից	71,595	68,327
5.	Կոնֆուցիուսի ինստիտուտի մուտքեր	66,149	36,476
	Ընդամենը	1,325,248	1,368,118

Փաստացի մուտքերը պլանավորվածից ավելի է կազմել 42,872 հազ. դրամով:

Փաստացի պլանավորվածից էականորեն պակաս են Կոնֆուցիուսի ինստիտուտի մուտքերը:

2. Ծախսեր

2019թ.-ի համար հաստատված նախահաշվով պլանավորված էր 1,574,467 հազ. դրամ ծախս:

Փաստացի ծախսերը 2019թ.-ին կազմել են 1,422,303 հազ. դրամ, որը պակաս է պլանավորվածից 52,254 հազ. դրամով կամ 9,66%-ով:

ԵՊՀ-ի 2019թ.-ի ծախսերը, ըստ ծախսային հիմնական հոդվածների, տրված է ստորև՝ Աղյուսակ 9.6-ում:

Աղյուսակ 9.6. 2019թ.-ի ծախսերը՝ ըստ ծախսային հոդվածների

N	Ծախսեր	Նախատեսված	Փաստացի կատարված առ 31.12.2019
1.	Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսեր	1,077,849	1,028,847
2.	Կրթաթոշակի վճարման ծախսեր	20,232	35,001
3.	Ուսանողական խորհրդի գործունեության՝ ուսանողների համար կազմակերպվող միջոցառումների ծախսեր	6,000	5,522
4.	Գրասենյակային և տնտեսական ծախսեր	11,710	11,589
5.	Գիտաժողովների և գործուղման ծախսեր	6,000	4,183

6.	Տրանսպորտային ծախսեր	5,243	3,302
7.	Կապի և փոստային ծառայության ծախսեր	5,900	5,887
8.	Կոմունալ ծառայությունների և վճարների ծախսեր	37,500	37,048
9.	Վարչական բնույթի և այլ ծառայությունների ծախսեր	15,740	10,439
10.	Ուսումնական ծախսեր	3,600	2,823
11.	Ինստիտուցիոնալ հավատարմագրման ծախսեր	5,300	5,201
12.	Հակահրդեհային միջոցառումների և անվտանգության պահպանության ծառայությունների ծախսեր	3,330	3,278
13.	Գրադարանային ծախսեր	1,200	453
14.	Դրամաշնորհներով և այլ համագործակցությամբ իրականացվող ծրագրերի ընթացիկ ծախսեր	225,663	166,772
15.	Այլ ընթացիկ ծախսեր	8,110	7,543
16.	Պետական բյուջե վճարումներ	64,260	38,717
17.	Ընթացիկ նորոգման ծախսեր	15,950	15,829
18.	Ոչ ընթացիկ ակտիվների (գույքի և սարքավորումների) ձեռքբերում ԵՊՀ-ի միջոցներից	16,500	16,239
19.	Ոչ ընթացիկ ակտիվների (գույքի և սարքավորումների) ձեռքբերում դրամաշնորհներից և Կոնֆուցիուսի ինստիտուտի ֆինանսավորումից	44,380	23,632
	Ընդամենը.	1,574,467	1,422,303

- Հիմնական ծախսային հոդվածները չեն գերազանցում նախատեսված սահմանաչափերը:
- Ընդհանուր փաստացի ծախսերի 72,34%-ը կազմում է աշխատավարձը՝ 1,028,847 հազ. դրամ, որը պակաս է եղել պլանավորվածից 49,002 հազ. դրամով կամ 4.55%-ով:
- Կրթաթոշակի գծով ծախսը կազմել է 35,001 հազ. դրամ, որը ավելի է պլանավորվածից 14,769 հազ. դրամով կամ 73%-ով: Շեղումը պայմանավորված է ԵՊՀ-ի սոցիալական աջակցության և բարձր առաջադիմության խրախուսման քաղաքականությամբ, ըստ որի՝ կրթաթոշակ են ստացել ոչ միայն այն ուսանողները, որոնց համար համալսարանը ստացել է ֆինանսավորում պետական բյուջեից, այլև բարձր առաջադիմությամբ ուսանողները:
- Դրամաշնորհների գծով ծախսերը կազմել են 166,772 հազ. դրամ, որը պակաս է պլանավորվածից մոտ 26.1%-ով, որը պայմանավորված է դրամաշնորհային որոշ ծրագրերի՝ 2019թ.-ի համար նախատեսված միջոցառումների մասնակի իրականացման հետ:
- Ոչ ընթացիկ ակտիվների՝ գույքի և սարքավորումների ձեռքբերումը դրամաշնորհային և Կոնֆուցիուսի ինստիտուտի ֆինանսավորմամբ կազմել է 23,632 հազ. դրամ՝ նախատեսված 44,380 հազ. դրամի փոխարեն, որը հիմնականում պայմանավորված է Կոնֆուցիուսի ինստիտուտի ֆինանսավորմամբ գույքի և սարքավորումների գնումների չիրականացան հետ:

3. Ամփոփում

Այսպիսով, 2019թ.-ի բյուջեի կատարողականի արդյունքում 2020թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ԵՊԼՀ-ի դրամական միջոցների մնացորդը կազմել է 786,880 հազ. դրամ, որից 108,351.5 հազ. դրամը դրամաշնորհների և ծրագրային ֆինանսավորման գումարներն են:

Փաստացի մնացորդը պլանավորված գումարից ավելի է 196,965 հազ. դրամով կամ 33,39%-ով:

X. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ներածություն

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊԼՀ-ի կողմից ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված գործունեությունը բխել է ԵՊԼՀ 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 6-ում (Ենթակառուցվածքներ, շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 10.1-ում:

Աղյուսակ 10.1. ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 6-ով (Ենթակառուցվածքներ, շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	
Խնդիր 1.	Բարեկարգել ԵՊԼՀ-ի մասնաշենքերը և տարածքները
Նախատեսված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
6.1.2. Ավարտին հասցնել 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկի վնասված և շահագործման համար վտանգավոր տարածքները և ըստ անհրաժեշտության՝ իրականացնել մասնաշենքերի ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման աշխատանքներ:	Գործառնական կարիքներից ելնելով՝ 6.1.2. կետում նշված մակերեսի նորոգումը փոխարինվել է 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի նիստերի դահլիճի կապիտալ վերանորոգմամբ (122 քմ) և 1408 սենյակի (Գերմաներենի ամբիոն) կապիտալ վերանորոգմամբ:
6.1.3. Իրականացնել 2-րդ մասնաշենքի սպորտդահլիճի վերանորոգում:	Կատարվել են 2-րդ մասնաշենքի սպորտդահլիճի 180 քմ ներքին պատերի հարդարման և ներկման, ինչպես նաև հատակի էթոքսիտի-սմալայով ծածկույթի վնասված հատվածի 48 քմ տարածքի վերանորոգման և ներկման աշխատանքներ:
6.1.4. Իրականացնել մասնաշենքերի սանհանգույցների վերանորոգում՝ ներառյալ ջրագծերի և կոյուղագծերի խողովակների մոնտաժման աշխատանքներ:	Կատարվել են 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի սանհանգույցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև սանհանգույցը համալրվել է եվրոպական նոր արտադրության կախովի զուգարանակոնքերով և լվացարաններով, տեղադրվել են սանհանգույցին անհրաժեշտ սարքավորումներ:
6.1.5. Իրականացնել 1-ին մասնաշենքին հարող բակի տարածքի և սպորտդահլիճին հարող մայթերի ասֆալտապատում:	Կատարվել է սպորտդահլիճին հարող 25 մետր երկարությամբ 40 քմ տարածքի և 1-ին մասնաշենքին հարող բակի 250 քմ տարածքի ասֆալտապատում:

Խնդիր 2.	Բարելավել ԵՊԼՀ-ի՝ Հ. Էմին 123 հասցեում գտնվող հանրակացարանային մասնաշենքը
Նախադրենված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
6.2.2. Ձեռք բերել ԵՊԼՀ-ի մասնաշենքերին անհրաժեշտ գույք:	Ձեռք է բերվել անհրաժեշտ գույք, մասնավորապես՝ գրասեղան՝ 2 հատ, սեղան-համակարգիչ՝ 6 հատ, ճաշարանի աթոռ՝ 10 հատ, բազմոց՝ 2 հատ, բազկաթոռ՝ 2 հատ, ղեկավարի բազկաթոռ՝ 1 հատ:
6.2.3. Իրականացնել միջանցքների, սենյակների և սանհանգույցների ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքներ:	• ԵՊԼՀ-ի հանրակացարանի կաթսայատունը սնուցող 50 մմ տրամագծով կոռոզիայի ենթարկված մետաղական ջրագիծը 55 գծ.մ. երկարությամբ փոխարինվել է 50 մմ տրամագծով պոլիպենային նոր խողովակներով: • Իրականացվել են հանրակացարանի լոգասենյակների հատակների և պատերի 20 քմ տարածքների ջրամեկուսացման և կերամիկական սալիկներով սալիկապատման աշխատանքներ: • Իրականացվել են հանրակացարանի մասնաշենքի միջանցքների, աշխատակիցների սենյակների, կենվորների սենյակների, պատերի և առաստաղների մասնակի և կապիտալ հարդարման և ներկման (120 քմ) աշխատանքներ: • Հանրակացարանի մարզադահլիճի 20 քմ տանիքի վնասված ազբո/ցեմենտային հավաքովի ծածկույթը փոխարինվել է նորով: • Հանրակացարանի ճաշասենյակների գլխավոր 50 մմ տրամագծով պլաստմասե կոյուղու խողովակները (16 գծ.մ.) փոխարինվել են 100 մմ տրամագծով պլաստմասե նոր խողովակներով:
Խնդիր 4	Բարելավել ԵՊԼՀ-ի աշխատակիցների և սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման գործընթացը, խթանել գիտակրթական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպումը ԵՊԼՀ-ի Ծաղկաձորի հանգստյան տանը
Նախադրենված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
6.4.1. ԵՊԼՀ-ի աշխատակիցներին և սովորողներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ Ծաղկաձորի հանգստյան տանը իրենց հանգիստն ու տարատեսակ միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ և ապահովել աջակցություն ու բարենպաստ պայմաններ՝ շուկայականից ցածր գներով:	Ծաղկաձորի հանգստյան տունը տրվել է վարձակալության՝ հավելյալ ֆինանսական հոսքեր ապահովելու նպատակով: ԵՊԼՀ-ի աշխատակիցներին և սովորողներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Ծաղկաձորի հանգստյան տանը կեցության պայմանների մասին՝ իրենց հանգիստը ու տարատեսակ միջոցառումները կազմակերպելու նպատակով:

Տնտեսական գործունեության ուղղությամբ կատարված աշխատանքներ

Շենք, շինությունների և տնտեսվարման վարչության կողմից ԵՊԼՀ-ի տնտեսական գործունեության ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- փոխարինվել է հատակի լամինատ 40 քմ (Կարիերայի կենտրոնի 4/1 սենյակը՝ 6 քմ, 1201 սենյակը՝ 9 քմ, 1302 սենյակը՝ 25 քմ)՝ տնտեսելով 100 000 դրամ,
- փոխարինվել է գրադարանի մասնաշենքը սնուցող էլեկտրական մալուխը էլեկտրական ենթակայանից մինչև գրադարանի մասնաշենք,
- մշտապես մաքրվել են արտաքին և ներքին կոյուղագծերը, վերանորոգվել են Հ. Էմին 123 հասցեում գտնվող մասնաշենքի լողասենյակներում և խոհանոցներում տեղադրված գեյզերները, բոլոր մասնաշենքերի զուգարաններում տեղադրված էլեկտրական չորացուցիչները, ջրի ծորակները, փայտյա գրասենյակային և ուսանողական կահույքը,
- փոխարինվել են նորերով Ծաղկաձորի հանգստյան տան կաթսայատան երկու միավոր անսարք ջրի պոմպերը,
- նորոգվել են 5-րդ մասնաշենքում արխիվի և 2-րդ մասնաշենքի նկուղի գրքերի պահեստի դարակաշարերը՝ 16 հատ,
- արխիվում տեղադրվել է նոր օդափոխիչ,
- երկրորդ մասնաշենքի նկուղում պատրաստվել է մետաղական ճաղավանդակներով պահեստ՝ SS բաժնից դուրս գրված համակարգիչների պահպանման համար,
- CO տեսակի եռակցման միջոցով վերանորոգվել են կոտրված մետաղական կարկասով կիսափափուկ աթոռներ (բազկաթոռներ) և աթոռներ՝ 30 հատ՝ նորերի ձեռքբերման համեմատ տնտեսելով մոտավորապես 150 000 դրամ,
- նորոգվել և սպասարկվել են 2 «Սամադ» և «Նիսան Ալտիմա» մակնիշի ավտոմեքենաները:

Ձեռք են բերվել տնտեսական նոր սարքավորումներ, գույք և աշխատասենյակների համար գրասենյակային կահույք, որոնց մասին տվյալները ներկայացված են Աղյուսակ 10.2-ում:

Աղյուսակ 10.2 Տնտեսական սարքավորումների, գույքի և գրասենյակային կահույքի ձեռքբերման մասին տվյալներ

Տեսակ	Անվանում	Քանակ /չափման միավոր
Տնտեսական գույք	Օդորակիչ	6 հատ
	Սառնարան	6 հատ
	Փոշեկուլ	6 հատ
	Շերտավարագույր	81,1 ք. մ
	Օդափոխիչ	1 հատ
	Անվադող	4 հատ
Գրասենյակային կահույք	Բազկաթոռ	23 հատ
	գրասենյակային աթոռ	30 հատ
	Գրապահարան	3 հատ
	ղեկավարի սեղան	3 հատ
	Բազմոց	1 հատ (նվիրատվություն)

Վերոնշյալ աշխատանքները խթանել են համալսարանի տնտեսական ծախսերի զգալի նվազեցմունը:

Քաղաքացիական պաշտպանության և հակահրդեհային անվտանգության վիճակի բարելավման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- կազմվել և համապատասխան տեղերում փակցվել են տարահանման նոր պլաններ,
- բուհում առկա 87 հատ կրակմարիչներից լիվքավորվել են 77-ը,
- 10 հատ կրակմարիչներ ճանաչվել են ոչ պիտանի, որոնց փոխարեն ձեռք են բերվել 10 հատ ԿՖ 4 տեսակի նոր կրակմարիչներ,
- 40 հատ ԿՖ-4,5 տեսակի կրակմարիչների ռետինե փողրակները վնասված լինելու պատճառով փոխարինվել են նորերով,
- փորձարկվել են հրշեջ ծորակները, որի արդյունքում 5-րդ մասնաշենքի 3 հատ հրշեջ ծորակները, 2-րդ մասնաշենքի 1 հատ հրշեջ ծորակը և 1-ին մասնաշենքում 2 հատ հրշեջ ծորակները փոխարինվել են նորերով,
- Հովսեփ Էմին 123 հասցեում գտնվող հանրակացարանում վերանորոգվել և մասամբ փոխվել են ծորակների խողովակազծերը, իսկ փականները փոխարինվել են նորերով,
- փորձարկվել են բուհում առկա հրշեջ փողրակները՝ 33 հատ, իսկ Հովսեփ Էմին 123 հասցեում գտնվող հանրակացարանի համար ձեռք են բերվել 3-ական 51 մմ տրամագծով հրշեջ փողրակներ և փողակներ,
- 2-րդ մասնաշենքի նկուղում հակահրդեհային նորմերը պահպանելու համար սովորական լամպերը փոխարինվել են լեդ լամպերով,
- փորձակվել է հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգը:

Տարածքների բարեկարգման, շինաշխատանքների և նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ կատարված այլ աշխատանքներ

2019թ.-ին ԵՊԼՀ-ի Թումանյան 42 հասցեի հիմնական մասնաշենքերում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 2-րդ մասնաշենքի սպորտդահլիճի 180 քմ մակերեսով ներքին պատերի հարդարում և ներկում, հատակի էքոքսիտի-սմալայով ծածկույթի վնասված հատվածի 48 քմ մակերեսով տարածքի վերանորոգում և ներկում,
- սպորտդահլիճի բակին հարող տարածքի արտաքին հենապատերի 75 քմ մակերեսով մետաղական ցանցապատումով և ցեմենտ-սվաղյա շաղախով հարթեցում, 75 քմ մակերեսով ցեմենտ-ավազյա հարթեցված շերտի վրա ապակաթելային ցանցապատումով հենապատի երկշերտ ջրամեկուսացում բիտումային մածուկով,
- ջրամեկուսացված պատերի վերին մայթեզրերին հարող տարածքի երկարությամբ բազալտյա սալերով սալիկապատում,
- սպորտդահլիճին հարող 25 մետր երկարությամբ 40 քմ մակերեսով տարածքի ասֆալտապատում,
- 1-ին մասնաշենքին հարող բակի 250 քմ մակերեսով տարածքի ասֆալտապատում,
- 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի 206 սենյակի 112 քմ մակերեսով նիստերի դահլիճի, 4-րդ հարկի 408 սենյակի 24 քմ մակերեսով գերմաներենի ամբիոնի, 4-րդ հարկի համապատասխանաբար

24 քմ և 37 քմ մակերեսներով 411, 417 սենյակների կապիտալ շինվերանորոգման աշխատանքները՝ ընդհանուր 197 քմ մակերեսով:

Հ. Էմին 123 հասցեի հանրակացարանային մասնաշենքում ավարտվել են հետևյալ աշխատանքները՝

- լոգասենյակների հատակների և պատերի 20 քմ մակերեսով տարածքների ջրամեկուսացումը և սալիկապատումը կերամիկական սալիկներով,
- միջանցքների, աշխատակիցների սենյակների, կենվորների սենյակների, պատերի և առաստաղների մասնակի և կապիտալ հարդարումը և ներկումը՝ 120 քմ ընդհանուր մակերեսով,
- մարզադահլիճի 20 քմ մակերեսով տանիքի վնասված ագբո/ցեմենտային հավաքովի ծածկույթի փոխարինումը նորով,
- ճաշասենյակների գլխավոր 50 մմ տրամագծով պլաստմասսե կոյուղու խողովակները՝ 16 գծ.մ., փոխարինվել են 100 մմ տրամագծով պլաստմասսե նոր խողովակներով,
- կաթսայատունը սնուցող 50 մմ տրամագծով կոռոզիայի ենթարկված մետաղական ջրագիծը՝ 55 գծ.մ. երկարությամբ, փոխարինվել է 50 մմ տրամագծով պոլիպլենային նոր խողովակներով:

ՇՇՏ վարչության աշխատակիցների ուժերով մասնակի վերանորոգվել են՝

- 4-րդ մասնաշենքի 4402, 4404 լսարանները և նրանց հարող աստիճանավանդակը,
- 1-ին մասնաշենքի առաջին հարկի մուտքի գլխավոր սյուները, բազրիքները, 1313 և 1216 աշխատասենյակները,
- 4-րդ մասնաշենքի առաջին հարկի միջանցքը:

ՇՇՏ վարչության աշխատակիցների ուժերով կապիտալ վերանորոգվել են՝

- 5-րդ մասնաշենքի առաջին հարկը ամբողջությամբ,
- 1-ին մասնաշենքի 4-րդ հարկի 1404 և 1412 սենյակները:

Ընդհանուր առմամբ աշխատակիցների ուժերով մասնակի և կապիտալ վերանորոգվել է **520 քմ ընդհանուր մակերեսով տարածք:**

Համալսարանի կաթսայատան հնոցապանների շնորհիվ Թումանյան 42 և Հ. Էմին 123 հասցեում պահպանելով մասնաշենքերի ներքին ջերմային ռեժիմը ձմեռային սեզոնին՝ հաշվետու ժամանակաշրջանում նախորդի համեմատությամբ տնտեսվել է մոտավորապես 1900 մ խորանարդ գազի ծախս:

Տնտեսական մասի աշխատակիցների ուժերով նորոգվել է 3-րդ մասնաշենքի 109ա սենյակից դեպի բակ քարե աստիճանավանդակը, ձևափոխվել է ջրահեռացման համակարգը գրադարանի հետնամասում, և բարեկարգվել է տարածքը:

XI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գիտակցելով իր սոցիալական հանձնառությունը՝ ԵՊԼՀ-ն հետևողականորեն իրականացնում է սոցիալական քաղաքականություն՝ ուղղված համալսարանի ուսանողներին և աշխատակիցներին սոցիալական աջակցություն տրամադրելուն: ԵՊԼՀ-ն իր միջոցներից աջակցություն է տրամադրում տարբեր խոցելի խմբերի և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին, ինչպես նաև ուսանողներին ֆինանսապես աջակցելու նպատակով իրականացնում է նպատակաուղղված աշխատանք հովանավորներ գտնելու և այդ գործընթացին նրանց ներգրավելու ուղղությամբ:

2019թ.-ին ևս ԵՊԼՀ-ի գործունեության առաջնահերթություններից էր ուսանողների սոցիալական կարիքները վերհանելու և նրանց աջակցելու խնդիրը: 2019թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակներում կազմակերպվել են համալսարանի ուսանողության ուսման վարձի մասնակի փոխհատուցման դիմումների հավաքագրման աշխատանքները: Դիմումների քննարկման համար ռեկտորի հրամանով ձևավորվել է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են նաև ուսանողներ: Հանձնաժողովի անդամները հանգամանորեն ծանոթացել են բոլոր դիմումներին և առաջնորդվելով սահմանված կարգով՝ կազմել են սոցիալական տարբեր խմբերի այն ուսանողների ցանկը, որոնց տրամադրվել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

Պետք է նշել, որ ի հավելումն օրենքով սահմանված դեպքերի՝ քննարկվել և բավարարվել են նաև մի շարք ուսանողների դիմումներ, որոնք չնայած ներառված չեն օրենքով սահմանված խոցելի խմբերի ցանկում, սակայն ունեն սոցիալական խնդիրներ: Բացի այդ, ԵՊԼՀ-ն որդեգրել է բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին սատարելու քաղաքականություն: Այսպես, ուսման վարձի զեղչեր են հատկացվել նրանց, ովքեր փոխատեղման մրցույթի արդյունքներով մասնակի տարբերությամբ են զիջում անվճար համակարգում սովորողներին, որոնք ունեն բարձր առաջադիմություն կամ հասարակական ակտիվություն:

2019թ.-ին բուհի կողմից իրականացված սոցիալական քաղաքականությունը բխել է ԵՊԼՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի **բաժին 4-ում (Ուսանողական համակազմ)** նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 11.1-ում:

Աղյուսակ 11.1. ԵՊԼՀ-ի 2019-2023 թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 4-ով (Ուսանողական համակազմ) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ (ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)	
Խնդիր 4.	Բարելավել և բազմազանեցնել սովորողների սոցիալական աջակցության մեխանիզմները և ծառայությունները
Նախադրեալ ռազմավարական գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
4.4.1. Մշակել և իրականացնել ծրագրեր սոցիալապես անապահով և խոցելի խմբերի սովորողներին աջակցելու համար, տրամադրել սոցիալական աջակցության տարաբնույթ ծառայություններ՝ ապահովելով դրանց հասցեականությունը:	2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ԵՊԼՀ-ն 432 ուսանողի տրամադրել է զեղչեր՝ ընդհանուր 30,429,500 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 338 ուսանողի՝ 30,391,500 ՀՀ դրամ գումարի չափով: Սոցիալապես անապահով և սահմանամերձ բնակավայրերից ուսանողներին տրամադրվել են զեղչեր նաև ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից. 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում՝ 135 ուսանողի (12,893,500 ՀՀ դրամ գումարի չափով), իսկ 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 192 ուսանողի (19,136,500 ՀՀ դրամ գումարի չափով):
4.4.2. Իրականացնել աշխատանքներ համապատասխան հիմնադրամների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ թիրախային կարիքներ ունեցող սովորողներին աջակցելու ուղղությամբ:	Սովորողների ուսումնական առաջընթացը խթանելու նպատակով ԵՊԼՀ-ն տրամադրել է ուսման վարձի մասնակի փոխհատուցում տարբեր կարգավիճակներ ունեցող ուսանողների: Ուսման վարձի մասնակի փոխհատուցումը տրամադրվել է ինչպես առկա, այնպես էլ հեռակա համակարգում սովորողների կողմից ներկայացված դիմումների համաձայն:
4.4.3. Բարելավել զեղչերի տրամադրման գործընթացը և ընդլայնել ԵՊԼՀ-ի կողմից ուսման վճարի մասնակի զեղչ ստացող սոցիալապես անապահով և խոցելի խմբերից սովորողների թիվը մասնավորապես մասնավոր ներդրումներից ստացվող միջոցների հաշվին:	2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ԵՊԼՀ-ի 93 ուսանող ստացել է կրթաթոշակ ՀՀ-ում գործող 10 կազմակերպությունների և հիմնադրամների կողմից՝ ընդհանուր 14,102,500 ՀՀ դրամ գումարի չափով: 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում 146 ուսանող 17 կազմակերպությունների ու հիմնադրամների կողմից ստացել է կրթաթոշակ՝ ընդհանուր 20,232,900 ՀՀ դրամ գումարի չափով: Պետության կողմից սովորողներին նույնպես տրամադրվել են կրթաթոշակներ. 2018-2019 ուսումնական տարվա

	համար՝ 2095 ուսանողի (ընդհանուր 12,222,375 ՀՀ դրամ), իսկ 2019-2020 ուսումնական տարվա համար՝ 1676 ուսանողի (ընդհանուր 9,787,967 ՀՀ դրամ):
--	--

Ուսանողների ուսման վարձերի մասնակի կամ լրիվ փոխհատուցում, կրթաթոշակներ

2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալու համար դիմել են հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողները.

- սոցիալապես անապահով (անապահովության միավորը 00.01-30.00),
- 23 տարին չլրացած և 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած,
- 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող),
- 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի անդամ,
- 1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողի երեխա,
- մինչև մեկ տարեկան երեխայի ծնող,
- մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած,
- սահմանամերձ գոտու բնակիչ,
- այլ կարգավիճակ, այդ թվում՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ, ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներ, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներ և այլն:

Ձեռքի համար դիմած ուսանողների մասին տեղեկատվությունը ըստ ֆակուլտետների և կիսամյակների ներկայացված է ստորև՝ Աղյուսակներ 11.2-ում, 11.3-ում և 11.4-ում²⁰:

Աղյուսակ 11.2 Առկա ուսուցման համակարգում վարձի մասնակի փոխհատուցման տվյալներ (2018-2019 ուստարվա 2-րդ կիսամյակ)

	2018-2019 ուսումնական տարի, 2-րդ կիսամյակ			
	ԿՄՄՖ	ԹՄՀՖ	ՌՕԼՖ	ՍԳՍՖ
Բավարարվել է	64	100	54	91
Մերժվել է	21	23	24	34
Ընդամենը զեղչի համար դիմել է	85	123	78	125

²⁰ Ներկայացված են տվյալներ առ 21.11.2019 թ.-ը

Աղյուսակ 11.3 Հեռակա ուսուցման համակարգում վարձի մասնակի փոխհատուցման տվյալներ (2018-2019 ուսարվա 2-րդ կիսամյակ)

	2018-2019 ուսումնական տարի, 2-րդ կիսամյակ			
	ԿՄՄՖ	ԹՄՀՖ	ՌՕԼՖ	ՍԳՍՖ
Բավարարվել է	53	-	15	37
Մերժվել է	8	-	2	1
Ընդամենը զեղչի համար դիմել է	61	-	17	8

Աղյուսակ 11.4 Առկա ուսուցման համակարգում վարձի մասնակի փոխհատուցման տվյալներ (2019-2020 ուսարվա 1-ին կիսամյակ)


	2019-2020 ուսումնական տարի, 1-ին կիսամյակ			
	ԿՄՄՖ	ԹՄՀՖ	ՌՕԼՖ	ՍԳՍՖ
Բավարարվել է	44	71	43	78
Մերժվել է	4	18	17	24
Ընդամենը զեղչի համար դիմել է	48	89	60	102

2019-2020 ուսումնական տարվա համար հեռակա ուսուցման համակարգում սովորողների վարձերի մասնակի փոխհատուցման տվյալները ներկայացված չեն, քանի որ զեղչի դիմումների ընդունման վերջնաժամկետը դեռ չի ավարտվել:

2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ներկայացրած դիմումների՝ 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համեմատությամբ քանակապես ավելի շատ լինելը պայմանավորված է այն փաստով, որ առաջին կուրսի ուսանողները զեղչի դիմում կարող են ներկայացնել միայն 2-րդ կիսամյակում:

Երկու կիսամյակներում ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու դիմում ներկայացրած և բավարարված դիմումների տոկոսային համեմատությունը՝ ըստ ֆակուլտետների, առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների համար ներկայացված է ստորև՝ Գծապատկեր 11.1-ում: Ներկայացված տվյալներում (տոկոսային հարաբերակցությամբ) ըստ էության ցույց է տրված, թե ուսման վճարի մասնակի փոխհատուցման համար տվյալ ֆակուլտետից դիմած ուսանողների ընդհանուր թվից որ տոկոսն է բավարարվել:

Գծապատկեր 11.1. Ուսման վճարի մասնակի փոխհատուցման համար ներկայացված և բավարարված դիմումների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ ֆակուլտետների և կիսամյակների



2019թ.-ին ընդհանուր թվով **336** սովորողի տրամադրվել են նաև կրթաթոշակներ, որի ընդհանուր գումարը կազմել է **1 947 190 ՀՀ դրամ**, որը բաշխվել է հետևյալ կերպ (Աղյուսակ 11.5):

Աղյուսակ 11.5. ԵՊԼՀ ուսումնառողներին տրամադրված կրթաթոշակ (2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակ)

N	Կրթական աստիճան	Սովորողների քանակ	Տրամադրված գումար (ՀՀ դրամ)
1	Բակալավրիատ	214	1 149 600
2	Մագիստրատուրա	117	667 590
3	Ասպիրանտուրա	4	100 000
4	Դոկտորանտուրա	1	30 000

Աղյուսակ 11.5. 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում և 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում տրամադրված զեղչեր և կրթաթոշակներ

N	Զեղչ տրամադրող մարմինը	2018-2019 ուս.տարի, 2-րդ կիսամյակ		2019-2020 ուս.տարի, 1-ին կիսամյակ	
		Ուսանողների թիվը	Գումար (ՀՀ դրամ)	Ուսանողների թիվը	Գումար (ՀՀ դրամ)
1.	ԵՊԼՀ-ի զեղչ	432	30,429,500	338	30,391,500
	Ընդամենը	432	30,429,500	338	30,391,500
1.	ԿԳՄՍՆ զեղչ (սոց. անապահով)	100	10,709,500	137	15,562,000
2.	ԿԳՄՍՆ զեղչ (սահմանամերձ)	35	2,184,000	55	3,574,500
	Ընդամենը	135	12,893,500	192	19,136,500

N	Կրթաթոշակ հիմնադրամներից				
1.	Հրայր և Աննա Հովնանյան Բ/Հ	37	7,320,000	27	5,230,000
2.	Ամբրո Հայաստան Բ/Հ	9	750,000	11	750,000
3.	Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցություն	1	60,000	10	1,130,000
4.	Դիակոնիա Բ/Հ	3	300,000	3	505,000
5.	«Հայաստանի մանուկներ» հիմնադրամ	2	200,000	1	51,700
6.	Հայկական բարեգործական ընդհանուր միություն	17	1,652,500	15	1,182,000
7.	Զանգեզուրի ՊՄԿ	16	2,910,000	28	5,245,000
8.	ՄՏՍ Հայաստան	2	200,000	4	412,500
9.	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	3	560,000	10	346,000
10.	Դասավանդի՛ր, Հայաստա՛ն	0	0	11	2,600,000
11.	Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ	0	0	2	89,700
12.	Այնթապի գյուղապետարան	3	150,000	4	220,000
13.	Եղվարդի համայնքապետարան	0	0	4	410,000
14.	Ծոողագուրկ հայ երեխաների օգնություն	0	0	3	516,000
15.	Հայ օգնության հիմնադրամ	0	0	9	1,095,000
16.	ՍՕՍ մանկական գյուղեր Բ/Հ	0	0	3	370,000
17.	«Հալեպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ	0	0	1	80,000
	Ընդամենը	93	14,102,500	146	20,232,900
	Պետության կողմից տրված կրթաթոշակ	2095	12,222,375	1676	9,787,967

ԵՊԼՀ-ի արհմիության կողմից աջակցության տրամադրում ԵՊԼՀ-ի աշխատակիցներին և միջոցառումների կազմակերպմանը

ԵՊԼՀ-ի արհմիության կողմից 2019թ.-ին դրամական աջակցություն է տրամադրվել աշխատակիցներին, ինչպես նաև տարբեր միջոցառումներ կազմակերպելու համար:

Ընդհանուր առմամբ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի աշխատակիցներին և տարբեր միջոցառումներին աջակցելու համար արհմիության կողմից տրամադրվել է 6,145,550 ՀՀ դրամի գումար, որի վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 11.6-ում:

**Աղյուսակ 11.6. ԵՊԼՀ-ի արհմիության կողմից աջակցության տրամադրում համալսարանի
աշխատակիցներին և միջոցառումների կազմակերպում**

2019թ.-ի հունվար - դեկտեմբեր		
N	Ծախսի տեսակ	Գումարը (ՀՀ դրամ)
1	Աշխատակիցներին տրված սոցիալական օգնություն	2 730 000
2	Արմիությունների միությանը տրված անդամավճար	60 000
3	Մարտի 8-ի միջոցառում	456 000
4	Կորպորատիվ ընթերիք	535 000
5	Տրանսպորտային ծախսեր	225 000
6	Աշխատակիցների երեխաների համար կազմակերպված միջոցառում	840 600
7	Ծաղկեփնջեր, ծաղկեպսակներ	398 950
8	ԵՊԼՀ-ի հիմնադրամի անձեռնմխելի ֆոնդին ուղղված գումար	700 000
9	Տարեվերջյան միջոցառման տոմսերի ձեռքբերման գումար	200 000
	Ընդամենը	6,145,550

Ընդհանուր առմամբ 2019թ.-ին ԵՊԼՀ-ի կողմից սոցիալական աջակցության ծրագրերին և ինստիտուցիոնալ կարիքներից ելնելով՝ տրամադրվել է 5,245,550 ՀՀ դրամ:

XII. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ներածություն

Ավանդաբար ԵՊՀ-ի ուսանողությունը առանձնացել է իր ակտիվ հասարակական դիրքորոշմամբ, նպատակասլացությամբ, բազմակողմանի հետաքրքրություններով և նախաձեռնողականությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանը կարևորել է ոչ միայն կրթության որակի բարձրացման, ուսանողության ուսումնառության պայմանների բարելավման, այլև նրանց ինքնավարության, բուհի կառավարման գործընթացներին ուսանողության ներգրավվածության ապահովման հարցերը:

2019թ.-ին ԵՊՀ-ի կողմից ուսանողական համակազմի հետ տարվող աշխատանքները բխել են ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 4-ում (Ուսանողական համակազմ) նախանշված ռազմավարական խնդիրներից և համապատասխան գործողություններից, որոնց ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 12.1-ում:

Աղյուսակ 12.1. ԵՊՀ-ի 2019-2023թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի բաժին 4-ով (Ուսանողական համակազմ) նախանշված ռազմավարական խնդիրները, գործողությունները և դրանց իրականացման 2019թ.-ի արդյունքները

ԲԱԺԻՆ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ	
Խնդիր 1.	Ապահովել սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը ԵՊՀ կառավարման և գործունեության տարբեր ոլորտների զարգացման գործընթացներում՝ նպաստելով և աջակցելով ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի գործունեությանը
Նախադրեցված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
4.1.1. Մշակել և վերանայել սովորողների մասնակցությանն առնչվող կարգերն ու կանոնակարգերը՝ սահմանելով որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության մեխանիզմներն ու չափանիշները:	Ուսանողները մասնակցել են բակալավրական 24 և մագիստրոսական 28 ՄԿԾ-ների վերանայման և ուսումնական պլանների մշակման գործընթացին: Ուսանողական համակազմի ներկայացուցիչները ներգրավված են ԵՊՀ գիտխորհրդի, ֆակուլտետային խորհուրդների և հոգաբարձուների խորհրդի կազմում՝ ապահովելով 25% ներկայացուցչականություն: Խորհուրդների նիստերին նրանք ակտիվորեն մասնակցել են և բարձրացրել ուսանողներին հուզող հարցեր:
4.1.2. Ներգրավել սովորողներին կրթության բովանդակության ձևավորման, ՄԿԾ-ների վերանայման ու մշակման, կրթության որակի ապահովման և ՊԴ կազմի գործունեության արդյունավետության գնահատման և այլ գործառույթներում:	Ուսանողները նաև ակտիվորեն ներգրավվել են ԵՊՀ-ի հավատարմագրման գործընթացի բոլոր

	փուլերում:
4.1.3. Ընդլայնել սովորողներին մատուցվող խորհրդատվական ծառայությունների համակարգը՝ ներառյալ համալսարանական կյանքին հարմարվելու, անհատական խնդիրները հաղթահարելու և այլ ուղղություններով, ինչպես նաև ուսման վարձի գեղչերի, շարժունության, փոխանակման, կրթաթոշակային տարբեր ծրագրերի, նպաստավոր պայմաններով ուսանողական վարկերի ստացման հնարավորությունների մասին:	Ներդրվել և հաստատվել է ժամանակացույց՝ ուսումնառության ընթացքում միջանկյալ և ամփոփիչ ստուգումներին նախորդող խորհրդատվական ժամերի համար, որոնք անցկացրել են համապատասխան դասընթացների դասախոսները: Ըստ ժամանակացույցի՝ ուսանողների համար իրականացվել են խորհրդատվական սեմինարներ և մշտադիտարկումներ: Ամփոփիչ ատեստավորումից առաջ, ըստ առանձին ֆակուլտետների, իրականացվել են հանդիպումներ համապատասխան դեկանների և ռեկտորի հետ: Նախքան ուսումնական տարվա սկիզբը կազմակերպվել է տեղեկատվական հանդիպում առաջին կուրսեցիների հետ: Նրանք հանդիպել են դեկանների ու փոխդեկանների, ֆակուլտետային ուսանողական խորհուրդների անդամների հետ, ծանոթացել համալսարանի ողջ տարածքին, ինչպես նաև Կարիերայի կենտրոնի և բուժկետի գործունեությանը:
4.1.4. Զարգացնել և բազմազանեցնել սովորողներին տրամադրվող ակադեմիական աջակցության և կրթական լրացուցիչ ծառայությունների մեխանիզմները՝ նրանց ուսումնական առաջընթացը բարելավելու նպատակով: Այդ թվում՝ • ելնելով սովորողների հետաքրքրություններից և կարիքներից՝ կազմակերպել դասախոսություններ ու հանդիպումներ ոլորտի մասնագետների, ինչպես նաև տարբեր ոլորտների գործիչների հետ, • սովորողների կրթական կարիքներից ելնելով՝ իրականացնել անհատականացված ուսումնական ծրագրեր՝ ներառյալ հատուկ դասընթացներ կամ հանդիպումներ, • զարգացնել կրթական ռեսուրսներից	Ելնելով սովորողների հետաքրքրություններից և կարիքներից՝ կազմակերպվել են 40-ից ավելի դասախոսություններ ու հանդիպումներ տարբեր ոլորտների մասնագետների և գործիչների հետ, այդ թվում՝ ՀՀ նախագահի, ԿԳՄՍ նախարարի և փոխնախարարի, Ռումինիայի արքայազնի, դեսպանների, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտի, Հայդելբերգի, Բուենոս Այրեսի և այլ համալսարանների պրոֆեսորների, ԵՊԼՀ-ի հայտնի շրջանավարտների հետ: Սովորողների կրթական կարիքներից ելնելով՝ ուսանողներին ցուցաբերվել է անհատականացված մոտեցում: Մասնավորապես՝ օտար լեզուների ուսուցման ժամանակ խմբերը ձևավորվել են՝ ելնելով ուսանողների համապատասխան լեզվի տիրապետման մակարդակից: Օտարերկրացի ուսանողների համար կազմակերպվել են հայերենի դասընթացներ:

օգտվելու հմտությունները, • սահմանել ԵՊԼՀ անվանական կրթաթոշակներ լավագույն առաջադիմությամբ սովորողների համար:		Առանձին ուսանողների առաջադիմությունը խթանելու նպատակով նրանց համար կազմակերպվել են լրացուցիչ դասեր և խորհրդատվական հանդիպումներ:
Խնդիր 2.	Նպաստել սովորողների արտալսարանային կյանքի և հետազոտական գործունեության ակտիվացմանը	
Նախադրեալած գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
4.2.1. Ուսումնասիրել և վերհանել սովորողների կրթագիտական հետաքրքրությունները, ստեղծել նոր և տարատեսակ ուսանողական խմբակներ, համույթներ, ակումբներ, ակտիվացնել գործող ակումբների, խմբակների և ստուդիաների աշխատանքները և ընդլայնել սովորողների ներգրավվածությունը դրանց աշխատանքներում:		Ուսումնասիրվել և վերհանվել են սովորողների կրթագիտական հետաքրքրությունները, ինչի արդյունքում վերկազմավորվել են թենիսի, վոլեյբոլի և ֆուտբոլի խմբակներ, կազմվել են նոր խմբակներ՝ երգչախմբի, պարի, թատերական: Այս խմբակների աշխատանքներում, ինչպես նաև համալսարանական և արտահամալսարանական միջոցառումներում ակտիվ մասնակցություն են ունեցել 1000-ից ավելի ուսանողներ: Առանձին դեպքերում գրանցվել են խոշոր հաջողություններ. բուհի վոլեյբոլի թիմը գրավել է 1-ին տեղը մրցաշարում: Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) ձևավորել է ուսման որակի բարելավման, արտաքին կապերի ու լրատվության, իրավատնտեսական, մշակույթի և սպորտի, վերստուգիչ հանձնաժողովներ:
4.2.2. Կազմակերպել և իրականացնել կրթագիտական, մշակութային, սպորտային, հասարակական ուղղվածության տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ սովորողների համար:		Իրականացվել են կրթագիտական, մշակութային, սպորտային, հասարակական, բարեգործական և այլ ուղղվածության բազմաթիվ ծրագրեր, որոնցում ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողությունը:
4.2.3. Աջակցել ԵՊԼՀ ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ակտիվ գործունեությանը՝ տրամադրելով ֆինանսական, նյութական և կազմակերպչական ռեսուրսներ:		ՈՒԽ-ի գործունեության համար ԵՊԼՀ-ն իր բյուջեից տրամադրել է 5,522,000 դրամի գումար: Բացի այդ, համալսարանի ուսումնական, վարչական, տնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչները աջակցել են ՈՒԽ-ի աշխատանքներին:
Խնդիր 3.	Բարձրացնել սովորողների իրազեկվածության մակարդակը	
Նախադրեալած գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
4.3.1. Մշակել և կազմակերպել սովորողներին իրազեկելու տարատեսակ		ԵՊԼՀ-ն ապահովում է սովորողների լիարժեք իրազեկումը տարատեսակ միջոցներով՝

միջոցառումներ՝ ներառյալ բուհի վահանակների և ցուցարկիչների միջոցով տեղեկատվության տարածման հոսքը:		տեղադրելով նրանց անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը ԵՊԼՀ-ի կայքում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում, առանձին ստորաբաժանումների ֆեյսբուքի էջերում, համալսարանի հայտարարությունների տախտակներին, վահանակներին և էկրաններին, ինչպես նաև ուղարկելով անհրաժեշտ տեղեկատվությունը սովորողների էլեկտրոնային հասցեներին:
Խնդիր 4.	Բարելավել և բազմազանեցնել սովորողների սոցիալական աջակցության մեխանիզմները և ծառայությունները	
Նախադրեալած գործողություններ		Իրականացված գործողությունների արդյունքներ
4.4.1. Մշակել և իրականացնել ծրագրեր սոցիալապես անապահով և խոցելի խմբերի սովորողներին աջակցելու համար, տրամադրել սոցիալական աջակցության տարաբնույթ ծառայություններ՝ ապահովելով դրանց հասցեականությունը:		Կազմակերպվել են դասընթացներ, կամավորական աշխատանքներ, ինթերնշիփեր հասարակական և միջազգային տարբեր կազմակերպություններում (25 կազմակերպություն, 150 մասնակից):
4.4.2. Իրականացնել աշխատանքներ համապատասխան հիմնադրամների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ թիրախային կարիքներ ունեցող սովորողներին աջակցելու ուղղությամբ:		Հասարակական, բարեգործական, միջազգային, բիզնես տարբեր կազմակերպությունների և անհատ բարերարների ներկայացվել են աջակցության կարիք ունեցող ուսանողների տվյալները՝ աջակցության տրամադրման նպատակով: Թվով 17 կազմակերպություն տրամադրել է կրթաթոշակ մոտ 100 ուսանողի (մանրամասները բերված են Աղյուսակ 11.5-ում) Բացի այդ, Շրջանավարտների միավորման առանձին անդամների կողմից 15 ուսանողի տրամադրվել է կրթաթոշակ:
4.4.3. Բարելավել զեղչերի տրամադրման գործընթացը և ընդլայնել ԵՊԼՀ-ի կողմից ուսման վճարի մասնակի զեղչ ստացող սոցիալապես անապահով և խոցելի խմբերից սովորողների թիվը մասնավորապես մասնավոր ներդրումներից ստացվող միջոցների հաշվին		
4.4.4. Սովորողների համար ստեղծել ԵՊԼՀ-ում, գործընկեր կամ գործատու կազմակերպություններում իրենց մասնագիտությամբ աշխատելու հնարավորություններ՝ որպես պրակտիկայի բաղադրիչ:		Ուսանողները անցնում են պրակտիկա ԵՊԼՀ-ում, ՀՀ Ազգային ժողովում, պետական տարբեր գերատեսչություններում ու կառույցներում, դպրոցներում, գործընկեր կամ գործատու կազմակերպություններում, մասնակցում կամավորական աշխատանքների՝ մեծացնելով իրենց մասնագիտությամբ աշխատելու հետագա հնարավորությունները:
4.4.5. Ստեղծել պայմաններ ուսումնական կրթության		Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ստեղծված են անհրաժեշտ

առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի դարձնելու նպատակով՝ հիմնվելով նախապես վերհանված խնդիրներին լուծումներ առաջադրելու վրա:	պայմաններ՝ ուսումնառությունն արդյունավետ կազմակերպելու համար: Նրանք ակտիվորեն ներգրավված են բուհական բոլոր միջոցառումներում:
Խնդիր 5.	Խրախուսել սովորողների հասարակական ակտիվությունը՝ միտված ներհամալսարանական և արտահամալսարանական հասարակական գործընթացներին նրանց մասնակցության բարձրացմանը, հասարակության հետ կապի ամրապնդմանը
Նախադրված գործողություններ	Իրականացված գործողությունների արդյունքներ
4.5.1. Ուսանողական, երիտասարդական տարբեր կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում իրականացնել թեմատիկ տարբեր միջոցառումներ:	Մանրամասները բերված են «Կարիերայի կառավարում» բաժնում:
4.5.2. Ընդլայնել ԵՊԼՀ-ի սովորողների մասնակցությունը միջբուհական, համայնքային, պետական և համապետական ծրագրերին, նախաձեռնություններին և միջոցառումներին:	

2019թ.-ին ուսանողները ակտիվորեն մասնակցել են ԵՊԼՀ-ի կառավարման մարմինների՝ հոգաբարձուների և գիտական, ֆակուլտետային խորհուրդների, ինչպես նաև տարբեր հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին:

Ուսանողները ընդգրկվել են ուսման վարձերի գեղջերի հանձնախմբերում և մասնակցել գեղջերի հատկացման որոշումների կայացմանը:

2019-2020 ուսումնական տարում, համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ուսանողական խորհրդի կանոնադրության, կայացել են ֆակուլտետային ուսանողական խորհրուրդների նախագահների ընտրությունները՝ բաց և թափանցիկ ընթացակարգով:

2019թ.-ին ԵՊԼՀ-ի ղեկավար կազմի կողմից քննարկումներ են անցկացվել ուսանողների հետ՝ ըստ ֆակուլտետների կազմակերպված հանդիպումների ընթացքում՝ նրանց հուզող հարցերի ու խնդիրների վերհանման և դրանց լուծման նպատակով:

Համալսարանում ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ քննարկումներ, կլոր սեղաններ, կինոդիտումներ, մշակութային, բարեգործական տարատեսակ միջոցառումներ: Մասնավորապես՝ կազմակերպվել են ԵՊԼՀ-ի շրջանավարտների դիպլոմների շնորհման արարողությունը, նոր ուսումնական տարվա՝ գիտելիքի օրվա հանդիսությունը, Հայոց բանակի օրվան, Կանանց միջազգային օրվան նվիրված, Ամանորի

տոնակատարությունները և այլն: ԵՊԼՀ-ի ուսանողները «Եվրոպական լեզուների օր» միջոցառման ժամանակ հաճելիորեն զարմացրել են համալսարանի հյուրերին օտար լեզուների, եվրոպական և ասիական ժողովուրդների մշակույթի, պատմության իմացությամբ, երկրագիտական իրենց գիտելիքներով:

Ուսանողները այցելել են դպրոցներ, մանկատներ, թանգարաններ, մասնակցել շաբաթօրյակների, մշակութային տարատեսակ միջոցառումների:

ՈւԽ-ի կողմից կազմակերպված միջոցառումների ցուցակը բերված է հավելված 1.2-ում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.1. «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի 2018-2019 ուսումնական տարվա բենչմարքինգի հիման վրա վերանայված և 2019-2020 ուսումնական տարում ներդրված ՄԿԾ-ների ուսումնական պլանների ցանկ (հաստատված 2019թ.-ի օգոստոսի 30-ին)

Առկա ուսուցում, բակալավրիատ

023201.00.6 Լեզվաբանություն	023201.03.6 Ռուսաց լեզու
	023201.04.6 Անգլերեն լեզու
	023201.05.6 Գերմաներեն լեզու
	023201.06.6 Ֆրանսերեն լեզու
	023201.08.6 Իտալերեն լեզու
	023201.02.6 Միջմշակութային հաղորդակցություն (ըստ լեզուների)
	Անգլերեն լեզու
	Գերմաներեն լեզու
	Ֆրանսերեն լեզու
	Ռուսաց լեզու
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)
	Անգլերեն և հայերեն լեզուներ
	Իտալերեն և հայերեն լեզուներ
	Ֆրանսերեն և հայերեն լեզուներ
	Գերմաներեն և հայերեն լեզուներ
	Ռուսերեն և հայերեն
	Ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուներ
	Չինարեն և հայերեն լեզուներ
	Կորեերեն և հայերեն լեզուներ
	Իսպաներեն և հայերեն լեզուներ
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն
	011401.22.6 Գերմաներեն լեզու և գրականություն
	011401.23.6 Ֆրանսերեն լեզու և գրականություն
023102.00.6 Օտար լեզու և գրականություն	023102.01.6 Ռուսաց լեզու և գրականություն
101801.00.6 Սերվիս	101801.01.6 Սերվիս
032101.00.6 Լրագրություն	032101.01.6 Լրագրություն
031201.00.6 Քաղաքագիտություն	031201.01.6 Քաղաքագիտություն

Առկա ուսուցում, մագիստրատուրա

031201.00.7 Քաղաքագիտություն	031201.01.7 Քաղաքագիտություն
031801.00.7 Միջազգային հարաբերություններ	031801.01.7 Միջազգային հարաբերություններ
023201.00.7 Լեզվաբանություն	023201.01.7 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)
	Անգլերեն-հայերեն
	Գերմաներեն-հայերեն
	Ֆրանսերեն-հայերեն
	Ռուսերեն-անգլերեն-հայերեն
	023201.01.7 Միջմշակութային հաղորդակցություն (ըստ լեզուների) (Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն, Ռուսերեն)
	023201.04.7 Լեզվաբանություն Անգլերեն
	023201.05.7 Լեզվաբանություն Գերմաներեն
	023201.06.7 Լեզվաբանություն Ֆրանսերեն
	023201.08.7 Լեզվաբանություն Իտալերեն
	023201.09.7 Կիրառական լեզվաբանություն
023102.00.7 Օտար լեզու և գրականություն	023102.01.7 Ռուսաց լեզու և գրականություն
	023102.02.7 Անգլերեն և գրականություն
	023102.04.7 Ֆրանսերեն և գրականություն
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	011401.20.7 Ռուսաց լեզու և գրականություն
	011401.21.7 Անգլերեն և գրականություն
	011401.22.7 Գերմաներեն և գրականություն
	011401.23.7 Ֆրանսերեն և գրականություն

101801.00.7 Սերվիս	101801.01.7 Սերվիս
031803.00.7 Եվրոպագիտություն	031803.01.7 Եվրոպագիտություն
032101.00.7 Լրագրություն	032101.01.7 Լրագրություն
041301.00.7 Կառավարում	041301.17.7 Հանրային կառավարում
011101.00.7 Կրթական գիտություններ	011101.03.7 Կրթության գնահատում և թեստավորում
031804.00.7 Հասարակայնության հետ կապեր	031804.01.7 Հասարակայնության հետ կապեր

Հեռակա ուսուցում, մագիստրատուրա

041301.00.7 Կառավարում	041301.17.7 Հանրային կառավարում
031804.00.7 Հասարակայնության հետ կապեր	031804.01.7 Հասարակայնության հետ կապեր

ՀԱՎԵԼՎԱԾ 1.2. ԵՊԼՀ-ի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված կրթական միջոցառումներ

Ուսումնագիտական

1. **15.02.2019** – ՈՒԽ-ն կազմակերպել է բաց դասախոսություն «Ին՞չ է գիտությունը» թեմայով, որը վարել է Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Ֆանիս Վորվոգլիսը:
2. **21.02.2019** - Հովհաննես Թումանյանի 150 ամյակի կապակցությամբ կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետը կազմակերպել է մեծն հեղինակի անգլերենով, գերմաներենով և ֆրանսերենով թարգմանած ստեղծագործությունների ընթերցանություն՝ Հովհաննես Թումանյանի տուն թանգարանում:
3. **27.02.2019** - ՈՒԽ-ն կազմակերպել է «Երկրագիտությունը որպես արդիական գիտություն» խորագրով տեղեկատվական հանդիպում, որին մասնակցել են ԵՊՀ դասախոս Ասյա Խաչատրյանը, ԵՊՄՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Թամարա Մաթևոսյանը, ֆրանսագետ, հեռուստահաղորդավար, շոումեն, քաղաքական վերլուծաբան Արտակ Հերիքյանը և բրիտանագետ, ամերիկագետ, երգիծաբան Նարեկ Մարգարյանը:
4. **09.03.2019** - ԵՊԼՀ-ի կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետը իրականացրել է «Բրյուսով ուսուցիչներ» ("Brusov teachers") խորագրով նախագծերի շարքը՝ ստեղծված ապագա մանկավարժների համար: «Բրյուսով ուսուցիչներ» նախագծի նպատակն էր ուսանողների համար ստեղծել հնարավորություն արդեն իսկ առաջին կուրսի երկրորդ կիսամյակից, որպես ապագա մանկավարժներ, շփում ունենալ և աշխատել երեխաների հետ տարբեր հաստատություններում՝ մանկատներում, դպրոցներում, վարժարաններում,

ուսուցման կենտրոններում և այլն: Պրակտիկան տեղի է ունեցել թիվ 125 դպրոցում, Վալդորֆյան դպրոցում և այլ ուսումնական հաստատություններում:

5. **18.03.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է բաց դասախոսություն՝ «Մեդիա գրագիտություն» թեմայով: Դասախոսությունը վարել է պոլսահայ մեդիա մասնագետ Էդի Մուրաթ Աթանասյանը: Դասախոսության ընթացքում քննարկվել են Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի մեդիան, Թուրքիայում հայ համայնքն ու հայկական լրբքին և Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններին մեդիայի ազդեցությունը և այլ հարցեր:
6. **27.03.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է «Բրյուսով, հաջողություն» (Brusov Success) աշխատաժողովը, որին հրավիրված էին 3 բանախոսներ՝ Հակոբ Նուրիջանյանը (ԵՊԼՀ-ի շրջանավարտ), Գրեյս Բարդակչյանը և Հակոբ Մակդիսը: Նրանք կիսվեցին իրենց մասնագիտական խորհուրդներով, պատասխանեցին մասնակիցների հարցերին, մի շարք խորհուրդներ տվեցին:
7. **29.03.2019-** ՈՒԽ կազմակերպել է «Ստեղծել խելացի կարիերա» (CREATING SMART CAREER) խորագիրը կրող երկշաբաթյա անվճար դասախոսություն հետևյալ թեմաներով՝ ինչպես կազմել ինքնակենսագրական, ինչպես գրել ուղեկցող նամակ և մոտիվացնող նամակ, ինչպես անցնել աշխատանքային հարցազրույց, հաղորդակցման կարողությունների ձևավորում, կարիերայի հնարավորությունների ուսումնասիրում և այլն:
8. **26.03.2019-** ՈՒԽ-ն սկսել է «Մենք ուսուցանում ենք, մենք սովորում ենք» (We teach, We learn) ծրագիրը, որի շրջանակներում ԵՊԼՀ-ի ուսանողները ամիսներ շարունակ կամավորական սկզբունքով դասավանդում են ավելի քան 150 տար լեզուներ ԵՊԼՀ-ի և հայաստանյան այլ բուհերի ուսանողներին: Ծրագրի շնորհիվ ավելի քան 200 ուսանող սովորել է նոր լեզու: Ծրագիրը շաչունակական է:
9. **29.03.2019** - ՈՒԽ-ն կազմակերպել է բաց դասախոսություն «Կինոտուրզմը որպես Հայաստանը ներկայացնելու միջոց» (Film Tourism As a Means of Promoting Armenia) թեմայով: Ծրագրի ընթացքում դասախոսությամբ հանդես է եկել Կանգասի համալսարանի պրոֆեսոր Լուսյանն Քերրինն, ով այժմ դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանում:
10. **17.04.2019-19.04.2019-** ՈՒԽ-ն մասնակցել է «Կրթություն և կարիերա, Expo 2019» կրթական ցուցահանդեսի, որի ԵՊԼՀ-ի ուսանողները փայլուն ներկայացրեցին համալսարանը՝ իր բոլոր ռեսուրսներով:
11. **12.10.2019-** ՈՒԽ-ն Թարգմանչաց տոնին նվիրված կազմակերպել է կրթական միջոցառում՝ Եղիշե Չարենցի անվան տուն-թանգարանում: Ուսանողները անգլերեն, իսպաներեն, գերմաներեն, ֆրանսերեն, չինարեն և ռուսերեն թարգմանել են Չարենցի հետևյալ բանաստեղծությունները՝ «Ես իմ անուշ Հայաստանի », «Պատահական անցորդին», «Եվ երբ դադարեց», «Հիմա չգիտեմ», «Ուզում եմ», «Հեռացումի խոսքեր»:

Մշակութային, ինտելեկտուալ, ժամանցային և սպորտային

1. **14.02.2019-** Սիրո տոների կապակցությամբ, ՈՒԽ Երևանի բնակիչներին բաժանել է «սիրո բացիկներ»՝ ԵՊԼՀ-ի և ՈՒԽ-ի լոգոներով, և պատրաստել գեղեցիկ տեսանյութ՝ Երևանցի սիրահար զույգերի մասին:
2. **15.02.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է միջոցառում՝ նվիրված սիրո տոնին: Ներկայացվել են, թե ինչ ավանդույթներ գոյություն ունեն հայկական և լեհական մշակույթներում՝ կապված այդ

տոնի հետ: Միավորելով Սուրբ Սարգսի, Սուրբ Վալենտինի և Սուրբ Անժեյի տոները՝ ուսանողները ստացան յուրահատուկ օր:

3. **19.02.2019-** Գիրք նվիրելու օրվա կապակցությամբ ՈՒԽ-ն, համագործակցելով ԵՊԼՀ-ի գրադարանի ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի հետ, «Քաղաքացիական աջակցության միջազգային կենտրոնի» աջակցությամբ, կատարել է բարեգործական ծրագիր՝ նվիրաբերելով գրքեր, որոնք իրենց հերթին տրվելու են մանկատանը:
4. **21.02.2019-** ՈՒԽ-ի կազմակերպմամբ տեղի է ունեցել «Փյունիկյան միաբանության» երկար սպասված առաջին խաղը: Խաղին ներկա էին ուսանողներ և դասախոսներ, նաև ոչ բրյուսովականներ: Բոլոր մասնակիցները ստացան պատվոգրեր և հավաստագրեր, իսկ հաղթող թիմը ստացավ իր մրցանակը:
5. **07.03.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է համերգային միջոցառում՝ նվիրված կանանց միջազգային տոնին, որի ընթացքում ՈՒԽ-ն ավելի քան 250 կին դասախոսների և ուսանողների նվերեց վարդեր:
6. **10.03.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է գեղեցիկ և գունավոր ֆլեշմոբ նվիրված ԵՊԼՀ-ին: Տեսանյութը տարածվել է համացանցում և գրավել հազարավոր մարդկանց սրտեր:
7. **20.03.2019-** ՈՒԽ-ն մասնակցել է Հայ-ռուսական համալսարանում կայացած միջբուհական ամենամյա ունիվերսիադային: Գրեթե 20 օր տևած ունիվերսիադայի ընթացքում ԵՊԼՀ-ի ուսանողները ցուցաբերել են հոյակապ ակտիվություն և գրանցել լավ արդյունքներ:
8. **26.03.2019-** ՈՒԽ-ն համալսարանում իրականացրել է մի լրջագույն փոփոխություն, որը ստացել է «էկո աղբ» անվանումը: Այն իրենից ներկայացնում է աղբի տեսակավորում, որի շնորհիվ այսօր ԵՊԼՀ-ում աղբը տեսակավորվում է երեք ձևով՝ թուղթ, պլաստիկ և խառը:
9. **29.03.2019-** Տեղի է ունեցել պոեզիայի մրցութային երեկո, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել տարբեր ասմունքներով: Առաջին փուլում հնչել են հայ բանաստեղծների ստեղծագործություններ, երկրորդ փուլում՝ ռուսերեն (Վ. Բրյուսով) և անգլերեն ստեղծագործություններ: Հաղթողները ստացել են նվերներ ՈՒԽ-ի կողմից:
10. **30.03.2019-** ՈՒԽ-ի ջանքերով համալսարանում տեղի է ունեցել «Կյանք ու կոիվ» ֆիլմի առաջին մասի ցուցադրությունը, որին ոգևորված սպասում էին ուսանողները:
11. **20.04.2019-** ՈՒԽ-ն կազմակերպել է «Քառօրյա կյանք» միջոցառումը՝ նվիրված քառօրյա պատերազմի հերոսներին:
12. **23.04.2019-** ՈՒԽ-ն՝ ԵՊԼՀ-ի բակում կազմակերպել է Սուրբ Զատիկո տոնակատարությունը և ներկայացրել, թե տարբեր մշակույթներում, ինչ կերպ է նշվում տոնը:
13. **24.04.2019-** ՈՒԽ-ն՝ 80 ուսանողների հետ այցելել է Ծիծեռնակաբերդ՝ ծաղիկներ խոնհարելով անմար կրակի շուրջ:
14. **09.05.2019-** ՈՒԽ-ն ուսանողների հետ այցելել է Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու մեր հերոսներին:
15. **11.05.2019-** ՈՒԽ-ն 80 ուսանողների համար կազմակերպել է էքսկուրսիա դեպի Գառնու տաճար և Գեղարդի վանք:
16. **17.05.2019-** ՈՒԽ-ն ԵՊԼՀ-ի բակում կազմակերպել է «Բաց խոսափողի գիշեր» (Open Microphone Night) միջոցառում-խնջույքը, որի նպատակն էր բացահայտել համալսարանի տաղանդներին, քանի որ յուրաքանչյուրը կարող էր մոտենալ բեմի վրա դրված բարձրախոսին և երգել, ասմունքել, միզուցել «Stand up»:


17. **27.05.2019-** ՈԻԽ-ն իրականացրել է մեծ և գեղեցիկ միջոցառում՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 101-ամյակին:
18. **01.06.2019-** ՈԻԽ-ն՝ ավելի քան 200 ուսանողների համար կազմակերպել է էքսկուրսիա դեպի Ապարան (Սուրբ Խաչ եկեղեցի, Ապարանի ջրամբար, Տառերի պուրակ, Սաղմոսավանք):
19. **12.07.2019-** ՈԻԽ-ն ԵՊԼՀ-ի ղեկավարության հետ կազմակերպել է 2019թ.-ի ավարտական երեկոն, որը թերևս ամենամեծ միջոցառումներից մեկն էր, որին ներկա էին գտնվում 500 ուսանող և շուրջ 100 հյուրեր: Միջոցառումը տեղի ունեցավ Արմենիա Մարրիոթ հյուրանոցում՝ երկու մասից՝ պաշտոնական և ժամանցային: Կարմիր և կապույտ դիպլոմակիր շրջանավարտները հանդիսավոր կերպով ստացան իրենց դիպլոմները: Այդ օրը նաև պարգևատրվեցին բուհի 3 լավագույն ուսանողները և վոլեբոլի թիմի անդամները:
20. **17.09.2019-** ՈԻԽ-ն կազմակերպել է բացօթյա պիկնիկ բոլոր ֆակուլտետների ուսանողների համար: Հանդիպումները տեղի են ունեցել տարբեր օրեր՝ Երևանի տարբեր երիտասարդական այգիներում:
21. **26.09.2019-** ՈԻԽ- մասնակցել է «Լեզուների Եվրոպական օրը» խորագիրը կրող ամենամյա միջոցառմանը, որը տեղի է ունեցել ԵՊԼՀ-ի բակում:
22. **11.10.2019-** ՈԻԽ-ն մեկնարկել է «Բրյուսովյան տաղանդները» խորագրով ծրագիրը, որի նպատակն է բացահայտել և ճանաչել ԵՊԼՀ-ի ամենաշնորհալի ուսանողներին և վայելել նրանց կատարումները:
23. **19.10.2019-** ՈԻԽ-ի նախաձեռնությամբ՝ առաջին կուրսի ուսանողները գնացքով ուղևորվել են Գյումրի և այցելել մի շարք պատմամշակութային վայրեր՝ «Սև Բերդ» ամրոց, 7 Վերք եկեղեցի և այլն: Ճամփորդությունը ոչ միայն ժամանցային էր, այլ նաև ուսուցողական: Ուսանողները կիսվում էին միմյանց հետ իրենց իմացած՝ Գյումրու մասին հետաքրքիր պատմություններով:
24. **24.10.2019-** ՈԻԽ և Հայաստաթի Ֆրանսիական Համալսարանի ՈԻԽ-ի համատեղ ջանքերով, ԵՊԼՀ-ի բակում կազմակերպվել է խնջույք՝ երկու համալսարանների ուսանողների համար: Խնջույքին մասնակցել է 250 ուսանող:
25. **28.10.2019-** ՈԻԽ-ն ձեռնամուխ է եղել ուսանողների համար հանգստի սենյակի ստեղծմանը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին վայելել իրենց ազատ ժամանակը:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾ 3.1. ԵՊԼՀ-ում դասավանդող օտարերկրացի դասախոսներ, 2019թ.

Հ	Անուն/ազգանուն	Ամբիոն	Երկիր
1.	Յանա Թադևոսյան	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (դոցենտ)	Ղազախստան
2.	Ծին Ծիուլն	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
3.	Ծյան Նան	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
4.	Յուլեն Յինդ	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
5.	Լի Ճիկանգ	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
6.	Ճաո Սին	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
7.	Ճոու Յուքուն	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
8.	Չեն Պաովն	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Չինաստան
9.	Աբդալլա Օսման Մերվաթ Գոմաա	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Եգիպտոս
10.	Փակ Հի Սու	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Կորեա
11.	Հենթ Նիկոլաե-Ադրիան	Եվրոպական և ասիական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Ռումինիա
12.	Քարայան Արմեն Դիլան	Անգլերեն հաղորդակցության և թարգմանության ամբիոն (դասախոս)	ԱՄՆ
13.	Ռոզա Մելքումյան	Անգլերեն հաղորդակցության և թարգմանության ամբիոն (դասախոս) ԱՄՆ Ֆուլբրայթ ծրագիր	ԱՄՆ
14.	Խալաթյան Արփինե Գագիկի	Անգլերեն հաղորդակցության և թարգմանության ամբիոն (դասախոս)	ՌԴ
15.	Բուկուշյան Նարինե Անդրանիկի	Անգլերեն հաղորդակցության և թարգմանության ամբիոն (դասախոս)	ՌԴ
16.	Ներենց Անգելա	Գերմաներենի ամբիոն (ավագ դասախոս)	Գերմանիա
17.	Աննեգրետ Բայեր	Գերմաներենի ամբիոն (ավագ դասախոս)	Գերմանիա
18.	Իրիս Սյուզաննե Յուբել	Գերմաներենի ամբիոն (ավագ դասախոս)	Գերմանիա
19.	Բարբարա Մայեր	Գերմաներենի ամբիոն (լեզվի ասիստենտ)	Գերմանիա
20.	Լենզլախներ Մորից	Գերմաներենի ամբիոն (ավագ դասախոս)	Ավստրիա
21.	Գալստյան Լուսինե Էդուարդի	Գերմաներենի ամբիոն (ավագ դասախոս)	ՌԴ
22.	Խվորոստյանկինա Աննա Վասիլի	«ՅՈՒՆԵՍԿՕ»-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոն (դոցենտ)/	Ուկրաինա 181
23.	Գոժդիկ Յոլանտա	Ռուսաց և սլավոնական լեզուների ամբիոն (ավագ դասախոս)	Լեհաստան

24.	Մարիա Ատանասովա Կալբովա	Ռուսաց և սլավոնական լեզուների ամբիոն	Բուլղարիա
-----	----------------------------	--------------------------------------	-----------



ՀԱՎԵԼՎԱԾ 3.2. 2019թ.-ին կնքված ԵՊԼՀ-ի հազործակցության պայմանագրերը

N	Պայմանագրի անվանումը	Երկիրը	Պայմանագրի տեսակը	Կնքման ամսաթիվը
1	Միջխտիտուցիոնալ պայմանագիր ԵՊԼՀ-ի և Ռումինիայի Տիմիշոարայի Արևմտյան համալսարանի միջև	Ռումինիա	«Էրազմուս+» ՀԳ 1 միջխտիտուցիոնալ պայմանագիր	11.01.2019
2	Դրամաշնորհային պայմանագիր Էսսեքսի համալսարանի հետ (Ստեղծարար միտք/ Creative spark)	Մեծ Բրիտանիա	Դրամաշնորհային պայմանագիր	28.02.2019
3	Հավելված Միջխտիտուցիոնալ պայմանագիր ԵՊԼՀ-ի և Լեհաստանի Օպոլեի համալսարանի միջև	Լեհաստան	Հավելված	25.03.2019
4	Համագործակցության պայմանագիր ԵՊԼՀ-ի և Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի միջև	Ռուսաստան	Համագործակցության պայմանագիր	08.04.2019
5	Փոխըմբռնման հուշագիր ԵՊԼՀ-ի և Մոսկվայի սոցիալական և տնտեսական գիտությունների Մոսկվայի դպրոցի միջև	Ռուսաստան	Փոխըմբռնման հուշագիր	08.04.2019
6	Պայմանագիր ԵՊԼՀ-ի, Երևանի Չեխովի անվ. թիվ 55 դպրոցի, Կոնֆուցիուսի գլխամասային գրասենյակի, Հանբանի միջև	Հայաստան- Չինաստան	Պայմանագիր	17.04.2019
7	Համագործակցության պայմանագիր ԵՊԼՀ-ի և Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի միջև	Ռուսաստան	Համագործակցության պայմանագիր	18.04.2019
